

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՅՄԱՆ
ՈՐԱԿՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**



Իրավունքների Պաշտպանություն
Առանց Սահմանների



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ
ՈՐԱԿՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ՀՏԴ 342.7
ԳՄԴ 67.91
Պ 218

Հեղինակային խումբ՝
Սիրանուշ Սահակյան,
Արաքս Մելքոնյան,
Ավետիք Մեջլումյան,
Հասմիկ Հարությունյան,
Գուրգեն Մեջլումյան,
Հայկուհի Հարությունյան

Պ 218 Պաշտպանության իրավունքի իրացման որակն ու արդյունավետությունը հանրային պաշտպանության համատեքստում /Ս. Սահակյան, Ա. Մելքոնյան, Ա. Մեջլումյան, Հ. Հարությունյան, Գ. Մեջլումյան, Հ. Հարությունյան: Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ: -Եր., 2013, 96 էջ:

Գրքում ամփոփված են պաշտպանության իրավունքի իրացման որակի և արդյունավետության գնահատմանն ուղղված ուսումնասիրության արդյունքները: Քանակական և որակական վերլուծության միջոցով ներկայացված են պաշտպանության իրավունքի իրացման սահմանափակումներն ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ պրակտիկայում: Արված են առաջարկություններ՝ ուղղված ՀՀ-ում պաշտպանության իրավունքի լիարժեք իրացմանն ու հանրային պաշտպանության համակարգի զարգացմանը:

Բերված առաջարկությունները կարող են օգտակար լինել փաստաբանների, պաշտպանների, արդարադատության բնագավառում քաղաքականություն մշակող և բարեփոխումներ իրականացնող ինստիտուտների համար:

ՀՏԴ 342.7
ԳՄԴ 67.91

ISBN 978-99941-2-775-7

© «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն, 2013
© Հեղինակային խումբ, 2013

Բովանդակություն

Ներածություն.....	4
Հակիրճ ամփոփում.....	5
Հետազոտության նպատակը և խնդիրները.....	9
Հետազոտության մեթոդաբանությունը.....	11
Գլուխ 1: Պաշտպանության իրավունքի միջազգային կարգավորումները և գործող մեխանիզմները....	13
Պաշտպանության իրավունք: Միջազգային չափանիշները	13
Տեղեկացված լինելու իրավունքը.....	13
Բավարար ժամանակ և հնարավորություններ՝ պաշտպանությանը նախապատրաստվելու համար.....	15
Անձամբ կամ փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը.....	16
Իրավաբանական օգնության ընտրության իրավունքը.....	18
Պաշտպանի դերն ու անկախությունը.....	19
Իր դեմ ցուցմունք տված անձանց հարցաքննելու իրավունքը.....	20
Անմեղության կանխավարկած.....	21
Լռություն պահպանելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը.....	23
Դատական քննության մրցակցությունը և դատական քննությանը ներկա գտնվելու և մասնակցելու իրավունքը.....	24
Հիմնավորված դատական ակտ ունենալու և բողոքարկելու իրավունքը.....	24
Պաշտպանության իրավունքի կարգավորումն արտասահմանյան երկրներում.....	25
Գլուխ 2: Պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունները ՀՀ օրենսդրությամբ.....	36
Պաշտպանության իրավունքի կարգավորումը ՀՀ ներպետական օրենսդրությամբ.....	36
Տեղեկացված լինելու իրավունքը.....	36
Անձամբ կամ փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը.....	39
Իրավաբանական օգնության ընտրության իրավունքը.....	42
Պաշտպանի դերն ու անկախությունը.....	43
Անմեղության կանխավարկածը.....	43
Դատական քննության մրցակցությունը և դատական քննությանը ներկա գտնվելու և մասնակցելու իրավունքը.....	45
Հիմնավորված դատական ակտ ունենալու և բողոքարկելու իրավունքը.....	46
Պաշտպանության իրավունքի իրացումը արագացված կարգով դատական քննության պայմաններում.....	47
Անվճար իրավաբանական օգնությունը ՀՀ-ում.....	49
Գլուխ 3: Պաշտպանության իրավունքի և անվճար իրավաբանական օգնության պրակտիկան ՀՀ-ում.....	54
Դիտարկումների արդյունքներ, ընդհանուր տեղեկություններ և ընթացակարգային խնդիրներ.....	54
Պաշտպանի ընտրություն, փոխարինում և շահերի բախում.....	59
Պաշտպանի վարքագծի դիտարկումներ.....	62
Պաշտպանի մասնագիտական գործունեության դիտարկումներ.....	63
Միջնորդությունների ներկայացում և հայտարարություններ պաշտպանի կողմից.....	69
Տեղեկատվության հասանելիություն.....	71
Իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքի իրացումը.....	72
Անմեղության կանխավարկածի պաշտպանությունը դատական քննության ընթացքում.....	73
Բռնությունների կիրառումը քրեական գործի քննության ընթացքում.....	74
Դատաքննության արագացված կարգ.....	75
Դատավճիռների բողոքարկման իրավունքի իրացումը.....	77
Փորձագիտական հարցազրույցների միջոցով բացահայտված հիմնախնդիրները.....	80
Պաշտպանից հրաժարվելու հիմնական պատճառները.....	81
Անվճար իրավաբանական օգնության ապահովման օրենսդրական և պրակտիկ բնույթի հիմնախնդիրները.....	82
Հանրային և մասնավոր պաշտպանների կողմից տրամադրվող պաշտպանության որակների տարբերությունը.....	84
Հանրային պաշտպանի ինստիտուտի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկները	84
Հանրային պաշտպանների և հանրային պաշտպանի գրասենյակի կարիքները.....	85
Եզրահանգումներ.....	87
Առաջարկություններ.....	91

Ներածություն

«Պաշտպանության իրավունքի իրացման որակն ու արդյունավետությունը հանրային պաշտպանության համատեքստում» զեկույցը հանդիսանում է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության իրավունքի իրացման վերաբերյալ իրականացված հետազոտության արդյունքների ամփոփումը: Նշված հետազոտությունն իրականացվել է 2011 թվականի օգոստոսից մինչև 2012 թվականի նոյեմբեր ընկած ժամանակահատվածը: Այս ժամանակահատվածից հետո մինչև զեկույցի տպագրությունը տեղի ունեցած փոփոխությունները չեն արտացոլվել սույն զեկույցում:

Հետազոտության իրականացման նպատակով մշակվել է հատուկ մեթոդաբանություն, որը ներառել է դատական մոնիթորինգը, փաստաթղթերի ուսումնասիրությունը, փորձագետների հետ հարցազրույցները, օրենսդրական վերլուծությունը: Ընդհանուր առմամբ, իրականացվել է ՀՀ տարբեր մարզերում և Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում քննված 188 քրեական գործերի դատական մոնիթորինգ, 23 փորձագիտական հարցազրույցներ, 23 վերաքննիչ բողոքների վերլուծություն, պաշտպանության իրավունքին առնչվող օրենսդրության վերլուծություն: Ձեկույցում առկա եզրակացությունները ներկայացվում են հետազոտության բոլոր տարրերի արդյունքների համադրմամբ: Բացի այդ՝ զեկույցը ներառում է նաև պաշտպանության իրավունքի վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային որոշումների վերլուծությունը, պաշտպանության իրավունքի վերաբերյալ միջազգային այլ փաստաթղթերով սահմանված չափանիշերն ու դրանց վերլուծությունը, տարբեր երկրների փորձ: Այս առումով զեկույցը բավականին հարուստ ռեսուրս է հանդիսանում փաստաբանների և գործող իրավաբանների համար, ինչպես նաև բոլոր այն կառույցների և անհատների համար, ովքեր շահագրգռված են Հայաստանում պաշտպանության իրավունքի բարելավմամբ:

Իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա կազմակերպության կողմից մշակվել են համապատասխան առաջարկություններ՝ Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության իրավունքի իրացման պրակտիկայի և օրենսդրական բազայի բարեփոխումների համար:

Մշակված առաջարկությունները ընդհանուր առմամբ հասցեագրվում են ՀՀ իշխանություններին, ինչպես նաև դատական իշխանությանը, ՀՀ հանրային պաշտպանի գրասենյակին, նախաքննություն իրականացնող և նախաքննության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններին:

Հետազոտության իրականացման և զեկույցի տպագրման համար կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» նախաձեռնությանը:

Ձեկույցի վերաբերյալ մասնագիտական կարծիքների, խորհրդատվության տրամադրման համար կազմակերպությունն իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր փորձագետներին:

Հակիրճ ամփոփում

Գործող օրենսդրության համաձայն՝ ՀՀ-ում պաշտպանության իրավունքի իրացումն ապահովվում է ՀՀ հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով: Տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը ներառում է ինչպես խորհրդատվությունը¹, այնպես էլ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով ներկայացուցչությունը և պաշտպանությունը²: Ներկայացուցչությունը և պաշտպանությունն իրականացվում է առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանում, իսկ քրեական գործերով՝ նաև մինչդատական վարություն³:

Հանրային պաշտպանների միջև գործերի բաշխումը կատարելիս հաշվի են առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ գործի վերաբերյալ դիմում ստանալու օրը հանրային պաշտպանի զբաղվածությունը, պաշտպանի ծանրաբեռնվածությունը, մասնագիտացումը⁴: Եթե Երևան քաղաքում, որտեղ կենտրոնացած է հանրային պաշտպանների գրեթե կեսը (48 %-ը), գործերի բաշխման նման մեխանիզմն աշխատում է արդյունավետորեն, ապա մարզերում փաստաբանների ընտրություն չի իրականացվում: Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ ամբողջ մարզի սպասարկման համար գործում են 2-3 հանրային պաշտպաններ, ինչը մտահոգություն է առաջացնում պաշտպանության արդյունավետության կապակցությամբ: Բացառություն է կազմում Լոռու մարզը, որտեղ ներկայումս գործում են թվով 6 հանրային պաշտպաններ: Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում անվճար իրավաբանական օգնության համար պետական բյուջեից հատկացվող գումարի շրջանակներում մեկ անձին մեկ տարվա ընթացքում հատկացվում է 0.29 Եվրո՝ ըստ 2012 թվականի պետական բյուջեից հատկացված գումարի և ՀՀ-ում 18 տարին լրացած անձանց թվի բաշխման:

Ի լրումն քրեական գործերով կասկածյալի և մեղադրյալի՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք են ձեռք բերել.

- Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքի անդամները.
- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները.
- դատապարտյալները.
- ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամները.
- Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցները.
- գործազուրկները.
- միայնակ բնակվող կենսաթոշակառուները.
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք.
- փախստականները.
- Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածները.
- անվճարունակ ֆիզիկական անձինք, ովքեր ներկայացնում են իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ⁵.
- հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք⁶:

Դիտարկումների արդյունքները ցույց են տվել, որ շատ դեպքերում հանրային պաշտպանի ներգրավումն ու մասնակցությունը ավելի շատ կրում է ձևական բնույթ՝ առանց պաշտպանյալի շահերից

¹ Հայցադիմումների, դիմումների բողոքների և այլ իրավաբանական բնույթի փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում:

² «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 41, 2-րդ մաս:

³ Նույն տեղում, հոդված 41, 3-րդ մաս:

⁴ Իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումի ստացման օրը պաշտպաններից շատերը կարող են ունենալ դատական նիստեր, քննչական գործողություններ, իրենց պաշտպանյալների հետ խորհրդակցություններ և այլն: Ծանրաբեռնվածությամբ գնահատվում է կոնկրետ պաշտպանի «վարույթում» առկա գործերի քանակն ու բնույթը: Հանրային պաշտպանների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է միաժամանակ 20-22 գործերով վարույթներին ներգրավվածությամբ: Կան պաշտպաններ, որոնց անհատական ծանրաբեռնվածությունն առավել բարձր է, քան մյուսներիին: Գործերի բաշխման հիմքում դրվում է նաև փաստաբանի մասնագիտացումը, քանի որ յուրաքանչյուր հանցագործություն և դրա շուրջ տարվող քննությունն ունի իր առանձնահատկությունները:

⁵ Նույն տեղում, հոդված 41, 5-րդ մաս:

⁶ «Փաստաբանության մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն: (ընդունվել է 2013թ. ապրիլի 30-ին):

բխող հնարավոր գործողությունների լիարժեք իրականացման: Այդպիսով, պաշտպանության ֆորմալ կողմն ապահովվում է, իսկ բովանդակայինը՝ ոչ: Իսկ քանի որ պաշտպանի ներգրավվածությունը ամբաստանյալի իրավունքների պաշտպանության էական երաշխիք է համարվում, ապա ամբաստանյալը զրկվում է հետագայում իր համար ոչ բարենպաստ պայմաններում տված ցուցմունքները վիճարկելու իրավունք-հնարավորությունից: Այսպիսով՝ պաշտպանի ձևական, ոչ լիարժեք մասնակցությունը դատաքննությանը հանգեցնում է հակառակ, բացասական արդյունքի՝ ամբաստանյալի նաև մյուս իրավունքների սահմանափակմանը:

Հիմնախնդրի մյուս ասպեկտն առնչվում է հանրային պաշտպանության որակի հասարակական ընկալմանը: Ըստ հանրության շրջանում տարածված որոշ տեսակետների՝ մեծ է հավանականությունը, որ հանրային պաշտպանության որակը, համեմատած մասնավոր փաստաբանական ծառայությունների որակի հետ, կարող է ցածր լինել: Սա, իր հերթին, մի շարք դեպքերում հանգեցնում է հանրային պաշտպանությունից ինքնակամ հրաժարմանը:

Սակայն չնայած նվազման միտումներին, դեռևս պահպանվում է հասարակական որոշակի վստահությունը հանրային պաշտպանության որակի նկատմամբ:

Թեև լայն տարածվածություն չունի, այնուամենայնիվ, բացահայտվել են դեպքեր, երբ որպես հանրային պաշտպան են ներկայանում այն փաստաբանները, ովքեր իրականում հանրային պաշտպան չեն և զբաղվում են մասնավոր փաստաբանական գործունեությամբ:

Դատաքննության ընթացքում նկատելի է ամբաստանյալի՝ համապատասխան ցանկության հայտնումից հետո դատարանի կողմից հանրային պաշտպանի ներգրավման հապճեպությունը՝ առանց համապատասխան ընթացակարգերի պահպանման:

Մեկ այլ հիմնախնդիր է հանրային պաշտպանի գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովումը, օրինակ՝ միջհամայնքային գործուղումների համար ֆինանսական օժանդակությունը: Հատուկ ուսումնասիրության կարիք ունի այն խնդիրը, թե վճարման ինչպիսի կարգի (օրինակ՝ ըստ գործերի քանակի, ըստ յուրաքանչյուր գործի վրա ծախսված աշխատաժամանակի, ըստ գործի արդյունքների) և վարձատրության որ չափի պարագայում է հնարավոր ապահովել հանրային պաշտպանների աշխատանքային մոտիվացիայի և աշխատանքի որակի անհրաժեշտ մակարդակը: Ուսումնասիրության կարիք ունեն նաև քաղաքացիական գործերով հանրային պաշտպանի գործունեության ընթացքում ծագող հիմնախնդիրները:

Դիտարկումների արդյունքների հիման վրա կարելի է փաստել, որ հանրային պաշտպանների կողմից առավել մեծ ջանասիրություն է ցուցաբերվում ծանր հանցագործությունների մեջ մեղադրվող ամբաստանյալների պաշտպանությունն իրականացնելիս: Դա դրսևորվում է ինչպես գործի նյութերին ամբողջությամբ տիրապետելու, այնպես էլ դատաքննության ընթացքում ապացույցների հետազոտման գործընթացին մասնակցելու միջոցով: Դիտարկման ենթարկված առավել ծանր հանցագործություններից ավագակության և սպանության դեպքերում են պաշտպանները առավել մեծ ակտիվություն դրսևորել՝ հանդես գալով ինչպես միջնորդություններով, այնպես էլ հայտարարություններով:

Դիտարկման ենթարկված գործերից մոտ կեսը՝ 49.4 %-ը, տեղի են ունեցել դատական քննության արագացված կարգով: Արագացված կարգով դատական քննություն իրականացնելու պաշտպանության կողմի միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է միայն 1 դեպքում: Դեպքերից մեկում մեղադրող դատախազն առարկել է արագացված կարգի կիրառման դեմ:

Կատարված դիտարկումներն արձանագրում են, որ արագացված կարգով դատական քննություն իրականացնելու միջնորդության քննարկման ընթացքում դատարանների կողմից ոչ բոլոր դեպքերում է պարզվում արագացված կարգի կիրառման համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայությունը: Դատական դիտարկումները փաստում են նաև, որ դատական քննության արագացված կարգի կիրառման դեպքերում լիարժեքորեն չի իրացվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Իրենց պաշտպանյալներին արագացված կարգի առանձնահատկությունները ներկայացնելիս պաշտպանները շեշտը դնում են հիմնականում արագացված կարգով դատական քննության ընթացակարգի դրական հատկանիշների վրա՝ «գալթակղելով» թեթև պատիժ նշանակելու կամ նույնիսկ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությամբ: Եթե դատարանը շեշտում է, որ դատավճռի բողոքարկումը հնարավոր է միայն նշանակված պատժի մասով, ապա բողոքարկմանը պաշտպանները հիմնականում չեն անդրադառնում:

Ըստ էության, արագացված կարգով դատական քննություն անցկացնելը «ձեռնառու է» ոչ միայն մեղադրանքի կողմին⁷, դատարանին, այլև պաշտպաններին, ովքեր ստիպված չեն լինում ամբողջությամբ

7 Հանցագործության հանգամանքների, ամբաստանյալի մեղավորության չբացահայտման պայմաններում մեղադրանքի կողմին ձեռնառու է համոզել մեղադրյալներին՝ ներկայացնելու դատական քննության արագացված կարգ կիրառելու

ու խորն ուսումնասիրության ենթարկել քրեական գործը՝ պատրաստվելու ամբաստանյալի պատշաճ պաշտպանությանը՝ վեր հանելու քրեական գործում առկա հակասությունները, թերությունները, վիճարկելու ապացույցների թույլատրելիությունը և այլն:

Վերջին հանգամանքը հաստատվում է նաև ոչ արագացված կարգով քննված գործերի ընթացքում պաշտպանի և պաշտպանյալի գործողությունների ժամանակ բացահայտված խնդիրներով: Մասնավորապես, դիտարկումներն արձանագրում են դեպքեր, երբ պաշտպանները և պաշտպանյալները անհամաձայնեցված գործողություններ են իրականացրել դատական քննության ընթացքում: Դա հիմնավորում է այն տեսակետը, որ մի շարք դեպքերում պաշտպաններն իրենց պաշտպանյալների հետ մինչև գործի դատական քննությունը չեն խորհրդակցում պաշտպանության ռազմավարության և միջոցների վերաբերյալ: Հաճախ պաշտպաններն իրենց պաշտպանյալներին առաջին անգամ հանդիպում են արդեն դատական քննության ընթացքում: Ըստ դիտորդների գնահատականների՝ 10 ամբաստանյալների պարագայում պաշտպանի և պաշտպանյալի գործողությունները համաձայնեցված չեն եղել: Արձանագրվել է նաև 6 դեպք, երբ դատական նիստերի ընթացքում ամբաստանյալը չի ունեցել պաշտպանի հետ խորհրդակցելու հնարավորություն: Որպես իրենց արդյունավետ գործունեությանը խոչընդոտող հանգամանք՝ հանրային պաշտպանները մատնանշել են գործերի նյութերի ծանոթանալու հնարավորության բացակայությունը, ժամանակի անբավարարությունը: Պաշտպաններից 9-ը նշել են, որ չեն ունեցել գործի նյութերը պատճենահանելու հնարավորություն, իսկ 6-ը նշել են, որ առկա են եղել խոչընդոտներ գործի նյութերին ծանոթանալու գործընթացում:

Մասնավորապես, Արագածոտնի մարզի Ապարան քաղաքում առկա է փաստադրթերի պատճենահանման խնդիր, քանի որ քաղաքում պատճենահանող սարքավորումները բացակայում են: Հանրային պաշտպանները փաստում են, որ ստիպված են լինում մեկնել Աշտարակ՝ նյութերը պատճենահանելու: Միաժամանակ, արձանագրվել են դեպքեր, երբ պաշտպանները քրեական գործի դատական քննությանը ներգրավվել են առանց գործի նյութերին պատշաճ ծանոթանալու: Անհրաժեշտ է փաստել, որ նման մոտեցում հանրային պաշտպանները դրսևորում են հատկապես զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունների քննության պարագայում:

Բազմաթիվ հանրային պաշտպանների և մասնավոր փաստաբանների համար հստակ չէ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու ընթացակարգը, և վերջիններս այդ գործընթացի ժամանակ էական դժվարությունների հետ են բախվում:

Պաշտպաններից միայն 7-ն են իրենց փաստարկները հիմնավորելիս օգտագործել Վճռաբեկ դատարանի կամ Եվրոպական դատարանի որևէ նախադեպ: Սակայն միայն մեկ դեպքում է դատարանը դատավճռում անդրադարձել պաշտպանի համապատասխան հղումներին:

Կատարված դիտարկումները փաստում են, որ դատարանների կողմից հաճախ խախտվում է ամբաստանյալների անմեղության կանխավարկածը. դատարանները կանխակալ մեղադրական վերաբերմունք են դրսևորում ամբաստանյալների նկատմամբ: Դատավորների կողմից արդեն իսկ դատական քննության ընթացքում կասկածի տակ է դրվում ամբաստանյալի կողմից հայտնած տեղեկությունների հավաստիությունը, դատավորներն իրենց արտահայտություններով ու վերաբերմունքով արտահայտում են ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ իրենց համոզումը: Հատկանշականն այն է, որ նման վերաբերմունքի առնչությամբ պաշտպանների կողմից որևէ արձագանք չի հետևում:

7 գործերի քննության ընթացքում գործի մասնակիցներից որևէ մեկը վկաների նկատմամբ հոգեբանական կամ այլ ճնշում է գործադրել, ինչը դրսևորվել է ինչպես դատախազի կողմից վկաների վրա ձայնը բարձրացնելով, սպառնալից տոնայնությամբ հարցերը հնչեցնելով, այնպես էլ դատարանի կողմից պարբերաբար սուտ ցուցմունքներ տալու համար քրեական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ դրույթը հիշեցնելով: Արձանագրվել է դեպք նաև, երբ ամբաստանյալի պաշտպանի կողմից վկային ուղղված հարցերի ազդեցության տակ վկան հուզվել է:

Միաժամանակ, նախնական քննության ընթացքում իրենց նկատմամբ կիրառված բռնությունների և անմարդկային վերաբերմունքի մասին մոնիթորինգի դիտարկումների ընթացքում հայտարարել են 5 ամբաստանյալ: Տվյալ դեպքերում պաշտպանները հիմնականում միջնորդել են խախտումներով ձեռք բերված ապացույցները ճանաչել անթույլատրելի:

Բացի դիտարկումների ընթացքում հայտնաբերված խախտումները՝ պաշտպանության իրավունքի վերաբերյալ խնդիրներ են արձանագրվել նաև փորձագետների կողմից՝ վերջիններիս հետ հարցազրույցների ընթացքում:

միջնորդություն՝ դրական վերաբերմունք ցուցաբերելու, մեղմ պատիժ պահանջելու խոստումներով: Նման դեպքերում է, որ հիմնականում արագացված կարգով դատական քննություն անցկացնելու միջնորդությունը ներկայացվում է նախքան դատական նիստ անցկացվելը՝ առանց պաշտպանների հետ խորհրդակցելու:

Փորձագետները որպես խնդիր առանձնացրել են փաստացի մեղադրյալի կարգավիճակում գտնվող անձին վկայի կարգավիճակում հարցաքննելու տարածված պրակտիկան: Այս պարագայում անձը հանդես է գալիս որպես վկա, որից ինֆորմացիան ստացվում է և հետագայում դրվում է մեղադրանքի հիմքում:

Որպես խնդիր մատնանշվում է նաև պաշտպանի՝ գործի վարույթին ուշ ներգրավումը:

Ըստ փորձագետների՝ նախաքննության փուլում պաշտպանից հրաժարվելու հիմնական պատճառն է հանդիսանում քննիչի հորդորը: Ընդ որում, պաշտպանից հրաժարվելու դեպքերն առավելապես տեղ են գտնում զինծառայողների մասնակցությամբ գործերում:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման գործընթացում փորձագետների մեծ մասն առանձնացրել է կասկածյալի կամ մեղադրյալի գույքային դրության հիմնավորման հիմնախնդիրը, քանի որ այն օրենքով չի կարգավորվում, հստակ չէ «անվճարունակ» հասկացության պարզաբանումը: Մյուս կարևոր խնդիրը ՀՀ-ում հանրային պաշտպանների ոչ արդյունավետ բաշխումն է և դրանից բխող անհամաչափ անհատական ծանրաբեռնվածությունը:

Իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա կազմակերպության կողմից մշակվել են նաև առաջարկություններ՝ ուղղված դատական իշխանությանը, հանրային պաշտպանի գրասենյակին, նախաքննություն իրականացնող մարմիններին:

Կազմակերպության կողմից ներկայացված առաջարկությունները ներառում են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Քրեական արդարադատության համակարգում իրավաբանական օգնության հասանելիության սկզբունքներն ու ղեկավար դրույթների» պահանջները: Մասնավորապես՝ ընդլայնել անվճար իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտների ցանկը՝ ներառելով նաև այլ առևտրային կազմակերպությունների, ներդնել ավարտական կուրսերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների կողմից անվճար իրավաբանական խորհրդատվության մասնակցության պրակտիկա, ընդլայնել անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց շրջանակը՝ ներառելով նաև տուժողներին, վկաներին, հատուկ պաշտպանություն սահմանել նաև անչափահասների համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Պաշտպանության իրավունքի իրացման որակի ուսումնասիրության անհրաժեշտությունն ակնհայտ էր դարձել կազմակերպության նախորդ՝ 2009-2010թթ. իրականացված հետազոտության ժամանակ: Հետազոտությունն իրականացվել էր զինվորական քրեական գործերով՝ դատական մոնիթորինգի միջոցով, որի շնորհիվ վեր էին հանվել ամբաստանյալների՝ պաշտպանության իրավունքի իրացմանն առնչվող մի շարք ակտուալ հիմնախնդիրներ:

Այդ հիմնախնդիրներից են՝ կասկածյալների՝ պաշտպանության իրավունքի իրացման համար անհրաժեշտ գիտելիքների և իրազեկվածության նվազ մակարդակը, հետևողականության բացակայությունը՝ ամբաստանյալների համար որակյալ պաշտպանություն ապահովելու հարցում և արդար դատաքննության իրավունքի հետ կապված այլ հարցեր: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ պաշտպանության իրավունքի իրացման հիմնական երաշխիքը որակյալ փաստաբանական ծառայությունների մատուցումն է դրա կարիքն ունեցող բոլոր անհատներին: Այս առումով ծրագրի իրականացման անհրաժեշտությունն առավել ընդգծվում է հետևյալ հիմնախնդիրների առկայությամբ.

- ✓ Պաշտպանության իրավունքի խախտման սկզբնական և առավել ռիսկային գոտին նախաքննության փուլն է՝ անձին բերման ենթարկելու պահից սկսած կատարվող բոլոր հնարավոր գործողությունների ժամանակահատվածը: Ինչպես ցույց է տալիս դատական մոնիթորինգի տվյալները, ամբաստանյալների իրավունքների հիմնական խախտումները տեղ են գտնում անմիջականորեն այս փուլում, ինչն էլ հետագայում՝ դատական քննության ընթացքում, այլ իրավունքների իրացման էական խոչընդոտ է հանդիսանում: Այս փուլի հիմնական խնդիրներն են ինքնախոստովանական ցուցմունքների կորզումն ու այլ՝ կասկածյալի շահերից չբխող գործողությունների իրականացումը (պաշտպանի բացակայության պարագայում): Արդյունքում տեղի է ունենում ոչ օրինական ճանապարհով կամ պաշտպանի բացակայությամբ ստացված բացատրությունների, ցուցմունքների և այլ ապացույցների «վավերացում», «օրինականացում», պաշտպանի կողմից ոչ բավարար որակի փաստաբանական ծառայությունների մատուցում և պաշտպանյալի շահերից բխող հնարավոր գործողությունների ոչ լիարժեք իրականացում և այլն: Կասկած է հարուցում նաև այս փուլում ամբաստանյալի՝ համապատասխան ցանկության հայտնումից հետո հանրային պաշտպանի ներգրավման հապճեպությունը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ քննիչի կողմից վերջինիս ներգրավումը ևս կատարվում է ընթացակարգի խախտմամբ (հանրային պաշտպանի գրասենյակին պաշտոնապես դիմելու կարգը շրջանցելու միջոցով):

Ծրագրի հիմնական խնդիրները հեպլյալներն էին.

- ✓ Իրականացնել հանրային պաշտպանի գործունեության հիմնախնդիրների ուսումնասիրության և հանրային պաշտպանների կարիքների գնահատում:
- ✓ Ուսումնասիրության արդյունքների հիման վրա հանդես գալ ՀՀ-ում պաշտպանության իրավունքի իրացման որակի և հանրային պաշտպանի ինստիտուտի գործառնության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկներով:
- ✓ Իրականացնել ներկայացված առաջարկների՝ կազմակերպության գործունեությանը համահունչ խնդիրները (օրինակ՝ աշխատաժողովներ, խորհրդատվական աջակցություն և այլն):

Հետազոտությունն հիմնականում անդրադարձել է ներառել է հետևյալ հիմնական հարցերը.

1. Գնահատել դատարանում պաշտպանության իրավունքի իրացման որակն ու արդյունավետությունը՝ համաձայն չափանիշերի նախապես մշակված համակարգի:
2. Գնահատել դատարանում պաշտպանության իրավունքի իրացման որակն ու արդյունավետությունը միջազգային չափանիշերի լույսի ներքո:
3. Բացահայտել և դասակարգել դատարանում պաշտպանության իրավունքի լիարժեք և համակողմանի իրացման հնարավոր խոչընդոտները:
4. Ուսումնասիրել դատարանում պաշտպանության իրավունքի իրացման որակի ու արդյունավետության կապը մինչդատական վարույթի ընթացքում պաշտպանության որակի և արդյունավետության հետ:
5. Բացահայտել դատարանում պաշտպանության իրավունքի իրացման որակի ու արդյունավետության բարելավման հնարավոր ուղիները:
6. Գնահատել դատավարության մասնակիցների կարիքները՝ կապված պաշտպանության իրավունքի իրացման հետ:

Թե՛ ծրագրի գլխավոր նպատակը, թե՛ խնդիրները դիտարկվել են առավելապես **հանրային պաշտպանության համատեքստում**: Այս պատճառով ստացված եզրահանգումները որքան էլ համարժեք լինեն

ՀՀ-ում պաշտպանության իրավունքի իրացման ընդհանուր իրավիճակին, առաջին հերթին վերագրելի են հանրային պաշտպանությանն առնչվող խնդիրներին:

Ինչպես նշված, այնպես էլ մյուս խնդիրների մեծ մասը դիտարկվել է նաև ժամանակային տարբեր միջակայքերում: Օրինակ՝ անվճար իրավական աջակցության մատչելիությունը դիտարկվել է նախաքննության և դատաքննության փուլերում:

Խնդիրների մի մասը որակական, մյուս մասը՝ քանակական չափման է ենթարկվել: Մի շարք դեպքերում երկու մեթոդները համադրվել են. քանակական տվյալները լրացվել և մեկնաբանվել են առանձին դեպքերի նկարագրությամբ, փորձագիտական կարծիքներով, դիտորդների դիտարկումներով:

Հետազոտության մեթոդաբանությունը

Սույն հետազոտությունն իրականացվել է դատական գործերի *մոնիթորինգի* միջոցով, ինչի համար ընտրվել են մի քանի տասնյակ ներկայացուցչական դեպքեր: Դիտարկվել են բուն դատաքննության ընթացքում պաշտպանի գործողություններն ու փոխհամագործակցությունը իր պաշտպանյալի և դատավարության այլ կողմերի հետ: Անմիջական դիտարկմանն անհասանելի իրավիճակների (օրինակ՝ նախաքննության փուլի) վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է պաշտպանների, ամբաստանյալների, դատախազների, դատավորների և այլ, գործին առնչություն ունեցող անձանց հետ՝ *անհատական հարցազրույցների* միջոցով: Իրականացվել են նաև *փորձագիտական հարցազրույցներ*՝ հիմնախնդիրների վերաբերյալ մասնագիտական կարծիքների և առաջարկների բացահայտման նպատակով: *Փաստաթղթերի վերլուծության* մեթոդը թույլ է տվել վերլուծել պաշտպանության որակն ու արդյունավետությունը՝ միմյանց համադրելով իրականացված կոնկրետ գործողություններն ու դրանց հետևանքով ստացված արդյունքները:

Հանրային պաշտպանի ինստիտուտի հիմնախնդիրների բացահայտման նպատակով իրականացվել է հանրային պաշտպանների *կարիքների գնահատման* հետազոտություն՝ *անհատական հարցազրույցների* միջոցով:

Ձեռք բերված տեղեկատվության լրացման գործիքը Excel ծրագրով ստեղծված կիսաձևայնացված հարցաշարն էր՝ բաղկացած մի շարք թեմատիկ բաժիններից: Հարցաշարի հիմնական թեմաներն էին.

1. ընդհանուր տեղեկություններ և ընթացակարգային խնդիրներ
2. պաշտպանի ընտրություն, փոխարինում և շահերի բախում
3. պաշտպանի անձնային որակներ
4. պաշտպանի մասնագիտական որակներ
5. տեղեկատվության հասանելիություն, ձեռքբերում և օգտագործում
6. գործի հրապարակայնության մակարդակն ու դրա ազդեցությունը պաշտպանության որակի և ամբաստանյալի շահերի վրա
7. պաշտպանության համար անհրաժեշտ նյութատեխնիկական հենքն ու այլ ռեսուրսները
8. նախաքննության և դատաքննության ընթացքում իրականացվող պաշտպանությունների միջև առկա կապը
9. պաշտպանի համագործակցությունն ու փոխհարաբերությունները գործի հետ առնչություն ունեցող անձանց հետ
10. ոչ ֆորմալ հարաբերություններ և գործողություններ (ex parte շփումներ)
11. միջնորդությունների ներկայացում և հայտարարություններ պաշտպանի կողմից
12. ապացույցների հետազոտում
13. դատաքննության արագացված կարգ
14. արտագնա նիստ
15. հատուկ կարիքներով անձանց պաշտպանությունը

Հարցաշարի ձևայնացված հատվածներում տվյալները մուտքագրվել են նախապես մշակված կոդերի միջոցով: Կիսաձևայնացված հատվածներում դիտորդները շարադրել են իրենց դիտարկումները, նկարագրել են առանձին դեպքեր, մեջբերումներ են կատարել դատավճիռներից:

Որոշ տեքստային հատվածներ, որոնք կարևոր են եղել քանակական տվյալների վերհանման տեսանկյունից, հետագայում մույնպես ենթարկվել են կոդավորման: Տեքստային բովանդակության վերլուծությամբ դուրս են բերվել առավել հաճախ կրկնվող դիտարկումները, դրանցից յուրաքանչյուրին որոշակի կոդ է տրվել և առկա տեքստերը վերակոդավորվել են դրանց համաձայն:

Տվյալների մուտքագրման և կոդավորման ավարտից հետո սկսվել է դրանց քանակական վերլուծությունը SPSS ծրագրի միջոցով, իսկ տվյալների մի մասը բովանդակային վերլուծության է ենթարկվել:

Փորձագիտական հարցազրույցներում ներգրավվել են ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ, փաստաբաններ (այդ թվում՝ հանրային պաշտպաններ) և քրեական իրավունքի ոլորտի փորձագետներ (գիտնականներ, դասախոսներ): Փորձագետների ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով վերջիններիս փորձն ու հեղինակությունը տվյալ բնագավառում: Փորձագիտական հարցազրույցներն անհրաժեշտ էին այնպիսի խնդիրների վերհանման և ուսումնասիրության համար, որոնք հնարավոր չէր դիտարկել մոնիթորինգի շրջանակներում: Բացի այդ՝ փորձագետների կարծիքներն արժեքավոր էին նաև հիմնախնդիրների հաղթահարմանն ուղղված լուծումների առաջարկման տեսանկյունից:

Ընտրանքի նկարագրությունը: Մոնիթորինգի իրականացման ժամանակահատվածում հանրային պաշտպանի գրասենյակում ներգրավված էին լիարժեք աշխատանքային ծանրաբեռնվածություն ունեցող 36 հանրային պաշտպաններ: Նրանցից 17-ը գործունեություն էին ծավալում Երևանում, 19-ը՝ մար-

գերում⁸: Բացի դրանից՝ մարզերում մի շարք մասնավոր փաստաբաններ հանրային պաշտպանություն են իրականացրել պայմանագրային հիմունքներով:

Յուրաքանչյուր փաստաբանի միջին ամսական ծանրաբեռնվածությունը կազմում էր 16 և ավելի դատական գործ՝ 16-20 դատական նիստերով: Համաձայն հանրային պաշտպանի գրասենյակից 2011թ. ապրիլին ստացված տեղեկատվության՝ 2010 թվականին հանրային պաշտպանները ներգրավված են եղել 2589 դատական գործերով, որոնցից միայն 15-ն էին քաղաքացիական գործեր: Դրանցից 1074-ը Երևանի դատարաններում են քննվել, իսկ մնացած 1515-ը՝ մարզերում:

Վերը բերված տվյալների հիման վրա ձևավորվեց ընտրանքի առաջին սկզբունքը, համաձայն որի՝ մոնիթորինգը պետք է ներառեր միայն քրեական գործերը, քանի որ քաղաքացիական գործերի քանակն աննշան էր՝ դրանք հատուկ ուսումնասիրության առարկա դարձնելու համար: Ընտրանքի հաջորդ սկզբունքը վերաբերում էր տարբեր հանցատեսակների գործերի քանակների միջև համամասնության պահպանմանը: Սա նշանակում էր, օրինակ, որ եթե առաջին ատյանի դատարաններում քննված բոլոր գործերում կյանքի դեմ ուղղված հանցագործությունները չեն գերազանցում որոշակի տոկոս, ապա դրանք պետք է չգերազանցեն միևնույն տոկոսը նաև ընտրված գործերի համախմբության մեջ: Այլ կերպ ասած, ընտրանքային համախմբությունը պետք է գործերի իր «կառուցվածքով» ներկայացուցչական լիներ գլխավոր համախմբության համար՝ հնարավորինս ճշգրիտ վերարտադրելով վերջինիս կառուցվածքը: Բնականաբար, լիարժեք նույնականության ապահովումն անհնար էր, քանի որ գործերի վերաբերյալ տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրը հանրային պաշտպանի գրասենյակն էր, և ընտրանքը հարկավոր էր կառուցել գլխավորապես այդ աղբյուրից ստացված տեղեկատվության հիման վրա:

Ընտրանքում ներառման ենթակա գործերի համամասնությունը որոշվեց կազմակերպության հարուստ վիճակագրական բազայի հիման վրա: Դրանում պարունակվում էին տեղեկություններ նախորդ տարիներին առաջին ատյանի դատարաններում քննված գործերի վերաբերյալ, ինչն էլ թույլ էր տալիս կանխատեսումներ անել 2011թ. քննվելիք քրեական գործերի կազմի վերաբերյալ:

Մոնիթորինգի շրջանակներում հանրային պաշտպանի գրասենյակից տեղեկատվություն է ստացվել 246 քրեական գործերի վերաբերյալ, որոնցում ընդգրկված են եղել հանրային պաշտպաններ: Դրանցից մոնիթորինգի չեն ենթարկվել 58 քրեական գործեր՝ նիստերի տվյալների անճշտության, նիստերի մասին ուշ տեղեկանալու և այլ չկանխատեսված տեխնիկական պատճառներով:

Հանրային պաշտպանի գրասենյակից ստացված գործերի 76 %-ը (188 քրեական գործ) դիտարկման է ենթարկվել, սակայն վերջնական վերլուծության մեջ օգտագործվել են 109 գործերի վերաբերյալ տվյալները: Վերլուծության մեջ չեն ներառվել այն գործերը, որոնք մոնիթորինգի ավարտին դեռևս ընթացքի մեջ էին գտնվում: Որոշ գործերի դիտարկման արդյունքները չեն օգտագործվել որակյալ չլինելու պատճառով:

Ընդհանուր առմամբ, վերլուծության մեջ օգտագործվել են 109 գործերի վերաբերյալ տվյալները, որոնցում ներգրավված են եղել 178 ամբաստանյալներ:

Դիտարկված գործերով ներկայացվել են 49 վերաքննիչ բողոքներ, որոնց բոլորի քննությունն էլ դիտարկման է ենթարկվել: Վերլուծության համար օգտագործվել են այն 23 բողոքների դիտարկման արդյունքները, որոնց քննությունն ավարտվել էր մոնիթորինգի ավարտին:

Այսպիսով՝ կազմակերպությունը ձգտել է դիտարկել բոլոր այն գործերը, որոնց վերաբերյալ տեղեկատվություն է ստացվել հանրային պաշտպանի գրասենյակից: Բացի հիմնականում տեխնիկական բնույթի խոչընդոտների հետևանքով դիտարկումից դուրս մնացած գործերից, մյուս բոլոր գործերը ներառվել են մոնիթորինգի մեջ:

Պաշտպանության իրավունքի վերաբերյալ հարցերի քննարկման նպատակով 23 փորձագիտական հարցազրույցներ են իրականացվել: Փորձագետներից 11-ը ներկայացնում էին հանրային պաշտպանի գրասենյակը, 12-ը՝ իրավունքի և արդարադատության ոլորտի տարբեր բնագավառներ:

Փորձագետների ընտրության գլխավոր չափանիշն է եղել վերջիններիս փորձն ու հեղինակությունը տվյալ բնագավառում, ինչը գնահատվել է՝ հաշվի առնելով նրանց հեղինակած աշխատությունները թեմայի շուրջ, հասարակական ակտիվությունը (ներառյալ՝ հարցազրույցները մասնւում), աշխատանքային նվաճումները:

Հարցազրույցների առաջարկներ են արվել մոտ 3 անգամ ավելի մեծ թվով անձանց, իսկ փաստացի իրականացված հարցազրույցները ներկայացնում են միայն այն դեպքերը, երբ տվյալ փորձագետի կողմից հանդիպման համաձայնություն է ստացվել:

Հարցազրույցները ծառայել են իրենց նպատակին և թույլ են տվել կարևոր հիմնախնդիրներ բացահայտել: Անգամ այն դեպքերում, երբ փորձագետների մատնանշած խնդիրները ծանոթ էին վերլուծաբաններին, տվյալ հիմնախնդրի փորձագիտական վերլուծությունն ու յուրաքանչյուր մեկնաբանությունները շարունակում են արժեքավոր մնալ:

8 http://www.advocates.am/index.php?option=com_content&view=article&id=57&Itemid=91

Գլուխ 1

Պաշտպանության իրավունքի միջազգային կարգավորումները և գործող մեխանիզմները

Պաշտպանության իրավունք: Միջազգային չափանիշները

Քրեական դատավարության ընթացքում հանցագործության մեջ մեղադրվող անձի պաշտպանության իրավունքը կենտրոնական և հիմնարար տեղ է զբաղեցնում: Պաշտպանության իրավունքը նախատեսված է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է հանցագործության մեջ կասկածվող/մեղադրվող անձի պաշտպանության նվազագույն իրավական երաշխիքները, որոնք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից (այսուհետ՝ Դատարան կամ Եվրոպական դատարան) մեկնաբանվել են որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի յուրահատուկ ասպեկտներ:

Թեև Կոնվենցիան չի օգտագործում քրեական դատավարություն եզրույթը, այնուամենայնիվ դրա 6-րդ հոդվածը սահմանում է արդար դատաքննության իրավունք «ցանկացած քրեական մեղադրանքի» առնչությամբ և, հետևաբար, 6-րդ հոդվածով նախատեսված անմեղության կանխավարկածի և այլ իրավունքները վերաբերում են բոլոր անձանց, ովքեր մեղադրվում են քրեական հանցագործության մեջ:

Կոնվենցիայի տրամաբանությամբ քրեական մեղադրանքի առկայությունը պարտադիր նախապայման է արդար դատաքննության իրավունքի բոլոր երաշխիքների գործողության համար: Միաժամանակ, Դատարանը հաստատել է, որ քրեական գործի ողջ քննությունն արդար հանդիսանալու համար անհրաժեշտ է, որ մեղադրանք առաջադրելուց առաջ Կոնվենցիայով նախատեսված որոշ երաշխիքներ գործեն պետությունների մեծ մասի ներպետական օրենսդրություններով: Դատարանը տվել է «մեղադրանքի» իր ինքնուրույն մեկնաբանությունը, համաձայն որի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով մեղադրանքը բնորոշվում է որպես պետական իրավասու մարմնի կողմից անհատին տրված պաշտոնական ծանուցում իր կողմից հանցագործություն կատարելու մասին: Տվյալ բնորոշումը համապատասխանում է նաև այն իրավիճակներին, երբ անձի կարգավիճակն էականորեն չի վնասվել⁹: Հետևաբար, Կոնվենցիայով նախատեսված արդար դատաքննության իրավունքի երաշխիքները գործում են անկախ նրանից, թե ներպետական օրենսդրությանը համապատասխան անձի նկատմամբ պաշտոնապես մեղադրանք առաջադրվել է, թե ոչ: Միաժամանակ, նման բնորոշումը չի ենթադրում, որ արդար դատաքննության բոլոր իրավունքներն անմիջապես սկսում են գործել, ինչպես նաև՝ որ դրանք գործում են նույն ծավալներով քննության տարբեր փուլերում:

Այսպես, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ.... հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

- ա. Իրեն հասկանալի լեզվով անհապաղ և հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին:
- բ. Ունենալ բավարար ժամանակ և հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար:
- գ. Պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով, կամ եթե ամբաստանյալը բավարար միջոցներ չունի՝ դատապաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար, ունենալու անվճար դատապաշտպան, երբ դա է պահանջում արդարադատության շահը:
- դ. Հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, ինչպես նաև՝ իր կողմից վկաներ կանչելու և հարցաքննելու նույն պայմաններում, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները:
- ե. Օգտվելու թարգմանչի անվճար ծառայությունից, եթե մեղադրվողը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

Տեղեկացված լինելու իրավունքը

Հանցագործության մեջ մեղադրվող անձի տեղեկացված լինելու իրավունքը կարևորագույն նախապայման է նրա կողմից քրեական վարույթին արդյունավետորեն մասնակցելու համար: Տեղեկացված լինելու իրավունքն ունի մեկնաբանման երեք ուղղություն.

9 Eckle v. Germany, 15 July 1982, no. 8130/78, para. 73.

- դատավարական իրավունքների մասին տեղեկացում.
- ձեռքակալման կամ կալանավորման պատճառների և հիմքերի մասին տեղեկացում.
- առաջադրված մեղադրանքի մասին տեղեկացում:

Չնայած այն հանգամանքին, որ Կոնվենցիան ուղղակիորեն չի նախատեսում դատավարական իրավունքների վերաբերյալ տեղեկացվելու իրավունք, Դատարանի նախադեպային իրավունքը պետական մարմիններին պարտավորեցնում է ձեռք առնել պոզիտիվ քայլեր՝ ի ապահովումն 6-րդ հոդվածի պահանջների գործողության¹⁰: Դատարանն առավել խիստ մոտեցում է արտահայտել իրավաբանական օգնություն ունենալու իրավունքի վերաբերյալ տեղեկացվելու առնչությամբ¹¹: Պաշտոնատար մարմինները պոզիտիվ պարտավորություն են կրում՝ տեղեկացնելու կասկածյալին իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի մասին, եթե դրա համար անհրաժեշտ պայմաններն առկա են¹²: Միաժամանակ, բավարար չէ տվյալ իրավունքների մասին գուտ գրավոր տեղեկացումը: Իրավասու մարմինները պետք է ողջամիտ քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու կասկածյալի իրազեկվածությունը պաշտպան ունենալու իրավունքի վերաբերյալ, ինչպես նաև պետք է ապահովեն հարցաքննության ընթացքում կասկածյալի կողմից իր գործողությունների հետևանքների գիտակցումը¹³:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ձեռքակալված անձը պետք է անմիջապես իրեն հասկանալի լեզվով տեղեկացվի ձեռքակալման պատճառների և ներկայացվող մեղադրանքի մասին: Միաժամանակ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անմիջապես իրեն հասկանալի լեզվով անձը պետք է տեղեկացվի իրեն ներկայացված մեղադրանքի վերաբերյալ: Կոնվենցիայի սույն դրույթները միասին պոզիտիվ պարտավորություն են սահմանում պետության ներկայացուցիչների համար, որպեսզի նրանք ձեռքակալված կամ կալանավորված անձին տեղեկություն տրամադրեն վերջինիս ձեռքակալման կամ կալանավորման պատճառների, մեղադրանքի բնույթի ու հիմքերի վերաբերյալ: Միաժամանակ, Դատարանը փաստել է, որ միայն ձեռքակալման կամ կալանավորման, ինչպես նաև մեղադրանք առաջադրելու իրավական լիազորության հայտարարումը բավարար չէ¹⁴. ձեռքակալված կամ կալանավորված անձին տեղեկացնելու պարտականությունը ամբողջությամբ ընկած է իշխանության ներկայացուցիչների վրա և չի կարող իրականացվել պասիվորեն՝ պարզապես այն հասանելի դարձնելով՝ առանց ձեռքակալված կամ կալանավորված անձի ուշադրությունը դրա վրա հրավիրելու¹⁵:

Վերոգրյալ երկու հոդվածներով նախատեսված տեղեկացված լինելու իրավունքի նպատակն է կասկածյալի կամ մեղադրյալի՝ մեղադրանքի էության ըմբռնման երաշխավորումը՝ կալանավորման օրինականությունը վիճարկելու¹⁶, ինչպես նաև պաշտպանությունը նախապատրաստելու համար¹⁷: Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ երկու հոդվածներով նախատեսված պարտականությունները տարբերվում են: Առաջինի դեպքում անձը տեղեկացվում է իր ձեռքակալման պատճառների և իրավական հիմքերի վերաբերյալ, իսկ երկրորդի հիման վրա՝ իր դեմ ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի վերաբերյալ¹⁸:

Մեղադրանքի վերաբերյալ տեղեկացումը կենտրոնականն է հանցագործության մեջ մեղադրվող անձի պաշտպանության իրականացման և քրեական վարույթին արդյունավետորեն մասնակցելու տեսանկյունից¹⁹: Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է հանցագործության մեջ մեղադրվող անձին ներկայացնել հանցագործության բնույթի և հիմքի վերաբերյալ տեղեկություններ: Հանցագործության բնույթին վերաբերող տեղեկությունը ենթադրում է անձին առաջադրված հանցագործության իրավական բնութագիր, իսկ հիմքը՝ անձի կողմից կատարված արարքի իրավական հատկանիշներ:

Հանցագործության մասին տեղեկությունների տրամադրումը չափազանց կարևոր է, քանի որ այդ պահից է անձը համարվում իրեն մեղսագրվող արարքի փաստական և իրավական հանգամանքների

10 *Artico v. Italy*, 13 May 1980, no. 6694/74, para. 36.

11 *Padalov v. Bulgaria*, 10 August 2006, no. 54784/00, *Talat Tunc v. Turkey*, 27 March 2007, no. 32432/96.

12 *Panovits v. Cyprus*, 11 December 2008, no. 4268/04, paras. 72–73.

13 Նույն տեղում, paras. 67–68.

14 *Nechiporuk and Yonkalo v. Ukraine*, 21 April 2011, no. 42310/04, para. 209.

15 *Mattoccia v. Italy*, 25 July 2000, no. 23969/94, para. 65.

16 *Fox, Campbell and Hartley*, 30 August 1990, A 182, para. 40.

17 *Mattoccia v. Italy*, 25 July 2000, no. 23969/94, para. 60.

18 *Edwards v. UK*, 16 December 1992, no. 13071/87, paras. 35–38.

19 Մեղադրանքի վերաբերյալ տեղեկացվելու իրավունքը նույնացվում է նաև պաշտպանությունը կազմակերպելու համար բավարար հնարավորություններ ունենալու իրավունքին: Սակայն այս իրավունքները նույնպես չեն նույնանում, քանի որ դրանք նույն ինֆորմացիան չեն երաշխավորում հանցագործության մեջ մեղադրվող անձանց համար: Վերջինը ենթադրում է այնպիսի տեղեկությունների տրամադրում, որը հնարավորություն կտա կազմակերպելու և իրականացնելու պաշտպանությունը դատարանում, մինչդեռ առաջինը ենթադրում է տեղեկությունների տրամադրում քննության սկզբնական փուլում, պաշտպանության նախապատրաստում: Միաժամանակ, պրակտիկայում հնարավոր են այս երկու իրավունքների խախտումների համընկնման դեպքեր, երբ մեղադրանքի վերաբերյալ սխալ տեղեկատվության տրամադրումը հանգեցրել է դատարանում ոչ արդյունավետ պաշտպանության իրականացման:

վերաբերյալ տեղեկացված²⁰: Տեղեկատվության բավարարությունը կախված է յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներից և ընդհանուր արդար դատաքննության իրավունքի պահպանման պահանջներից: Եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է, որ քրեական գործերով մեղադրյալին առաջադրված մեղադրանքի մասին ամբողջական ու մանրակրկիտ տեղեկության տրամադրումը, ինչպես նաև դատարանի կողմից տվյալ դեպքում ընդունվելիք որոշման իրավական բնութագիրը կարևոր պայման է, որպեսզի ողջ դատավարությունը համարվի արդար²¹: Միաժամանակ, դա չի պահանջում, որ մեղադրյալին տրամադրվեն նրա դեմ եղած բոլոր ապացույցների մանրամասները, որոնք պարտադիր են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի ներքո: Դատարանի կողմից հաստատվել է, որ մեղադրյալին տրամադրված ինֆորմացիան պետք է պարունակի տվյալներ հանցագործության կատարման վայրի և ժամանակի մասին, քանի որ, դատավարության արդարացիության պահանջից ելնելով, անձը պետք է հնարավորություն ունենա իր պաշտպանությունը կազմակերպելու, օրինակ՝ հրավիրելու վկաներ, որոնք կհիմնավորեն նրա այլուրեքությունը²²:

Այն դեպքերում, երբ վարույթն իրականացնող մարմինը փոխում է մեղադրյալին առաջադրված մեղադրանքը, իրավունքի ուժով պահանջվում է, որ մեղադրյալը պատշաճորեն տեղեկացված լինի նոր մեղադրանքի մասին և օժտված լինի հնարավորություններով՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար²³:

Միաժամանակ, Դատարանը որևէ ձևական պահանջ չի սահմանել տեղեկատվության տրամադրման համար. այն կարող է տրամադրվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր²⁴:

Մեղադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը անձին պետք է տրամադրվի այն լեզվով, որը նա հասկանում է²⁵. դա նշանակում է, որ պետական մարմինները պարտավորություն են կրում մեղադրյալին ներկայացնել մեղադրանքի թարգմանությունը հասկանալի լեզվով: Ավելին՝ նման իրավիճակում Դատարանը փաստել է մեղադրյալին ներկայացված մեղադրանքի գրավոր թարգմանության տրամադրման անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի «ե» կետը²⁶:

Բավարար ժամանակ և հնարավորություններ՝ պաշտպանությանը նախապատրաստվելու համար

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի շրջանակներում հանցագործության մեջ մեղադրվող անձին իրավունք է վերապահվում ունենալ բավարար ժամանակ և հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար: Պաշտպանությանը նախապատրաստվելու համար բավարար ժամանակը չափվում է յուրաքանչյուր գործի հանգամանքներից ելնելով:

Դատարանն արձանագրել է, որ պաշտպանության կողմը պետք է օժտված լինի անհրաժեշտ հնարավորություններով՝ նախապատրաստվելու դատական քննությանը: Մեղադրյալը պետք է հնարավորություն ունենա կազմակերպելու իր պաշտպանությունը պատշաճորեն և առանց սահմանափակումների հնարավորություն ունենա ներկայացնելու պաշտպանության կողմի փաստարկերը դատարանին՝ դրանով իսկ ազդելով դատական քննության արդյունքների վրա²⁷:

Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է պաշտպանության կողմին տրամադրել մեղադրյալի դեմ և կողմ բոլոր ապացույցները²⁸: Դատավարության կողմերն իրավունք ունեն ծանոթանալու և փաստարկելու մյուս կողմի ներկայացրած ապացույցներն ու փաստերը²⁹: Այս իրավունքը հանդիսանում է ինչպես կողմերի հավասարության սկզբունքի, այնպես էլ բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու՝ կողմի իրավունքի բաղկացուցիչ տարր:

Հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձն իր պաշտպանությունը կազմակերպելու համար պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու ողջ քննության ընթացքում իրականացված գործողությունների արդյունքներին³⁰: Տեղեկությունների տրամադրման սահմանափակումները կարող են տարածվել միայն ազգային անվտանգության, տեղեկատվության աղբյուրների պաշտպանության, վկաներին պատմիչ միջոցներից պաշտպանելու, քննություն իրականացնելու ոստիկանության մեթոդները

20 Kamasinski v. Austria judgment of 19 December 1989, Series A, no. 168, pp. 36-37, para. 79.

21 Pélissier and Sassi v. France [GC], no. 25444/94, ECHR 1999-II – (25.03.99), para. 52.

22 Mattoccia v. Italy, no. 23969/94 (Sect. 1), ECHR 2000-IX, para. 71.

23 Chichlian and Ekindjian v. France, 28 November 1989, Series A, no. 162-B.

24 Kamasinski v. Austria judgment of 19 December 1989, Series A, no. 168, pp. 36-37, para. 79.

25 Brozicek v. Italy, 19 December 1989, Series A, no. 167, para. 41.

26 Տե՛ս նույն տեղում:

27 Can v. Austria, no. 9300/81, Commission's report of 12 July 1984, Series A, no. 96, para. 53.

28 Edwards v. UK, 16 December 1992, no. 13071/87, para. 36.

29 Salov v. Ukraine, 6 September 2005, no. 65518/01, para. 87.

30 Galstyan v. Armenia, 15 November 2007, no. 26986/03, para. 84.

գաղտնի պահելու դեպքերի վրա³¹, որոնք պետք է խիստ անհրաժեշտ լինեն և դատավարության հետագա փուլերում պետք է վերացվեն³²: Օրինակ՝ որոշ տեղեկությունների չտրամադրումը պետք է հավասարակշռվի վերաքննության փուլում տվյալ տեղեկությունները պաշտպանության կողմին ներկայացնելով և դրանց ծանոթանալու և պատասխանելու ժամանակ տրամադրելով³³: Այդուամենայնիվ, Դատարանի նախադեպային իրավունքով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի լույսի ներքո մեղադրյալին սահմանափակված տեղեկությունների տրամադրման հստակ փուլ նախատեսված չէ:

Չնայած այն հանգամանքին, որ թույլատրելի է քննության արդյունավետությամբ պայմանավորված որոշակի տեղեկությունների գաղտնիության պահպանումը՝ բացառելու մեղադրյալի կողմից քննությանը միջամտելու և արդարադատության ընթացքը կանխորոշելու հնարավորությունը, սակայն նման սահմանափակումը չպետք է ազդեցություն գործի պաշտպանության արդյունավետ կազմակերպման վրա: Միաժամանակ, փաստաթղթերի հակիրճ տարբերակների տրամադրումը, ինչպես նաև փաստերի և ապացույցների վերաբերյալ բանավոր իրազեկումը բավարար չէ: Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է օժանդակել փաստաթղթերի ծանոթացմանը, երբ դա կարևոր է պաշտպանության տեսանկյունից, և այդ գործընթացը չպետք է չափից դուրս ձևայնացված լինի³⁴:

Անձամբ կամ փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը

Կոնվենցիան երաշխավորում է հանցագործության մեջ մեղադրվող անձի՝ ինչպես անձամբ, այնպես էլ իրավաբանական օգնության միջոցով պաշտպանվելու իրավունքը: Այդ երկու իրավունքները համարժեք այլընտրանք չեն, այլ ունեն դատավարական կարևորություն. մեղադրյալն իր անձնական մասնակցությամբ և փաստերի ու հանգամանքների մասին իրազեկվածությամբ, իսկ փաստաբանը՝ իրավաբանական գիտելիքներով, հմտություններով և մասնագիտական փորձով են մասնակցում պաշտպանության կազմակերպմանը:

Մեղադրյալի իրավունքը՝ անձամբ ներկայացնելու իր իրավունքները, պաշտպանության հիմնարար իրավունք է և ի լրումն Կոնվենցիայի՝ ամրագրված է մի շարք այլ միջազգային փաստաթղթերում³⁵: Սա նշանակում է, որ հանցագործության կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձն իրավասու է անձամբ ներկայացնել իր շահերը, գործել իր օգտին, ներկայացնել ապացույցներ, քննության ուղիներ, վիճարկել որոշումները, ներկայացնել միջնորդություններ, հարցաքննել վկաներին և այլն: Այսպիսով՝ այս իրավունքը հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի՝ քրեական դատավարությանը մասնակցելու իրավունքի կենտրոնական տարրն է:

Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ հանցագործության մեջ մեղադրվող անձն իրավունք ունի անձամբ ներկա գտնվել իր գործով դատական քննությանը և ներգրավվելու դատավարությանը³⁶: Այդուամենայնիվ, այն բացարձակ իրավունք չէ և պետք է ողջամտորեն համաձայնեցվի հասարակական և արդարադատության շահի հետ³⁷: Դատարանն ամրագրել է, որ պետություններն օժտված են զնահատման լայն շրջանակով և ելնելով արդարադատության շահից՝ կարող են պահանջել իրավաբանի պարտադիր մասնակցություն³⁸: Նման հանգամանքներն են քննության խնդրո առարկան, ինչպես նաև փաստական և իրավական հարցերը, մեղադրյալի անձը³⁹:

Իրավաբանական օգնությունը կարող է պահանջվել նաև վերաքննիչ բողոքարկման դեպքերում⁴⁰: Իրավաբանական պարտադիր օգնության պահանջը ենթադրում է, որ որոշ հանգամանքների դեպքում մեղադրյալի շահերի պաշտպանության տեսանկյունից կարևորվում է փաստաբանի ներգրավվածությունը՝ մեղադրյալին իր իրավունքները պարզաբանելու և արդյունավետ պաշտպանություն ապահովելու համար: Միաժամանակ, վիճելի է փաստաբանի ներգրավվածության հարցը մեղադրյալի ցանկության բացակայության պայմաններում: Արդարադատության շահ հասկացությունը լայն է և ընդգրկում է արդար դատաքննության իրավունքը, որը ոչ միայն մեղադրյալի հիմնարար իրավունք է, այլև դատարանի շահ՝ կապված սեփական լեգիտիմության հետ:

31 Jasper v. UK, 16 February 2000, no. 27052/95, para. 43.

32 Նույն տեղում:

33 Edwards v. UK, 16 December 1992, no.13071/87, paras. 35–37.

34 Նույն տեղում:

35 Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագիր, հոդված 14, մաս 3-րդ, Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիա, հոդված 8, մաս 2-րդ:

36 Colozza v. Italy, 12 February 1985, no. 9024/80, para. 27.

37 Նույն տեղում, para. 29.

38 Croissant v. Germany, 25 September 1992, no.13611/88, para. 27.

39 Նույն տեղում, para. 30.

40 Gillow v. UK, 24 November 1986, no. 9063/80, para. 69.

Արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից անհրաժեշտ է հաշվի առնել գործի տևողությունը, դրա ծավալը ու բարդությունը: Իրավական, փաստական և դատավարական համալիր հարցերի շրջանակը կարող է դուրս գալ նույնիսկ իրավաբանորեն մասնագիտացված մեղադրյալի հնարավորությունների սահմաններից, հատկապես կալանավորված մեղադրյալի դեպքում, երբ վերջինս զրկված է անհրաժեշտ պայմաններից: Ավելին՝ դատարանն օրինական շահագրգռվածություն ունի, որ դատավարությունն ընթանա ողջամիտ ժամկետներում՝ առանց ընդհատումների, ընդմիջումների և կասեցումների⁴¹:

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական իրավունքների առանցքն է: Փաստաբանի կողմից ներկայացվող կասկածյալներն ու մեղադրյալներն առավել լավ կարգավիճակում են գտնվում իրենց իրավունքների իրականացման տեսանկյունից, քանի որ նրանք ավելի լավ են տեղեկացվում իրենց իրավունքների մասին: Բացի այդ՝ փաստաբանի ներգրավվածությունը երաշխավորում է վերջինների իրավունքների հարգումը: Իրավաբանական գիտելիքների և փորձառության շնորհիվ փաստաբանն առավել արդյունավետորեն է ներկայացնում կասկածյալի կամ մեղադրյալի շահերը, ինչից ելնելով՝ Կոնվենցիան սահմանում է հանցագործության մեջ մեղադրվող ցանկացած անձի իրավունքը՝ պաշտպանվել... պաշտպանի միջոցով: Միաժամանակ, սույն պայմաններում հարց է առաջանում, թե արդյո՞ք կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունեն հրաժարվելու պաշտպան ունենալու իրավունքից: Հարցը վերաբերում է հիմնականում պարտադիր պաշտպան ունենալու իրավունքին, քանի որ Կոնվենցիան նախատեսում է, որ անձն **իրավունք** ունի պաշտպանելու իրեն անձամբ կամ պաշտպանի միջոցով, հետևաբար՝ հրաժարվել այդ իրավունքից հնարավոր է: Սակայն տվյալ իրավունքից հրաժարումը պետք է լինի ոչ միայն կամավոր, այլև հասկանալի և գիտակցված: Անհրաժեշտ է, որ մեղադրյալի վարքագծից երևա, որ վերջինս ողջամտորեն կանխատեսում է իր վարքագծի հետևանքները⁴²: Ինչպես փաստել է Եվրոպական դատարանը, կասկածյալի կամ մեղադրյալի կողմից պաշտպանից հրաժարումը չի կարող ընդունվել, եթե դա կատարվել է ոստիկանության կողմից հարցաքննության միջոցով, եթե վերջինս նույնիսկ տեղեկացվել է իր իրավունքի մասին: Իսկ այն դեպքերում, երբ մեղադրյալը պաշտպան ունենալու ցանկություն է հայտնել, նրա հարցաքննությունը պետք է կատարվի միայն փաստաբանի ներկայությամբ, քանի դեռ ոստիկանության կամ դատախազության հետ շփումները չեն նախաձեռնվել անձամբ մեղադրյալի կողմից⁴³:

Կոնվենցիան ուղղակիորեն չի ամրագրում իրավաբանական օգնության իրավունքի ծագման պահի հարցը: Քանի որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը վերաբերում է հանցագործություն կատարելու մեղադրանք առաջադրված յուրաքանչյուր անձի, այն կիրառվում է մեղադրանք առաջադրելուց կամ վարույթի ֆորմալ մեկնարկից հետո, այսինքն՝ այն պահից, երբ անձն իրավասու պետական մարմնից տեղեկացվում է իր կողմից հանցագործություն կատարելու կասկածի մասին: Հետևաբար, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ծագում է անմիջապես ձերբակալման պահից⁴⁴: Եթե հարցաքննության ընթացքում կասկածյալը պետք է կայացնի որոշումներ, որոնք կարևոր են վարույթի հետագա ընթացքի համար, ապա վերջինս իրավաբանական օգնություն պետք է ստանա նախքան հարցաքննությունը սկսվելը⁴⁵:

Դատարանն արձանագրել է, որ չնայած այն հանգամանքին, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածից չի բխում ոստիկանության կողմից կասկածյալի հարցաքննությանը իրավաբանի ֆիզիկական ներկայության իրավունքը⁴⁶, որոշ դեպքերում իրավաբանի ֆիզիկական ներկայությունը անհրաժեշտ հակակշիռ է հարցաքննությունների ընթացքում կիրառվող ճնշմանը⁴⁷: Միաժամանակ, ոստիկանության կողմից հարցաքննվելու ժամանակ իրավաբանի մասնակցությունը հանցագործության մեջ կասկածվող անձի նկատմամբ վատ վերաբերմունքը կանխելու հարցում հիմնարար իրավունք է ճանաչվել ինչպես Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանի⁴⁸, այնպես էլ Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի⁴⁹ կողմից:

Ի ապահովումն արդար դատաքննության իրավունքի բավարար գործնականության և արդյունավետության՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը պահանջում է, որ հանցագործության մեջ կասկածվող անձն

41 Granger v. UK, 24 May 1991, no. 11932/86, para. 46-48.

42 Pishchalnikov v. Russia, 24 September 2009, no. 7025/04, para. 76.

43 Նույն տեղում, para. 79.

44 John Murray v. UK, 8 February 1996, no. 18731/91, ինչպես նաև Magee v. UK, 6 June 2000, no. 28135/95.

45 Averill v. UK, 6 June 2000, no. 36408/97.

46 Brennan v. UK, 6 October 2001, no. 39846/98.

47 Condron v. UK, 2 May 2000, no. 35718/97, para. 60.

48 Decision on the Defence Motion to Exclude Evidence from ICTY in Zdravko Mucic, 2 September 1997, Case no. IT-96-21-T, Trial Chamber II.

49 Second General Report (CPT/Inf (92) 3), Sections 36-38, at <http://www.cpt.coe.int>.

իրավաբանական օգնություն ստանա ոստիկանության կողմից առաջին իսկ հարցաքննության ժամանակ, քանի դեռ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի հանգամանքներով պայմանավորված՝ տվյալ իրավունքի սահմանափակման անհատթահարելի պատճառներ առկա չեն⁵⁰:

Իրավաբանի ներկայությունը հարցաքննության ընթացքում երաշխավորում է նաև մեղադրյալի կողմից իր դեմ ցուցմունք տալու բացառումը: Վերոնշյալ սկզբունքներն առավել վերաբերելի են ծանր հանցագործությունների մեջ մեղադրվելու դեպքերին, քանի որ ծանր պատիժների դեպքում արդար դատաքննության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում պետք է երաշխավորվի ամենաբարձր մակարդակով⁵¹: Ի լրումն նրա, որ փաստաբանի ներկայությունը ապահովում է մեղադրյալի կողմից ինքնամեղադրման բացառումը, Դատարանն արձանագրել է, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը վերաբերում է նաև մեղադրյալի կողմից լռություն պահպանելու իրավունքի իրացմանը⁵²: Ճիշտ է, նախքան առաջին հարցաքննությունը իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը բացարձակ չէ, սակայն այն կարող է սահմանափակվել միայն գործի հանգամանքներից բխող անհատթահարելի պատճառներից⁵³ ելնելով: Նույնիսկ այն դեպքերում, երբ անհատթահարելի պատճառները արդարացնում են իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի սահմանափակումը, այն, անկախ դրա հիմնավորումից, չպետք է հանդիսանա մեղադրյալի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների անհարկի սահմանափակում: Մեղադրյալի պաշտպանության իրավունքը խախտված կհամարվի, երբ առանց փաստաբանի ներկայության հարցաքննության ընթացքում ձեռք բերված մեղադրական ապացույցները դրվեն մեղադրանքի հիմքում: Միաժամանակ, Դատարանն արձանագրել է, որ իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունքի սահմանափակումը չի կարող փոխհատուցվել այլ դատավարական իրավունքներով, ինչպիսիք են իրավաբանական օգնության տրամադրումը վարույթի հետագա փուլերում կամ հետագա վարույթի մրցակցային բնույթը⁵⁴:

Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ծագում է մինչև անձի ձերբակալվելը, եթե վերջինս գրկված է եղել ազատորեն գործելու հնարավորությունից⁵⁵, եթե անձը, ենթարկվելով վարչական ձերբակալման, փաստացիորեն գտնվել է կասկածյալի կարգավիճակում⁵⁶:

Այն դեպքերում, երբ անձը ոստիկանություն է հրավիրվում որպես վկա, սակայն իրականում գտնվում է կասկածյալի կարգավիճակում, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը նույնպես գործում է⁵⁷:

Արդյունավետ իրավաբանական օգնություն ստանալու կարևորագույն պայման է մեղադրյալի և փաստաբանի հարաբերությունների գաղտնիությունը, որն իր մեջ ներառում է գաղտնի հաղորդակցության և փաստաբանի կողմից իր պաշտպանյալին անարգել տեսակցելու իրավունքները: Սա նշանակում է, որ պետության պարտականությունն է փաստաբանի՝ մեղադրյալի հետ անարգել տեսակցելու և մեղադրյալի՝ առանց երրորդ անձանց ներկայության իր պաշտպանյալի հետ հաղորդակցվելու երաշխիքներ ապահովելը⁵⁸: Հաղորդակցությունը կատարվում է ինչպես անձամբ, այնպես էլ կապի միջոցներով, ներառյալ՝ նամակագրության: Փաստաբանի և նրա պաշտպանյալի հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն բացառիկ դեպքերում, օրինակ՝ երբ ողջամիտ կասկածներ կան, որ հաղորդակցության պարունակությունը կարող է վնասել բանտի անվտանգության ապահովմանը՝ այլ անձանց իրավունքների պաշտպանության և նոր հանցագործությունների կանխման նպատակով⁵⁹:

Իրավաբանական օգնության ընտրության իրավունքը

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասը նշում է, որ հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձն իրավունք ունի ընտրելու փաստաբան, եթե վճարում է նրա ծառայությունների դիմաց անձամբ: Դատարանը փաստել է, որ եթե փաստաբանի և նրա հաճախորդի միջև գաղտնիությունը կարևոր է, փաստաբանի ընտրությունը բացարձակ իրավունք չէ: Մասնավորապես, այդ իրավունքը կարող է սահմանափակվել, երբ իրավաբանական օգնությունը տրամադրվում է պետության կողմից: Չնայած այն հանգամանքին, որ պետական մարմինները պետք է հաշվի առնեն կասկածյալի կամ մեղադրյալի ցանկությունը փաստաբան ներգրավելիս, այնուամենայնիվ, նրանց ցանկությունը կարող է մերժվել, երբ համապատաս-

50 Salduz v. Turkey, 27 November 2008, no. 36391/02, para. 55.

51 Նույն տեղում, para. 54.

52 Dayanan v. Turkey, 13 October 2009, no. 7377/03, para. 33.

53 Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Դատարանը դեռևս չի մեկնաբանել «անհատթահարելի պատճառ» եզրույթը:

54 Salduz v. Turkey, 27 November 2008, no. 36391/02, para. 58.

55 Zaichenko v. Russia, 18 February 2010, no. 39660/02.

56 Nechiporuk and Yonkalo v. Ukraine, 21 April 2011, no. 42310/04, para. 264.

57 Brusco v. France, 14 October 2010, no. 1466/07.

58 Zagaria v. Italy, 27 November 2007, no. 58295/00, para. 30.

59 Moiseyev v. Russia, 9 October 2008, no. 62936/00, para. 210.

խան և բավարար հիմնավորումներ են առկա, որ դա բխում է արդարադատության շահերից⁶⁰:

Ըստ Կոնվենցիայի՝ անվճար իրավաբանական օգնությունը կարող է տրամադրվել երկու պայմանների առկայության դեպքում՝ երբ անձը չունի բավարար միջոցներ՝ փաստաբանի ծառայությունների դիմաց վճարելու համար (միջոցների պայման) և երբ այդ է պահանջում արդարադատության շահը (պատճառների պայման): Այսպիսով, Կոնվենցիայի ներքո պետություններն ունեն գնահատողական լայն շրջանակ՝ որոշելու, թե ինչպես տրամադրվի անվճար իրավաբանական օգնությունը: Այն պետք է այնպիսին լինի, որ ապահովվի պաշտպանության իրավունքի արդյունավետ և պրակտիկ իրացումը:

Դատարանն արձանագրել է, որ իրավաբանի ծառայությունների համար միջոցների բացակայությունը հիմնավորելու բեռն ընկնում է անձի վրա (կասկածյալ կամ մեղադրյալ)⁶¹, սակայն մնան հիմնավորումը չպետք է լինի «բոլոր կասկածներից» վեր⁶²: Ըստ էության, Դատարանի նախադեպային իրավունքը չի մեկնաբանում «ոչ բավարար միջոցներ» եզրույթի հասկացությունն ընդհանրապես և այն, թե ինչպես այն պետք է մեկնաբանվի յուրաքանչյուր առանձին իրավական համակարգում: Պատճառների պայմանը, ըստ Դատարանի, ընդգրկում է երեք գործոններ, որոնք պետք է հաշվի առնվեն անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորությունը գնահատելու համար⁶³.

1. հանցագործության ծանրությունը և հնարավոր պատժի խստությունը,
2. գործի բարդությունը,
3. մեղադրյալի սոցիալական և անձնական տվյալները:

Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ պատճառների պայմանները բավարարվում են այն դեպքերում, երբ անձին ազատությունից զրկելու հարցն առկա է⁶⁴, սակայն տվյալ դեպքում այն վերաբերում է առավել նեղ «արդարադատության շահ» հասկացությանը: Ընդ որում, չի թույլատրվում իրավաբանական օգնությունը մերժել այն դեպքերում, երբ իրականացվում են դատավարական գործողություններ, այդ թվում՝ հարցաքննություններ և բժշկական հետազոտություններ⁶⁵: Այդուամենայնիվ, Դատարանի նախադեպային իրավունքը չի պարզաբանում, թե ինչպես են գործոնները գնահատվում յուրաքանչյուր կոնկրետ գործում:

Պաշտպանի դերն ու անկախությունը

Կոնվենցիան չի պարունակում կոնկրետ դրույթներ քրեական գործերով ներգրավված փաստաբանի դերի, անկախության և չափանիշերի առնչությամբ: Փաստաբանի կարգավիճակի մասին Հավանայի հռչակագիրը⁶⁶ սահմանում է, որ պետությունները պարտավոր են ապահովել փաստաբանների՝ իրենց մասնագիտական գործառնությունների՝ առանց ահաբեկումների, ճնշումների, խոչընդոտների և անհարկի միջամտությունների իրականացումը⁶⁷, ինչպես նաև սահմանում է, որ փաստաբանները չպետք է նույնականացվեն իրենց պաշտպանյալների կամ նրանց գործերի հետ⁶⁸: Դատարանի նախադեպային իրավունքը, այդուամենայնիվ, պարունակում է դրույթներ փաստաբանի կարգավիճակի և դերի վերաբերյալ:

Փաստաբանի կարևորագույն պարտականությունն է օժանդակել իր հաճախորդին դատավարությանը նախապատրաստվելու բուն գործընթացում: Բացի այդ՝ փաստաբանը պետք է ապահովի դատավարության ընթացքում ձեռնարկված միջոցառումների օրինականությունը⁶⁹: Քրեական դատավարության մինչդատական քննության փուլում Դատարանն իրավաբանական օգնության կարևորությունն ընդգծել է իր դեմ ցուցմունքներ տալու բացառման և լռելու իրավունքի պահպանման տեսանկյունից, մասնավորապես՝ ճնշումներն ու հարկադրանքը կանխելու համար⁷⁰: Կողմերի հավասարության սկզբունքը պահանջում է, որ կասկածյալը (ներառյալ ոստիկանության կողմից հարցաքննվելու փուլը) օժտված լինի իրավաբանական օգնություն ստանալու համար անհրաժեշտ երաշխիքների ողջ շրջանակով, ինչպիսիք են՝ գործի քննարկումը, փաստերի հետազոտությունը, բարենպաստ ապացույցների որոնումը, հարցաքննությանը նախապատրաստությունը, կասկածյալի օժանդակությունը, ինչպես նաև կալանավորման պայմանների վերահսկողությունը⁷¹:

60 Lagerblom v. Sweden, 14 January 2003, no. 26891/95, para. 54.

61 Croissant v. Germany, 25 September 1992, no. 13611/88, para. 37.

62 Pakelli v. Germany, 25 April 1983, no. 8398/78.

63 Quaranta v. Switzerland, 24 May 1991, no. 12744/87, para. 35.

64 Benham v. UK, 10 June 1996, no. 19380/92, para. 59.

65 Berlinski v. Poland, 20 June 2002, no. 27715/95.

66 ՄԱԿ-ի հանցագործությունների կանխարգելման և հանցագործների հետ վարվելակերպի 8-րդ համազումարում ընդունված Հավանայի հռչակագիր, 1990:

67 Նույն տեղում, հոդված 16-րդ:

68 Նույն տեղում, հոդված 18-րդ:

69 Ocalan v. Turkey, 4 March 2003, no. 63486/00.

70 Salduz v. Turkey, 27 November 2008, no. 3639/10, para. 54, Pavlenko v. Russia, 1 April 2010, no. 42371/02, para. 101.

71 Dayanan v. Turkey, 13 October 2009, no. 7377/03, para. 32.

Ներպետական իշխանություններն օժտված են գնահատման համապատասխան շրջանակով՝ փաստաբանի կողմից իր կարգավիճակից բխող գործառնությունների իրականացմանը միջամտելու անհրաժեշտության տեսանկյունից: Սակայն այդ շրջանակը ենթակա է վերահսկման ինչպես նորմերի, այնպես էլ դրանց ընթացակարգի առումով: Օրինակ՝ դատարանի դահլիճում դատարանին և մեղադրողին ուղղված քննադատությունների առումով փաստաբանի անկախությունը գնահատելու շրջանակն ավելի նեղ է, քան եթե նման քննադատությունը կատարվում է զանգվածային լրատվամիջոցների միջոցով⁷²: Դատարանն ամրագրել է, որ փաստաբանի կողմից դատավարության մյուս կողմին ուղղված քննադատությունները դժվար է համատեղել փաստաբանի պարտականության՝ իր պաշտպանյալի շահերի պատշաճ պաշտպանության հետ⁷³: Կոնվենցիայի 10-րդ հոդվածի լուսի ներքո՝ Դատարանը չի բացառել, որ կոնկրետ հանգամանքների առկայության պայմաններում դատավարության ընթացքում փաստաբանի խոսքի ազատության սահմանափակումները կարող են բարձրացնել 6-րդ հոդվածի խախտման հարցը՝ մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքի առնչությամբ: Կողմերի հավասարությունը և արդարության այլ պահանջները խոսում են կողմերի միջև փաստարկների ազատ և նույնիսկ համոզիչ փոխանակման օգտին:

Դատարանն ամրագրել է, որ փաստաբաններն օժտված են դատական քննությունը հրապարակայնորեն մեկնաբանելու իրավունքով, սակայն նրանց քննադատությունը չպետք է գերազանցի որոշակի սահմանները: Պետք է հաշվի առնվի բոլոր ներգրավված շահերի միջև հավասարակշռություն սահմանելու անհրաժեշտությունը, ինչը ներառում է հասարակության իրավունքը՝ ստանալու տեղեկատվություն դատարանի որոշումներում բարձրացված հարցերի վերաբերյալ, պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջները և իրավաբանի մասնագիտական արժանապատվությունը:

Իրավաբանական օգնությունը պետք է լինի արդյունավետ, և պետությունը պարտականություն է կրում փաստաբանին ապահովելու անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ պատշաճ պաշտպանություն իրականացնելու համար⁷⁴: Եթե իրավաբանն անարդյունավետ է գործում, ապա պետությունը պարտավոր է ապահովել մեղադրյալին այլ փաստաբանով⁷⁵: Այդուամենայնիվ, պետությունը պատասխանատվություն չի կրում փաստաբանների պարտությունների, թերացումների համար: Պետությունը պարտավոր է միջամտել միայն այն դեպքում, երբ արդյունավետ պաշտպանություն իրականացնելու թերացումներն արտահայտված են կամ դրանք բավականաչափ ներկայացվել են պետության ուշադրությանը⁷⁶: Դա վերաբերում է ինչպես մեղադրյալի կողմից ընտրված փաստաբանին, այնպես էլ իրավաբանական օգնության շրջանակներում նշանակված փաստաբանին⁷⁷: Եվրոպական դատարանը հատկապես քննադատորեն է գնահատում ոստիկանության կողմից հարցաքննության ընթացքում իրավաբանական օգնության շրջանակներում գործող փաստաբանի կողմից իրականացված պաշտպանության արդյունավետությունը: Մասնավորապես, ըստ Դատարանի՝ վարույթ իրականացնող մարմինը պարտականություն է կրում աշարջորեն հետևելու պաշտպանի գործունեության արդյունավետությանը⁷⁸:

Իր դեմ ցուցմունք տված անձանց հարցաքննելու իրավունքը

Արդյունավետ պաշտպանության իրացման կարևորագույն տարրերից է հանցագործության մեջ մեղադրվող անձի իրավունքը՝ հարցաքննելու վկաներին: Այս իրավունքը բաղկացած է երեք առանձին իրավունքներից, մասնավորապես՝ իրավունքը հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված (մեղադրանքի) վկաներին, իրավունքը դատարան իրավիճակում և հարցաքննելու իր նախաձեռնությամբ կանչված վկաներին (պաշտպանության վկաներ) և իրավունքը, որ պաշտպանության վկաները հարցաքննվեն նույն պայմաններում, ինչ մեղադրանքի վկաները:

Մրցակցային դատավարության իմաստով բոլոր ապացույցները պետք է հետազոտվեն հրապարակային դատաքննության ընթացքում՝ հանցագործության մեջ մեղադրվող անձի ներկայությամբ⁷⁹: Իհարկե, չեն բացառվում սույն կանոնից բացառություններ, սակայն ցանկացած դեպքում անձի պաշտպանության իրավունքը պետք է պահպանվի: Որպես ընդհանուր կանոն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի

⁷² Nikula v. Finland, 21 March 2002, no. 31611/96, para. 46, ECHR 2002-II.

⁷³ Տե՛ս նույն տեղում:

⁷⁴ Ocalan v. Turkey, ECHR 4 March 2003, no. 63486/00.

⁷⁵ Artico v. Italy, 13 May 1980 (A 37).

⁷⁶ Kamasinski v. Austria, 19 December 1989, no. 9783/82, Czekalla v. Portugal, no. 38830/97, 10 October 2002, para. 65.

⁷⁷ Pavlenko v. Russia, 1 April 2010, no. 42371/02, para. 99.

⁷⁸ Տե՛ս նույն տեղում, paras. 108–114. Միաժամանակ անհրաժեշտ է փաստել, որ սույն գործում դիմումատուն հրաժարվել էր իրավաբանական օգնության շրջանակներում նշանակված փաստաբանի ծառայություններից և ընտրել էր մոտ կողմից հրավիրված փաստաբանին, միաժամանակ, ոստիկանությունը փաստաբանի բացակայությամբ ոչ ֆորմալ բանակցություններ էր վարել դիմումատուի հետ:

⁷⁹ Lucà v. Italy, no. 33354/96, ECHR 2001-II, para. 39.

1-ին մասը և 3-րդ մասի «դ» ենթակետը պահանջում են, որ մեղադրյալին համարժեք և պատշաճ հնարավորություններ տրվեն՝ վիճարկելու և հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված վկային⁸⁰: Միաժամանակ, պարտադիր չէ, որ մեղադրյալն անձամբ հարցաքննի վկաներին. բավարար է հարցաքննության իրականացումը պաշտպանի կողմից⁸¹:

Հանցագործության մեջ մեղադրվող անձը պետք է դատախազության հետ հավասար հնարավորություն ունենա հրավիրելու վկաներ: Միաժամանակ, վկաներ հրավիրելու իրավունքը բացարձակ չէ, և կարող է սահմանափակվել՝ հաշվի առնելով արդարադատության շահը⁸²: Այդպիսով, մեղադրյալի կողմից վկային դատարանում հարցաքննելու պահանջի դեպքում դատարանն է որոշում դատարանում վկայի հարցաքննության անհրաժեշտությունը⁸³: Մեղադրյալը պետք է հիմնավորի վկային դատարանում հարցաքննելու անհրաժեշտությունը գործով ճշմարտությունը բացահայտելու համար: Տվյալ դեպքում հիմնական խնդիրն է ողջ դատավարության, ներառյալ ապացույցի ձեռքբերման եղանակի արդարացիությունը, և վկային դատարանում հարցաքննելու միջնորդության մերժումը դատարանի կողմից պետք է պատշաճ հիմնավորված լինի⁸⁴: Վկային հարցաքննելու հնարավորության բացակայությունը կարող է գնահատվել որպես արդար դատաքննության իրավունքի խախտում, սակայն Եվրոպական դատարանը նման դեպքերը գնահատում է՝ հաշվի առնելով վկայի չներկայանալու պատճառները⁸⁵ և դատավարության արդարացիության վրա մեղադրյալի կողմից վկային հարցաքննելու հնարավորության բացակայության ազդեցությունը: Տվյալ դեպքում գնահատվում է չհետազոտված ապացույցի նշանակությունը՝ որոշելու անձի իրավունքի սահմանափակման համապատասխանությունը⁸⁶: Համաձայն Դատարանի զարգացրած նախադեպային իրավունքի՝ դատապարտումը չպետք է հիմնված լինի բացառապես կամ որոշիչ աստիճանով այն ապացույցների վրա, որոնք դատապարտված անձը հնարավորություն չի ունեցել վիճարկելու⁸⁷:

Այդուամենայնիվ, նույնիսկ միակ և որոշիչ ապացույց հանդիսացած վկային հարցաքննելու հնարավորության բացակայությունը մեխանիկորեն չի կարող հանգեցնել արդար դատաքննության իրավունքի խախտման, յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի բավարար հավասարակշռող գործոնների առկայությունը, ներառյալ կոնկրետ ապացույցի հավաստիության արդարացի և պատշաճ գնահատման համար ձեռնարկված միջոցները: Անձի դատապարտումը կարող է հիմնվել նման ապացույցի վրա միայն այն դեպքում, երբ բավարար չափով հավաստի է՝ հաշվի առնելով գործում դրա նշանակությունը⁸⁸:

Առանձնահատուկ բարդություններ են առկա անանուն վկաների ցուցմունքների առնչությամբ: Մինչդատական վարչություն անանուն վկաների վրա հիմնվելը ինքնին չի հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածին, սակայն դրանց հիման վրա կայացված որոշումները կարող են հակասել: Եվրոպական դատարանը սահմանել է դատական քննության փուլում անանուն վկաներից ստացված ապացույցների կիրառումը գնահատող երեք չափանիշներ. առաջին՝ արդյո՞ք բավարար պատճառներ են առկա վկայի ինքնությունը թաքցնելու համար, երկրորդ՝ արդյո՞ք պաշտպանության կողմի կրած սահմանափակումները բավարարաչափ հավասարակշռվել են դատարանի կողմից, երրորդ՝ արդյո՞ք անանուն վկայից ստացված ապացույցը միակը կամ որոշիչն է կոնկրետ գործի համար⁸⁹:

Մեղադրյալի՝ վկաներին հարցաքննելու իրավունքի իրացման սկզբունքները վերաբերելի են նաև փորձագետներին հարցաքննելու դեպքերին:

Անմեղության կանխավարկած

Անմեղության կանխավարկածը, Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն, բաղկացած է երեք առանձին պահանջներից⁹⁰:

Առաջին՝ դատական իշխանությունները չպետք է ելնեն այն կանխավարկածից, որ մեղադրյալը կատարել է իրեն վերագրվող հանցագործությունը: Անմեղության կանխավարկածը կհամարվի խախտված, եթե մինչև օրենքով սահմանված կարգով անձի մեղավորությունը հանցագործության մեջ ճանաչելը կայացված դատական որոշմամբ մեղադրյալի՝ հանցագործության մեջ մեղավորության մասին ենթադրու-

80 Նույն տեղում:

81 Doorson v. the Netherlands, 26 March 1996, para. 74.

82 Polyakov v. Russia, 29 April 2009, No. 77018/01, para. 31.

83 Perna v. Italy, 6 May 2004 No. 48898/99, para. 29.

84 Vidal v. Belgium, 22 April 2000, No. 12351/86, para. 34.

85 Ludi v. Switzerland, 15 June 1992, Series A, No. 238.

86 Kornev and Karpenko v. Ukraine, 21 October 2010, No. 17444/04, paras. 54–57.

87 Luca v. Italy, 27 February 2001, No. 33354/96, para. 40.

88 Al-Khawaja and Tahery v. UK, Grand Chamber, 15 December 2011, Nos. 26766/05 and 22228/06, para. 147.

89 Doorson v. Netherlands, 26 March 1996, No. 20524/92, paras. 70–76.

90 Barbera, Messegue and Jabardo v. Spain, December 1988, no. 10590/83, para. 77.

յուն է արտահայտվում: Դա կարող է տեղի ունենալ նույնիսկ առանց պաշտոնական հետևությունների. դատարանի կողմից մեղադրյալի մեղավորությունը ենթադրող եզրահանգումների առկայությունը բավական է⁹¹: Անմեղության կանխավարկածը վերաբերում է դատավարության ողջ ընթացքին՝ անկախ մինչդատական վարույթի արդյունքներից⁹²: Միաժամանակ, օրենքով սահմանված կարգով մեղավոր ճանաչվելուց հետո մեղադրյալի անմեղության կանխավարկածն ըստ էության դադարում է գործել դատավճռի կայացման առնչությամբ կատարված այլ հայտարարությունների մասով⁹³: Անմեղության կանխավարկածը, ի կրումն դատական իշխանության, վերաբերում է նաև պետական այլ պաշտոնատար անձանց (այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմինների ներկայացուցիչներին), և դա կհամարվի խախտված, եթե պաշտոնատար անձի կողմից հայտարարվի հանցագործության մեջ մեղադրվող անձի մեղավորության մասին՝ նախքան օրենքով նախատեսված կարգով նրա մեղավորության հաստատումը⁹⁴:

Երկրորդ՝ անմեղության կանխավարկածը հիմնարար նշանակություն ունի ապացուցողական կանոնների համար. մեղադրյալի մեղավորության ապացուցման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը, և մեղադրանքի վերաբերյալ ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի⁹⁵: Ավելին՝ անմեղության կանխավարկածը նշանակում է, որ դատարանի դատավճիռը պետք է հիմնված լինի հետազոտված ապացույցների, այլ ոչ թե ենթադրությունների կամ կասկածների վրա⁹⁶: Սակայն անմեղության կանխավարկածը բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել, եթե պետական մարմինները կարողանում են արդարացիորեն հավաստակշռել պաշտպանության իրավունքի և խնդրո առարկա հարցի կարևորությունը⁹⁷: Հետևաբար, փաստերի և օրենքի նկատմամբ կանխավարկածը չի արգելվում Կոմվենցիայով, եթե պահպանվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքը⁹⁸: Որոշ դեպքերում մեղադրյալը կարող է կրել իր անմեղությունն ապացուցելու բեռը:

Երրորդ՝ անմեղության կանխավարկածը պահանջում է, որ վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալին տրամադրի տեղեկատվություն՝ պաշտպանությունը պատշաճ կազմակերպելու համար⁹⁹:

Հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը սահմանում է, որ կասկածյալը/մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկները հերքելու պարտականություն կրում է մեղադրանքի կողմը: Իսկ մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա¹⁰⁰:

Միաժամանակ, անմեղության կանխավարկածի սկզբունքը սահմանում է, որ անձի մեղավորության մասին հետևությունները չեն կարող հիմնվել ենթադրությունների վրա. դրանք պետք է հաստատվեն գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, և այն կասկածները, որոնք չեն կարող փարատվել քրեադատավարական օրենսդրության դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ կասկածյալի կամ մեղադրյալի:

Անմեղության կանխավարկածի մեկնաբանությունից հետևում է, որ քննության ընթացքում մեղադրյալը համարվում է անմեղ, քանի դեռ դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցներով մեղադրանքի կողմը չի հիմնավորում ամբաստանյալի մեղքը ողջամիտ կասկածներից վեր¹⁰¹: **Նույնիսկ այն դեպքում, երբ ամբաստանյալն իրեն մեղավոր է ճանաչում մեղսագրվող հանցագործության մեջ, ամբաստանյալի մեղքը պետք է հիմնավորվի դատաքննության ընթացքում հետազոտված գործին վե-**

91 Minelli v. Switzerland, 21 February 1983, no. 8660/79, para. 37.

92 St' u նույն տեղում, para. 30.

93 Phillips v. UK, 5 July 2001, no. 41087/98, paras. 28–36.

94 Dakaras v. Lithuania, 10 October 2000, no. 42095/98, para. 41.

95 Barbera, Messegue and Jabardo v. Spain, 6 December 1988, no. 10590/83, para. 77.

96 Telfner v. Austria, 20 March 2001, no. 33501/96, para. 19.

97 Falk v. Netherlands, 19 October 2004, no. 66273/01.

98 Salabiaku v. France, October 1988, no. 10519/83, para. 28.

99 Barbera, Messegue and Jabardo v. Spain, 6 December 1988, no. 10590/83, para. 77.

100 ՀՀ ՔԴՕ, հոդված 18:

101 «Ողջամիտ կասկածից վեր» տերմինը կանխորոշում է, թե որքան համոզիչ պետք է լինի ապացույցը, որ դրվի մեղադրական դատավճռի հիմքում: Մարդկային հարաբերություններում բավականին քիչ հարցեր կան, որոնք կարող են հայտնի լինել բացարձակ հստակությամբ: Այդ պատճառաբանությամբ հնարավոր չէ մեղադրողի վրա պարտավորություն դնել ապացուցելու ամբաստանյալի մեղավորությունը բոլոր հնարավոր կասկածներից վեր: Ողջամիտ կասկածը մեղադրյալի մեղավորության վերաբերյալ արդարացված կասկածն է՝ ապացույցի բնույթի և որակի վրա հիմնված: Սակայն այն պետք է լինի փաստական, այլ ոչ երևակայական:

րաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Ավելին՝ հանցագործության կատարման մեջ անձի մեղավորությունը կարող է հաստատվել ոչ թե ցանկացած, այլ քրեադատավարական օրենսդրության պահանջների պահպանմամբ ձեռք բերված ապացույցներով¹⁰²:

Դատաքննության ողջ ընթացքում դատարանը պետք է չեզոք դիրքորոշում և վերաբերմունք ունենա ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության կողմի ներկայացրած ապացույցների նկատմամբ: Ամբաստանյալի կողմից կարող են ներկայացվել ապացույցներ՝ ի պաշտպանություն իրեն, իսկ վերջինիս կողմից հանցագործության կատարման ապացուցման բեռը մնում է մեղադրանքի կողմի վրա: Ամբաստանյալը դատական քննության ընթացքում որևէ բան ապացուցելու պարտականություն առհասարակ չի կրում: Փոխարենը՝ մեղադրանքի կողմը պետք է ողջամիտ կասկածներից վեր ապացուցի ամբաստանյալի մեղավորությունը վերագրվող հանցագործությունների յուրաքանչյուր էլեմենտում, այդ թվում՝ նաև այն հանգամանքը, որ հանցագործությունը կատարվել է հենց ամբաստանյալի կողմից: Եվ եթե մեղադրողը չի կարողանում հիմնավորել ամբաստանյալի մեղքը, նա պետք է արդարացվի:

Այսպիսով՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը անձը համարվում է անմեղ և նրա մեղավորության մասին ոչ մի հետևություն իրավաբանական նշանակություն չունի՝ անկախ նրա կողմից հանցագործություն կատարելու կասկածի կամ առաջադրված մեղադրանքից, անկախ վարույթն իրականացնող մարմնի կարծիքից կամ ներքին համոզմունքից: Արդարադատություն իրականացնելիս դատարանը պարտավոր է լինել անկողմնակալ և չպետք է ելնի այն համոզումից, որ մեղադրյալը (ամբաստանյալը) կատարել է հանցագործությունը:

Միաժամանակ, քրեական գործով վարույթը կարճելիս ոչ արդարացման հիմքով քրեական վարույթն իրականացնող մարմինը քրեական վարույթը կարճելու վերաբերյալ որոշման մեջ պարտավոր է օգտագործել այնպիսի արտահայտություններ, որոնք կասկածի տակ չեն դնում անձի անմեղությունը հանցագործության կատարման մեջ¹⁰³:

Լռություն պահպանելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը

Ի տարբերություն անմեղության կանխավարկածի՝ լռություն պահպանելու իրավունքը Կոնվենցիայով նախատեսված չէ: Այդուամենայնիվ, Դատարանի կողմից հաստատվել է, որ լռություն պահպանելու և իր դեմ ցուցմունք տալուց ազատ լինելու իրավունքը արդար դատաքննության իրավունքի կարևորագույն հատկանիշներն են¹⁰⁴: Իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը նշանակում է, որ մեղադրանքի կողմը պետք է հիմնավորի մեղադրանքն առանց հարկադրական մեթոդների և ճնշումների արդյունքում ստացված ապացույցների կիրառման¹⁰⁵: Չնայած իր հիմնարար բնույթին՝ լռություն պահպանելու իրավունքը կարող է նաև սահմանափակվել¹⁰⁶, սակայն Դատարանը չափազանց խիստ չափանիշերով է գնահատում իրավունքի սահմանափակման արդարացումները¹⁰⁷: Միաժամանակ, անհրաժեշտ է սահմանազատել անձին որոշակի ցուցմունքներ տալուն հարկադրելը և անձի կողմից լռություն պահպանելուց հետևություններ անելը: Երկու դեպքում էլ անհրաժեշտ է հաշվի առնել գործի բոլոր փաստական հանգամանքները, որպեսզի իրավունքը համարվի խախտված¹⁰⁸: Դատարանի կողմից իրավունքի խախտման փաստը ճանաչելու համար կարևորվում են հարկադրանքի բնույթն ու աստիճանը, համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչպես նաև ստացված ապացույցների օգտագործումը հետագա վարույթների ընթացքում¹⁰⁹:

Միաժամանակ, Դատարանն իր վճիռներում անդրադարձել է կասկածյալի և մեղադրյալի լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի վերաբերյալ տեղեկանալու հարցին: Ըստ Դատարանի նախադեպային իրավունքի՝ անձը պետք է տեղեկացվի դրա մասին, երբ իրավունքը ծագում է¹¹⁰ անձը «մեղադրվում է» հանցագործության կատարման մեջ, այսինքն՝ երբ անձի կարգավիճակն էականորեն վատթարացել է¹¹¹:

Դատարանն ամրագրել է, որ լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները սերտորեն կապված են պաշտպանության իրավունքի հետ: Փաստաբանի հասանելիությունը քննության վաղ փուլում կարևորագույն դատավարական երաշխիք է, որը Դատարանը հաշվի է առնում իր դեմ ցուցմունք տալու իրա-

102 ՀՀ ՔԴՕ, հոդված 104:

103 Virabyan v. Armenia, 2 October 2012, no. 40095/05, paras. 89-93.

104 Funke v. France, 25 February 1993, no. 10828/84, paras. 41-44.

105 Saunders v. UK, 17 December 1996, no. 19187/91, para. 68.

106 John Murray v. UK, 8 February 1996, no. 18731/91, para. 47.

107 Heaney and McGuinness v. Ireland, 21 December 2000, no. 34720/97, paras. 57-58.

108 O'Halloran and Francis v. UK, 29 June 2007, nos. 15809/02 and 25624/02, para. 53.

109 Allan v. UK, 5 November 2002, no. 48539/99, para. 44.

110 Zaichenko v. Russia, 18 February 2010, no. 39660/02, para. 52.

111 Saunders v. UK, 17 December 1996, no. 19187/91, paras. 67 and 74.

վունքի խախտման հարցը գնահատելու դեպքում¹¹²: Նախնական քննության ընթացքում կասկածյալն ու մեղադրյալը գտնվում են առավել խոցելի կարգավիճակում, ինչը փոխարացվում է իրավաբանական օգնության միջոցով, որի կարևորագույն խնդիրն է մասնաշաղկապել մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի հարգումը¹¹³:

Դատական քննության մրցակցությունը և դատական քննությանը ներկա գտնվելու և մասնակցելու իրավունքը

Հանցագործության մեջ մեղադրվող անձն իրավունք ունի ներկա գտնվել և ակտիվ մասնակցել քրեական գործով քննությանը: Դա նշանակում է, որ մեղադրյալը պետք է կարողանա մեկնաբանել իր վարկածը և առարկել այն փաստարկների դեմ, որոնց համաձայն չէ: Դա կարող է արվել փաստաբանի միջոցով, ում հետ կասկածյալը պետք է փաստերը քննարկելու հնարավորություն ունենա, որպեսզի իրականացնի պատշաճ պաշտպանություն¹¹⁴: Միաժամանակ, փաստաբանի ներկայությունը չի փոխհատուցում մեղադրյալի բացակայությունը¹¹⁵: Ըստ Դատարանի նախադեպային իրավունքի՝ մեղադրյալի բացակայությամբ դատավարությունն ինքնին չի հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածին, եթե անձը հրաժարվել է ներկա գտնվել քննությանը և ստացել է իրեն ներկայացված մեղադրանքի կապակցությամբ դատարանի որոշումը¹¹⁶: Եթե մեղադրյալը ստացել է համապատասխան ծանուցագրերը, սակայն գիտակցաբար չի ներկայացել դատական քննությանը, նոր դատական քննության անցկացումը կարող է մերժվել¹¹⁷: Չնայած նրան, որ Դատարանն ընդգծել է դատական քննությանը մեղադրյալի ներկայության կարևորությունը, վերջինիս բացակայությունը չի կարող նրան զրկել իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից¹¹⁸: Դատական քննությունից բացակայող անձին պաշտպանելու նպատակով քննությանը մասնակցող փաստաբանին պետք է տրվի նման հնարավորություն¹¹⁹:

Վերաքննության կամ վճռաբեկության կարգով դատական քննությանը մեղադրյալի մասնակցությունը կարող է սահմանափակվել, եթե քննությունը սահմանափակված է իրավունքի, այլ ոչ թե փաստական հարցերով¹²⁰: Դատական քննությանը մեղադրյալի մասնակցությունը պայմանավորված է պետության վերաքննության համակարգի բնույթով, վերաքննիչ դատարանի իրավասությամբ և մեղադրյալի իրավունքների պաշտպանության մեթոդներով¹²¹:

Հիմնավորված դատական ակտ ունենալու և բողոքարկելու իրավունքը

Արդար դատաքննության իրավունքի պահանջներից բխում է դատարանի պարտականությունը՝ բավարար հստակությամբ ներկայացնելու իր որոշման հիմնավորումները¹²²: Հիմնավորված որոշումը թույլ է տալիս կողմերին համոզվել, որ դատարանի կողմից իրենց փաստարկները գնահատվել են հավասար և արդար: Այս ամենը որոշումը բողոքարկելու և դատապարտված անձին վերաքննությանը պատրաստվելու հնարավորություն է տալիս¹²³: Ավելին հիմնավորված որոշումներ կայացնելու պահանջը թույլ է տալիս հասարակական վերահսկողություն իրականացնել արդարադատության իրականացման նկատմամբ՝ դրանով իսկ դատական քննությունն առավել թափանցիկ և հաշվետու դարձնելով¹²⁴: Իհարկե, հիմնավորված որոշում կայացնելու դատարանի պարտականությունը չի նշանակում, որ դրանում պետք է մանրակրկիտ պատասխան տրվի ներկայացված բոլոր փաստարկներին¹²⁵: Դատարանի որոշման հիմնավորվածության ծավալները կախված են դատարանի որոշման և հնարավոր խախտման բնույթից և պետք է գնահատվեն կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո¹²⁶: Չնայած նրան, որ դատարաններն օժտված են գնահատման համապատասխան շրջանակով կոնկրետ գործի փաստարկ-

112 Pishchalnikov v. Russia, 24 September 2009, no. 7025/04, para. 69.

113 Salduz v. Turkey, 27 November 2008, no. 36391/02, para. 54.

114 Timergaliyev v. Russia, 14 October 2008, no. 40631/02, paras. 51–56.

115 T. v. UK, 16 December 1999, para. 88.

116 Colozza v. Italy, 12 February 1985, no. 9024/80, paras. 27–33.

117 Medenica v. Switzerland, 14 June 2001, no. 20491/92, para. 59.

118 Poitrimol v. France, 23 November 1993, no. 14032/88, para. 35.

119 Lala v. the Netherlands, 22 September 1994, no. 14861/89 paras. 30–34.

120 Botten v. Norway, 10 February 1996, no. 16206/90, para. 39.

121 Fejde v. Sweden, 29 October 1991, no. 12631/87, para. 27.

122 Hadjianastassiou v. Greece, 16 December 1992, no. 12945/87, para. 33.

123 Suominen v. Finland, 1 July 2003, no. 37801/97, para. 37.

124 Hirvisaari v. Finland, 27 September 2001, no. 49684/99, para. 30.

125 Van de Hurk v. Netherlands, 19 April 1994, no. 16034/90, para. 61.

126 Ruiz Torija v. Spain, 9 December 1994, no. 18390/91, para. 29.

ների ընտրության և ապացույցների գնահատման հարցում, նրանք պարտականություն են կրում հիմնավորելու իրենց որոշումները¹²⁷: Արդար դատաքննության իրավունքը պահանջում է դատարանին անդրադառնալ իր առջև բարձրացրած կարևոր հարցերին, իսկ ստորին ատյանի դատարանների որոշումները չպետք է ուղղակիորեն հաստատվեն առանց հստակ պարզաբանումների¹²⁸: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է բողոքը ստորին ատյանի դատարանի որոշման հիման վրա, անհրաժեշտ է ստուգել, թե արդյոք ստորին ատյանի դատարանի կողմից կայացված որոշման հիմնավորումները թույլ են տվել կողմերին արդյունավետորեն իրականացնել բողոքարկելու իրենց իրավունքը¹²⁹:

Հիմնավորված որոշում ունենալու մեղադրյալի իրավունքն անխզելիորեն կապված է դատարանի որոշումը բողոքարկելու իրավունքի հետ, որը նախատեսված է Կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածով¹³⁰, ըստ որի՝ հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր անձ ունի իրավունք, որ իր նկատմամբ կայացված դատավճիռը վերադաս դատական ատյանի կողմից վերանայվի: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում են վերանայման իրավունքի սահմանափակումները. դրանք են՝ օրենքով սահմանված աննշան հանցագործությունների դեպքերը, ինչպես նաև որպես առաջին ատյան բարձրագույն դատարանի կողմից դատապարտվելու կամ դատապարտված անձի արդարացման դեմ վճռաբեկ բողոքի վերանայման դեպքերը: Վերանայման իրավունքի սահմանափակումների առկայությամբ Դատարանն ամրագրել է, որ դրանք պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ և չպետք է ազդեն իրավունքի գոյության վրա¹³¹:

Ըստ Դատարանի նախադեպային իրավունքի՝ բողոքարկման հնարավորության նախատեսման դեպքում դրա կանոնները պետք է համապատասխանեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին¹³²: Անհրաժեշտ է պահպանել արդարացի հավասարակշռություն մի կողմից՝ դատարանի որոշումները կատարելու իրավաչափ նպատակի, մյուս կողմից՝ դատարանների մատչելիության և պաշտպանության իրավունքի իրացման միջև¹³³:

Պաշտպանության իրավունքի կարգավորումն արտասահմանյան երկրներում

Բելգիա

Բելգիայում իրավաբանական օգնության տակ հասկացվում է ցանկացած միջոց, որն անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության դեպքում անձին արդյունավետ դատական պաշտպանության հնարավորություն է տալիս:

Այս երկրում իրավաբանական օգնությունը մատուցվում է ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերով և ընդգրկում է ծառայությունների երկու տեսակներ: Դրանք են.

- առաջնային և երկրորդական իրավաբանական աջակցություն (Դատական օրենսգրքի 446 և 508.1-րդ հոդվածներ),
- իրավաբանական օգնություն (Դատական օրենսգրքի 664-669-րդ հոդվածներ):

Առաջնային իրավաբանական աջակցությունը մատուցվում է կոմիսիոներների կողմից ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց, և ընդգրկում է տեղեկատվության տրամադրման միջոցով ցանկացած իրավաբանական օգնության տեսակ, ինչպիսիք են, օրինակ՝ գործի վերաբերյալ իրավաբանական կարծիքը, դատական ատյանների ու դատական ընթացակարգերի վերաբերյալ տրվող տեղեկատվությունը:

Երկրորդական իրավաբանական աջակցություն տրամադրվում է ֆիզիկական անձանց՝ իրավաբանական օգնության բյուրոյի փաստաբանների կողմից՝ գործ հարուցելու և իրավաբանական ներկայացուցչություն ապահովելու միջոցով¹³⁴:

Իրավաբանական օգնությունն իր հերթին բաղկացած է դատական ծախսերի ամբողջական կամ մասնակի վճարումից և տրամադրվում է այն անձանց, ովքեր չունեն համապատասխան ֆինանսական միջոցներ՝ ինքնուրույն փակելու դատական և արտադատական ծախսերը:

127 Suominen v. Finland, 1 July 2003, no. 37801/97, para. 36.

128 Jokela v. Finland, 21 May 2002, no. 28856/95, para. 73.

129 Տե՛ս նույն տեղում:

130 Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրությունը ընդունվել է 1984թ. նոյեմբերի 22-ին, ուժի մեջ է մտել 1988թ. նոյեմբերի 1-ին:

131 Krombach v. France, 13 February 2001, no. 29731/96, para. 96.

132 Khalfaoui v. France, 14 December 1999, no. 34791/97, para. 37.

133 Omar and Guerin v. France, 29 July 1998, no. 43/1997/827/1033, para. 40.

134 International Legal Aid Group Conference: 1 To 3 April 2009 – Wellington, New Zealand, National Report: Belgium.

Ինչպես արդեն նշվեց, առաջին կարգի իրավաբանական օգնությունից կարող են օգտվել ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք: Անապահովների համար այս կարգի իրավաբանական օգնությունը տրամադրվում է անվճար, իսկ ոչ անապահովներն այս օգնությունից օգտվելու համար պետք է կատարեն 12,39 եվրոյի չափով վճարում:

Երկրորդ կարգի իրավաբանական օգնությունը տրամադրվում է Բելգիայում ծագած վեճի կողմ հանդիսացող ֆիզիկական անձանց, ովքեր դատական պաշտպանության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չունեն:

Դատական աջակցությունը համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության դեպքում տրամադրվում է.

- ազգությամբ բելգիացիներին,
- օտարերկրացիներին՝ միջազգային պայմանագրերին համապատասխան,
- Եվրախորհրդի ցանկացած անդամ երկրի քաղաքացուն,
- ցանկացած անձի, ով կանոնավոր կարգով բնակություն է հաստատել Բելգիայում,
- օրենքով սահմանված կարգով ցանկացած օտարերկրացու:

Նշված բոլոր տեսակների իրավաբանական օգնությունները անվճար տրամադրվում է.

- միայնակ անձին, ով ապացուցում է, որ իր ամսական մաքուր եկամուտը 666 եվրոյից ցածր է,
- այն անձին, ով բնակվում է այլ անձի հետ և ապացուցում է, որ իր ամսական մաքուր եկամուտը ցածր է 857 եվրոյից:

Իրավաբանական օգնությունը, առանց ֆինանսական վիճակի ստուգման, անվճար տրամադրվում է.

- սոցիալական օգնություն ստացողներին,
- ծերերին/թոշակառուներին,
- հաշմանդամներին, ովքեր ինտեգրման հատկացումներ չեն ստանում,
- այն անձին, ում խնամքին է գտնվում ընտանեկան նպաստ ստացող երեխա,
- անչափահասներին,
- օտարերկրացիներին, ովքեր կացության կարգավիճակի հայտ են ներկայացրել,
- փախստականներին և տեղահանվածներին:

Երկրորդ կարգի իրավաբանական օգնությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն անվճար տրամադրվում է.

- միայնակ ապրող անձին, ով համապատասխան փաստաթղթերով հավաստում է, որ իր ամսական մաքուր եկամուտը չի գերազանցում 666 եվրոն և չգերազանցվող գումարի 18 %-ը:
- միայնակ, սակայն իրենից կախվածության մեջ գտնվող անձի հետ ապրող դիմողին կամ նրա կողակցին, ով համապատասխան փաստաթղթերով հավաստում է, որ այդ ընտանիքի ամսական մաքուր եկամուտը չի գերազանցում 857 եվրոն և չգերազանցվող գումարի 18 %-ը:

Իրավաբանական աջակցությունը Բելգիայում տրամադրվում է բոլոր տեսակի գործերով: Իսկ ահա իրավաբանական օգնությունը տրամադրվում է.

- ընդհանուր իրավասության դատարանում, վարչական դատարանում, ինչպես նաև միջնորդ դատարանում,
- դատական ակտերի կատարման վերաբերյալ վարույթներում,
- վերաքննիչ վարույթում,
- ընտանեկան վեճերի հաշտեցման դատավարություններում:

Անհրաժեշտության դեպքում իրավաբանական աջակցության համար անձը դիմում է իրավաբանական օգնության բյուրոյի կողմից հիմնված փաստաբանների տրամադրման կենտրոն, որից հետո նրա համար փաստաբան է նշանակվում և տրամադրվում է խորհրդատվություն:

Ինչ վերաբերվում է իրավաբանական օգնությանը, ապա այն տրամադրվում է դատավարության ընթացքում՝ դատարանի նախագահի որոշմամբ: Որոշման համար հիմք կարող է հանդիսանալ նույնիսկ բանավոր ձևով նրան ուղղված դիմում-խնդրանքը:

Առաջնային իրավաբանական աջակցության տրամադրումը կազմակերպվում է դատական շրջանակների կողմից ստեղծված աջակցության կոմիսիաների միջոցով: Կոմիսիաները բաղկացած են հիմնականում փաստաբանական պալատի անդամներից, հանրային բարեկեցության կենտրոններից և իրավաբանական աջակցություն տրամադրող կազմակերպություններից:

Երկրորդական իրավաբանական աջակցությունը կազմակերպվում է փաստաբանական պալատի խորհրդի մաս հանդիսացող տեղական փաստաբանական պալատների կողմից ստեղծված աջակցության բյուրոների միջոցով: Դիմումները տրամադրվում են անմիջապես այս բյուրոներին: Իսկ իրավաբանական օգնության համար դիմումները ներկայացվում են այն դատարանի համապատասխան մարմնին, որտեղ քննվելու է տվյալ գործը:

Այն դեպքում, երբ երկրորդական իրավաբանական աջակցություն ստանալու համար դիմումը մերժվում է, դիմողը հնարավորություն ունի որոշում կայացնելուց հետո մեկամսյա ժամկետում կայացված որոշումը վիճարկել՝ բողոք ներկայացնելով արդյունաբերական հարաբերությունների դատարան (Industrial Relations Court):

Բողոքարկման նման հնարավորություն նախատեսված է նաև իրավաբանական օգնության դիմումը մերժելու դեպքում: Փաստորեն, բողոքարկել հնարավոր չէ միայն առաջնային իրավաբանական աջակցության վերաբերյալ կայացված մերժման որոշումը:

Հատկանշական է, որ մեկ անգամ իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ որոշում կայացվելուց հետո դիմողը հնարավորություն է ստանում հետագայում վերաքննության վարույթում նույնպես օգնություն ստանալ:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման համակարգի արդյունավետ գործունեության համար կենտրոնական դեր են զբաղեցնում այն փաստաբանները, ովքեր վերը նշված հիմքերով և կարգով իրավաբանական օգնություն են տրամադրում: Փաստաբանների համար գոյություն ունեցող պարտադիր պայմաններից մեկը առկա 28 պալատներից կամ փաստաբանների 29 ստորաբաժանումներից մեկի անդամ լինելն է:

Բելգիայի դատական օրենսգրքի 488-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր պալատները միասին կազմավորում են Բելգիայի փաստաբանների ազգային կազմը կամ նույնն է թե՛ փաստաբանական պալատը: 29 ստորաբաժանումները գտնվում են երկրի յուրաքանչյուր շրջանում, որոնք բաղկացած են իրենց գրասենյակներն ունեցող փաստաբաններից: Բելգիայում ներկայումս գործում են թվով 12000 փաստաբան¹³⁵: Իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս, ներառյալ՝ իրավաբանական օգնություն տրամադրելիս, փաստաբանները ազատ են և անկախ¹³⁶: Յուրաքանչյուր տարի փաստաբանական պալատը հրապարակում է այն փաստաբանների ցանկը, ովքեր ցանկություն են հայտնել իրավաբանական օգնության ծառայություններ տրամադրել: Ցանկում փաստաբանները ներկայացվում են ըստ իրենց մասնագիտացման: Դիմողը իր փաստաբանին ընտրում է այդ ցուցակից, ինչի մասին վերջինս տեղեկացվում է պալատի կողմից:

Իրավաբանական օգնություն տրամադրելու հետ կապված բոլոր ծախսերը, ներառյալ՝ փաստաբանների տրամադրվող վարձատրությունը, կատարվում է պետության կողմից մշակված իրավաբանական օգնության բյուջեի հաշվին: Հատկանշական է, որ 2002 թվականից սկսած բյուջեն անընդհատ ընդլայնվել է:

Լեհաստան

Լեհաստանում անվճար իրավաբանական օգնության տրամադրման համակարգը միասնական օրենսդրական կարգավորման դեռևս չի ենթարկվել: Փոխարենը՝ գոյություն ունեցող տարբեր օրենսդրական ակտերը (օրենսգրքեր, առանձին օրենքներ) համակարգի կարգավորման և գործառնման առանձին դրույթներ են պարունակում:

Մասնավորապես, Լեհաստանի սահմանադրությունը երաշխավորում է, որ ցանկացած անձ, ում դեմ քրեական գործ է հարուցվել, պետք է դատավարության բոլոր փուլերում պաշտպանության իրավունք ունենա: Պաշտպանության իրավունքն իրականացվում է կամ ինքնուրույն կամ ընտրված պաշտպանի կամ դատարանի կողմից նշանակված փաստաբանի միջոցով¹³⁷:

Լեհաստանում դատավարությունների ընթացքում կատարվող ծախսերը բաժանվում են երկու խմբի՝

- դատական ծախսեր.
- փաստաբանի վարձատրություն (այն գործերով, որտեղ կողմերից մեկը ներկայացվում է փաստաբանի կողմից)¹³⁸:

Տրամադրվող իրավաբանական օգնությունը ուղղված է հենց այս ծախսերին, ինչն ավելի է հեշտացնում քաղաքացիների՝ դատական մատչելիության և օրինականության սկզբունքների ապահովումը:

Դատական ծախսերն իրենց հերթին պարունակում են դատարան դիմելու վճարումները և պահանջվող այլ ծախսեր, մասնավորապես՝ ճանապարհածախսը, վկայի ճամփորդության և գիշերելու ծախսերը, թարգմանչին տրվող գումարը, ապացույցների հետ կապված ծախսերը և այլն:

Տրամադրվող իրավաբանական օգնությունն ընդգրկում է նաև փաստաբանի միջոցով հանդես գալու հնարավորությունը: Վերջինիս ծախսերը փակվում են պետության կողմից: Սակայն անհրաժեշտ է փաստել, որ իրավաբանական օգնության համար անհրաժեշտ ծախսերի համար պլանավորված բյուջե

¹³⁵ Belgium Bar Association act.

¹³⁶ Reglement Relatif Au Statut De L' Avocat.

¹³⁷ Լեհաստանի սահմանադրություն, հոդված 42:

¹³⁸ http://ec.europa.eu/civiljustice/legal_aid/legal_aid_pol_en.htm.

գոյություն չունի: Այսինքն՝ թեպետև հատկացումներն իրականացվում են պետական բյուջեից, այնուամենայնիվ, իրավաբանական օգնության տրամադրման ֆինանսավորման համար բյուջեում առանձին հատված հատկացված չէ:

Պրակտիկայում անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է.

- **պարտադիր իրավաբանական օգնության դեպքում:** Երբ անձը փաստաբան չունի, դատարանի նախագահը նշանակում է համապատասխան փաստաբան: Պարտադիր իրավաբանական օգնություն տրամադրվում է այն հանցագործություններով, որոնց համար նախատեսված նվազագույն պատիժը գերազանցում է երեք տարի ժամկետով ազատազրկումը:
- **մեղադրյալի խնդրանքով,** որպիսի պայմաններում փաստաբանի մասնակցության հարցը լուծվում է դատարանի նախագահի հայեցողությամբ: Այն դեպքում, երբ մեղադրյալը բավարար միջոցներ չունի պաշտպանության իրավունքի իրացման համար, իրավունք ունի դիմել դատարանին՝ *ex officio* փաստաբան նշանակելու համար:
- **պաշտպանությունը խոչընդոտող հանգամանքների դեպքում,** որի ժամանակ գործը քննող դատարանը կարող է պաշտպան ներգրավել վարույթին: Պաշտպանությունը պարտադիր բնույթ է կրում, երբ.
- մեղադրյալը անչափահաս է.
- մեղադրյալը կույր, համր կամ խուլ է.
- մեղադրյալը լեհերեն չի խոսում.
- մեղադրյալի հոգեկան վիճակի վերաբերյալ հիմնավոր կասկածներ կան.
- դատարանը գտնում է, որ առկա հանգամանքները կարող են խոչընդոտել պաշտպանության իրականացմանը:

Սուբյեկտների շրջանակի հետ կապված պետք է նշել, որ Լեհաստանում անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է երկրի քաղաքացիներին, ԵՄ անդամ բոլոր պետությունների քաղաքացիներին և բոլոր այն անձանց, ովքեր ԵՄ որևէ պետությունում կացության կարգավիճակ ունեն:

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար վերը նշված սուբյեկտները համապատասխան գործը քննող դատարանին ներկայացնում են դիմում՝ կցելով իրենց ընտանեկան, ֆինանսական, նյութական վիճակի մասին համապատասխան փաստաթղթեր: Անհրաժեշտ է ներկայացնել նաև ազգության ու կացության կարգավիճակը հաստատող փաստաթղթեր:

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու վերաբերյալ դիմումը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման վերադաս դատարանում մեկշաբաթյա ժամկետում: Միաժամանակ, բողոքարկման ենթակա չէ *ex officio* նշանակման դեպքերում դիմումը մերժելու վերաբերյալ որոշումը: Եվ քանի որ օրենսդրորեն դատարանը պարտականություն չի կրում հիմնավորելու անվճար իրավաբանական օգնության տրամադրումը մերժելու մասին որոշումը, պրակտիկայում բողոքարկմանն առնչվող նորմերը ձևական բնույթ են կրում:

Ֆինանսապես անապահովներին *ex officio* հիմքով իրավաբանական օգնություն տրամադրում են ինչպես փաստաբանները, այնպես էլ իրավախորհրդատուները: Սակայն քրեական և ընտանեկան գործերով դատարանում հանդես գալու իրավունք ունեն միայն փաստաբանները: Իրավախորհրդատուները ներկայացուցչություն իրականացնում են քաղաքացիական, առևտրային և աշխատանքային վեճերով:

Գերմանիա

Գերմանիայում անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է փաստաբանական պալատի մասնավոր փաստաբանների կողմից, որտեղ պետության ֆինանսավորող դերը սահմանափակ է: Անվճար իրավաբանական օգնությունը հիմնականում տրամադրվում է դատական ներկայացուցչության համար: Գերմանիայում արտադատական գործառնությունների իրականացման պրակտիկան քիչ է զարգացած¹³⁹:

Գերմանիայի Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունը փաստում է, որ ի սկզբանե անվճար իրավաբանական օգնությունը տարանջատվում է ըստ իրավաբանական օգնությամբ դատական ներկայացուցչության ապահովման և իրավական խորհրդատվության, որտեղ կենտրոնական դեր ունի դատարանում ներկայացուցչությունը: Այդուամենայնիվ, Դատարանի նախադեպային իրավունքը զարգացել է այլ ուղղությամբ, և Դատարանն արձանագրել է, որ սահմանադրական երաշխիքները վերաբերում են նաև արտադատական իրավաբանական օժանդակությանը:

Գերմանիայում անվճար իրավաբանական օգնությունը տարանջատվում է ըստ իրավական խորհրդատվության օժանդակության և օժանդակության՝ դատական ծախսերի հետ կապված: Պետք է նշել, սակայն, որ դատական ներկայացուցչություն և դատական ցանկացած այլ օգնություն տրամադրվում է բոլոր գործերով՝ բացառությամբ քրեական գործերի:

Դատական ծախսերի հետ կապված՝ իրավաբանական օգնության տրամադրումը կարգավորվում է

139 Legal Aid In Germany, Dr. Matthias Kilian.

Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքով¹⁴⁰: Դրա 114-րդ բաժնի համաձայն՝ ցանկացած անձ, ով անձնական կամ ֆինանսական պայմաններից ելնելով չի կարող վճարել գործի հետ կապված բոլոր դատական ծախսերը կամ դրանց մի մասը, համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում կստանա իրավաբանական օգնություն՝ այն պայմանով, որ գործն իրենում լրջություն և հիմնավորված փաստարկներ է պարունակում:

Անձը դիմում է ներկայացնում այն դատարանին, որտեղ պետք է տեղի ունենա իր գործի լուծմանը: Դիմումում ներկայացվում են գործի հակիրճ նկարագրությունն ու ապացույցները: Անհրաժեշտ է ներկայացնել նաև դիմողի ֆինանսական և անձնական վիճակի մասին ապացույցներ, այն է՝ ամուսնական կարգավիճակը, մասնագիտությունը, եկամուտների չափն ու ֆինանսական պարտականությունները: Հատկանշական է, որ եկամտի չափի և ընդհանուր ֆինանսական չափի վերաբերյալ կոնկրետ չափանիշեր կամ աշխատավարձի չափի կոնկրետ սանդղակ գոյություն չունի: Արդյունքում իրավաբանական օգնության տրամադրման հարցը լուծվում է՝ կախված կոնկրետ գործի հանգամանքներից, ինչը կարգավորվում է նախադեպային իրավունքով:

Քրեական գործերով անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքում դատարանի կողմից անձի միջոցների ստուգում չի իրականացվում: Այն դեպքերում, երբ անձը մեղադրվում է հանցագործության մեջ, որի համար նախատեսվում է նվազագույնը մեկ տարի ժամկետով ազատազրկում, և անձը հանդես է գալիս առանց ներկայացուցչի, դատարանը նշանակում է պաշտպան: Մյուս դեպքերում դատարանի կողմից ex officio կամ մեղադրյալի խնդրանքով պաշտպան նշանակվում է՝ հաշվի առնելով հանցագործության բնույթն ու գործի բարդությամբ պայմանավորված՝ ինքնուրույն իր պաշտպանությունն իրականացնելու անհնարինությունը:

Իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումի բավարարման դեպքում անձին իրավունք է վերապահվում դատարանում իր շահերն ու պահանջները ներկայացնել իր կողմից ընտրված փաստաբանի միջոցով: Միաժամանակ, դիմողն ազատվում է ինչպես փաստաբանի վարձատրության հետ կապված ծախսերից, այնպես էլ այլ դատական ծախսերից: Փաստաբանի մատուցած ծառայությունների համար վարձատրությունն ապահովվում է պետական միջոցների հաշվին: Գործի բացասական ելքի դեպքում փաստաբանի և մյուս ծախսերի փակումը կատարվում է հանրային միջոցների հաշվին, իսկ դրական ելքի դեպքում փաստաբանի և դատական մնացած ծախսերը հատուցվում են մյուս կողմից:

Գերմանիայում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու որոշումը մեխանիկորեն չի տարածվում բոլոր վարույթների վրա, այլ գործում է մինչև առաջին ատյանում վերջնական դատական որոշման կայացումը: Վերաքննիչ ատյաններում նմատատիպ օգնություն ստանալու համար անհրաժեշտ է կրկին համապատասխան դիմում ներկայացնել, որի քննությունն իրականացվում է վերաքննիչ դատարանի կողմից:

Միաժամանակ, Գերմանիայում գործում է անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մերժումը բողոքարկելու հնարավորությունը: Բողոքը պետք է ներկայացվի որոշման կայացման պահից մեկ ամսվա ընթացքում: 600 եվրոն չգերազանցող գործերի դեպքում բողոքարկումն ընդունվում է, եթե անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու դիմումը մերժվել է բացառապես անձի ֆինանսական կամ անձնական վիճակին վերաբերող հանգամանքներից մեկի հիմքով:

Անհրաժեշտ է փաստել, որ Գերմանիայում քրեական գործերով տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը լուրջ խնդիր է հանդիսանում, քանի որ, ըստ էության, այն բացակայում է: Ի տարբերություն քրեական գործերի՝ այլ գործերով տրամադրվող ֆինանսական ռեսուրսները քառակի ավելին են¹⁴¹:

Իրավաբանական օգնության միասնական համակարգի բացակայության արդյունքում Գերմանիայում յուրաքանչյուր իրավաբան-փաստաբան հնարավորություն ունի ինքնուրույն իրավաբանական օգնություն տրամադրել այս կամ այն գործով:

Ֆրանսիա

Ֆրանսիայում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու կարգն ու պայմանները հստակ կարգավորման են ենթարկված: Յուրաքանչյուր ոք, ով բավարար միջոցներ չունի իրականացնելու իր պաշտպանությունը, անվճար իրավաբանական խորհրդատվություն կամ դատարանում արդյունավետ պաշտպանություն իրականացնելու համար անվճար իրավաբանական օգնության իրավունք ունի: Իրավաբանական օգնության տրամադրումը կարգավորվում է 1991թ. ընդունված Իրավաբանական ակտով և նույն թվականին ընդունված դեկրետով¹⁴²:

140 Code of Civil Procedure as promulgated on 5 December 2005 (Bundesgesetzblatt (BGBl, Federal Law Gazette).

141 http://www.ilagnet.org/jscripts/tiny_mce/plugins/filemanager/files/Helsinki_2011/national_reports/National_Report_-_Germany.pdf.

142 1991 թվականի հուլիսի 10-ի համար 91-647 իրավական ակտ և 1991 թվականի համար 91-1266 դեկրետ:

Իրավաբանական խորհրդատվությունը անձի իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ իրականացման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումն է: Այն ստանալու համար յուրաքանչյուր ոք կարող է ուղղակիորեն դիմել փաստաբանների պալատում գրանցված կամավոր փաստաբաններից կազմված օրենքի մատչելիության տարածքային խորհուրդներին: Ընդհանուր խորհրդատվություններ տրամադրվում են նաև արդարադատության պալատի կողմից՝ Փարիզի յուրաքանչյուր թաղամասում՝ ինչպես հեռախոսով, այնպես էլ անմիջականորեն:

Իրավաբանական օգնության տրամադրումը կախված է դատական ծախսերից, որը ներառում է գործի բարդությունը, բնույթը և դատական ընթացակարգերի ընդհանուր քանակը:

Իրավաբանական օգնությունը տրամադրվում է տարածքային դատարաններում գործող **իրավաբանական օգնության բյուրոների** կողմից: Անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար հաշվի է առնվում անձի եկամուտը, ազգությունը, բնակության վայրը:

Անձն իրավաբանական օգնության իրավունք ունի, եթե նրա եկամտի չափը չի անցնում պետության կողմից տվյալ տարվա համար նախատեսված եկամտի չափաբաժինը: Դրանով պայմանավորված է գործի ծախսերի առնչությամբ իրավաբանական օգնության չափը՝ լրիվ կամ մասնակի: Օրինակ՝ 2011թ. տվյալների համաձայն՝ անձն անվճար իրավաբանական օգնության հնարավորություն է ձեռք բերում, եթե 2010 թվականին նրա ստացած ամսական եկամուտը ցածր է եղել.

- 929 եվրոյից՝ լրիվ իրավաբանական օգնություն ստանալու համար.
- 1393 եվրոյից՝ մասնակի իրավաբանական օգնություն ստանալու համար¹⁴³:

Ինչ վերաբերում է ազգությանը, ապա Ֆրանսիայում իրավաբանական օգնություն տրամադրվում է միայն ֆրանսիացիներին կամ Եվրամիության անդամ պետության քաղաքացիներին կամ օտարերկրացուն, ով օրենքով սահմանված կարգով կացության կարգավիճակ ունի Ֆրանսիայում:

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար անհրաժեշտ է ունենալ մշտական և օրինական բնակության վայր: Այդուամենայնիվ, առանձնակի հետաքրքրություն և կարևորություն ներկայացնող գործերի դեպքում իրավաբանական օգնություն ցուցաբերվում է նաև բնակության վայրի բացակայության պայմաններում:

Ֆրանսիայում իրավաբանական օգնություն տրամադրվում է բոլոր տեսակի գործերով, բոլոր առյուծաներում:

Եթե դիմողն իրավաբանական օգնություն ստանալու համար բավարարում է նշված բոլոր պայմանները, ապա ամբողջական օգնության դեպքում վճարվում են դիմողի բոլոր դատական ծախսերը, ներառյալ՝ նոտարին, փաստաբանին, երդվյալ ատենակալներին: Դիմողը հնարավորություն է ստանում նաև ինքնուրույն ընտրել իր շահերը պաշտպանող փաստաբանին: Մասնակի իրավաբանական օգնություն ստանալու դեպքում, կրկին հաշվի առնելով դիմողի ֆինանսական վիճակը, փակվում են ծախսերի 85, 70, 55, 40, 25 կամ 15 %-ը: Սակայն փաստաբանի և դիմողի միջև վարձատրության լրացուցիչ համաձայնագիր է կնքվում:

Ֆրանսիայում գործող իրավաբանական օգնության համակարգի առավելություններից մեկը կայանում է նրանում, որ դիմողների խնդրանքը մերժելու դեպքում վերջիններս հնարավորություն ունեն այն բողոքարկել և վերանայման խնդրանքով դիմել բյուրոյին:

Ֆրանսիայում իրավաբանական օգնության և փաստաբանի տրամադրման հետ կապված բոլոր ծախսերն ապահովվում է **պետության կողմից**: Ֆինանսական միջոցները, մասնավորապես, տրամադրվում են հանրային շահի պաշտպանության տարբեր խմբերին ու կազմակերպություններին, իրավաբանական և դատական տարբեր խմբերին, տարածքային մարմիններին ու սոցիալական ապահովության մարմիններին¹⁴⁴:

Նիդերլանդներ

Նիդերլանդներում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համակարգը գործում է «Իրավաբանական օգնություն» իրավական ակտի հիման վրա: Իրավաբանական օգնությունը այստեղ ներառում է ինչպես իրավական ներկայացուցչությունը, այնպես էլ իրավախորհրդատվությունը: Տրամադրվող իրավաբանական օգնությունը ֆինանսավորվում է մասամբ պետության, մասամբ հաճախորդների անհատական վճարումների միջոցների հաշվին: Մերժման դեպքում դիմողն իրավունք ունի բողոքարկել որոշումը կարգապահական վերաքննիչ դատարանին՝ դրա կայացումից հետո 6 շաբաթվա ընթացքում¹⁴⁵: Իսկ ֆինանսական միջոցների վերաբերյալ տեղեկատվություն ստացվում է ինչպես դիմողներից, այնպես էլ հարկային տեսչության մարմիններից, որոնք ուղիղ էլեկտրոնային կապի

143 Accès au droit et à la justice, http://cnb.avocat.fr/Acces-au-droit-et-a-la-justice_a135.html.

144 Իրավաբանական օգնության վերաբերյալ 1991 թվականի հուլիսի 10-ի համար 91-647 օրենք:

145 Act on Advocates, Section 2, Netherlands Bar Association.

միջոցով տրամադրում են անհրաժեշտ ինֆորմացիան:

իրավաբանական օգնության հետ կապված բոլոր հարցերը կարգավորվում են իրավաբանական օգնության ռեգիստրի կողմից: Այն կազմված է մեկ կենտրոնական և հինգ տարածքային գրասենյակներից:

Գրասենյակները հանդես են գալիս որպես անկախ մարմիններ, որոնք քննության են առնում դիմողների ներկայացրած դիմումները, ղեկավարում են օգնություն և խորհրդատվություն տրամադրող կենտրոնների ֆինանսավորումն ու գնահատում դատարանի վարչակազմի կողմից օգնություն տրամադրելու վերաբերյալ որոշումները: Իսկ ահա իրավաբանական օգնությունն ու խորհրդատվությունը անմիջականորեն տրամադրվում է թվով 13 կենտրոնների կողմից, որոնք կազմված են շուրջ 250 իրավաբաններից և 63000 մասնավոր փաստաբաններից¹⁴⁶:

Իրավաբանական օգնության համար դիմողները կարող են դիմել երեք տեսակի ծառայություններից մեկը ստանալու համար: Մասնավորապես՝

- իրավաբանական օգնության և խորհրդատվության կենտրոնի իրավաբանների կողմից մեկուկես ժամ անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու՝ քաղաքացիական, քրեական, վարչական և իրավունքի այլ ճյուղերի հարցերով:
- եթե առաջադրված խնդիրը պահանջում է խորհրդատվություն, որը գերազանցում է մեկ ու կես ժամ տևողությունը, ապա տրամադրվում է երեքժամյա խորհրդատվություն, ինչը, սակայն, վճարովի է (13,5 եվրո):
- գործի բարդությունից կախված՝ երեք ժամից ավելի խորհրդատվություն պահանջող գործերի դեպքում իրավաբանական օգնությունը տրամադրվում է համապատասխան հավաստագրի հիման վրա: Տվյալ դեպքում դիմողը պարտավոր է ներկայացնել իր նյութական և ֆինանսական վիճակի մասին փաստաթղթեր, որոնց հիման վրա և հաշվի առնելով բարձրացված խնդիրը՝ ռեգիստրը որոշում է կայացնում իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ: Իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումը մերժելու դեպքում դիմողը պարտավորվում է փոխհատուցում վճարել, որի նվազագույն չափը կազմում է 64 եվրո, իսկ առավելագույնը՝ 551 եվրո: Միաժամանակ, առկա են նաև բացառություններ քրեական և ապաստարանի տրամադրման գործերով:

Խորհրդատվությունների տրամադրման առնչությամբ իրավաբանը ռեգիստրին տրամադրում է հաշիվ-պահանջ, որոնց վճարման համար գումարները ֆիքսված են:

Իրավաբանական ծառայության ռեգիստրը գործում է որպես օգնություն տրամադրող նախնական մարմին, որը դատական պրոցեսի վերաբերյալ ընդհանուր խորհրդատվություն է տրամադրում: Եթե դիմողների խնդիրները ավելի ժամանակատար և բարդ են լինում, ապա գործը վարում են մասնավոր փաստաբանները կամ միջնորդները (mediator):

Միաժամանակ, իրավաբանական օգնությունը առավել բարդ և ժամանակատար գործերով տրամադրվում է մասնավոր փաստաբանների կամ միջնորդների կողմից (mediator): Նրանք պետք է գրանցված լինեն իրավաբանական օգնության ռեգիստրում և համապատասխանեն փաստաբանների պալատի, արդարադատության նախարարության և ռեգիստրի կողմից սահմանված պահանջներին:

Ըստ այդմ, գոյություն ունեցող համակարգը խառը բնույթ ունի. հիմնական օգնությունը տրամադրվում է հանրային կարգով, իսկ երկրորդականը՝ մասնավոր:

Հատկանշական է, որ յուրաքանչյուր տարի ռեգիստրը մոտ մեկուկես միլիոն մարդու իրավաբանական օգնություն է տրամադրում: Նիդերլանդներում սա հանդես է գալիս որպես անվճար իրավաբանական օգնություն ստանալու հեշտացված միջոց: Իրավաբանական օգնության ռեգիստրը ֆինանսավորվում է արդարադատության նախարարության կողմից և վերջինիս հաշվետու է ֆինանսական հատկացումների հարցերում:

Դատական ընթացակարգերի ծախսերի մի հատվածը, այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվեց վերևում, ընկած է իրավաբանական օգնության համար դիմողների վրա: Սրա իմաստը կայանում է նրանում, որ դիմողները գործը դատարան տանելիս ավելի հաշվենկատ լինեն և առավել մեծ լրջություն ցուցաբերեն: Ավելին, դատարանի հետ կապված բոլոր ծախսերը պարտավոր է հոգալ դիմողը: Գործող սկզբունքի համաձայն՝ իրավաբանական օգնությամբ փակվում են միայն խորհրդատվության ծախսերը¹⁴⁷: Այնուամենայնիվ, դիմողը հնարավորություն ունի նաև դատական ծախսերի կրճատում ստանալ, ինչը կախված է ֆինանսական վիճակից և ներկայացվող դիմումից:

Ի լրումն վերոգրյալ միջոցների՝ իրավաբանական խորհրդատվություն տրվում է նաև ռեգիստրի կողմից ստեղծված էլեկտրոնային ծառայության միջոցով, որի միջոցով դիմողը, ուղղակիորեն առցանց դիմելով, առավել արագ և հեշտ ձևով տեղեկություն է ստանում իրավական խնդրի վերաբերյալ¹⁴⁸:

146 Legal Aid the Netherlands Peter van den Biggelaar, Facts and figures.

147 http://ec.europa.eu/civiljustice/legal_aid/legal_aid_net_en.htm.

148 Legal Aid in the Netherlands, a broad outline.

Մեծ Բրիտանիա

Մեծ Բրիտանիայում 2000թ. կատարված օրենսդրական բարեփոխումների արդյունքում գործում է անվճար իրավաբանական օգնության միասնական մարմին՝ իրավաբանական ծառայությունների հանձնաժողով, որը պատասխանատվություն է կրում քաղաքացիական և քրեական գործերով տրամադրվող իրավաբանական օգնության հետ կապված բոլոր հարցերի համար և ֆինանսավորվում է արդարադատության նախարարության կողմից: Բացի նշված մարմնից՝ գործում են նաև տեղական մարմինները, մատակարարներն ու տեղական էլեկտրոնային ցանցերը:

Իրավաբանական ծառայությունների հանձնաժողովը զբաղվում է ծառայությունների երկու տեսակի տրամադրմամբ: Դրանք են՝

- Համայնքային իրավաբանական ծառայություններ, որոնք տրամադրում են խորհրդատվություն և ապահովում են դատական ներկայացուցչություն քաղաքացիական գործերով:
- Քրեական պաշտպանության ծառայություններ, որոնք ևս խորհրդատվություն են տրամադրվում և ներկայացուցչություն են ապահովում քրեական գործերով:

Քրեական պաշտպանության համար տրամադրվող ծառայությունների համակարգը գործում է 2001 թվականից և հնարավորություն է տալիս փաստաբանական գրասենյակներին պայմանագրային հիմունքներով տրամադրել խորհրդատվություն, իրավական աջակցություն և դատական ներկայացուցչություն ապահովել: Միաժամանակ, իրավաբանական ծառայությունների հանձնաժողովի կողմից ստեղծված հանրային պաշտպանության ծառայությունը անմիջականորեն համագործակցում է քրեական գործերով պաշտպանությունն իրականացնող պաշտպանների հետ¹⁴⁹:

Ինչ վերաբերվում է համայնքային իրավաբանական ծառայությանը, ապա այն, կազմված լինելով փաստաբաններից ու իրավախորհրդատվության գրասենյակներից, ապահովում է քաղաքացիական և ընտանեկան գործերով խորհրդատվության և դատական ներկայացուցչության իրականացումը:

Իրավաբանական ծառայության հանձնաժողովի կողմից տրամադրվող ֆինանսական հատկացումները տրամադրվում են միայն ֆիզիկական անձանց: Որպես հիմք ընդունվում է դիմողի ֆինանսական վիճակը: Իրավաբանական օգնություն ստանալու համար դիմողի ամսական եկամուտը չպետք է գերազանցի 2288-ը, իսկ ընդհանուր կապիտալը չպետք է գերազանցի 3000-ը: Միաժամանակ, յուրաքանչյուր դեպքում հաշվի են առնվում գործի հանգամանքները, դրա կարևորությունն ու լրջությունը:

Անհրաժեշտ է փաստել, որ քրեական գործերով իրավաբանական օգնություն տրամադրելու համար կարևոր նշանակություն ունի նաև արդարադատության շահը¹⁵⁰:

Իրավաբանական օգնությունը տրամադրվում է գրեթե բոլոր գործերով, սակայն գոյություն ունեն բացառություններ: Օրինակ՝ գրպարտության, խնամակալության, անգզությանը առողջությանը կամ սեփականությանը հասցված վնասի և մի քանի այլ գործերով պետության կողմից հանրային ֆինանսավորում և իրավաբանական օգնություն չի տրամադրվում:

Մեծ Բրիտանիայում իրավաբանական ծառայության հանձնաժողովի հետ պայմանագիր կնքած փաստաբանները նույնպես տրամադրում են անվճար իրավաբանական օգնություն, որոնց համար ֆինանսավորումը կատարվում է հանձնաժողովի կողմից: Տվյալ դեպքում իրավաբանական օգնություն ստանալու համար անձը կանխավ դիմում է հանձնաժողովի հետ պայմանագիր կնքած իրավախորհրդատուին կամ փաստաբանին, ով պահանջվող ծառայություններ մատուցելու իրավասություն ունի: Այնուհետև նշված փաստաբանը համապատասխան ձևաձևով դիմում է հանձնաժողովի տարածքային գրասենյակին: Եթե ներկայացված դիմումը բավարարվում է, ապա բոլոր ծախսերը, ներառյալ՝ փաստաբանի վարձատրությունն ու դատական ծախսերը, կատարվում են տրամադրվող ֆինանսավորման հաշվին: Նույնը վերաբերում է նաև դատական ներկայացուցչության դեպքին: Իսկ այն դեպքում, երբ դիմողը հանդես է գալիս առանց փաստաբանի, հանձնաժողովն օգնում է փաստաբան ընտրելու հարցում: Այս դեպքում հանձնաժողովի կողմից պատրաստված դիմումն ուղարկվում է հանձնաժողովի տարածքային գրասենյակ, որի քննությունը տևում է մոտավորապես երկու շաբաթ:

Փաստաբանը, ով մերժում է իրավաբանական օգնություն տրամադրելու դիմումը, պարտավոր չէ ներկայացնել մերժման հիմքերը, սակայն դիմողը մերժման պատճառների վերաբերյալ նրան հարցեր ուղղելու իրավունք ունի: Եթե դիմումը մերժվում է հանձնաժողովի կողմից գործի անհիմն լինելու պատճառաբանությամբ, ապա հանձնաժողովը որոշմանը ծանոթացնելիս համապատասխան բացատրություն է տալիս: Իսկ մերժման որոշումը հնարավոր է բողոքարկել երկշաբաթյա ժամկետում: Բողոքը քննվում է ֆինանսավորման վերանայման կոմիտեի կողմից, որն անկախ փաստաբանների միավորում է: Հատկանշական է, սակայն, որ կոմիտեն կարող է կոնկրետ կարծիք տալ գործի և որոշման որոշ հատվածների վերաբերյալ:

149 National Report – England And Wales, International Legal Aid Group 2011.

150 International Legal Aid and Defender System Development Manual, 2012.

Բողոքարկման արդյունքում վերջնական որոշում կայացնողը կրկին իրավաբանական ծառայությունների հանձնաժողովն է, որի որոշումն այս դեպքում վերջնական է և այլևս ենթակա չէ բողոքարկման:

Չնայած գործող կարգավորումներին՝ Մեծ Բրիտանիայում իրավաբանական օգնություն փնտրող քաղաքացիները նախ պետք է այլընտրանքային ֆինանսական միջոցներ փնտրեն իրենց պաշտպանությունն իրականացնելու համար, ինչից հետո նոր կարող են դիմել հանրային և անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար¹⁵¹:

Ռումինիա

Ըստ Ռումինիայի ներպետական օրենսդրության՝ իրավաբանական օգնությունը պաշտպանության իրավունքի մասն է: Սահմանադրությունը սահմանում է, որ դատավարության ընթացքում կողմերն իրավունք ունեն փաստաբանի միջոցով հանդես գալու, ով նշանակվում կամ ընտրվում է դատավորի կողմից¹⁵²: Նման դեպքերում փաստաբան նշանակվում է Ռումինիայի փաստաբանական պալատից:

Ռումինիայի քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել պաշտպան չունեցող կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանության իրավունքը՝ պաշտպան նշանակելու միջոցով: Սա վերաբերում է այն դեպքերին, երբ անձը բավարար միջոցներ չունի վճարելու փաստաբանի համար, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված պարտադիր պաշտպան ունենալու դեպքերին¹⁵³:

Պաշտպանության իրավունքի ապահովման հարցերը կարգավորվում են «Փաստաբանների մասնագիտության կազմակերպման և պրակտիկայի վերաբերյալ» օրենքով¹⁵⁴: Ըստ օրենքի 5-րդ հոդվածի՝ բոլոր այն դեպքերում, երբ իրավաբանական օգնության տրամադրումը պարտադիր է, ինչպես նաև դատարանի, վարույթն իրականացնող մարմինների և տեղական կառավարման մարմինների դիմումի հիման վրա փաստաբանական պալատը պետք է անհրաժեշտ իրավաբանական օգնություն տրամադրի: Փաստաբանական պալատը օգնության տրամադրումը կազմակերպում է երկրի բոլոր դատարանների գլխամասերի միջոցով, որտեղ պալատի խորհրդի կողմից նշանակվում է մշտական գործող մեկական փաստաբան: Օրենքը սահմանում է նաև փաստաբանների **վարձատրության կարգը: Ըստ այդմ, այն դեպքում, երբ իրավաբանական օգնությունը տրամադրվում է ex officio՝ դատարանի կամ դատախազության դիմումի հիման վրա, դատավարության ծախսերը մարվում են արդարադատության նախարարության կողմից: Իսկ եթե իրավաբանական օգնությունը տրամադրվում է ex officio՝ տեղական կառավարման մարմինների դիմումի հիման վրա, ծախսերը մարվում են այդ նույն մարմինների կողմից:**

Քրեական գործերով պաշտպանություն իրականացնելու համար դիմումները ներկայացվում են այն դատարանին, որի կողմից պետք է տեղի ունենա հանցագործության վերաբերյալ քննությունը: Եթե դիմումով բավարարվում են անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար ներկայացված պահանջները, ապա անձին տրամադրվում է փաստաբան՝ պաշտպանությունն իրականացնելու համար: Ռումինական օրենսդրությունը անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կախման մեջ չի դնում տեղի ունեցած հանցագործությունից:

Քաղաքացիական գործերով տրամադրվող օգնության վերաբերյալ սահմանված է, որ ցանկացած անձ, ով քաղաքացիական վեճի ընթացքում չի կարող մարել դատավարության ծախսերը, հնարավորություն ունի դիմել դատարանին՝ իրավաբանական օգնություն ստանալու համար: Այստեղ հարկ է նշել, որ դատարանի կողմից կայացված մերժման որոշումը բողոքարկման ենթակա չէ: Ակնհայտ է, որ այս դրույթը սահմանափակում է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պրակտիկ իրականացումը:

Ռումինիայում անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է նաև որոշ հանցագործություններից տուժողների դիմումների հիման վրա: Իրավաբանական օգնություն տրամադրելու հիմքում ընկած է մի կողմից տեղի ունեցած հանցագործության ծանրությունը¹⁵⁵, մյուս կողմից՝ տուժողի ֆինանսական դրությունը¹⁵⁶:

151 Center for Liability Law Tilburg University, Legal Aid Systems Compared, a comparative Research into Three Legal Aid Systems, 2003.

152 Ռումինիայի սահմանադրություն, հոդված 24, 2-րդ մաս:

153 Իրավաբանական օգնությունը պարտադիր է, երբ մեղադրյալն անչափափաս է, կամ գտնվում է վերականգնողական կենտրոններում կամ բժշկական հաստատություններում, կամ այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինը գտնում է, որ մեղադրյալն ի վիճակի չէ ինքնուրույն իրականացնել իր պաշտպանությունը:

154 Law for the organization and practice of the lawyer's profession.

155 Մասնավորապես, անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է առանձնապես ծանր հանցագործությունների (սպանություն, առողջությունը ծանր վնաս հասցնել), սեռական բնույթի հանցագործությունների (բռնաբարություն, անչափափասի հետ սեռական հարաբերություններ ունենալ) տուժողներին: Անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է նաև անուղղակիորեն հանցագործությանը մասնակից դարձած անձանց, օրինակ՝ տուժողի երեխաներին կամ կնոջը:

156 Act no 211/2004 on measures to ensure the protection of crime victims.

Ըստ այդմ, օգնություն տրամադրվում է, եթե տուժողի ընտանիքի ամսական եկամուտը հավասար է պետության կողմից սահմանված նվազագույն աշխատավարձի չափին: Բացի այդ՝ անհրաժեշտ դիմումը դատարան պետք է ներկայացնել հանցանքը կատարելուց հետո 60-օրյա ժամկետում: Այն դեպքում, երբ ֆիզիկական, մտավոր հիվանդության կամ այլ պատճառներով տուժողն ի վիճակի չի եղել դիմում ներկայացնել, 60-օրյա ժամկետը հաշվարկվում է նշված խնդիրները վերացվելուց հետո: Դիմումի մեջ տուժողը պարտավոր է ներկայացնել անձնական տվյալները, ընտանեկան կարգավիճակը, հանցագործության մանրամասներն ու ֆինանսական վիճակի վերաբերյալ տեղեկություններ¹⁵⁷:

Հունգարիա

Հունգարիայի իրավաբանական օգնության համակարգը լուրջ բարեփոխումների է ենթարկվել 2004թ. և 2008թ. օրենսդրական փոփոխությունների հետևանքով: Դրանց արդյունքում, ի լրումն քաղաքացիական և քրեական գործերով տրամադրվող իրավաբանական օգնության, սահմանվեց նաև վարչական գործերով իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորությունը¹⁵⁸: Միաժամանակ, առանձին իրավական ակտեր կարգավորում են տարբեր խումբ գործերով տրամադրվող իրավաբանական օգնության հարցերը:

Ըստ հունգարական օրենսդրության՝ անվճար իրավաբանական օգնությունն ինստիտուցիոնալ համակարգ է, որն ապահովում է իրավաբանական օգնություն ստանալու համար բավարար միջոցներ չունեցող անձանց համար խորհրդատվությունը, դատական ներկայացուցչությունը, ինչպես նաև նրանց դատական ծախսերի հատուցումը:

Այսպես՝ ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերով տրամադրվում է արտադատական իրավաբանական օգնություն այն դեպքերում, երբ.

- Անձն իրավական վեճի մեջ է, որը հետազայում կարող է դատական ընթացակարգերի անհրաժեշտությունն առաջացնել, ինչի համար և անհրաժեշտ է դատավարական իրավունքների և պարտականությունների մասին տեղեկատվություն ստանալ:
- Անձն իրավական վեճ ունի, որը հնարավոր է լուծել արտադատական կարգով, և տրամադրվող խորհրդատվությունը կնպաստի դրա իրականացմանը:
- Անձին տեղեկատվություն է անհրաժեշտ իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջոցների ու առկա մեխանիզմների վերաբերյալ:
- Հանցագործությունից տուժողին իրավաբանական խորհրդատվություն է անհրաժեշտ՝ փոխհատուցում ստանալու համար անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար:

Քաղաքացիական դատավարությունում դիմողին օգնություն տրամադրվում է փաստաբանական պալատում գրանցում ստացած փաստաբանի կողմից, ով ընտրվում է դիմողի կողմից և ապահովում է դատական ներկայացուցչությունն ու դրա հետ կապված ծառայությունների մատուցումը:

Քրեական գործերով անվճար իրավաբանական օգնության համակարգը ղեռնա կայացման փուլում է: Տվյալ խումբ գործերով դիմողները փաստաբան ընտրելու հնարավորություն չունեն. փաստաբանները նշանակվում են միայն վարույթն իրականացնող մարմինների կողմից:

Հունգարիայում անվճար իրավաբանական օգնություն կարող են ստանալ.

- Հունգարիայի քաղաքացիները.
- օտարերկրացիները, ովքեր ունեն կացության թույլատրություն, կամ պարզապես նրանց նախնիներից մեկը Հունգարիայի քաղաքացի է եղել.
- օտարերկրացիները՝ իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ միջազգային համաձայնագրերի հիման վրա.
- բոլոր այն անձինք, ովքեր էմիգրացիոն իրավունքի հիման վրա ազատ տեղաշարժի իրավունք ունեն.
- մարդասիրական հիմունքներով կացության կարգավիճակ ունեցող բոլոր անձինք¹⁵⁹:

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար վերոգրյալ խումբ անձինք պետք է բավարարեն ֆինանսական վիճակի վերաբերյալ սահմանված չափանիշները:

Բացի նշված պայմաններից ֆիզիկական անձինք պարտավոր են նաև բավարարել ֆինանսական կարգավիճակի վերաբերյալ սահմանված չափանիշները: Այսպես.

- դիմողի ընտանիքի ամսական միջին եկամուտը չպետք է գերազանցի տարիքային կենսաթոշակի

157 The Protection of victims Based on Law NR 211/2004, Traian Dima Law Faculty, Nicolae Titulescu University, Bucharest.

158 The Legal Profession In Hungary By Márta Pardavi, October 2008. անհրաժեշտ է փաստել, որ անվճար իրավաբանական օգնությունը ներառում է միայն խորհրդատվությունն ու աջակցությունը, այլ ոչ թե վարչական գործերով դատական ներկայացուցչությունը:

159 Act LXXX of 2003, On Legal Aid.

նվազագույն չափը, այն է՝ 28,500 HUF (110 EUR)-ը.

- միայնակ ապրող անձանց համար միջին ամսական եկամուտը չպետք է անցնի տարիքային կենսաթոշակի նվազագույն չափի 150 տոկոսը, այն է՝ 42,750 HUF (164 EUR)-ը.
- հանցագործության տուժողների համար, որոնց եկամուտը չի անցնում միջին աշխատավարձի 86 տոկոսը, ամսական եկամուտը չպետք է անցնի 147,232 HUF (564 EUR) –ը:

Միաժամանակ, առանձին խումբ անձինք մեխանիկորեն անապահով են համարվում, և նրանց դատական ծախսերը ֆինանսավորվում են պետության կողմից՝ առանց նրանց ֆինանսական վիճակը գնահատելու: Այսպես, այդպիսիք են հանդիսանում.

- կանոնավոր սոցիալական օգնություն ստացողները.
- հանրային առողջապահական ծառայություններից օգտվողները.
- անտուն անձինք.
- փախստականները, ժամանակավոր օգնություն ստացողները, կացության կարգավիճակի համար դիմողները.
- երեխայի խնամքի նպաստ ստացողները:

Նշված սուբյեկտները իրավաբանական օգնություն ստանալու երկու հնարավորություն ունեն:

Առաջին դեպքում անհրաժեշտ է ընդամենը դիմում ներկայացնել իրավաբանական օգնության գրասենյակ, որը և որոշում է կայացնում իրավաբանական խորհրդատվության տրամադրման և դրա հնարավոր ժամերի վերաբերյալ: Մերժման դեպքում դիմողը բողոքարկման և դիմումը կրկին քննելու հնարավորություն ունի: Այն դեպքում, երբ դիմումը բավարարվում է, դիմողն իրավունք է ստանում ինքնուրույն ընտրել և կապ հաստատել իրավաբանական օգնություն տրամադրող գրանցված սուբյեկտին: Վերջինս իրավունք ունի մերժել ծառայությունների մատուցումը միայն այն դեպքում, երբ վեճի էությունը իր մասնագիտացման շրջանակից դուրս է:

Երկրորդ հնարավոր տարբերակը գործում է անհապաղ լուծում պահանջող վեճերի դեպքում: Այս դեպքում դիմողները կարող են անմիջապես դիմել իրավաբանական օգնություն տրամադրողներին, եթե խնդիրը հրատապ է:

Հունգարիայում իրավաբանական օգնության տրամադրման համար գործում է միասնական մարմին՝ իրավաբանական օգնության ծառայությունը, որը պետական այլ մարմիններից անկախ գործող և արդարադատության կենտրոնական մարմնի ներքո ստեղծված մարմին է: Ծառայությունը կազմված է կենտրոնական և տարածքային *գրասենյակներից*, որոնք պետք է ուսումնասիրեն ներկայացված դիմումները, որոշում կայացնեն իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ և տրամադրեն անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն:

Ըստ այդմ, իրավաբանական օգնություն տրամադրող են հանդիսանում.

- թվով 255 մասնավոր փաստաբաններ. ծառայություններ մատուցելու համար յուրաքանչյուր փաստաբան պետք է գրանցված լինի փաստաբանական պալատում.
- 92 իրավաբանական գրասենյակներ.
- 12 հանրային նոտարիատներ.
- 2 իրավաբանական կլինիկա հանդիսացող դպրոցներ.
- 10 հասարակական կազմակերպություններ¹⁶⁰:

Տրամադրվող իրավաբանական օգնության համար անհրաժեշտ ֆինանսավորումն ու մատուցված ծառայությունների ծախսերը ֆինանսավորվում են պետության կողմից՝ արդարադատության նախարարության մաս հանդիսացող արդարադատության կենտրոնական գրասենյակի կողմից: Իրավաբանական օգնության համար պետական բյուջեում սահմանվում է առանձին հոդված¹⁶¹:

160 Legal aid reform in Hungary, Outline of the reform, the impact of EU accession and the role of research, András Kádár.

161 Իրավաբանական օգնության բյուջեն 2008 թվականին կազմել է 312,776 EUR.

Գլուխ 2

Պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունները ՀՀ օրենսդրությամբ

Պաշտպանության իրավունքի կարգավորումը ՀՀ ներպետական օրենսդրությամբ

Պաշտպանության իրավունքը դատավարական իրավունքների ամբողջություն է, որը հնարավորություն է տալիս կասկածյալին/մեղադրյալին հանդես գալու որպես քրեական դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքելու իր կողմից հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանելու իր իրավունքներն ու շահերը: Պաշտպանության իրավունքը՝ որպես կասկածյալին ու մեղադրյալին վերապահված իրավունքների ամբողջություն, հնարավորություն է տալիս իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի միջոցով¹⁶²: Կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրացման փաստացի հնարավորության ապահովման պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը: Պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովվում է մի շարք դատավարական երաշխիքներով: Մասնավորապես, կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունեն հայտարարել իրենց մեղավորության կամ անմեղության մասին, տալ ցուցմունքներ կամ հրաժարվել ցուցմունքներ տալուց, տալ բացատրություններ կամ հրաժարվել բացատրություններ տալուց, ներկայացնել միջնորդություններ, նյութեր՝ քրեական գործին կցելու և հետազոտելու համար, իր միջնորդությամբ, վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, ներկա գտնվել քննչական կամ այլ դատավարական գործողություններին, ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել կամ ներկա է գտնվել, դիտողություններ ներկայացնել դրանցում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, բողոքարկել իր իրավունքների առնչությամբ վարույթն իրականացնող մարմինների բոլոր գործողություններն ու որոշումները և այլն¹⁶³: Կասկածյալը կամ մեղադրյալն իր իրավունքներից օգտվում է անկախ այն հանգամանքից, թե գործով վարույթին պաշտպան ներգրավված է, թե ոչ:

Տեղեկացված լինելու իրավունքը

Հանցագործության մեջ մեղադրվող անձին իր կարգավիճակից բխող իրավունքների վերաբերյալ տեղեկացնելու պարտականություն կրում է վարույթն իրականացնող մարմինը¹⁶⁴: Վարույթն իրականացնող մարմինը, ի լրումն կասկածյալին ու մեղադրյալին իր իրավունքների մասին գրավոր ծանուցում տրամադրելուն, նաև դրանք պետք է բանավոր պարզաբանի: Պրակտիկայում կասկածյալի ու մեղադրյալի իրավունքների վերաբերյալ ծանուցման մեջ ներկայացվում է կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքները նախատեսող ՔԴՕ համապատասխան հոդվածի բովանդակությունը ամբողջությամբ, որը, սակայն, խիստ իրավական է և բարդ իրավաբանական գիտելիքներ չունեցող անձի ընկալման համար:

Դատական քննության ընթացքում ևս դատարանը պարտավոր է բացատրել ամբաստանյալի իրավունքները՝ անկախ նրան իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ծանուցելուց¹⁶⁵:

ՀՀ քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ կասկածյալի կամ մեղադրյալի իր դեմ ներկայացված մեղադրանքի մասին տեղեկացվելու իրավունքի ծավալները տարբերվում են՝ իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքերի կապակցությամբ՝ կապված քրեական դատավարության համապատասխան փուլից: ՀՀ ՔԴՕ-ը նախատեսում է չորս հիմնական փուլ, որոնք վերաբերում են հանցագործության մեջ մեղադրվող անձի տեղեկություն ստանալու իրավունքին: Դրանք են՝ անձին որպես կասկածյալ ներգրավելը¹⁶⁶, մեղադրանքի առաջադրումը¹⁶⁷, քրեական գործի նյութերին ծանոթանալը¹⁶⁸, մեղադրական եզրակացությունը տրամադրելը¹⁶⁹: Վերոգրյալ փուլերում կասկածյալին/մեղադրյալին տրամադրվող տեղեկությունների ծավալը տարբեր է:

162 Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ՀՅԲԴԴ2/0153/01/08 որոշում, կետ 25:

163 ՀՀ ՔԴՕ, հոդվածներ 63, 65:

164 ՀՀ ՔԴՕ, հոդված 19, 2-րդ մաս:

165 ՀՀ ՔԴՕ, հոդված 324:

166 ՀՀ ՔԴՕ, հոդված 63, 2-րդ մաս, 1-ին կետ:

167 ՀՀ ՔԴՕ, հոդված 65, 2-րդ մաս, 1-ին կետ:

168 ՀՀ ՔԴՕ, հոդված 265, 1-ին մաս:

169 ՀՀ ՔԴՕ, հոդված 277, 3-րդ մաս:

Անձը կասկածյալի կարգավիճակ է ձեռք բերում, երբ ձերբակալվել է հանցագործություն կատարելու մեջ կասկածվելու պատճառով կամ նրա նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրվելը խափանման միջոց է ընտրվել¹⁷⁰։ Ի դեպ, կասկածյալի կարգավիճակում անձը չի կարող գտնվել 10 օրից ավելի ժամկետով¹⁷¹։ ՀՀ ՔԴՕ-ը պարտավորեցնում է վարույթն իրականացնող մարմնին՝ կասկածյալին հայտնել, թե ինչու է կասկածվում, տեղեկացնել կասկածանքի բովանդակությանը, նրան վերագրվող արարքի փաստական կողմը և իրավական որակումը¹⁷²։ Կասկածյալը ձերբակալվելուց հետո իրավունք ունի ստանալ իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում¹⁷³, այդ թվում՝ պաշտպան ունենալու, պաշտպանի ներկայությամբ հարցաքննվելու, մերձավոր ազգականներին իր ձերբակալման վերաբերյալ հայտնելու իրավունքների վերաբերյալ։

Ի տարբերություն կասկածյալի կարգավիճակում ստացված տեղեկությունների ծավալի՝ մեղադրյալին ներկայացվող տեղեկատվությունն առավել ծավալուն է, քանի որ գործի քննությամբ ձեռք են բերվել բավարար քանակի ապացույցներ¹⁷⁴։ Որպես մեղադրյալ ներգրավված անձն իրավունք ունի իմանալ, թե ինչու է մեղադրվում, որի համար իրավունք է ստանում վարույթն իրականացնող մարմնից անվճար ստանալու որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը¹⁷⁵, որում պետք է ներկայացվեն անձի նույնականացման տվյալները, նրան առաջադրված մեղադրանքի փաստերը՝ հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և այլ հանգամանքներ (որքանով դրանք պարզված են քննության ընթացքում), ինչպես նաև իրավական որակումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով նախատեսված է կատարված հանցանքի համար պատասխանատվությունը¹⁷⁶։

Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելուց ոչ ավել, քան 48 ժամ հետո անձի նկատմամբ պետք է մեղադրանք առաջադրվի։ Ի լրումն որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման տրամադրման՝ վարույթն իրականացնող մարմինը (քննիչը) պարտավոր է բանավոր բացատրել մեղադրանքի էությունը, որը հաստատվում է կողմերի ստորագրությամբ՝ նշելով մեղադրանքի առաջադրման ամիսը, օրը, ժամը և թվականը¹⁷⁷։

Ըստ էության, ՀՀ ՔԴՕ-ն ամրագրում է նախնական քննության գաղտնիության սկզբունքը, որի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ¹⁷⁸։ Այսինքն՝ մինչև քրեական գործով նախնական քննության ավարտը օրենսգրքով պաշտպանության կողմին տրամադրման ոչ ենթակա նյութերը մեղադրյալին և նրա պաշտպանին կարող են տրամադրվել միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ այդ մարմնի հայեցողության իրացման արդյունքում։

Վարույթն իրականացնող մարմնի հայեցողության իրացման առնչությամբ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ամրագրվել է, որ շահագրգիռ անձին քրեական գործի նյութերից այս կամ այն փաստաթղթի տրամադրումը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, ինչպես դա նախատեսված է ՔԴՕ 102-րդ հոդվածով։ Սկզբունքային մոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող մարմնի հայեցողությունը չպետք է բացարձակ լինի։ Այդ կապակցությամբ կայացված որոշումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ։ Ըստ Սահմանադրական դատարանի՝ դրանք առնչվում են հասարակական կարգի պաշտպանությանը, հանցագործության բացահայտմանը խոչընդոտելուն, քրեական դատավարությանը վնասելուն և հանցանքի կատարմանը նպաստելուն, առևտրային գաղտնիքին և իրավաբանական անձի գործունեությանը վնաս պատճառելուն, ընտանեկան կամ անձնական կյանքի անձեռնմխելիությունը խախտելուն կամ անձի պատիվը ոտնահարելուն, անչափահասի շահերին վնաս պատճառելուն և այլն¹⁷⁹։

Մինչդատական քննության փուլում մեղադրյալի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքը սահմանափակված է. մեղադրյալն իրավունք ունի ծանոթանալու միայն այն քննչական կամ այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել կամ ներկա է

170 ՀՀ ՔԴՕ, հոդված 62, 1-ին մաս։

171 Ձերբակալված անձը անազատության մեջ չի կարող մնալ 72 ժամից ավելի, իսկ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց կասկածյալի նկատմամբ չի կարող կիրառվել 7 օրից ավելի ժամկետով խափանման միջոց ընտրելու մասին որոշումը նրան հայտարարելու պահից, ՀՀ ՔԴՕ, 62-րդ հոդված, 2-րդ մաս։

172 ՀՀ ՔԴՕ, հոդված 63, 2-րդ մաս։

173 Տե՛ս նույն տեղում։

174 ՀՀ ՔԴՕ, հոդված 202, 1-ին մաս։

175 ՀՀ ՔԴՕ, հոդված 65, 2-րդ մաս։

176 ՀՀ ՔԴՕ, հոդված 202, 3-րդ մաս։

177 ՀՀ ՔԴՕ, հոդված 203, 1-ին և 2-րդ մասեր։

178 ՀՀ ՔԴՕ, հոդված 201, 1-ին մաս։

179 Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2012թ. հունվարի 24-ի որոշումը։

գտնվել¹⁸⁰, ինչպես նաև՝ փորձագետի եզրակացությամբ¹⁸¹: Գործի բոլոր նյութերին մեղադրյալն իրավունք ունի ծանոթանալ մինչև մեղադրական եզրակացության կազմումը՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու փուլում: Մեղադրյալը կարող է դրանցից պատճեններ հանել և դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն:

ՀՀ ՔԴՕ-ը չի սահմանում նույնիսկ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննարկման դեպքում պաշտպանության կողմին տրամադրվող տեղեկատվության ծավալը¹⁸²: Մեղադրյալի իրավունքները սահմանող 65-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է, որ մեղադրյալն իրավունք ունի քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով ծանոթանալ.... իր նկատմամբ խափանման միջոց կամ դատավարական հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու մասին կայացված որոշումներին, իր խնդրանքով անվճար ստանալ այդ որոշումների, ինչպես նաև մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման, հայցադիմումի պատճենները, ինչպես նաև դատավճռի կամ դատարանի այլ վերջնական որոշման պատճենը¹⁸³:

Մինչև նախնական քննության ավարտը մեղադրանքը հիմնավորող ապացույցներին և գործի նյութերին ծանոթանալու իրավունքը սահմանափակված է նաև մեղադրյալի պաշտպանի համար: Ինչպես և մեղադրյալը, պաշտպանն իրավունք ունի ծանոթանալ միայն այն քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա կամ իր պաշտպանյալը մասնակցել կամ ներկա են գտնվել, իսկ քննության ընթացքում կատարվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին պաշտպանը կարող է մասնակցել վարույթն իրականացնող մարմնի առաջարկով, իսկ իր միջնորդության հիման վրա իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին՝ վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:

Պաշտպանն իրավունք ունի ներկա գտնվել իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական գործողության՝ կասկածյալի/մեղադրյալի պահանջի կամ կոնկրետ գործողությունը սկսելուց առաջ պաշտպանի ներկայացրած միջնորդության հիման վրա¹⁸⁴: Նման քննչական գործողությունների քանակն իրականում սահմանափակ է, հիմնականում ներառում է կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննությունը, պաշտպանության կողմի միջնորդությամբ հրավիրված վկաների, փորձագետների հարցաքննությունները, խուզարկությունները, առգրավումները և այլն:

Պաշտպանության կողմը քրեական գործի նյութերի ողջ ծավալին ծանոթանալու իրավունք է ձեռք բերում քրեական գործի նախնական քննության ավարտին, երբ մինչև մեղադրական եզրակացությունը կազմելը քննիչը դրանք ներկայացնում է մեղադրյալին և նրա պաշտպանին՝ ծանոթանալու համար: Ի լրումն փաստաթղթերի՝ քննիչը համապատասխան սարքավորումների կիրառմամբ վերադառնում է ձայնագրությունները, կինո և տեսաֆիլմերը, արձանագրությունների հավելված տեսապատկերները, ներկայացնում է իրեղեն ապացույցները: Մեղադրյալն ու պաշտպանն իրավունք ունեն գործի նյութերին ծանոթանալ ինչպես միասին, այնպես էլ առանձին, կատարել դուրսգրումներ, պատճենահանել փաստաթղթերը, լուսանկարել իրեղեն ապացույցները¹⁸⁵: Հատկանշականն այն է, որ քրեական գործի նյութերին ծանոթանալու ժամկետներ ՔԴՕ-ը չի սահմանում, քանի որ դրանց ծանոթանալու տևողությունն օբյեկտիվորեն պայմանավորված է գործի ծավալներով: Միաժամանակ, սակայն, օրենսգիրքը նախատեսում է գործի նյութերին մեղադրյալի և պաշտպանի ծանոթանալու ժամկետների սահմանափակման հնարավորություն, եթե նրանք առանց հարգելի պատճառների ձգձգում են քրեական գործին ծանոթանալը¹⁸⁶:

Գործի նյութերին ծանոթանալու իրավունք ամբաստանյալի պաշտպանին վերապահվում է քրեական գործով նախնական քննության ավարտին: Դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելուց հետո մեղադրական եզրակացությունը, ինչպես նաև դրան կցված հավելվածների հաստատված պատճենները ստորագրությամբ տրամադրվում են մեղադրյալին: Եթե մեղադրական եզրակացությունը դատախազի որոշմամբ փոփոխվել է, ապա մեղադրյալին տրամադրվում է նաև դատախազի համապատասխան որոշումը¹⁸⁷: Մեղադրական եզրակացությունը մեղադրյալին տրամադրվելու կարևորությունը պայմանավորված է նրա արդյունավետ պաշտպանության իրականաց-

180 ՀՀ ՔԴՕ, հոդված 65, 2-րդ մաս, 15-րդ կետ:

181 ՀՀ ՔԴՕ, հոդված 247, 1-ին մաս:

182 Ինչն էական ազդեցություն է ունենում նախնական քննության տվյալ փուլում պաշտպանության նախապատրաստության վրա:

183 ՀՀ ՔԴՕ, հոդված 65, 2-րդ մաս, 19-րդ կետ. անհրաժեշտ է փաստել, որ սույն դրույթն ուղղակիորեն հակասում է ՀՀ ՔԴՕ 277-րդ հոդվածի 3-րդ մասին, որը սահմանում է դատախազի պարտականությունը մեղադրյալին ստորագրությամբ հանձնել հաստատված մեղադրական եզրակացության և դրան կից հավելվածների հաստատված պատճենները:

184 ՀՀ ՔԴՕ, հոդված 73, 1-ին մաս, 3-րդ կետ:

185 ՀՀ ՔԴՕ, հոդված 266:

186 ՀՀ ՔԴՕ, հոդված 197, 3-րդ մաս:

187 ՀՀ ՔԴՕ, հոդված 277, 3-րդ մաս:

ման անհրաժեշտությամբ: Մեղադրական եզրակացությունն այն փաստաթուղթն է, որով ամփոփվում են քրեական գործով նախնական քննության արդյունքները և հիմնավորվում անձի դեմ ներկայացված մեղադրանքը և այն հաստատող ապացույցները: Այն հնարավորություն է տալիս դրա շրջանակներում կազմակերպել անձի պաշտպանությունը, քանի որ մեղադրական եզրակացությամբ ընդգծվում են նաև դատական քննության սահմանները, որոնցից դատարանը դատական քննության փուլում դուրս գալ չի կարող ինչպես փաստական կողմով, այնպես էլ արարքի որակման մասով¹⁸⁸: Վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրական եզրակացության պատճենը մեղադրյալին տրամադրելու պարտականության չկատարման դեպքում դատական քննության ընթացքում քննությունը հետաձգվում է երեք օրով՝ ամբաստանյալին հանձնելով մեղադրական եզրակացության պատճենը¹⁸⁹: Սույն պայմաններում մեղադրյալի՝ իր պաշտպանությունն արդյունավետորեն կազմակերպելու իրավունքի իրացման ապահովվումը կախված է այնպիսի հանգամանքներից, ինչպիսին են՝ գործի բնույթն ու բարդությունը, մեղադրյալի անձը, պաշտպանի միջոցով ներկայացված լինելը և այլն:

Մեղադրյալի նկատմամբ առաջադրված մեղադրանքը դատական քննության ընթացքում կարող է փոփոխվել մեղադրողի կողմից խստացման կամ մեղմացման առումով, եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և դատախազը միջնորդել է հետաձգել դատական քննությունը՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար:

Մեղադրողը կարող է խստացման կամ մեղմացման առումով փոխել մեղադրանքը նաև մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցներն անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղադրվում է: Դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխման երկու դեպքում էլ պետք է առկա լինի փաստական հանգամանքների այնպիսի փոփոխություն, որի հետևանքով փոփոխվում է արարքի իրավաբանական որակումը կամ իրավաբանական որակումը մնում է նույնը, սակայն փոխվում է հանցակազմի հատկանիշների բովանդակությունը:

Առաջադրված նոր մեղադրանքին ծանոթանալու համար դատարանը պարտավոր է բավարար ժամանակ տրամադրել ամբաստանյալին և նրա պաշտպանին՝ ի ապահովումն ամբաստանյալի պաշտպանության իրավունքի¹⁹⁰:

Անձամբ կամ փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է անձի՝ իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքը ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանք առաջադրելու պահից¹⁹¹: Քրեադատավարական օրենսդրությունը մինչև անձին կասկածյալի կարգավիճակում ներգրավելը որպես վկա հարցաքննելիս անձի համար երաշխավորում է ոչ թե պաշտպանության, այլ իրավաբանական օգնություն ստանալու իրավունք՝ իրավունք վերապահելով քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի հետ¹⁹²: Եթե վկան հարցաքննության է ներկայանում փաստաբանի հետ, ապա փաստաբանն իրավունք ունի ներկա գտնվելու հարցաքննությանը, սակայն իրավասու չէ հարցեր տալու վկային կամ մեկնաբանելու նրա պատասխանները: Փաստաբանը միայն իրավունք ունի վկայի՝ ՔԴՕ-ով նախատեսված իրավունքները խախտող հարցեր տալու կամ գործողություններ կատարելու դեպքում հայտարարություն անել, որոնք պետք է ներառվեն հարցաքննության արձանագրությունում¹⁹³:

Կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն հարցաքննվելու պաշտպանի մասնակցությամբ: Վարույթն իրականացնող մարմինը ձերբակալելուց անմիջապես հետո պարտավոր է կասկածյալին անհապաղ ապահովել պաշտպանով՝ հարցաքննություն իրականացնելու համար: Պաշտպանի մասնակցությունն անհապաղ ապահովելու անհնարինության դեպքում քննիչը պարտավոր է նրա մասնակցությունն ապահովել կասկածյալին արգելանքի վերցնելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: Կասկածյալն իրավունք ունի մինչև հարցաքննությունը սկսելը ոչ պակաս, քան երկու ժամով առանձին, կոնֆինդենցիալ կարգով տեսակցել իր պաշտպանի հետ¹⁹⁴:

188 ՀՀ ՔԴՕ 309-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել:

189 ՀՀ ՔԴՕ, հոդված 323, 2-րդ մաս:

190 ՀՀ ՔԴՕ, հոդված 309.1, 4-րդ մաս:

191 ՀՀ Սահմանադրություն, հոդված 20:

192 ՀՀ ՔԴՕ, հոդված 86, 5-րդ մաս, 10-րդ կետ:

193 Նույն տեղում:

194 ՀՀ ՔԴՕ, հոդված 211, 1-ին և 2-րդ մասեր:

Մեղադրյալը նույնպես իրավունք ունի հարցաքննվել պաշտպանի մասնակցությամբ: Եթե մեղադրյալը պաշտպան չունի, ապա պաշտպան պետք է ներգրավվի մինչև մեղադրյալի առաջին հարցաքննությունը (անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում): Մեղադրյալն իրավունք ունի պաշտպանի հետ առանձին, կոնֆիդենցիալ կարգով տեսակցելու՝ առանց տևողության սահմանափակման¹⁹⁵: Տվյալ իրավունքից մեղադրյալն օգտվում է նաև գործի դատական քննության ընթացքում:

Պաշտպանի՝ քրեական գործով վարույթին ներգրավման կարգը սահմանվում է քրեադատավարական օրենսդրությամբ: Այսպես, ՀՀ քրեադատավարական օրենսդրությունն առաջին հերթին սահմանում է պաշտպանի անհատական հրավիրման սկզբունքը, որի էությունը կայանում է կասկածյալի և մեղադրյալի կողմից իր պաշտպանին ընտրելու հնարավորության մեջ: Այն, ըստ էության, ոչ միայն իրավաբանական նշանակություն ունեցող ակտ է, այլև ունի բարոյական նշանակություն, որի էությունը պաշտպանի և պաշտպանյալի միջև վստահության անհրաժեշտ մթնոլորտի ստեղծումն է¹⁹⁶: Ըստ տվյալ սկզբունքի առաջնայնության՝ պաշտպանը ներգրավվում է քրեական գործով վարույթին կասկածյալի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, ազգականի կամ կասկածյալի/մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի միջնորդությամբ՝ վարույթն իրականացնող մարմնի պահանջով՝ ՀՀ փաստաբանների պալատի կողմից նշանակվելու միջոցով¹⁹⁷: Վարույթն իրականացնող մարմինը փաստաբանների պալատից պահանջում է փաստաբան նաև այն դեպքում, երբ քրեական գործին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, սակայն կասկածյալը կամ մեղադրյալը չունեն պաշտպան:

Իր իրավական կարգավիճակը հաստատելու համար պաշտպանը վարույթն իրականացնող մարմնին է ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթ, փաստաբան հանդիսանալու փաստը հաստատող փաստաթուղթ՝ տրված փաստաբանների պալատի կողմից, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու համար կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ հաստատված փաստաթուղթը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշումը¹⁹⁸: Պաշտպանին քրեական գործով վարույթին ներգրավելու հիմքը կասկածյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումն է¹⁹⁹: Միաժամանակ, վարույթն իրականացնող մարմնին իրավունք չունի ընտրել և նշանակել պաշտպան, ինչպես նաև որևէ մեկին երաշխավորել որպես այդպիսին:

Եթե կասկածյալը կամ մեղադրյալը չունեն համապատասխան նյութական միջոցներ և օգտվում են պետության կողմից տրամադրած իրավաբանական օգնությունից, ապա պաշտպան ընտրելու նրանց իրավունքը ըստ էության բացակայում է: Անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին վարույթն իրականացնող մարմնի կայացրած որոշումն ուղարկվում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին, որն էլ նշանակում է կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանին:

Պաշտպան ընտրելու իրավունքը բացարձակ չէ նաև այն դեպքում, երբ ամբաստանյալն է վճարում իր պաշտպանության համար: Մասնավորապես, որպես պաշտպան քրեական գործով վարույթին չի կարող մասնակցել այն փաստաբանը, ով քրեական գործի քննությանը մասնակցող կամ մասնակցած պաշտոնատար անձի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական, ծառայողական կախվածության այլ հարաբերությունների մեջ, գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատակից, մասնագետ, փորձագետ կամ վկա, օրենքով կամ դատարանի դատավճռով իրավունքի չունի լինելու փաստաբան²⁰⁰: Միաժամանակ, քրեադատավարական օրենսդրությունը վարույթն իրականացնող մարմնին իրավունք է վերապահում փաստաբանների պալատի միջոցով վարույթին ներգրավել նոր պաշտպան, եթե պաշտպանի իրավավիճակ ձեռք բերելու պահից 24 ժամվա ընթացքում պաշտպանը հնարավորություն չունի ներկայանալու կամ չի ներկայանում կասկածյալի կամ արգելանքի վերցրած մեղադրյալի առաջին հարցաքննությանը, ինչպես նաև այն դեպքում, երբ պաշտպանը հնարավորություն չունի մասնակցելու քրեական գործով վարույթին 3 օրից ավելի ժամանակով²⁰¹:

Քանի որ քրեական գործով դատական քննությանը պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, պաշտպանի՝ անընդմեջ 3 դատական նիստերի կամ տևական բուժում պահանջող հիվանդության կամ որևէ այլ հիմքով երկար ժամանակով դատական նիստին ներկայանալու անհնարինության դեպքում դատարանն իրավունք ունի ամբաստանյալին առաջարկել ընտրելու այլ պաշտպան, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝

195 ՀՀ ՔԴՕ, հոդված 65 և 212:

196 Տե՛ս Ե. Ամիրխանյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011թ. փետրվարի 24-ի որոշումը, կետ 35:

197 ՀՀ ՔԴՕ, հոդված 70:

198 ՀՀ ՔԴՕ, հոդված 71:

199 Տե՛ս Ն. Պողոսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2008թ. մարտի 26-ի որոշումը, 25-27-րդ կետեր:

200 ՀՀ ՔԴՕ, հոդված 93, 1-ին մաս:

201 ՀՀ ՔԴՕ, հոդված 70, 5-րդ մաս:

նշանակելու նոր պաշտպան²⁰²: Կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպան ընտրելու իրավունքը սահմանափակ է մաս ալն դեպքերում, երբ գործով անցնող մի քանի կասկածյալները կամ մեղադրյալներն ունեն մեկ պաշտպան, սակայն պաշտպանյալների շահերի միջև առկա է հակասություն կամ վտանգ կա, որ նրանց և պաշտպանի շփումները կարող են խոչընդոտել արդարադատության իրանացմանը²⁰³:

Ելնելով կասկածյալի, մեղադրյալի՝ իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքի իրացումից՝ կասկածյալն ու մեղադրյալն իրավունք ունեն քրեական գործի քննության ընթացքում փոխարինելու պաշտպանին, որի ծառայությունների դիմաց վճարում են: Քրեական դատավարության օրենսդրությունը, ինչպես մաս անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կարգավորող այլ իրավական ակտերը չեն ամրագրում պետության հաշվին ներգրավված պաշտպանին փոխարինելու կարգը:

Քրեական գործի քննության ցանկացած փուլում անձն իրավունք ունի հրաժարվել պաշտպանից, ինչը մեկնաբանվում է որպես կասկածյալի կամ մեղադրյալի մտադրություն՝ իր պաշտպանությունն իրականացնել առանց որևէ պաշտպանի իրավաբանական օգնության: Միաժամանակ, օրենքը պահանջում է, որ պաշտպանից հրաժարումը հայտարարվի կասկածյալի կամ մեղադրյալի նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, ով կարող էր նշանակվել, կամ եթե արդեն նշանակվել է պաշտպան, նրա ներկայությամբ:

Վարույթն իրականացնող մարմինը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից պաշտպանից հրաժարումն ընդունելիս պետք է հաշվի առնի անձի տարիքը և հետազոտի պաշտպանության իրավունքից նրա հրաժարվելու դրդապատճառները: Հրաժարումը կարող է ընդունվել, երբ վարույթն իրականացնող մարմինը համոզվի, որ պաշտպանից հրաժարվելու ցանկություն անձը հայտնել է ինքնակամ, սեփական նախաձեռնությամբ և այն պարտադրված չէ գործի քննության հանգամանքներով, անձը կարողանում է ամբողջությամբ գիտակցել իր վարքագծի հետևանքները, ի վիճակի է ինքնուրույն իրականացնել իր պաշտպանությունը²⁰⁴: Ամեն դեպքում, անթույլատրելի է ընդունել պաշտպանից հրաժարումը, եթե այն պայմանավորված է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ²⁰⁵: Հետևաբար, եթե անձը բավարար միջոցներ չունի՝ վճարելու փաստաբանի ծառայությունների դիմաց, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է չընդունել պաշտպանից հրաժարումը և տրամադրել անվճար իրավաբանական օգնություն:

Միաժամանակ, պաշտպանից հրաժարված կասկածյալը/մեղադրյալն իրավունք ունի քրեական գործով վարույթի ցանկացած փուլում փոխել իր դիրքորոշումը այդ առթիվ: Այդուամենայնիվ, օրենքը սահմանում է, որ նշանակված պաշտպանից հրաժարվելու դեպքում, երբ այն ընդունել է քրեական վարույթն իրականացնող մարմինը, պաշտպան ունենալու կասկածյալի կամ մեղադրյալի արտահայտած ցանկությունը քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունը կանխորոշող հանգամանք չէ²⁰⁶: Քրեադատավարական օրենսդրությունը, սահմանելով կասկածյալի և մեղադրյալի պաշտպան ունենալու իրավունքը, միաժամանակ նախատեսում է քրեական վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը²⁰⁷: Օրենքը նախատեսում է մաս սույն դեպքում պաշտպանից հրաժարվելու հնարավորությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հանցանքը կատարելու պահին կասկածյալը/մեղադրյալն անչափահաս է եղել, չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում դատավարության լեզվին, կասկածյալի/մեղադրյալի մոտ առկա է հոգեկան հիվանդություն կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարում, կասկածյալի/մեղադրյալի համար դժվար է իրականացնել իր պաշտպանությունը համր, կույր, խուլ, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, տկարամտության, բացահայտ մտավոր անգարգացվածության, այլ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների դեպքերում, ինչպես մաս այն դեպքում, երբ մեղադրյալին վերագրվում է անմեղսունակության վիճակում կատարված արարք²⁰⁸: Բացի այդ՝ պաշտպանի մասնակցությունը պարտադիր է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի, արագացված կարգով դատական քննության ընթացքում, և ամբաստանյալի կողմից պաշտպանից հրաժարվելու դեպքում դատարանը մերժում է արագացված կարգ կիրառելու միջնորդությունը՝ գործը քննելով ընդհանուր կարգով²⁰⁹:

202 ՀՀ ՔԴՕ, հոդված 304, 2-րդ մաս:

203 ՀՀ ՔԴՕ, հոդված 70, 7-րդ մաս:

204 Լ. Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի թիվ ՀՔԴԴ/0436/01/08 որոշում, որը կայացվել է 2009թ. հունիսի 29-ին:

205 ՀՀ ՔԴՕ, հոդված 72, 2-րդ մաս:

206 ՀՀ ՔԴՕ, հոդված 69, 3-րդ մաս:

207 ՀՀ ՔԴՕ, հոդված 69:

208 ՀՀ ՔԴՕ, հոդված 72, 2-րդ մաս:

209 ՀՀ ՔԴՕ, հոդված 375.2, 2-րդ մաս:

Պաշտպանի դերն ու անկախությունը

Հայաստանի Հանրապետությունում քրեական գործերով պաշտպանություն կարող են իրականացնել միայն փաստաբանները, ովքեր, հանձնելով որակավորման քննություններ, ՀՀ փաստաբանների պալատի կողմից ստացել են փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր և դարձել են ՀՀ փաստաբանների պալատի անդամ²¹⁰: Փաստաբանների անկախությունն ինքնին երաշխավորվում է փաստաբանների պալատի կարգավիճակով, որն անկախ, ինքնակառավարվող կազմակերպություն է²¹¹: Միաժամանակ, Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը սահմանում է փաստաբանի պարտավորությունը՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս լինել անկախ, այսինքն՝ ազատ ազդեցություններից և հատկապես նրանցից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումներից, որոնք կարող են բացասաբար ազդել վստահորդի գործի վրա²¹²: Փաստաբանի մասնագիտական պարտականությունն է պահպանել փաստաբանի հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը²¹³:

ՀՀ փաստաբանի վարքագծի կանոնագիրքը փաստաբանին պարտավորեցնում է գործել վստահորդի շահերից և վեր դասել վստահորդի շահերը սեփական շահերից: Փաստաբանն իր մասնագիտական գործունեության ընթացքում պետք է ելնի գաղտնիության սկզբունքից և գաղտնի պահի այն բոլոր տեղեկությունները և ապացույցները, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը փոխանցել է փաստաբանին, փաստաբանի կողմից տրված խորհրդատվության բնույթն ու բովանդակությունը, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները, որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն:

Փաստաբանը պարտավորություն է կրում վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը պահանջում է փաստաբանից բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և պրակտիկ փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:

Կանոնագիրքը փաստաբանից պահանջում է իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունն ընդունելիս նկատի ունենալ սեփական մասնագիտական հնարավորությունները: Փաստաբանը պարտավոր է հրաժարվել իրավական օգնություն ցույց տալուց, եթե նա բանիմաց չէ տվյալ հարցում: Բացի այդ՝ փաստաբանը չպետք է ընդունի իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ճիշտ ժամանակին կատարումը²¹⁴:

Դատական ներկայացուցչություն իրականացնելիս փաստաբանը պարտավոր է ենթարկվել դատաբանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում՝ հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Միաժամանակ, այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում դատավորի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու փաստաբանի հնարավորությունները, և փաստաբանն իր վստահորդի շահերը պետք է պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքներ, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Ի լրումն բոլոր փաստաբանների համար պարտադիր վարքագծային կանոնների՝ հանրային պաշտպանների համար նախատեսված են նաև այլ վարքագծային պարտավորություններ: Մասնավորապես, հանրային պաշտպանն իրավունք չունի այլ գործերով իրավական օգնություն ցույց տալ: Բացառություն են կազմում իր կամ իր ազգականի գործով հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի թույլտվությամբ իրավական օգնության տրամադրումը:

Հանրային պաշտպանն իրավունք չունի իր վստահորդից ստանալ գումար կամ այլ թանկարժեք (հիստուն հազար ՀՀ դրամը գերազանցող) նվեր: Նման գումար կամ թանկարժեք նվեր ստանալու դեպքում վերջինս պարտավոր է մեկ օրվա ընթացքում ծանուցում գրել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին կամ փաստաբանների պալատի նախագահին և նվերը հանձնել պալատին:

Փաստաբանների պալատը, իհարկե, իրավասություն չունի հսկողություն իրականացնելու փաստաբանների կողմից մատուցված ծառայությունների նկատմամբ, բայց իրավասու է կարգապահական վարույթի շրջանակներում քննել և կարգապահական պատասխանատվության ենթարկել «Փաստա-

210 «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, 4-րդ մաս:

211 Նույն տեղում, հոդված 7, 1-ին մաս:

212 «Փաստաբանի վարքագծի կանոնագիրք», կետ 2.1. հաստատվել է ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի թիվ 1/4 որոշմամբ 2012թ. փետրվարի 11-ին:

213 Նույն տեղում, կետ 2.2:

214 Նույն տեղում, կետ 3.1.7 և 3.1.8:

բանության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտում թույլ տված փաստաբաններին²¹⁵ (ի վնաս փաստաբանի վստահորդի կայացված դատական ակտն ինքնին կարգապահական պատասխանատվության հիմք չէ):

Քրեադատավարական օրենսդրությունը պաշտպանին պարտավորեցնում է չկատարել պաշտպան-յալի շահերին հակասող որևէ գործողություն²¹⁶: Պաշտպանն իրավունք չունի հակառակ պաշտպանյալի դիրքորոշման ընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը դրա կատարման մեջ²¹⁷, իրավունք չունի հանդես գալ դիրքորոշմամբ՝ առանց իր վստահորդի հետ նախօրոք համաձայնեցնելու՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնագրապարտման մեջ²¹⁸:

Միաժամանակ, ի տարբերություն մասնավոր հիմունքներով գործող փաստաբանների՝ պետության հաշվին իրավաբանական օգնություն տրամադրող հանրային պաշտպանների մատուցած ծառայությունների որակն ու ժամկետները ենթակա են հսկողության հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից²¹⁹: Վերահսկողությունն իրականացվում է հանրային պաշտպանների վարույթները, ներկայացված բողոքները ստուգելու, պաշտպանության իրականացման ռազմավարության շուրջ քննարկումներ անցկացնելու, պաշտպանների կողմից բացատրություններ ստանալու, պաշտպանների դատական նիստերին մասնակցելու և այլ միջոցներով:

Անմեղության կանխավարկածը

Անմեղության կանխավարկածի սկզբունքի ուժով հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատաբանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը նշանակում է, որ մինչև դատաբանի դատավճռի՝ օրինական ուժի մեջ մտնելը անձի մեղավորության մասին կատարված ցանկացած հայտարարություն իրավաբանական նշանակություն ունենալ չի կարող: Միաժամանակ, դա չի տարածվում հետաքննություն իրականացնող մարմինների, քննիչի և դատախազի ունեցած դիրքորոշումների վրա:

Անմեղության կանխավարկածի համաձայն՝ կասկածյալը/մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Կասկածյալի/մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա և ի պաշտպանություն նրանց բերված ցանկացած փաստարկ պետք է հերքվի մեղադրանքի կողմից: Միաժամանակ, անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա և պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Անմեղության կանխավարկածի սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ ՔԴՕ 65-րդ հոդվածի 3-րդ մասում, համաձայն որի՝ մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք: Հետևաբար, օրենքով նախատեսված որևէ իրավունքից օգտվելը կամ չօգտվելը չի կարող մեկնաբանվել որպես կասկածյալի կամ մեղադրյալի կողմից հանցագործության կատարումը հիմնավորող փաստարկ: Միաժամանակ, սույն դրույթը երաշխավորում է կասկածյալի կամ մեղադրյալի՝ լռելու և իր դեմ ցուցմունք տալու իրավունքից ազատ լինելը, ինչը նույնպես սերտորեն կապված է անմեղության կանխավարկածի սկզբունքի հետ:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը սերտորեն առնչվում է նաև կասկածյալի/մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցների, հատկապես կալանավորման խնդրի հետ: Անմեղության կանխավարկածի սկզբունքի համաձայն՝ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր²²⁰: Հետևաբար, կալանավորումը չի կարող կիրառվել որպես պատիժ քրեական վարույթի ընթացքում նախատեսված իրավունքներից օգտվելու կամ չօգտվելու համար: Այն՝ որպես խափանման միջոցներից ամենախիստը, պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ օրենքով նախատեսված այլ խափանման միջոցները չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը: ՀՀ ՔԴՕ-ը նախատեսում է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ: Մասնավորապես, անձին կալանավորելու համար անհ-

215 «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 39, 1-ին մաս: Փաստաբանների կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքները նախատեսված են ինչպես «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում, այնպես էլ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքում»:

216 ՀՀ ՔԴՕ, հոդված 73, 2-րդ մաս:

217 Նույն տեղում:

218 «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 19, 6-րդ կետ:

219 Նույն տեղում, հոդված 43:

220 ՀՀ ՔԴՕ, հոդված 18, 5-րդ մաս:

րաժեշտ է ապացույցների որոշակի ամբողջություն, որոնք հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություն անել այն մասին, որ կալանքի տակ չգտնվող անձը կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական արդարադատության խնդիրների լուծմանը²²¹։ Կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ ենթադրելով ապագային վերաբերող իրադարձություններ։ Իսկ ապագային ուղղված իրադարձություններն անհրաժեշտ է հիմնավորել գործով ձեռք բերված նյութերով, որոնց վրա պետք է հիմնված լինեն մեղադրյալի հավանական գործողությունների հնարավորության ողջամիտ կասկածներն ու ենթադրությունները։ Հետևաբար, կալանավորման կիրառման հիմքում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ²²²։ Ընդ որում, այդ փաստական տվյալները և դրանց վերլուծության արդյունքում ձևավորվող փաստարկումը պետք է մատչելի շարադրվեն կալանավորման վերաբերյալ դատական ակտում։ Միաժամանակ, անձին կալանավորելու միջնորդությունը կարող է բավարարվել միայն այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրած քրեական հետապնդման մարմինը համոզիչ կերպով հիմնավորում է անձին մեղսագրվող հանցագործությանը նրա առնչությունը (տվյալ հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկած) և ՀՀ ՔԴ-Օ 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը²²³։ Ըստ էության, հիմնավոր կասկածը հիմնավորելու պահանջը սկզբունքային նշանակություն ունի անձին ազատությունից զրկելու համար, քանի որ եթե քրեական հետապնդման մարմինը չի հիմնավորում անձի առնչությունն իրեն մեղսագրվող հանցագործությանը, ապա նրա հետագա վարքագծի պատշաճության գնահատումն անտրամաբանական է։ Միաժամանակ, առնչության (հիմնավոր կասկածի) ապացուցողական չափանիշն էականորեն ցածր է անձին հանցագործության մեջ մեղավոր ճանաչելու համար անհրաժեշտ ապացուցողական չափանիշից (հիմնավոր կասկածից վեր), քանի որ դատարանի կողմից կալանավորման վերաբերյալ ընդունված որոշումը ոչ թե անձին դատապարտող ակտ է, այլ արդյունավետ և անաչառ արդարադատություն իրականացնելու.... կատարումն ապահովող նախապայման²²⁴։

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձին մեղսագրվող հանցագործության ծանրությունը էական նշանակություն ունի ազատության մեջ գտնվող մեղադրյալի դրսևորվող վարքագծի հավանականությունը կանխորոշելու համար՝ գործում առկա մնացած, մասնավորապես՝ ՀՀ ՔԴ-Օ 135-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված հանգամանքների²²⁵ համատեքստում։ Այդ առումով կարող է քննության առարկա դառնալ նաև դեռևս չկատարված քննչական գործողությունների օբյեկտիվության վրա մեղադրյալի կողմից ազդեցություն գործելու հնարավորությունը²²⁶։

Մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս, ի լրումն վերոգրյալ պահանջների, ավելանում է գործի վարույթն իրականացնող մարմնի դրսևորած ջանասիրությունը։ Կալանավորման ժամկետի երկարացման հարցը քննելիս սկզբնական կալանավորման հիմքերն ու պայմանները պետք է նորից ստուգվեն, և եթե դրանք առկա չեն և նոր հիմքեր էլ ի հայտ չեն եկել, ապա կալանավորման ժամկետը չի կարող երկարացվել։ Բացի սկզբնական կալանավորմանը բնորոշ հիմքերից և պայմաններից, կալանավորման ժամկետը երկարացնելու լրացուցիչ պայման է վարույթն իրականացնող մարմնի անհրաժեշտ ջանասիրությունը, որը ենթադրում է, որ անձի կալանավորման ժամանակահատվածում վարույթն իրականացնող մարմինն անգործության չի մատնվել, կատարել է բավարար չափով քննչական ու այլ դատավարական գործողություններ։

221 ՀՀ ՔԴ-Օ 135-րդ հոդվածը նախատեսում է կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցների կիրառման հիմքերը, որոնք են գործով ձեռք բերված բավարար ապացույցները, որոնք բավարար են ենթադրելու, որ կասկածյալը/մեղադրյալը կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը։

222 Ա. Ճուղուրյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-132/07 որոշում. կայացվել է 2007թ. օգոստոսի 30-ին։

223 Գ. Միքայելյանի վերաբերյալ գործով թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշում. կայացվել է 2009 դեկտեմբերի 18-ին։

224 ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ 827 որոշում. կայացվել է 2009թ. սեպտեմբերի 12-ին։

225 ՀՀ ՔԴ-Օ 135-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, կասկածյալի կամ մեղադրյալի անձը, տարիքը և առողջական վիճակը, սեռը, զբաղմունքի տեսակը, ընտանեկան դրությունը, խնամարկյալների առկայությունը, գույքային դրությունը, բնակության մշտական վայրի առկայությունը, այլ էական հանգամանքներ։

226 Ա. Ավետիսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշում. կայացվել է 2008թ. հոկտեմբերի 31-ին։

Դատական քննության մրցակցությունը և դատական քննությանը ներկա գտնվելու և մասնակցելու իրավունքը

Պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար մեծ նշանակություն ունի կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքի իրացումը, քանի որ այդ երկու իրավունքները փոխկապված են. պաշտպանության կողմի հնարավորությունները սահմանափակելու դեպքում հոգս են ցնդում ներկայացված մեղադրանքը հերքելու և արդյունավետորեն պաշտպանվելու բոլոր փորձերը: ՀՀ օրենսդրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում.... իր գործի քննության իրավունքը²²⁷: Քրեական դատավարությունում երաշխավորվում է մրցակցության սկզբունքը, ինչը ենթադրում է, որ քրեական դատավարությանը մասնակցող կողմերին պետք է տրամադրվեն իրենց դիրքորոշումները պաշտպանելու հավասար հնարավորություններ:

Մրցակցության սկզբունքի և կողմերի հավասարության սկզբունքի պահպանումը պահանջում է, որ դատարանի դատավճիռը հիմնավորված լինի միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերի համար ապահովվել են հավասար պայմաններ: Դատարանում քրեական գործի քննությանը կողմերի մասնակցությունը պարտադիր է, իսկ գործի քննությանը մասնակցելու կողմերի իրավունքի ապահովման պարտականությունը կրում է դատարանը²²⁸:

Դատարանը պարտավոր է ապահովել քրեական գործի դատական քննության ընթացքում պաշտպանի և մեղադրողի հավասար իրավունքները: Քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է պաշտպանի իրավունքը մասնակցելու առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերին և գործի նյութերի հետազոտմանը²²⁹: Քրեական գործի քննությանը նրա չներկայանալու դեպքում քննությունը պետք է հետաձգվի: Կողմերի հավասարության և մրցակցության, ինչպես նաև ամբաստանյալի արդյունավետ պաշտպանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանը պարտավոր է բավարար ժամանակ տրամադրել գործի վարույթին դատական քննության փուլում ներգրավված պաշտպանին՝ գործի նյութերին ծանոթանալու նպատակով: Պաշտպանն իրավունք ունի միջնորդելու կրկնել ցանկացած գործողություն, որը կատարվել է դատական քննության ընթացքում նախքան իր ներգրավվելը, որի ընթացքում կարևոր հանգամանքներ են պարզվել:

Ըստ ՔԴՕ-ի՝ պաշտպանն իրավունք ունի ձեռք բերել նյութեր և ներկայացնել դատարանին՝ քրեական գործին կցելու և հետազոտելու համար, մասնակցել քրեական գործով նյութերի հետազոտությանը, ներկայացնել միջնորդություններ, կարծիք հայտնել դատավարության մյուս մասնակիցների միջնորդությունների և առաջարկությունների առնչությամբ, բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ, առարկել նախագահողի անօրինական գործողությունների դեմ, հանդես գալ ճառով ու ռեպլիկով: Պաշտպանն իրավունք ունի նաև ծանոթանալ դատական քննության ընթացքում կատարված քննչական կամ այլ դատավարական գործողություններին և դատական նիստի արձանագրությանը և պահանջել դրանցում գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք իր կարծիքով պետք է նշվեն, դիտողություններ ներկայացնել նիստի արձանագրության կապակցությամբ²³⁰:

Համաձայն մրցակցության սկզբունքի ապահովման վերաբերյալ ներպետական օրենսդրական կարգավորման՝ դատարանում գործի քննությանը կողմերի մասնակցությունը պարտադիր է: Քրեական գործի դատական քննությունը կատարվում է ամբաստանյալի պարտադիր մասնակցությամբ: Քրեադատավարական օրենսդրությամբ ամբաստանյալի պարտադիր մասնակցությունը դատական քննությանը կարող է սահմանափակվել՝ բացառությամբ այն դեպքի, երբ դատարանի կողմից ամբաստանյալի նկատմամբ կիրառվում է սանկցիա՝ նիստերի դահլիճից հեռացնելով վերջինիս: Տվյալ սանկցիայի հիմք հանդիսանում է նախազգուշացվելուց հետո ամբաստանյալի կողմից կրկին անգամ դատական քննության բնականոն ընթացքը խոչընդոտելը, դատարանի օրինական կարգադրությունները չկատարելը, ինչպես նաև դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորումը (այս դեպքում նիստերի դահլիճից հեռացումը կարող է կիրառվել առանց նախազգուշացման):

Ամբաստանյալի նկատմամբ դատական նիստերի դահլիճից հեռացնելու ձևով սանկցիայի կիրառման դեպքում քրեական գործի դատական քննությունը շարունակվում է ամբաստանյալի բացակայությամբ, սակայն դատավճռի հրապարակումն ամեն դեպքում իրականացվում է ամբաստանյալի ներկայությամբ: Որպես մրցակցության սկզբունքի ապահովման երաշխիք՝ քրեադատավարական

227 ՀՀ Սահմանադրություն, հոդված 19, 1-ին մաս:

228 ՀՀ ՔԴՕ, հոդված 23:

229 ՀՀ ՔԴՕ, հոդված 73, 1-ին մաս, 13-րդ կետ:

230 ՀՀ ՔԴՕ, հոդված 73, 1-ին մաս:

օրենսդրությունն ամրագրում է պաշտպանի պարտադիր մասնակցությունը: Եթե ամբաստանյալը չունի պաշտպան, և նրա նկատմամբ կիրառվում է սանկցիա նիստերի դահլիճից հեռացնելու ձևով, ապա դատարանը պարտավոր է ապահովել պաշտպանի մասնակցությունը: Նման դեպքերում ամբաստանյալի կողմից պաշտպանից հրաժարում չի թույլատրվում, և դատարանը պարտավոր է նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները²³¹:

Հիմնավորված դատական ակտ ունենալու և բողոքարկելու իրավունքը

ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը դատարանից պահանջում է կայացնել հիմնավորված դատական ակտ: Մասնավորապես, օրենքը սահմանում է, որ դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված²³²: Դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության, ՀՀ ՔԴ-Օ-ի և այն օրենքների պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են կոնկրետ քրեական գործը լուծելիս: Այսինքն՝ դատարանի կողմից պետք է ճիշտ կիրառվեն նյութական և դատավարական իրավունքի նորմերը:

Դատարանի կողմից ինչպես դատավճիռ, այնպես էլ այլ դատական ակտ կայացնելիս անհրաժեշտ է պահպանել ոչ միայն քրեական իրավունքի նորմերը, այլև իրավունքի այլ ճյուղերի դրույթները: Դատավարական իրավունքի տեսանկյունից օրինականությունը ենթադրում է, որ ընթացակարգային կանոնները պետք է պահպանված լինեն ինչպես դատական ակտը կայացնելիս, այնպես էլ դատավարության ընթացքի նախորդ փուլերում:

Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե դրանում արված հետևությունները հիմնված են դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար, դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին²³³:

Դատարանի կայացրած դատավճիռը պետք է լինի պատճառաբանված, ինչն էապես փոխկապակցված է դատական ակտի հիմնավորվածության հետ: Դատավճռի պատճառաբանվածությունը կոչված է բացատրելու դատարանի կողմից այս կամ այն որոշման կայացումը, այս կամ այն ապացույցի հերքումը: Դատարանը դատավճռում շարադրած իր հետևությունները պարտավոր է հիմնավորել կոնկրետ ապացույցներով: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրված բոլոր հետևությունները և որոշումները:

ՀՀ ՔԴ-Օ-ը նախատեսում է առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը: Դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավասությամբ օժտված են ամբաստանյալը, նրա պաշտպանը, օրինական ներկայացուցիչը, մեղադրողը կամ նրա վերադաս դատախազը, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը: Միաժամանակ, օրենսգիրքը նախատեսում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման հնարավորություն դրա օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Որպես այդպիսի հիմք հանդիսանում են այն բացառիկ դեպքերը, երբ գործի դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, ինչպես նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքները: Վերոգրյալ հիմքերով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը բողոքարկելու իրավունք ունեն նաև արդարացվածը, դատապարտյալը, պաշտպանը և օրինական ներկայացուցիչը²³⁴:

Վերաքննիչ ատյանը բողոքի հիման վրա իրականացնում է գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտության, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեական դատավարության օրենքի նորմերի պահպանման ստուգում: Բողոքարկված դատական ակտը վերանայվում է միայն վերաքննիչ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում և գործում եղած ապացույցներով: Միայն բացառիկ դեպքերում կողմերն իրավունք ունեն դատարան ներկայացնել նոր նյութեր կամ վկային, փորձագետին դատարանում հարցաքննելու, փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն անել, եթե դատավարական կողմերը հիմնավորում են, որ նյութերը ներկայացնելու, վկային կամ փորձագետին կանչելու, ինչպես նաև փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն ներկայացնելու հնարավորություն առաջին ատյանի դատարանում օբյեկտիվորեն չեն ունեցել, կամ հիմ-

231 ՀՀ ՔԴ-Օ, հոդված 69, 7-րդ մաս:

232 ՀՀ ՔԴ-Օ, հոդված 358, 1-ին մաս:

233 ՀՀ ՔԴ-Օ, հոդված 358, 3-ին մաս:

234 ՀՀ ՔԴ-Օ, հոդված 376, 1-ին մաս:

նավորում են, որ ներկայացված միջնորդություններն առաջին ատյանի կողմից մերժվել են անհիմն²³⁵:

Վերաքննիչ դատարանում գործի քննությունն իրականացվում է կոլեգիալ՝ երեք դատավորի ներկայությամբ: Դատական նիստին ամբաստանյալի, մեղադրողի և օրենքով նախատեսված պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերում պաշտպանի մասնակցությունը պարտադիր է: Դատավարության մյուս մասնակիցների չներկայանալը խոչընդոտ չէ գործը քննելու և դատական ակտ կայացնելու համար:

Ըստ օրենսդրական կարգավորման՝ վերաքննիչ դատարանում դատաքննությունն ընդգրկում է նախագահող դատավորի կողմից դատական ակտի բովանդակության, ինչպես նաև բողոքի և դրա դեմ առկա պատասխանների էության շարադրումը, ինչից հետո վերաքննիչ բողոքում և դրան տրված պատասխանում ներկայացված հետևությունները հիմնավորելու համար ելույթ են ունենում կողմերը: Առաջին ատյանում արդեն իսկ հետազոտված ապացույցները վերաքննիչ դատարանում հետազոտվում են միայն կողմի միջնորդությամբ և եթե դատարանը դա համարում է անհրաժեշտ: Վերաքննիչ դատարանում դատական վիճաբանությունն իրականացվում է առաջին ատյանի դատարանի դատական քննության կանոններով, որոնց ընթացքում առաջինը ելույթ է ունենում բողոք բերած անձը: Դատական քննության ավարտին ամբաստանյալին տրվում է վերջին խոսքով հանդես գալու իրավունք:

Վերաքննիչ բողոքը քննելու արդյունքում վերաքննիչ դատարանը կայացնում է դատական ակտ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխարինում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը կամ այն թողնում է նույնը: Գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից ընդունվում է որոշում: Վերաքննիչ դատարանն իրավասու է մերժել վերաքննիչ բողոքը՝ առաջին ատյանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարել վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով առաջին ատյանի դատական ակտը: Մույն դեպքում դատարանի կողմից կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ կամ գործն ուղարկվում է ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանն իրավասու է նաև իր որոշմամբ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել և փոփոխել ստորադաս դատարանի դատական ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Վերաքննիչ դատարանն իրավասու է ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել դատական ակտը և կարճել գործի վարույթը կամ դրա մի մասը: Զաղաքացիական հայցի մասով ներկայացված բողոքի առնչությամբ վերաքննիչ դատարանն իրավասու է կայացնել ինչպես վերագրյալ որոշումները, այնպես էլ այդ մասով բեկանել ստորադաս դատարանի դատական ակտն ու հաստատել կողմերի հաշտության համաձայնությունը, ինչպես նաև քաղաքացիական հայցն ամբողջությամբ կամ մի մասով թողնել առանց քննության:

ՀՀ ՔԴՕ-ը սահմանում է վերաքննիչ դատարանի դատական ակտերը ՀՀ Վճռաբեկ դատարանում բողոքարկելու հնարավորություն՝ դատական սխալի, ինչպես նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիման վրա: Դատական սխալի առկայության հիմքով Վճռաբեկ դատարանին ներկայացված բողոքն ընդունվում է վարույթ, եթե դրանում բարձրացված հարցի վերաբերյալ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին, կամ վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

Պաշտպանության իրավունքի իրացումը արագացված կարգով դատական քննության պայմաններում

ՀՀ ՔԴՕ-ը սահմանում է մեղադրյալի իրավունքը՝ միջնորդելու կիրառել իր գործով արագացված դատական քննության կարգ այն հանցագործությունների մեջ մեղադրվելու դեպքերում, որոնց համար նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը²³⁶:

235 ՀՀ ՔԴՕ, հոդված 385, 1-ին և 2-րդ մասեր:

236 ՀՀ ՔԴՕ, հոդված 375.1, 1-ին մաս. սույն դրույթը սահմանում է, որ ամբաստանյալը/մեղադրյալը կարող է նման միջնորդությամբ հանդես գալ, եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված դատական քննության կարգ կիրառելու դեմ: Մակայն նույնիսկ մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության մեջ արագացված դատական քննության կարգի դեմ առարկելը չի զրկում մեղադրյալին տվյալ իրավունքից, քանի որ նույն դրույթով սահմանվում է, որ դատարանի առաջարկությամբ մեղադրողը կարող է փոխել իր դիրքորոշումը, եթե մեղադրական եզրակացության մեջ առարկել է արագացված դատական քննություն անցկացնելու դեմ: Միաժամանակ, դատախազը

Դատական քննության արագացված կարգն, ըստ էության, քրեական դատավարության ձև է, որն օրենքով սահմանված կարգով միտված է գործն առավել սեղմ ժամկետներում և պարզեցված կարգով լուծելուն: Այս ինստիտուտի առանցքում «գործարքն» է քրեական դատավարության երկու կողմերի՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև, որի շրջանակներում մեղադրյալը համաձայնում է առաջադրված մեղադրանքին, ինչի դիմաց նրա համար երաշխավորվում է պատժի այնպիսի չափ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից, ապա առավել մեղմ պատժ: Բացի այդ՝ ամբաստանյալն ազատվում է ՔԴՕ 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-8-րդ կետերով նախատեսված դատական ծախսերից: Մյուս կողմից՝ մեղադրողը հրաժարվում է մեղադրանքը պաշտպանելու իր գործառույթը լրիվ ծավալով իրականացնելուց՝ դրանով հնարավորություն ստանալով տնտեսել իր միջոցները, ինչպես նաև հնարավորություն է ստեղծվում մեղադրյալի/ամբաստանյալի համար՝ համագործակցելու քրեական հետապնդման մարմինների հետ:

Արագացված կարգով դատական քննության բովանդակությունից ու էությունից բխում է, որ այս ինստիտուտի իրավակարգավորման շրջանակներում անհրաժեշտ է ապահովել հավասարակշռություն դատավարության կողմերի իրավունքների և օրինական շահերի միջև:

Այս իմաստով, ի պաշտպանություն ամբաստանյալի իրավունքների և օրինական շահերի, դատարանը պետք է համոզվի, որ ամբաստանյալը գիտակցում է իր ներկայացրած միջնորդության բնույթը, դրա հետևանքները և այն, որ միջնորդությունը ներկայացված է կամավոր և պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո:

Այսինքն՝ դատական քննության արագացված կարգ կիրառելու հիմքն ամբաստանյալի կամ մեղադրյալի կողմից իրեն առաջադրված մեղադրանքի ողջ ծավալի հետ համաձայն լինելն է: Դա նշանակում է, որ մեղադրյալը պետք է համաձայն լինի կատարված արարքի փաստական հանգամանքների, մեղքի ձևի, շարժառիթների, արարքի իրավական գնահատականների, ինչպես նաև պատճառված վնասի բնույթի և չափի վերաբերյալ մեղադրական եզրակացությունում առկա ենթադրությունների հետ²³⁷:

Ի լրումն դրա՝ ամբաստանյալը պետք է գիտակցի իր ներկայացրած միջնորդության բնույթն ու հետևանքները: Միջնորդությունը պետք է ներկայացված լինի կամավոր՝ պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արագացված դատական քննության պայմաններից մեկի բացակայության դեպքում դատական քննության արագացված կարգի կիրառումն անթույլատրելի է: Ամբաստանյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից արագացված դատական քննությունն անցկացնելու մասին միջնորդությունը ենթակա է մերժման, եթե ամբաստանյալը կամ մեղադրյալն առաջադրված մեղադրանքին համաձայն է մասնակիորեն, միջնորդությունը ներկայացրել է ճնշման տակ, այսինքն՝ հարկադրաբար, ամբաստանյալը չի գիտակցում ներկայացրած միջնորդության բնույթը և հետևանքները²³⁸: Հետևաբար, արագացված դատական քննության կիրառման պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում դատարանը մերժում է միջնորդությունը և գործը քննում է ընդհանուր կարգով:

ՀՀ ՔԴՕ 375-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամբաստանյալի կողմից ներկայացված միջնորդությունը դատարանում պետք է հաստատվի պաշտպանի ներկայությամբ և նրա հետ խորհրդակցելուց հետո: Եթե արագացված դատական քննության կարգ կիրառելու միջնորդությունը ներկայացրած ամբաստանյալը չունի պաշտպան, ապա դատարանը պարտավոր է ամբաստանյալին ապահովել պաշտպանով: Պաշտպանի մասնակցությունը արագացված դատական քննության դեպքում պարտադիր է, և ամբաստանյալի՝ պաշտպան ունենալուց հրաժարվելու դեպքում դատարանը մերժում է միջնորդությունը՝ անցնելով ընդհանուր կարգով գործի քննությանը:

Միջնորդության քննարկումը դատարանում սկսվում է մեղադրողի կողմից ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ներկայացմամբ: Այնուհետև դատավորն ամբաստանյալին հարցեր է տալիս՝ համոզվելու, թե արդյո՞ք վերջինս հասկանում է իրեն առաջադրված մեղադրանքը, համաձայն է դրա հետ, պնդում է արագացված կարգով դատական քննությունն անցկացնելու մասին միջնորդությունը, արդյո՞ք միջնորդությունը ներկայացվել է կամավոր և արդյո՞ք մինչ այն ներկայացնելը ամբաստանյալը խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արագացված կարգով դատական քննություն

արագացված դատական քննության կարգի դեմ կարող է առարկել միայն մեղադրական եզրակացության մեջ: Դրանում արագացված կարգի դեմ առարկության բացակայությունն օրենսդրի կողմից դիտարկվում է որպես լռելային համաձայնություն:

237 Տե՛ս Շ. Ամիրխանյանի վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0209/01/10 որոշում, կետ 22. կայացվել է 2011թ. փետրվարի 24-ին:

238 Նույն տեղում, կետ 26:

անցկացնելու հետևանքները: Սույն հարցերն ուղղվում են՝ պարզելու արագացված կարգով դատական քննություն անցկացնելու պայմանների առկայությունը: Դրանցից որևէ մեկի բացակայության դեպքում դատարանը պարտավոր է անցկացնել ընդհանուր կարգով դատական քննություն:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ արագացված կարգ կիրառելու միջնորդություն ներկայացնելու իրավունքը վերապահված է ամբաստանյալին, սակայն նա մինչ այդ պետք է պաշտպանի հետ խորհրդակցի: Միաժամանակ, մինչև միջնորդությունը ներկայացնելը պաշտպանի հետ խորհրդակցելը չպետք է կրի ձևական բնույթ: Օրենսդրի կողմից պաշտպանի հետ խորհրդակցելու պայմանի նախատեսումը նպատակ ունի ապահովել ամբաստանյալի իրավունքների և օրինական շահերի լիարժեք պաշտպանությունը: Խորհրդակցելու միջոցով ամբաստանյալին պետք է հանգամանորեն պարզաբանվի արագացված կարգով դատական քննություն անցկացնելու էությունը, հետևանքները, դատավճիռ կայացնելու և այն բողոքարկելու կարգը:

Վճռաբեկ դատարանի կողմից ամրագրվել է, որ մինչև խորհրդակցելը պաշտպանը պետք է ծանոթանա գործի նյութերին՝ համոզվելու, որ իր պաշտպանյալի մեղադրանքը հիմնավորված է և հաստատվում է գործով ձեռք բերված ապացույցներով²³⁹: Դատարանը պարտավոր է քրեական գործին դատական քննության փուլում ներգրավված պաշտպանին տրամադրել ողջամիտ ժամկետ գործի նյութերին ծանոթանալու համար: Դատարանը միաժամանակ պարտականություն է կրում համոզվելու, որ արագացված կարգով դատական քննություն իրականացնելիս լիարժեքորեն ապահովված է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը:

Անվճար իրավաբանական օգնությունը ՀՀ-ում

Ի լրումն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ Եվրոպայի խորհուրդը խրախուսում է իր անդամ պետություններին՝ զարգացնելու իրավաբանական օգնության համակարգերը: Եվրոպայի խորհրդի կողմից մի շարք բանաձևեր և առաջարկություններ են ընդունվել անվճար իրավաբանական օգնության առնչությամբ՝ Քաղաքացիական, առևտրային և վարչական գործերով իրավաբանական օգնության վերաբերյալ առաջարկություն (76) 5-ը, Առաջարկություն (78) 8-ը իրավաբանական օգնության և խորհրդատվության վերաբերյալ, Առաջարկություն թիվ R (93) 1-ը օրենքին և արդարադատությանը աղքատների արդյունավետ հասանելիության վերաբերյալ, Առաջարկություն (2005) 12-ը և դրա կամընտրական արձանագրությունը: Ըստ էության, իրավաբանական օգնությունը մեկնաբանվում է որպես պետության կողմից տրամադրվող օգնություն անձանց, ովքեր բավարար ֆինանսական միջոցներ չունեն պաշտպանելու իրենց դատարանում կամ նախաձեռնելու դատական քննություն: Նման մեկնաբանությունը ընդհանուր առմամբ վերաբերում է դատարանում ներկայացուցչությանը: Սակայն իրավաբանական օգնությունը ներառում է նաև իրավաբանական խորհրդատվությունը: Ըստ էության, ոչ բոլոր անձինք են իրավական խնդիրների դեպքում դիմում դատարան. որոշ դեպքերում իրավական խորհրդատվությունը բավարար է խնդիրը լուծելու համար: Հետևաբար, իրավաբանական օգնությունը ներառում է երկու տարր՝ օրենքի հասանելիություն և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն դատաքննությունների ընթացքում, ներկայացուցչություն և պաշտպանություն:

Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններն ունեն իրավաբանական օգնության համակարգեր ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերով: Պետությունների մեծամասնությունում իրավաբանական օգնությունը տրամադրվում է ներկայացուցչության, խորհրդատվության և իրավաբանական աջակցության այլ ձևերով: Մասնավորապես, ԵԽ 37 պետությունների, այդ թվում և Հայաստանի Հանրապետության իրավաբանական օգնությունը ներառում է ներկայացուցչություն դատարանում և իրավաբանական խորհրդատվություն ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերով, երկու պետություններում (Մոլդովա և Ուկրաինա) իրավաբանական օգնությունը ներառում է ներկայացուցչություն դատարանում և իրավաբանական խորհրդատվություն քրեական գործերով, ինչպես նաև դատական ներկայացուցչություն այլ գործերով: Հունաստանը միակ պետությունն է, որտեղ իրավաբանական օգնությունը ենթադրում է քրեական գործերով դատական ներկայացուցչություն, իսկ մյուս գործերով՝ ինչպես դատական ներկայացուցչություն, այնպես էլ՝ իրավաբանական խորհրդատվություն: Թվով 7 պետություններում (Ադրբեջան, Իտալիա, Մալթա, Մոնակո, Լեհաստան, Սան Մարինո, Շվեյցարիա) իրավաբանական օգնությունը ներառում է միայն դատական ներկայացուցչություն ինչպես քրեական, այնպես էլ այլ գործերով:

ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու

²³⁹ Նույն տեղում, կետ 29:

իրավունքը և սահմանում է, որ օրենքով նախատեսված դեպքերում այն ցուցաբերվում է պետական միջոցների հաշվին:

Պետության միջոցների հաշվին իրավաբանական օգնության տրամադրումը կարգավորվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով²⁴⁰ (այսուհետ՝ օրենք): Մինչև 2011թ. դեկտեմբերի 11-ն օրենքում կատարված փոփոխությունները անվճար իրավաբանական օգնությունը երաշխավորվում էր միայն քրեական գործերով անվճարունակ կասկածյալների և մեղադրյալների համար, ինչպես նաև քաղաքացիական որոշ տեսակի գործերով. դրանք էին՝ ալիմենտի գանձման, խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև՝ կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերը:

Օրենքում կատարված փոփոխությունների²⁴¹ արդյունքում իրավաբանական օգնության ծավալներն ընդարձակվեցին՝ ներառելով ինչպես խորհրդատվությունը²⁴², այնպես էլ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով ներկայացուցչությունը և պաշտպանությունը²⁴³: Ներկայացուցչությունը և պաշտպանությունն իրականացվում է առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանում, իսկ քրեական գործերով՝ նաև մինչդատական վարչություն²⁴⁴:

Օրենքում տեղ գտած փոփոխություններով ընդարձակվել է այն անձանց շրջանակը, ում տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն: Ի լրումն քրեական գործերով կասկածյալի և մեղադրյալի՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք են ձեռք բերել.

- Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքի անդամները.
- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները.
- դատապարտյալները.
- ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամները.
- Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցները.
- գործազուրկները.
- միայնակ բնակվող կենսաթոշակառուները.
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք.
- փախստականները.
- Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածները.
- անվճարունակ ֆիզիկական անձինք, ովքեր ներկայացնում են իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ²⁴⁵.
- հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք²⁴⁶:

Այսպիսով՝ օրենքով սահմանվել է անձանց կատեգորիաների շրջանակ, որոնց անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է անկախ նրանց գույքային դրությունից, ինչպես նաև որոշակիորեն հստակեցվել են անձի անվճարունակությունը գնահատելու չափանիշերը: Ըստ օրենքի՝ անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, ով չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև՝ բացի սեփական բնակարանից որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց²⁴⁷:

240 Ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 2004թ. դեկտեմբերի 14-ին, ուժի մեջ է մտել 2005թ. հունվարի 22-ին:

241 Տե՛ս 2011թ. դեկտեմբերի 8-ի ՀՕ-339-Ն օրենքը. ուժի մեջ է մտել 2012թ. հունվարի 19-ին:

242 Հայցադիմումների, դիմումների բողոքների և այլ իրավաբանական բնույթի փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում:

243 «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 41, 2-րդ մաս:

244 Նույն տեղում, հոդված 41, 3-րդ մաս:

245 Նույն տեղում, հոդված 41, 5-րդ մաս:

246 «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն (ընդունվել է 2013թ. ապրիլի 30-ին):

247 Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ օրենքով կարգավորված չէ, թե ինչ չափանիշերի գնահատմամբ է տրամադրվում անվճար իրավաբանական օգնությունը կասկածյալին կամ մեղադրյալին: Օրենքի կարգավորումից բխում է, որ անվճարունակության չափանիշը վերաբերում է քրեական վարույթին մասնակցող այլ անձանց բացառությամբ կասկածյալի կամ մեղադրյալի: Քրեական դատավարության օրենսգրքում որպես անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու չափանիշ սահմանված է ոչ թե կասկածյալի կամ մեղադրյալի անվճարունակությունը, այլ գույքային դրությունը, որի մեկնաբանությունն օրենսդրորեն բացակայում է: Արդյունքում կասկածյալին կամ մեղադրյալին անվճար

Քրեական գործերով կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը, անվճար իրավաբանական օգնությունն ապահովվում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով՝ ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, կամ եթե դա պահանջում է արդարադատության շահը²⁴⁸:

Անվճար իրավաբանական օգնություն քրեական գործերով կասկածյալին կամ մեղադրյալին տրամադրվում է՝ հաշվի առնելով նրա գույքային դրությունը²⁴⁹, այլ ոչ թե **անվճարունակությունը**: Մեղադրյալի գույքային դրության գնահատմանն անդրադարձել է դատարանների նախագահների խորհուրդը, ըստ որի՝ տվյալ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել մեղադրյալի տարեկան եկամտի չափը, ընտանիքի կազմը, առողջական վիճակը և այլ հանգամանքներ²⁵⁰:

Հայաստանի Հանրապետությունում անվճար իրավաբանական օգնությունը համարվում է հանրային պաշտպանություն, որն իրականացվում է ՀՀ հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով: Հանրային պաշտպանի գրասենյակը ՀՀ փաստաբանական պալատի կառուցվածքային ստորաբաժանում է՝ կազմված գրասենյակի ղեկավարից, երկու տեղակալներից, հանրային պաշտպաններից և օժանդակ անձնակազմից: Հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանների քանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորման շրջանակներում²⁵¹: Հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբանները գործում են ՀՀ փաստաբանների պալատի նախագահի հետ կնքած պայմանագրի հիման վրա՝ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի ներկայացմամբ կամ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով անցկացվող մրցույթի միջոցով²⁵²:

Հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, որով պետք է ապահովվի գրասենյակի բնականոն գործունեությունը: Գրասենյակին հատկացված ֆինանսական միջոցները տնօրինում է փաստաբանների պալատի նախագահը:

Այդ միջոցները ներառում են հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի, տեղակալների և հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերը, ինչպես նաև հանրային պաշտպանի գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսեր²⁵³:

Անձին անվճար իրավաբանական օգնության տրամադրման առնչությամբ որոշման կայացման իրավասությունը պատկանում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին, ում ուղղվում են ինչպես քրեական գործերով վարույթն իրականացնող մարմնի, այնպես էլ քաղաքացիների՝ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումները: Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կամ բավարարում է դիմումը՝ գործը հանձնելով հանրային պաշտպանին, կամ մերժում է դիմումը, երբ այն նախատեսված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով²⁵⁴: Միաժամանակ, օրենքը չի նախատեսում հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի՝ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու կամ չտրամադրելու վերաբերյալ կայացրած որոշումները բողոքարկելու հնարավորություն: Ի պաշտպանություն անձի իրավունքների, սակայն, դրանք կարող են բողոքարկվել դատական կարգով²⁵⁵:

Պրակտիկայում հանրային պաշտպանների միջև գործերի բաշխումը կատարելիս հաշվի են առնը-

իրավաբանական օգնություն տրամադրելու հստակ չափանիշները, ըստ էության, բացակայում են:

248 «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 41, 4-րդ մաս:

249 ՀՀ ՔՂՕ, հոդված 10, 5-րդ մաս:

250 ՀՀ դատարանների նախագահների խորհրդի թիվ 109 որոշում:

251 «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 42:

252 Նույն տեղում, հոդված 44:

253 Նույն տեղում, հոդված 45:

254 Նույն տեղում, հոդված 43, 3-րդ մաս, 5-րդ կետ: Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ օրենքի տվյալ դրույթից անհստակ է քրեական գործերով վարույթն իրականացնող մարմնի կողմից անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու դիմումների բավարարման և մերժման հարցը: Այսպես օրենքում նշվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից ստացված որոշումների և դիմումների բավարարման մասին, մինչդեռ նախատեսվում է միայն դիմումները մերժելու հնարավորություն: Քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացնում միայն կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ, իսկ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին ներկայացնում է դիմում՝ անվճար իրավաբանական օգնությունը գրասենյակի միջոցով ապահովելու պահանջով՝ կցելով համապատասխան որոշման պատճենը: Այն դեպքերում, երբ կասկածյալի կամ մեղադրյալի գույքային դրության ստուգման արդյունքում պարզվում է, որ վերջինս վճարունակ է, հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից համապատասխան գրություն է ուղարկվում վարույթն իրականացնող մարմնին և հանրային պաշտպան չի տրամադրվում: Միաժամանակ, այն դեպքերում, երբ վարույթին պաշտպանի ներգրավումը շտապ է, և հապաղումը կարող է հանգեցնել անձի իրավունքների խախտման, հանրային պաշտպանը ներգրավվում է մինչև համապատասխան ստուգումների իրականացումը:

255 ՀՀ Սահմանադրություն, հոդված 19:

վում տարբեր գործոններ: Հիմնականում դրանք են՝ գործի վերաբերյալ դիմում ստանալու օրը հանրային պաշտպանի գրառվածությունը, պաշտպանի ծանրաբեռնվածությունը, մասնագիտացումը²⁵⁶: Եթե Երևան քաղաքում, որտեղ կենտրոնացած է հանրային պաշտպանների 70 %-ը, գործերի բաշխման նման մեխանիզմն աշխատում է արդյունավետորեն, ապա մարզերում, որտեղ գործում են քիչ թվով պաշտպաններ, փաստաբանների ընտրություն չի իրականացվում: Միաժամանակ, ի տարբերություն Երևանի՝ մարզերում տեղի ունեցող հանցագործությունները փոքր տոկոս են կազմում, ինչից ելնելով մարզերում նույնպես հնարավոր է կազմակերպել արդյունավետ պաշտպանություն:

Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ ամբողջ մարզի սպասարկման համար գործում են 2-3 հանրային պաշտպաններ: Բացառություն է կազմում Լոռու մարզը, որտեղ ներկայումս գործում են թվով 6 հանրային պաշտպաններ: Հաշվի առնելով գործերի բաշխման ընդհանուր բանաձևը՝ երկու-երեք փաստաբանների կողմից ամբողջ մարզի բնակչության համար արդյունավետ պաշտպանության իրականացումը թերևս կասկածելի է:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում իրականացված արդարադատության համակարգերի հետազոտությունը փաստում է²⁵⁷, որ եվրոպական պետություններում իրավաբանական օգնության համակարգի շրջանակներում նախատեսվում է միջինում 7 եվրո յուրաքանչյուր անձին օգնելու համար: Իրավաբանական օգնության համակարգերի ֆինանսավորումն ամենաբարձրն է Հյուսիսային Եվրոպայի պետություններում: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, Նիդերլանդներում և Շվեդիայում յուրաքանչյուր անձի համար նախատեսվում 20 եվրոյից ավել գումար: Համեմատաբար բարձր ցուցանիշ է նաև Իռլանդիայում, Դանիայում, Շվեյցարիայում, Ֆինլանդիայում, որտեղ յուրաքանչյուր անձի համար նախատեսվում է 10 եվրոյից ավել գումար:

2010թ. տարեկան բյուջեի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում անվճար իրավաբանական օգնության բյուջեն նախատեսում էր մոտ 0.25 եվրո յուրաքանչյուր անձի հաշվարկով մեկ տարվա համար²⁵⁸, իսկ 2012 թվականի համար՝ 0.29 եվրո: Նույն ուսումնասիրությունը փաստում է, որ ի տարբերություն համաեվրոպական տեղեկնցի՝ ՀՀ իրավաբանական օգնության ֆինանսավորումը 2008-2010թթ. ընթացքում կրճատվել էր, սակայն 2010թ. ի վեր գրանցվել է իրավաբանական օգնության համար տրամադրվող ֆինանսական միջոցների աճ՝ 2010թ. 308,366,600 ՀՀԴ-ից հասնելով 356,892,600 ՀՀԴ-ի 2012 թվականին: Հայաստանի Հանրապետությունում հանրային պաշտպաններին տրամադրվում է ֆիքսված փոխհատուցում Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների դրույքաչափին համապատասխան²⁵⁹: Օրենքի սույն կարգավորմամբ փորձ է արվում հավասարեցնել դատախազների և հանրային պաշտպանների վարձատրությունը, սակայն ի լրումն օրենքով սահմանված դրույքաչափի՝ դատախազների վարձատրությունը ներառում է նաև այսպես կոչված 13-րդ աշխատավարձը, ընթացիկ պարգևատրումները և այլն: Անհրաժեշտության դեպքում հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարն իրավասու է մասնավոր փաստաբանների հետ կնքել ժամավճարային հիմունքներով աշխատանքային պայմանագիր:

Իրավաբանական օգնությունը իր մեջ ներառում է ոչ միայն փաստաբանի կողմից տրամադրվող իրավախորհրդատվությունը կամ դատական ներկայացուցչությունը, այլև դատական ծախսերի փոխհատուցումը: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, Եվրոպայի խորհրդի գրեթե բոլոր պետություններում (42) դատական ծախսերի հոգսը կրում են դատավարական կողմերը: Նույնիսկ մի շարք պետություններում (Բելգիա, Կիպրոս, Պորտուգալիա, Սերբիա, Շվեյցարիա) քրեական գործերով դատական ծախսերի հատուցումը կրում են կողմերը: Միայն 2010 թվականին Ֆրանսիայում և Լյուքսեմբուրգում դատական ծախսերը հանվեցին: Եվրոպայի խորհրդի 34 պետություններում գործում է

256 Իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումի ստացման օրը պաշտպաններից շատերը կարող են ունենալ դատական նիստեր, քննչական գործողություններ, իրենց պաշտպանյալների հետ խորհրդակցություններ և այլն: Ծանրաբեռնվածությամբ գնահատվում է կոնկրետ պաշտպանի «վարույթում» առկա գործերի քանակն ու բնույթը: Հանրային պաշտպանների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է միաժամանակ 20-22 գործերով վարույթներին ներգրավվածությամբ: Կան պաշտպաններ, որոնց անհատական ծանրաբեռնվածությունն առավել բարձր է, քան մյուսներիին: Գործերի բաշխման հիմքում դրվում է նաև փաստաբանի մասնագիտացումը, քանի որ յուրաքանչյուր հանցագործություն և դրա շուրջ տարվող քննությունն ունեն իրենց առանձնահատկությունները:

257 European justice system, Edition 2012 (2010 data), Efficiency and quality of justice, Council of Europe publishing.

258 Նշված թիվը ստացվել է հետևյալ կերպ՝ 2011 թվականի մարդահարկի նախնական տվյալներով ՀՀ-ում առկա բնակչության թիվը 2,871,771 2012թ Ազգային Ժողովի ընտրացուցակներում առկա 18 տարին լրացած անձանց թիվը՝ 2,482,593, 2013թվականի Հանրապետության Նախագահի ընտրությունների ընտրացուցակներում առկա 18 տարին լրացած անձանց թիվը՝ 2,507,004: 18 տարին լրացած բնակչության թիվը բաժանվել է պետական բյուջեից հատկացված թվի վրա և ստացվել է չափահաս մեկ անձին տարվա ընթացքում հասանելիք անվճար իրավաբանական օգնության արժեքը:

259 «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, 6-րդ մաս:

դատական ծախսերի ապահովագրման համակարգ: Որոշ պետություններ հանրային միջոցների հաշվին տրամադրում են անվճար իրավաբանական օգնություն այն դեպքերում, երբ ապահովագրական վճարները չեն ծածկում դատական ծախսերը (օրինակ՝ Դանիայում, Ֆինլանդիայում, Շվեդիայում): Հայաստանի Հանրապետությունում դատական ծախսերի ապահովագրական համակարգ դեռևս չի գործում:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական, վարչական գործերով դատական ծախսերի հատուցումը կրում են կողմերը: Քրեական գործերով դատական ծախսերը նույնպես չեն ընդգրկվում անվճար իրավաբանական օգնության շրջանակներում, սակայն դատարանն իրավասու է հանցագործության համար դատապարտված անձին լրիվ կամ մասնակիորեն ազատել դատական ծախսերը վճարելուց, եթե վերջինս անվճարունակ է, կամ երբ դատական ծախսերի վճարումը կարող է էապես ազդել դատապարտյալի խնամքի տակ գտնվող անձանց նյութական վիճակի վրա: Այսինքն՝ նույնիսկ այն դեպքում, երբ մեղադրյալին տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն, վերջինս դատապարտման դեպքում մեխանիկորեն չի ազատվում դատական ծախսերը վճարելու պարտականությունից, այլ հարցը լուծվում է դատարանի կողմից դատավճիռ կայացնելիս:

Գլուխ 3


Պաշտպանության իրավունքի և անվճար իրավաբանական օգնության պրակտիկան ՀՀ-ում

Դիտարկումների արդյունքներ, ընդհանուր տեղեկություններ և ընթացակարգային խնդիրներ

Այս բաժնում տվյալներ են ներկայացված դիտարկման ենթարկված գործերի քանակի՝ ՀՀ դատարաններում բաշխվածության (գործերի քարտեզ), գործերի քննության ընթացակարգի, կոնկրետ գործերով տեղի ունեցած դատական միստերի ընդհանուր քանակի, ներգրավված ամբաստանյալների սոցիալական բնութագիչների, վերջիններիս նկատմամբ կիրառված խափանման միջոցների, ամբաստանյալին իր դատավարական իրավունքների պարզաբանման և դրանցից օգտվելու ցուցանիշների վերաբերյալ:

Առավել մեծ թվով ամբաստանյալների գործեր են դիտարկվել Կենտրոն և Նորք-Մարաշի դատարանում, որին հավասար ցուցանիշներով (10.1 %) հաջորդում են Արարատ և Վայոց ձորի ու Արաբկիր և Քանաքեռ-Զեյթունի դատարանները: Առաջատար հնգյակում են գտնվում նաև Լոռու և Արագածոտնի դատարանները՝ կրկին հավասար (9 %) ցուցանիշով:

Գծապատկեր 1. Ամբաստանյալների թվաքանակի բաշխվածությունը ըստ դատարանների²⁶⁰



Ինչպես տեսնում ենք, դիտարկված գործերի տվյալներով մայրաքաղաքային դատարանները հավասարաչափ բաշխված են մարզային դատարանների հետ: Այս հանգամանքը հատուկ է հիշատակվում, քանի որ մոնիթորինգի իրականացման ընթացքում առկա էին ռիսկեր, որ դիտարկումից առավել մեծ հավանականությամբ կարող են դուրս մնալ մարզային դատարաններում քննվող գործերը: Հիմնական պատճառն էր մարզային դատարաններում քննվող գործերի վերաբերյալ ուշ իրազեկումը և, որպես հետևանք, դիտորդի՝ գործին ներկա գտնվելու անհնարինությունը: Սակայն ինչպես տեսնում ենք, հնարավոր է եղել հնարավորինս նվազեցնել նշված ռիսկի ազդեցությունը. մոնիթորինգի շրջանակներում դիտարկված գործերի միայն 48.9 %-ն է քննվել մայրաքաղաքի դատարաններում, իսկ մնացած 51.1 %-ը քննվել է մարզային դատարաններում:

ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններից ներկայացված չէ միայն Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ գործերի վերաբերյալ տեղեկատվության բացակայության կամ ուշ իրազեկման պատճառով:

Ամբաստանյալների 9 %-ը կանայք են, 91 %-ը՝ տղամարդիկ:


Ամբաստանյալների 6.2 %-ը հանցանքը կատարելու պահին անչափահաս են եղել. 2-ը՝ 15 տարեկան, 4-ը՝ 16 և 5-ը՝ 17 տարեկան:

Նախկինում դատապարտված է եղել ամբաստանյալների 27.4 %-ը: Ամբաստանյալների 5.3 %-ի դատվածությունը մարված է եղել:


²⁶⁰ Այս և հաջորդ գծապատկերներում բերված թվերն արտահայտում են տոկոսները, եթե այլ նշումներ առկա չեն:

Ամբաստանյալների թվաքանակի բաշխումն ըստ կրթական մակարդակների ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

Գծապատկեր 2. Ամբաստանյալների կրթական մակարդակը



Գծապատկեր 3. Տվյալներ ամբաստանյալների՝ նախկինում դատված լինելու քանակի վերաբերյալ




Ինչպես տեսնում ենք վերը բերված գծապատկերից, դատվածություն ունեցող 48 ամբաստանյալների 82 %-ը նախկինում դատապարտվել է 1-ից 3 անգամ, իսկ ամբաստանյալների 15 %-ը՝ 4 և ավելի անգամ:

Ամբաստանյալներից մեկը նախկինում 8, իսկ մյուսը՝ 12 անգամ է դատապարտված եղել:


Ամբաստանյալների 73.3 %-ն իրենց մեղավոր են ճանաչել առաջադրված մեղադրանքում, 22.1 %-ը մեղավոր չեն ճանաչել, իսկ 4.7 տոկոսն իրեն մեղավոր է ճանաչել մասնակի:

Գծապատկեր 4. Ամբաստանյալների՝ առաջադրված մեղադրանքում իրենց մեղավոր ճանաչելը



Նախնական քննության ընթացքում խափանման միջոց կիրառված չի եղել ամբաստանյալներից մեկի նկատմամբ: Այն դեպքերում, երբ կիրառվել է որևէ խափանման միջոց, դրանց բաշխվածությունը հետևյալ պատկերն ունի:

Գծապատկեր 5. Ամբաստանյալների նկատմամբ նախնական քննության ընթացքում կիրառված խափանման միջոցների բաշխվածությունը



Այսպիսով, հնարավոր խափանման միջոցներից կիրառված են եղել միայն 4-ը: Յուրաքանչյուր 2-րդ ամբաստանյալը կալանավորված է եղել, իսկ յուրաքանչյուր 3-րդ ամբաստանյալի նկատմամբ ընտրված է եղել ստորագրությունը չհեռանալու մասին խափանման միջոցը:

Դիտորդների կողմից հայտնաբերված 19 դեպքերում²⁶¹, երբ մեղադրյալը կամ նրա պաշտպանը բո-

²⁶¹ Այս տվյալը չի արտացոլում դեպքերի իրական քանակը, քանի որ բազմաթիվ դեպքերում տեղեկատվություն ստանալն

դորարկել են կալանավորման իրավաչափությունը, կալանավորումը 2 դեպքում փոխարինվել է գրավով, իսկ 4 դեպքում էլ ընտրվել է այլ խափանման միջոց:

Օրինակ 1.

Դիտարկված գործերից մեկում կալանավորման իրավաչափությունը քննարկվել է գործի քննության ընթացքում: Պաշտպանի կողմից միջնորդություն է ներկայացվել կալանավորումը որպես խափանման միջոց վերացնելու կամ այն գրավով փոխարինելու մասին: Կալանավորումը որպես խափանման միջոց վերահաստատվել է, սակայն այն փոխարինվել է գրավով:

(Գործ թիվ 35)

Օրինակ 2.


Դիտարկված գործերից մեկում ամբաստանյալի խափանման միջոց կալանավորումը վերացվել և փոխարինվել է չեռանալու մասին ստորագրությամբ՝ նախնական քննության ընթացքում պաշտպանի ներկայացրած բողոքի հիման վրա:

(Գործ թիվ 37)

Ընդհանուր և արագացված կարգով քննված գործերի քանակները գրեթե հավասար են. ընդհանուր կարգով են քննվել գործերի 50.6 %-ը, արագացված կարգով՝ 49.4 %-ը:

Դատական գործերի դիտարկումների արդյունքում 178 ամբաստանյալներից 29-ի պարագայում հնարավոր չի եղել գնահատել, թե արդյոք դատական քննության սկզբում դատավորը բացատրել է ամբաստանյալի իրավունքները²⁶²: Մյուս 149 ամբաստանյալների իրավունքները բացատրելու վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև բերված գծապատկերում:

Գծապատկեր 6. Դատարանի կողմից ամբաստանյալի իրավունքները բացատրելը



Հատկանշական է, որ դատարանի կողմից ամբաստանյալի իրավունքները բացատրելը պայմանավորված չէ պաշտպանի՝ հանրային կամ մասնավոր լինելու հանգամանքով:

Ինչպես վերը տեսանք, ամբաստանյալների ընդհանուր թվի 87.5 %-ն ունեցել են հանրային, իսկ 12.5 %-ը՝ մասնավոր պաշտպաններ: Իսկ այն ամբաստանյալների պարագայում, ում իրավունքները չեն բացատրվել կամ բացատրվել են մասամբ, պաշտպանների 82 %-ը եղել են հանրային, իսկ 18 %-ը՝ մասնավոր:

Այսպիսով՝ այս ամբաստանյալների շրջանում հանրային պաշտպանների ներգրավվածության համամասնությունն ավելի քիչ է (5.5 %-ով), քան ամբաստանյալների ընդհանուր թվի մեջ: Սա նշանակում է, որ հանրային պաշտպանի ներգրավվածությունը դատարանի կողմից ամբաստանյալի իրավունքները

անհնարին էր ամբաստանյալի՝ կալանավորված լինելու կամ պաշտպանի՝ իրազեկված չլինելու պատճառով:

262 Գնահատման անհնարինության տարածված պատճառներից է նիստի վերաբերյալ ուշ իրազեկումը և, որպես հետևանք, նիստի տվյալ հատվածի՝ դիտարկումից դուրս ժամկետը:

րի բացատրության համար վստահաբար բացասական գործոնի դեր չի կատարում: Ավելին՝ եթե վերը նշված ցուցանիշն (5.5 %-ը) առավել բարձր լիներ, ապա կարող էինք պնդել, որ հանրային պաշտպանների ներգրավվածության դեպքում ամբաստանյալներն առավել պաշտպանված էին այդ առումով:


Դիտարկման ենթարկված գործերով ամբաստանյալներից 76-ն են օգտվել դատական քննության ընթացքում ցուցմունք տալու իրավունքից:

Պաշտպանական ճառով հանդես գալու իրավունքից 24 ամբաստանյալներ հրաժարվել են: 3 դեպքում ամբաստանյալները զրկվել են պաշտպանական ճառով հանդես գալու հնարավորությունից, քանի որ դատարանն անդրադարձել է միայն ամբաստանյալի վերջին խոսքին:

Վերջին խոսքի իրավունքից են օգտվել միայն ամբաստանյալներից 155-ը (87 %): Վերջին խոսքի ժամանակ սահմանափակված են եղել ամբաստանյալներից 4-ի արտահայտվելու հնարավորությունները:

Ամբողջ դատաքննության ընթացքում սահմանափակված են եղել 11 ամբաստանյալների (6.2 %) ազատ արտահայտվելու հնարավորությունները, որոնց պաշտպանների կողմից ըստ էության արձագանք չի եղել:

Գծապատկեր 7. Նշանակված նիստերի քանակների արտահայտումը տոկոսներով



Գծապատկեր 2-ից պարզ է դառնում, որ ամբաստանյալների 19.2 %-ի պարագայում գործով նշանակվել է միայն մեկ դատական նիստ: Ակնհայտ է, որ սրանք հիմնականում այն գործերն են, որոնք քննվել են արագացված կարգով: Այնուամենայնիվ, բերված տվյալը մտահոգիչ է այն առումով, որ առնչված յուրաքանչյուր 5-րդ ամբաստանյալի պարագայում գործի քննությունը ավարտվել է միայն մեկ նիստով: Սա նշանակում է, որ այս գործերում պաշտպանները լրացուցիչ ժամանակ չեն խնդրել գործի նյութերին ծանոթանալու համար, իսկ դատարանն էլ դատական ակտը հրապարակել է միևնույն օրը: Այս տվյալը հարցադրումներ կարող է առաջ բերել ինչպես պաշտպանների կողմից տրամադրվող ծառայության որակի, այնպես էլ դատարանի կողմից վերջնական դատական ակտի կայացման համար անհրաժեշտ ժամանակի բավարար/ողջամիտ լինելու տեսանկյունից:

Եթե հաշվի առնենք այն փաստը, որ նշանակված նիստերի որոշակի մասը տարբեր պատճառներով տեղի չի ունենում, ապա նշանակված 2, 3 և նույնիսկ 4 նիստ ունեցող գործերի մի մասում իրականում նույնպես միայն մեկ նիստ է տեղի ունեցել: Այսպիսով, ամբաստանյալների թիվը, որոնց գործերը քննվել են մեկ նիստով, իրականում շատ ավելին է և պրակտիկայում կարող է հասնել անգամ 25 և ավելի տոկոսի:

Հատկանշական է, որ ընդհանուր կարգով քննված գործերում ամբաստանյալների 18 %-ի պարագայում նշանակված դատական նիստերի քանակը չի գերազանցել 3-ը:

Պաշտպանի ընտրություն, փոխարինում և շահերի բախում

Այս հատվածում ներկայացված են տվյալներ ամբաստանյալի՝ պաշտպան ունենալու իրավունքի իրացման, պետության կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրման կարգի պահպանման, ամբաստանյալի՝ պաշտպանի ընտրության և պաշտպանի փոխարինման հնարավորության իրացման, մեկից ավելի ամբաստանյալների ներգրավման դեպքում հնարավոր շահերի բախումների առկայության և պաշտպանության որակի վերաբերյալ:


Դիտարկված գործերում պաշտպան չեն ունեցել 2 ամբաստանյալ: Մյուս 176 ամբաստանյալների 87.5 %-ն ունեցել են հանրային, իսկ 12.5 %-ը՝ մասնավոր պաշտպաններ:

176 ամբաստանյալներից միայն 2-ն են ունեցել միաժամանակ 2 մասնավոր պաշտպաններ:

Ամբաստանյալներից 14-ի պարագայում հնարավոր չի եղել պարզել, թե ում նախաձեռնությամբ է ներգրավվել պաշտպանը:

Մյուս 162 ամբաստանյալների պարագայում պատկերը հետևյալն է.

Գծապատկեր 8. Պաշտպանի ներգրավման նախաձեռնությունը



«Այլ անձանց» շարքում առավել տարածված է եղել վարույթն իրականացնող մարմնի կողմից ամբաստանյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու և հանրային պաշտպան ներգրավելու վերաբերյալ որոշման կայացման տարբերակը:

Պաշտպան ունեցող 176 ամբաստանյալներից 4-ը դատական քննության ընթացքում ցանկություն են հայտնել հրաժարվել իրենց պաշտպաններից:

Պաշտպանից հրաժարվելու դեպքերից մեկում ամբաստանյալը որևէ պատճառ չի նշել: Մյուս երեք դեպքերում ամբաստանյալները որպես պաշտպանից հրաժարվելու պատճառ մատնանշել են իրենց դժգոհությունը պաշտպանության որակից, ընդ որում, դրանցից մեկը եղել է հարկադրական դատարանի կողմից ուղղակի ճնշման արդյունքում:

Օրինակ 3.

Պաշտպանը ժամանակ է խնդրել գործի նյութերին ծանոթանալու համար: Սակայն դատարանը վրդովվել է, որ պաշտպանին բավարար ժամանակ տրամադրված եղել է, որպեսզի վերջինս դատարանում ծանոթանա գործի նյութերին. մեկ ամիսը բավարար էր: Պարզվեց, որ տվյալ գործով պաշտպանը, մեկ ամիս ներգրավված լինելով վարույթին, չի հանդիպել պաշտպանյալին և չի խորհրդակցել նրա հետ: Նման պայմաններում դատարանը դիմել է ամբաստանյալին՝ նշելով, թե պաշտպանը մեկ ամսվա ընթացքում գործի նյութերին չի ծանոթացել, ամբաստանյալին չի հանդիպել, չի խորհրդակցել հետը և վերջում դատավորը հարցրեց, թե արդյո՞ք ամբաստանյալը հրաժարվում է պաշտպանից: Ամբաստանյալը

հրաժարվեց պաշտպանից, և արդյունքում հանրային պաշտպանը վարույթից հեռացվեց: Նոր հանրային պաշտպան ներգրավելու մասին խոսք անգամ չգնաց: Անհրաժեշտ է փաստել, որ հաջորդ դատական նիստի ժամանակ ամբաստանյալը հրաժարվեց ինչպես պաշտպան ունենալուց, այնպես էլ դատական քննությունն արագացված կարգով անցկացնելու հնարավորությունից:

(Գործ թիվ 36)

Սակայն երկու դեպքում դատարանը չի ընդունել պաշտպանից հրաժարումը:

Հատկանշականն այն է, որ այն դեպքերում, երբ ամբաստանյալներն իրենց դժգոհությունն են հայտնել պաշտպանության որակից և ցանկացել են փոխարինել իրենց պաշտպանին այլ հանրային պաշտպանով, դատարանը չի ընդունել հրաժարումը և պաշտպանի փոխարինում տեղի չի ունեցել:

Օրինակ 4.

Գործերից մեկում երբ ամբաստանյալը հայտնեց, որ ցանկանում է հրաժարվել իր պաշտպանից և ունենալ այլ պաշտպան, դատավորը նշեց, որ իր խնդրանքով ներգրավված հանրային պաշտպանից հրաժարվելու դեպքում այլ հանրային պաշտպան չի կարող պահանջել: Այդ պատճառով ամբաստանյալը չհրաժարվեց իր պաշտպանից:

(Գործ թիվ 243)

Օրինակ 5.

Մեկ այլ դեպքում ամբաստանյալը միջնորդություն էր ներկայացրել իր պաշտպանի ծառայություններից հրաժարվելու և նոր հանրային պաշտպան ունենալու վերաբերյալ իր գրավոր միջնորդության մեջ նշելով, որ պաշտպանը լավ չի կատարում իր պաշտպանական պարտականությունները և նրա անբավարար պաշտպանության արդյունքում ինքը մեղադրվում է հանցագործության մեջ, նրա կողմից կատարվել է անբավարար աշխատանք: Սակայն դատարանը նշեց, որ միջնորդությունն անհիմն է, քանի որ պաշտպանը փորձառու է, բազմիցս մասնակցել է դատավարությունների և երբեք չի նկատվել, որ պաշտպանը թերանա իր պարտականությունները կատարելու մեջ: Այդ հիմքով միջնորդությունը մերժվել է:

(Գործ թիվ 125)

Վերոգրյալ օրինակները փաստում են, որ հանրային պաշտպանների փոխարինում դատական քննության ընթացքում **ամբաստանյալի ցանկությանը** տեղի չի ունենում:

Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից նույնպես արտահայտվել է նույն տեսակետը, որ պետության կողմից տրամադրվող իրավաբանական օգնության դեպքում կասկածյալը կամ մեղադրյալը պաշտպանի ընտրության իրավունք չեն կարող ունենալ: Եթե տրամադրված իրավաբանական օգնությունից անձը գոհ չէ, դա կարող է իր սուբյեկտիվ գնահատականը լինի, և այդ քնահաճույքը չի կարող բավարարվել:

Հանրային պաշտպանների փոխարինում պրակտիկայում բացառապես թույլատրվել է երկու դեպքերում, որոնք երկուսն էլ պայմանավորված են եղել պաշտպանի ամենամյա արձակուրդով:

Օրինակ 6.

Գործերից մեկում արձանագրվել է ամբաստանյալի պաշտպանության իրավունքի խախտում, քանի որ վերջինս, հրաժարվելով հանրային պաշտպանի ծառայությունից, ցանկացել է ունենալ այլ պաշտպան, որպեսզի դատական քննությունն արագացված կարգով անցկացվի: Սակայն դատարանում նոր հանրային պաշտպան ներգրավելու վերաբերյալ խոսք անգամ չի եղել: Դատական նիստը հետաձգվել է, որպեսզի գործին ներգրավվի նոր մասնավոր պաշտպան: Նիստի ավարտին դատավորը ամբաստանյալի դափնիքում ներկա գտնվող հարազատին հայտնել է, որ պաշտպանի հարցը լուծեն, վերջինս պատասխանել է. «Նրա ինչին է պետք պաշտպան, ավելորդ ծախս է»: Արդյունքում հաջորդ դատական նիստին ամբաստանյալը հրաժարվել է պաշտպան ունենալուց, ինչպես նաև դատական քննությունն արագացված կարգով անցկացնելու միջնորդությունից: Դատավորն անգամ չի հետաքրքրվել պաշտպանից հրաժարվելու պատճառների մասին, ինչը, ըստ էության, պայմանավորված էր ամբաստանյալի ֆինանսական վիճակով:

(Գործ թիվ 36)

Դիտարկված գործերից և ոչ մեկում չի գրանցվել մեկից ավելի անգամ պաշտպանի փոփոխության որևէ դեպք: Ամբաստանյալներից և ոչ մեկը ցանկություն չի հայտնել ունենալու մեկից ավելի պաշտպաններ:

Ըստ էության, ամբաստանյալներին մեկից ավելի պաշտպանով ապահովելու համար լուրջ խոչընդոտներ գոյություն ունեն՝ հաշվի առնելով հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը: Նախկինում գրանցվել

են դեպքեր, երբ ամբաստանյալի պաշտպանությունն իրականացվել է միաժամանակ երկու հանրային պաշտպանների կողմից, սակայն ներկայումս նման հնարավորությունը ցածր է գնահատվում, քանի որ հանրային պաշտպանների անհատական ծանրաբեռնվածությունը բավականին բարձր է և շարունակում է աճել:

Բավականին տարածված են նաև նախաքննության փուլում մեղադրյալի կողմից պաշտպանից հրաժարվելու դեպքերը: Դիտորդները պարզել են, որ 178 ամբաստանյալներից առնվազն 63-ը (35 %) նախաքննության փուլում հրաժարվել են իրենց պաշտպաններից: Սրանք այն դեպքերն են, որոնք հնարավոր է եղել ի հայտ բերել դատական քննության ընթացքում՝ ամբաստանյալների կամ նրանց պաշտպանների հետ հարցազրույցների միջոցով: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ բազմաթիվ դեպքերում այս տվյալը ճշտելն անհնարին էր (օրինակ՝ ամբաստանյալի կալանավորված լինելու կամ պաշտպանի իրազեկված չլինելու պատճառով), ապա ակնհայտ է, որ նախաքննության փուլում պաշտպանից հրաժարվելու դեպքերն իրականում շատ ավելի տարածված են:

Նախաքննության ընթացքում պաշտպանից հրաժարվելու հիմնական պատճառ հանդիսանում է կասկածյալների կամ մեղադրյալների ցածր իրավագիտակցությունը, ովքեր քրեական հետապնդման ազդեցության ներքո հրաժարվում են «ավելի խնդիրներ ստեղծող» պաշտպանների ծառայություններից: Հիմնականում դա կատարվում է գործը քննող քննիչների կողմից համոզելու կամ դրդելու արդյունքում: Որպես ամբաստանյալների կողմից պաշտպանից հրաժարվելու պատճառ նշվել է նաև, որ իրենց անմեղության մեջ վստահ լինելով՝ նրանք կարծել են, որ արդարությունը կհաղթի և իրենք չեն դատվի, մյուսներն էլ նշել են, որ չեն ցանկացել ունենալ հանրային պաշտպան, իսկ մասնավոր փաստաբանի ծառայություններից օգտվելու համար բավարար միջոցներ չեն ունեցել:

Այդուամենայնիվ, պաշտպանից հրաժարվելու վերաբերյալ դատավարական արձանագրություններում նշվում է, որ կասկածյալը/մեղադրյալը հրաժարվում է պաշտպանից «ոչ նյութական պատճառներով»:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ մինչև գործով պաշտպանի ներգրավումը մինչդատական վարույթի ընթացքում կասկածյալի/մեղադրյալի հետ կատարվում են քննչական գործողություններ: Դիտարկումների ընթացքում արձանագրվել են 52 նման դեպքեր, որոնցից 51-ի դեպքում ստացվել են ամբաստանյալի մեղավորության հիմքում դրված փաստեր:

Ըստ պաշտպանների գնահատման՝ 70 % դեպքերում մեղադրանքի հիմքում դրված ապացույցների գերակշիռ մասը ձեռք է բերվել այն փուլում, երբ դեռ պաշտպան ներգրավված չէր գործի վարույթին և միայն 30 % դեպքերում՝ պաշտպանի ներգրավումից հետո:

Ըստ դիտորդների գնահատականների՝ 2 դեպքում միևնույն փաստաբանն է պաշտպանել այն ամբաստանյալների շահերը, որոնց միջև շահերի հակասություն էր նկատվում:

Օրինակ 7.

Գործերից մեկում որպես ամբաստանյալներ ներգրավված էին զինծառայողներ, ովքեր կռվի էին բռնվել, սակայն նրանցից միայն մեկն էր իրեն մեղավոր ճանաչում: Դատաքննության սկզբում պաշտպանը դատարանի ուշադրությունը հրավիրեց տվյալ հանգամանքի վրա և նշեց, որ չի կարող իրականացնել երկուսի պաշտպանությունը, քանի որ նրանց շահերի միջև հակասություն կա: Մեղադրողն առարկեց պաշտպանի հայտարարության դեմ՝ նշելով, որ հակասություն բոլորովին չկա, քանի որ ամբաստանյալները մեկը մյուսին չեն մեղադրում: Որպես միջնորդության հիմնավորում՝ պաշտպանը նշեց, որ տվյալ հանգամանքը նոր է ի հայտ եկել, քանի որ նախորդ դատական նիստի ընթացքում ամբաստանյալն իրեն մեղավոր չճանաչեց: Մեղադրողն առարկություն հայտնեց, որ տվյալ հանգամանքը նոր չի ի հայտ եկել, ամբաստանյալների շահերի միջև էական հակասություն չկա, ուստի պաշտպանի հայտարարությունն իրավական հետևանքներ չի առաջացնում:

Դատարանը, սակայն, որևէ կերպ հստակ չարձագանքեց պաշտպանի հայտարարությանն առ այն, որ վերջինս չի կարող շարունակել երկու ամբաստանյալների պաշտպանությունը: Նա միայն հարցրեց ամբաստանյալին (ուժ շահերի պաշտպանությունից պաշտպանը փորձում էր հրաժարվել), թե արդյո՞ք նա համաձայն է, որ պաշտպանը շարունակի իրականացնել իր պաշտպանությունը: Ամբաստանյալը դեմ չէր: Դատարանը հայտարարեց, որ անցնում է դատաքննությանը:

(Գործ թիվ 98)

Օրինակ 8.

Մեկ այլ գործում, որում ներգրավված էին ժամկետային զինծառայողներ, վերջիններս մեղադրվում էին ծեծկռտուքի և մարմնական վնասվածք հասցնելու մեջ: Ամբաստանյալներից միայն մեկն էր իրեն մեղավոր ճանաչում կատարված հանցագործության մեջ և զղջում: Հատկանշականն այն է, որ սույն

գործում նույնպես զինծառայողները միմյանց չեն մեղադրել, հաշտվել են, միմյանց նկատմամբ պարտք և պահանջ չեն ունեցել: Սակայն սույն գործի շրջանակներում վերջիններիս շահերը ներկայացված են եղել տարբեր հանրային պաշտպանների կողմից:

(Գործ թիվ 41)

Երկու և ավելի ամբաստանյալների շահերը ներկայացնելու դեպքերից 4-ում արձանագրվել է պաշտպանության որակի տարբերություն՝ ըստ ամբաստանյալների: Պաշտպանության որակի գնահատումը ներառել է ինչպես պաշտպանների ջանասիրությունը կոնկրետ ամբաստանյալի առնչությամբ միջնորդությունների, հայտարարությունների, ապացույցների ներկայացման ժամանակ, այնպես էլ դատական վիճաբանություններին պատրաստվելը, ամբաստանյալների նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը:

Օրինակ 9.

Դատաքննության արագացված կարգի կիրառման վերաբերյալ խորհրդակցությունը, դրա առանձնահատկությունների, կիրառման կարգի ու պայմանների ներկայացումը կատարվել է միայն մեկ ամբաստանյալի համար: Դատարանի կողմից ամբաստանյալներին արագացված կարգի կիրառման կարգի և հետևանքների վերաբերյալ հարցերին, սակայն տրվել են դրական պատասխաններ:

(Գործ թիվ 183)

Պաշտպանի վարքագծի դիտարկումներ

Պաշտպանի վարքագծի դիտարկումների շրջանակներում հիմնականում դիտարկվել է պաշտպանի կողմից «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» կանոնների պահպանումը՝ վարույթին մասնակցող անձանց, ինչպես նաև դատարանի նկատմամբ: Ուշադրություն է դարձվել նաև պաշտպանների և դատավարության մյուս մասնակիցների միջև ոչ ֆորմալ հարաբերությունների առկայությանը: Գնահատման համար կիրառվել է 1-10 միավորանոց սանդղակ, յուրաքանչյուր գնահատական հիմնավորվել է մեկնաբանությամբ:

Դատական դիտարկումների արդյունքներն արձանագրում են, որ պաշտպանների կողմից հիմնականում պահպանվում են «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» կանոնները և դրսևորվում է հարգալից վերաբերմունք ինչպես դատարանի, այնպես էլ գործի մասնակիցների նկատմամբ:

Ըստ դիտորդների գնահատականների՝ 9 դեպքում պաշտպանը խախտել է վարքագծի կանոնները դատարանի նկատմամբ:

Օրինակ 10.

Գործերից մեկում պաշտպանը ողջ դատական քննության ընթացքում դրսևորել է ագրեսիվ վարքագիծ, անընդհատ մատակ է ծամել, խոսել է և խանգարել դատական քննության ընթացքը: Նույնիսկ դատարանի կողմից ստացված մի քանի նկատողությունները չեն սթափեցրել պաշտպանին:

(Գործ թիվ 101)

6 դեպքում, ըստ դիտորդների գնահատականների, պաշտպանները խախտել են վարքագծի կանոնները ամբաստանյալների հետ հարաբերություններում:

Օրինակ 11.

Արձանագրվել է դեպք, երբ պաշտպանը բղավել է ամբաստանյալի վրա:

(Գործ թիվ 52)

Օրինակ 12.

Մեկ այլ դեպքում պաշտպանը նույնպես եղել է ագրեսիվ իր պաշտպանյալի նկատմամբ, վրդովվել է, բարձրաձայն խոսել: Սույն գործով ամբաստանյալը եղել է մեծահասակ անձ, և պաշտպանը դրսևորել է անհանդուրժող վերաբերմունք, ինչը նկատվել է դատավորի կողմից, և պաշտպանը նույնիսկ դիտողություն է ստացել:

(Գործ թիվ 19)

Հատկանշականն այն է, որ ամբաստանյալի հետ հարաբերություններում դրսևորած վարքագծի կանոնների խախտումների 6 դեպքերից 4-ը արձանագրվել են նույն պաշտպանի կողմից:

Դատական դիտարկումների ընթացքում արձանագրվել են պաշտպանների կողմից դատական նիստերին չներկայանալու դեպքեր: Դրանք հիմնականում եղել են հարգելի պատճառներով, մասնավորապես՝ այլ

դատական նիստին մասնակցելու, արձակուրդում գտնվելու, հիվանդության պատճառներով: Պաշտպանի հարգելի բացակայությունների մասին դատարանը նախօրոք տեղեկացվել է հիմնականում պաշտպանի կողմից: Դիտարկումների ընթացքում արձանագրվել է պաշտպանի անհարգելի բացակայության 9 դեպք:

Օրինակ 13.

Դատական նիստերը երկու անգամ տեղի չեն ունեցել պաշտպանի բացակայության պատճառով: Դատարանն արձանագրել է, որ բացակայությունն անհարգելի է, ինչի մասին տեղյակ կպահվի նաև հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը:

(Գործ թիվ 152)

Կատարված դիտարկումների ընթացքում հանրային պաշտպանների մասնակցությամբ ոչ ֆորմալ (ex parte) հարաբերություններ հիմնականում չեն արձանագրվել՝ բացառությամբ որոշ դեպքերի: Գրեթե բոլոր նիստերին հանրային պաշտպանը դատական նիստերի դահլիճ է ներկայացել դատավորի մուտքի համար նախատեսված դռնից՝ դատական նիստը սկսելուց ընդամենը երկու-երեք րոպե առաջ:

Արձանագրվել է նաև դատավորի կողմից դատավարության մասնակիցներին՝ դատախազին և պաշտպանին սուրճի ընդմիջման հրավիրելու դեպք:


Մյուս դեպքերում, ի տարբերություն մասնավոր պաշտպանների, ովքեր ավելի ազատ են մեղադրողների հետ հարաբերություններում, հանրային պաշտպանների դեպքում զսպվածությունն ակնհայտ էր:

Պաշտպանի մասնագիտական գործունեության դիտարկումներ

Մասնագիտական գործունեության դիտարկման շրջանակներում ուշադրության են արժանացել պաշտպանության կազմակերպման և իրականացման հիմնական հարցերը: Մասնավորապես, պաշտպանի ակտիվությունը, հետևողականությունը, տրամաբանված մոտեցումը ինչպես դատաքննության ընթացքում ապացույցների հետազոտման, միջնորդությունների հարուցման, այնպես էլ դատական վիճաբանությունների փուլում: Լրացուցիչ ուշադրություն է դարձվել դատավարական այս կամ այն գործողության կատարման ընթացքում պաշտպանի կողմից ժամանակի կառավարմանը: Մասնագիտական գործունեության դիտարկման շրջանակներում լրացուցիչ գնահատվել է պաշտպանի հռետորական ձիրքը: Հաշվի է առնվել նաև պաշտպանությունն իրականացնելիս պաշտպանի կողմից քրեական արդարադատության ոլորտում առկա չափանիշների կիրառումը դատական քննության ընթացքում:

Դիտորդները գնահատել են պաշտպանի հետևողականությունը՝ պնդելու դատարանի կողմից որոշակի գործողությունների կատարման անհրաժեշտությունը:

Գծապատկեր 9. Պաշտպանի հետևողականությունը՝ պնդելու դատարանի կողմից որոշակի գործողությունների կատարման անհրաժեշտությունը



Պաշտպանների գերակշիռ մասի դեպքում դիտորդներն արձանագրել են վերջիններիս հետևողականությունը և միայն 7.3 %-ի պարագայում՝ «ավելի շուտ հետևողական չլինելը»:

Օրինակ 14.

Գործերից մեկով պաշտպանը փորձում էր հիմնավորել, որ իր պաշտպանյալն արարքը կատարել է անմեղսունակության վիճակում, քանի որ, ըստ նրա, լուրջ հիմքեր կային ենթադրելու, որ վերջինս տառապում է ժառանգական հոգեկան հիվանդությամբ: Պաշտպանը միջնորդություն էր ներկայացրել ամբաստանյալի նկատմամբ դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին, որը, սակայն, դատարանի կողմից մերժվել էր: Մերժվել էր նաև պաշտպանի միջնորդությունը, որ դատարանն անձամբ դիմի հոգեբուժական հիվանդանոց՝ ամբաստանյալի հոր առողջական վիճակի մասին տեղեկություններ ստանալու համար (քանի որ իր դիմումը հիվանդանոցի կողմից մերժվել էր առ այն, որ նման տեղեկություններ տրամադրվում է միայն դատարանի պահանջով):

Պաշտպանը դրանից հետո կողմնակալության հիմքով դատարանին ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացրեց, որը ևս մերժվեց դատարանի կողմից, ինչից հետո ևս մեկ անգամ ներկայացրեց միջնորդություն՝ տեղեկություններ ստանալու համար՝ պնդելով դրա անհրաժեշտությունը, որը, սակայն, դարձյալ մերժվեց:

(Գործ թիվ 245)

Օրինակ 15.

Գործերից մեկում պաշտպանը հայտնել է, որ ամբաստանյալի խնամքին է գտնվում հաշմանդամ հայրը, սակայն համապատասխան փաստաթղթեր տրամադրելու համար պաշտպանը դատարանից ժամանակ չի ստացել, ինչի արդյունքում ամբաստանյալի խնամքին գտնվող անձի գոյությունը դատարանը հաստատված չի ամրապնդել:

(Գործ թիվ 28)

Գնահատվել է նաև ապացույցների հետազոտմանը պաշտպանների մասնակցության աստիճանը, վարույթի մասնակիցներին տրվող հարցերի տրամաբանական հիմնավորվածությունն ու փոխկապվածությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիտարկման ենթարկված գործերի մոտ կեսը տեղի է ունեցել դատական քննության արագացված կարգի պայմաններում, որում, բացառությամբ ամբաստանյալի անձը բնութագրող հատկանիշների ու պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների, այլ ապացույցներ չեն հետազոտվում, ապացույցների հետազոտմանը պաշտպանի մասնակցության ընտրանքը նվազում է:

Հատկանշականն այն է, որ առավել մեծ ջանասիրություն և ակտիվություն պաշտպանները ցուցաբերում են հատկապես ծանր հանցագործությունների մեջ մեղադրվող ամբաստանյալների պաշտպանությունն իրականացնելիս: Մյուս դեպքերում պաշտպանները դատավարության մասնակիցների հարցաքննությունների, այլ ապացույցների հետազոտության ընթացքում եղել են ավելի պասիվ: Նույնիսկ մեղադրական ուղղվածություն ունեցող վկաների հարցաքննություններն առավելապես կատարվել են մեղադրողի կամ դատարանի կողմից:

Օրինակ 16.

Թրաֆիքինգի մեջ մեղադրվող ամբաստանյալի պաշտպանը մանրակրկիտ հարցաքննեց գործով տուժողին և վկային՝ անդրադառնալով հանցագործության բոլոր հատկանիշներին՝ փորձելով հիմնավորել հանցակազմի բացակայությունը: Մասնավորապես, պաշտպանը, ի լրումն բազում հարցերի, հարցրեց տուժողին, թե արդյո՞ք իր փաստաթղթերը գտնվել են ամբաստանյալի մոտ, արդյո՞ք ինքն ազատ շարժվելու հնարավորություն ունեցել է, թե՞ ոչ, արդյո՞ք ցանկության դեպքում կարող էր վերադառնալ Հայաստան: Տուժողը պատասխանեց, որ իր անձնագիրը գտնվել է իր մոտ, ազատ շարժվելու հնարավորություն ունեցել է, սակայն լեզուն չիմանալու պատճառով չի կարողացել դիմել համապատասխան մարմիններին:

(Գործ թիվ 128)

Օրինակ 17.

Որպես հանցագործության գործիք ուսումնասիրվել է եռաժանիք, սղոցած և բռնակով դանակ: Դատաքննության ընթացքում ամբաստանյալները չեն ճանաչել հանցագործության գործիքը: Վկան նույնպես չի ճանաչել այն: Պաշտպանը վիճարկել է տվյալ առարկայի՝ հանցագործության գործիք հանդիսանալու փաստը՝ նշելով, որ նախաքննական մարմինը հաստատված է համարել այն հանգամանքը, որ դանակը եղել է ծոցագրպանում, որի չափերը բավականին փոքր են և դանակը ծոցագրպանում պահել հնարավոր չէր, նախաքննական մարմինը դա անտեսել է, քանի որ հագուստի զննություն չի իրականացվել և դրա մասին արձանագրություն չի կազմվել: Միաժամանակ, տվյալ գործիքը, ըստ քրեական գործի նյութերի, հայտնաբերվել է ամբաստանյալի տան խուզարկության արդյունքում, սակայն արձանագրության մեջ բացակայում է

նշում այն մասին, թե այն ինչով է փաթեթավորվել, չկա նշում այն մասին, թե արդյոք բացվել է քննիչի ներկայությամբ, ինչպես նաև պատշաճ փաստաթուղթ չկա այն մասին, թե ինչպես է հայտնվել քննչական բաժանմունքում: Հետևաբար, պաշտպանը փաստել է, որ իրենց նապաստույց գործիքը չի հանդիսանում հանցագործության իրական գործիք, բացի այդ, այն ձեռք չի բերվել օրենքով սահմանված կարգով:

(Գործ թիվ 88)


Օրինակ 18.

Սպանության փորձի մեջ մեղադրվող ամբաստանյալի պաշտպանը դատարանում վկաների հարցաքննության ժամանակ ակտիվություն չի դրսևորել, և հարցաքննված երեք վկաներից միայն մեկին ուղղել է մեկ հարց, թե քանի մետր հեռավորությունից է վերջինս ականատես եղել իրադարձություններին:

(Գործ թիվ 91)

1-10 միավորանոց սանդղակով գնահատվել է նաև այն հարցը, թե որքանով էին գործի մասնակիցներին ուղղված պաշտպանի հարցերը տրամաբանորեն հիմնավորված և փոխկապակցված:

Գծապատկեր 10. Գործի մասնակիցներին ուղղված պաշտպանի հարցերի տրամաբանական հիմնավորվածությունն ու փոխկապակցվածությունը



Գնահատականների առավելագույն կուտակում է նկատվում 0 և 8-10 միավորների միջակայքում: 0-5 գնահատականի է արժանացել պաշտպանների 28 %-ը:

Ըստ դիտորդների՝ 37 դեպքում պաշտպանի հարցերի արդյունքում ի հայտ են եկել նոր հանգամանքներ՝ ի օգուտ իր պաշտպանյալի: Միևնույն ժամանակ, չի գրանցվել որևէ դեպք, երբ պաշտպանի հարցերի արդյունքում ի հայտ կգային հանգամանքներ՝ ի վնաս իր պաշտպանյալի:

Պաշտպաններից միայն 7-ն են իրենց փաստարկները հիմնավորելիս օգտագործել Վճռաբեկ դատարանի կամ Եվրոպական դատարանի որևէ նախադեպ: Սակայն միայն մեկ դեպքում է դատարանը դատավճռում անդրադարձել պաշտպանի համապատասխան հղումներին:

Անհրաժեշտ է փաստել, որ իրենց փաստարկները հիմնավորելիս պաշտպանները մեծամասամբ հայտարարել են, որ գոյություն ունի Վճռաբեկ դատարանի կամ Եվրոպական դատարանի համապատասխան որոշում և վճիռ՝ առանց մանրամասնելու գործի անունն ու կարևորությունը քննվող գործի առնչությամբ:

Օրինակ 19.

Դատաքննության ընթացքում պաշտպանը միջնորդել է անթույլատրելի ճանաչել գործով հարցաքննված ոստիկանների ցուցմունքները: Պաշտպանը ներկայացրել է Քրեական դատավարության օրենսգրքով վկային տրված բնորոշումը և մատնանշել է, որ քննչական գործողություն իրականացնող ոստիկանները՝ որպես վարույթն իրականացնող մարմին, չեն կարող հարցաքննվել որպես վկա: Հետևաբար, նրանց ցուցմունքները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, քանի որ ձեռք են բերվել վկայի հարցաքննության կարգի խախտմամբ: Պաշտպանը սույն միջնորդությունը հիմնավորելու համար,

ի լրումն քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթների, մատնանշել է նաև Բալաբեկյանի վերաբերյալ գործով 2005 թվականի հուլիսի 22-ի Վճռաբեկ դատարանի որոշումը:
(Գործ թիվ 12)

Օրինակ 20.


Գործերից մեկում, չնայած այն հանգամանքին, որ ձեռք բերված ձայնագրությունը ճանաչվել էր որպես անթույլատրելի ապացույց, դատախազն առաջարկել էր այն դնել դատավորի կողմից կարծիք կազմելու հիմքում, ինչին ի պատասխան՝ պաշտպանը փաստել է, որ Եվրոպական դատարանի որոշումներից մեկում հստակ գրված է, որ անթույլատրելի ապացույցը ոչ մի կերպ չի կարող դրվել որևէ կարծիքի հիմքում, չի կարող որևէ նշանակություն ունենալ դատավորի կողմից կարծիք և համոզմունք ձևավորելու համար:
(Գործ թիվ 40)

Օրինակ 21.

Վատ վերաբերմունքի կիրառման արդյունքում ձեռք բերված ապացույցներն անթույլատրելի ճանաչելուց բացի պաշտպանը միջնորդություն ներկայացրեց դատարանին՝ միջնորդել հարուցելու քրեական գործ: Պաշտպանը հղում է կատարել Վատ վերաբերմունքի և խոշտանգումների դեմ պայքարի եվրոպական կոմիտեի կողմից սահմանված վատ վերաբերմունքի դեպքերում պետության՝ պատշաճ քննություն իրականացնելու պոզիտիվ պարտավորության չափանիշներին:
(Գործ թիվ 57)


0-10 միավորանոց սանդղակով դիտորդները գնահատել են 155 պաշտպանների և 157 դատախազների ակտիվությունը/ջանասիրությունը դատական վիճաբանությունների ընթացքում²⁶³: Գնահատման համար կիրառվել են միևնույն չափանիշները:
 Հատկանշական է, որ երկու դեպքում էլ միևնույն միջին գնահատականն է ստացվել՝ 7.1: Սա նշանակում է, որ անկախ կիրառված չափանիշների բնույթից և դիտորդի օբյեկտիվության մակարդակից՝ պաշտպանների ու դատախազների ակտիվությունը/ջանասիրությունը դատական վիճաբանությունների ընթացքում լիովին հավասարակշռված է: Այսինքն՝ այս հարցում կողմերի լիարժեք մրցակցություն է ապահովված:
 Գնահատականների բաշխումը ներկայացված է ստորև բերված գծապատկերներում:

Գծապատկեր 11. Պաշտպանների ակտիվության/ջանասիրության վերաբերյալ գնահատականների բաշխումը 0-10 միավորանոց սանդղակով



²⁶³ Ինչպես այս, այնպես էլ մյուս դեպքերում գնահատվել են միայն այն անձանց գործունեությունը կամ մասնագիտական հատկանիշները, որոնց վերաբերյալ բավարար և արժանահավատ տեղեկատվություն է հավաքված եղել մոնիթորինգի ընթացքում: Այդ պատճառով, կախված գնահատման նպատակից, պաշտպանների թիվը տարբերվում է:

Գծապատկեր 12. Դատախազների ակտիվության/ջանասիրության վերաբերյալ գնահատականների բաշխումը 0-10 միավորանոց սանդղակով



Այնուամենայնիվ, չնայած այն հանգամանքին, որ պաշտպանների և դատախազների միջին գնահատականները համընկնում են, վերը բերված գծապատկերը փույլ է տալիս որոշ տարբերություններ ի հայտ բերել:

Այսպես, եթե պաշտպանների 14 %-ն է արժանացել 0-ից մինչև 4 գնահատականի, ապա դատախազների միայն 9 %-ը: Բարձր գնահատականների (8-ից մինչև 10) միջակայքում նույնպես պաշտպանների ցուցանիշը (58 %) բարձր է դատախազների համապատասխան ցուցանիշից (48 %):

Մինչդեռ միջին (5-ից մինչև 7) գնահատականների միջակայքում ակնհայտորեն առավել բարձր են դատախազների ցուցանիշները՝ 43 %՝ պաշտպանների 28 %-ի դիմաց:

Այսպիսով՝ պաշտպանների պարագայում, ի տարբերություն դատախազների գնահատականների (որոնք բավականին բարձր են միջին գնահատականների միջակայքում), բաշխումն առավել բևեռացված է:

Հատկանշական է, որ հանրային պաշտպանների միջին գնահատականը (7.3) ավելի բարձր է մասնավոր պաշտպանների միջին գնահատականից (6.6): Ավելին՝ դիտորդների կողմից բարձր (8-ից մինչև 10) գնահատականի են արժանացել հանրային պաշտպանների 61 %-ը, իսկ մասնավոր պաշտպաններից՝ 45 %-ը:

Հետաքրքիր է, որ մասնակի մեղադրական, մասնակի արդարացման դատավճիռների բոլոր 4 դեպքերն էլ տեղ են գտել հանրային պաշտպանների ներգրավվածության պարագայում: Բնականաբար, այս ցուցանիշը կարող է բացատրվել նաև ընտրանքի մեջ մասնավոր պաշտպանների նվազ ներկայացվածությամբ:

Գնահատելով դատական վիճաբանությունների բովանդակային կողմը՝ կարելի է փաստել, որ դրանց ընթացքում նշանակվելիք պատժատեսակի և պատժաչափի ողջամտության քննարկմանը հատուկ ուշադրություն չի դարձվում: Դատախազի կողմից ամբաստանյալի նկատմամբ կիրառվելիք պատժատեսակի և պատժաչափի հիմնավորում չի ներկայացվում, իսկ պաշտպաններն իրենց ճառում դատարանից հիմնականում պահանջում են նշանակել մեղմ պատիժ: Ի դեպ, որոշ դեպքերում անհասկանալի է, թե արդյոք պաշտպանը պահանջում է նշանակել մեղադրողի պահանջած պատժից մեղմ, թե առհասարակ մեղմ պատիժ:

Դատական դիտարկումների արդյունքների համաձայն՝ միայն 6 տոկոս դեպքերում է պաշտպանը պահանջել ամբաստանյալի նկատմամբ կիրառել ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ: Սակայն միայն 8 ամբաստանյալների նկատմամբ է նշանակվել տուգանքի ձևով պատիժ այն դեպքում, երբ մեղադրողի կողմից պահանջվել էր որոշակի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ:


Արձանագրվել է պաշտպանների կողմից ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջնորդություն ներկայացնելու 31 դեպք: Դատարանի դատավճռով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել 18 ամբաստանյալների նկատմամբ: Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ մեղադրող դատախազի կողմից դատական վիճաբանությունների ժամանակ նշանակ-

վելիք պատիժը չկիրառելու վերաբերյալ առաջարկ ներկայացվել է 13 ամբաստանյալների առնչությամբ:

Դատարանի կողմից ազատազրկում պատժատեսակի կիրառման 67 տոկոս դեպքերում նշանակվել է մեղադրողի կողմից պահանջված չափը: Մյուս դեպքերում նշանակվել է մեղադրողի պահանջած չափից ցածր՝ հիմնականում 6 ամիս ժամկետով ազատազրկում: Նույնը վերաբերում է նաև այլ պատժատեսակներին, օրինակ՝ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակվել է 7 ամբաստանյալների նկատմամբ, որոնցից 5-ը՝ մեղադրողի կողմից պահանջած չափով:

0-10 միավորանոց սանդղակով դիտորդները գնահատել են 157 պաշտպանների հռետորական ձիրքը: Միջին գնահատականը կազմել է 7 (գրեթե նույնքան, որքան ցուցաբերած ակտիվության/ջանասիրության դեպքում): Գնահատականների բաշխումը ներկայացված է ստորև բերված գծապատկերում:


Գծապատկեր 13. Պաշտպանների հռետորական ձիրքի գնահատականների բաշխումը 0-10 միավորանոց սանդղակով



Ակնհայտ է, որ գնահատականների առավելագույն կուտակում է նկատվում 7-8 միավորների միջակայքում: 0-5 գնահատականի է արժանացել յուրաքանչյուր 5-րդ պաշտպանը (19 %):

0-10 միավորանոց սանդղակով դիտորդները գնահատել են 158 պաշտպանների կողմից ժամանակի կառավարման արդյունավետությունը դատաքննության ընթացքում: Միջին գնահատականը կազմել է 8, որը բարձր է նախորդ հմտությունների միջին գնահատականներից: Գնահատականների բաշխումը ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

Գծապատկեր 14. Պաշտպանների կողմից ժամանակի կառավարման արդյունավետությունը դատաքննության ընթացքում



Ինչպես տեսնում ենք, գնահատականների առավելագույն կուտակում է նկատվում 8-10 միավորների միջակայքում: 0-5 գնահատականի է արժանացել պաշտպանների 16 %-ը:

Գնահատվել են նաև 137 պաշտպանների՝ տրամաբանորեն հիմնավորված փաստարկներ և հակափաստարկներ ներկայացնելու կարողությունները: Վերջիններիս 15.3 %-ը (21 պաշտպաններ), ըստ դիտորդների, հիմնականում չեն կարողացել տրամաբանորեն հիմնավորված փաստարկներ և հակափաստարկներ ներկայացնել:

Օրինակ 22.

Գործերից մեկով որպես վկա հարցաքննվում էր քննչական գործողությանը մասնակցած ընթերական: Ըստ ընթերակայի նկարագրության՝ նախնական քննության ընթացքում իրականացվել էր ամբաստանյալի բնակարանի խուզարկություն, սակայն քրեական գործի նյութերում սույն գործողությունը բնութագրվել էր որպես բնակարանի զննություն (ըստ էության, համապատասխան թույլտվության բացակայության պատճառով): Դատարանում վկան հայտնել էր, որ իրեն առաջարկել են մասնակցել բնակարանի խուզարկության՝ դժվարությամբ մտաբերելով իր կարգավիճակը: Նա դատարանում նշեց, որ քննչական գործողությանը մասնակցել են երկու ոստիկաններ և մեկ այլ քաղաքացի, սակայն նախաքննական ցուցմունքում հայտնել էր, որ ոստիկանները շատ էին, միաժամանակ, բնակարանում տեղի ունեցած քննչական գործողության առնչությամբ հայտնել էր, որ բնակարանի սեղանի վրայից ոստիկանները վերցրել էին հեղուկով լցված շիշ, իսկ դատարանում ասաց, որ շիշը եղել է սեղանի տակ: Սույն հակասությունները վկա-ընթերակայի կողմից դատարանում չպարզաբանվեցին, իսկ պաշտպանի կողմից դրանք որպես փաստարկ չօգտագործվեցին ի պաշտպանություն ամբաստանյալի:

(Գործ թիվ 22)

Օրինակ 23.

Ի հակառակ՝ գործերից մեկով պաշտպանը վիճարկում էր ամբաստանյալի անչափահաս քրոջ նախաքննական ցուցմունքների թույլատրելիությունը: Մասնավորապես, պաշտպանը նշում էր, որ քրեական գործի նյութերում բացակայում են համապատասխան փաստաթղթեր անչափահաս վկային ոստիկանության բաժանմունք կանչելու, նրան իր իրավունքները պարզաբանելու, մասնավորապես իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալու պարտականությունից ազատված լինելու մասին: Ցուցմունքի արձանագրությունում նշված չի եղել նաև, թե ով է ներկա գտնվել որպես անչափահաս վկայի օրինական ներկայացուցիչ: Այդպիսով, սույն փաստարկներով պաշտպանը հիմնավորում էր, որ վկայի հարցաքննությունը տեղի է ունեցել դատավարական նորմերի խախտմամբ:

(Գործ թիվ 57)

Միջնորդությունների ներկայացում և հայտարարություններ պաշտպանի կողմից


Դիտարկումների արդյունքների հիման վրա կարելի է փաստել, որ հանրային պաշտպանների կողմից առավել մեծ ջանասիրություն է ցուցաբերվում ծանր հանցագործությունների մեջ մեղադրվող ամբաստանյալների պաշտպանությունն իրականացնելիս: Դա դրսևորվում է ինչպես գործի նյութերին ամբողջությամբ տիրապետելու, այնպես էլ դատաքննության ընթացքում ապացույցների հետազոտման գործընթացին մասնակցելու միջոցով: Դիտարկման ենթարկված առավել ծանր հանցագործություններից ավագակության և սպանության դեպքերում են պաշտպանները առավել մեծ ակտիվություն դրսևորել՝ հանդես գալով ինչպես միջնորդություններով, այնպես էլ հայտարարություններով:

Օրինակ 23.

Ավագակության վերաբերյալ քրեական գործերից մեկի ընթացքում պաշտպանի կողմից ներկայացվել են տասնյակից ավելի միջնորդություններ, այդ թվում՝ դատավորի ինքնաբացարկի միջնորդություն, քրեական գործերի նյութերից առանձին փաստաթղթեր ծանոթացման տրամադրելու, քրեական գործին առանձին ապացույցներ կցելու, քրեական գործում առկա որոշ ապացույցներ անթույլատրելի ճանաչելու, դատարանում հարցաքննելու համար անձանց դատարան հրավիրելու, քրեական գործ հարուցելու մասին դատարանի կողմից մեղադրողին միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ:

Գործին առնչվող և պաշտպանության համար էական նշանակություն ունեցող միջնորդությունների (պաշտպանի կողմից ներկայացված) վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև բերված գծապատկերում:

Գծապատկեր 15. Դատարանի արձագանքը պաշտպանի կողմից ներկայացված միջնորդությունների



Անհրաժեշտ է փաստել նաև, որ պաշտպանների կողմից ներկայացված միջնորդությունների ընդհանուր ընտրանքում ընդգրկված են պաշտպանների կողմից գործի նյութերին ծանոթանալու համար ժամանակ տրամադրելու վերաբերյալ միջնորդությունների քանակը: Բավարարված միջնորդությունների ընդհանուր քանակից դրանց դուրսբերման դեպքում բովանդակային միջնորդությունների բավարարման ընդհանուր ցուցանիշների նվազում տեղի կունենա:

Օրինակ 24.

Առևանգման վերաբերյալ քրեական գործի դատաքննության ընթացքում պաշտպանը միջնորդություն ներկայացրեց դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել երկու անձանց՝ նշելով, որ նրանցից մեկի ցուցմունքով կարող է հաստատվել իր պաշտպանյալների դեմ առաջադրած մեղադրանքի անհիմն լինելը: Պաշտպանը նշեց վկայի անունը և հասցեն՝ հայտնելով, որ անձի ցուցմունքով կհաստատվի, որ տուժողն ունեցել է ազատ տեղաշարժվելու հնարավորություն, ազատ խոսել է նրա հետ: Երկրորդ վկան նախաքննության ընթացքում կատարված քննչական փորձարարությանը մասնակցած ընթերական էր, ով ըստ պաշտպանի հաղիսանում է տուժողի սանիկը, ինչը ՔԴՕ նորմերի խախտում է, քանի որ քննչական գործողությանը շահագրգռված անձի մասնակցությունը ազդում է դրա հավաստիության վրա:

Միջնորդության դեմ առարկեց մեղադրողը՝ նշելով, որ տուժողի քայլերը չի նշանակել, որ նա առևանգված չի եղել, դա կատարվել է ամբաստանյալի հսկողությամբ: Իսկ ընթերակային հրավիրելը կարող է հանգեցնել ձգձգման, մինչդեռ քավոր-սանիկ հարաբերություններն ապացուցված չեն: Դատարանի կողմից ներկայացված միջնորդություններից առաջինը բավարարվեց, իսկ ընթերակայի մասով մերժվեց՝ այն հիմնավորմամբ, որ առերևույթ կասկածի հիմք առկա չէ, որ ընթերական շահագրգիռ է եղել. քավոր-սանիկ հարաբերություններից դա չի ենթադրվում:

(Գործ թիվ 88)

Պաշտպանների 11 %-ը հայտարարություն կամ միջնորդություն է հնչեցրել նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների վերաբերելիության, 7 %-ը՝ ապացույցների թույլատրելիության և միայն 3 %-ը՝ ապացույցների հավաստիության վերաբերյալ:

Ըստ դիտորդների գնահատականների՝ պաշտպանների ներկայացրած միջնորդությունների 5.1 %-ը հիմնավորված չէին իրավական փաստարկներով:

21 դեպքում պաշտպանները բողոքներ են ներկայացրել քննիչի, դատախազի կամ դատարանի դեմ՝ որոշակի գործողությունների իրականացման կամ չիրականացման կապակցությամբ:

Օրինակ 27.

Պաշտպանը դատարանին ներկայացրել է բանավոր բողոք առ այն, որ նախաքննություն իրականացնող մարմնի կողմից պատշաճ փորձաքննություն չի իրականացվել, երբ գոյություն են ունեցել բոլոր նախադրյալները ենթադրելու, որ իր պաշտպանյալը տառապել է հոգեկան հիվանդությամբ և կարող է անմեղ-

սունակ ճանաչվել: Սույն բողոքը պաշտպանն ուղղել է նաև դատարանին, ում կողմից նույնպես մերժվել է դատահոգեբուժական փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը:

(Գործ քիվ 245)

Օրինակ 26.

Պաշտպանը բողոքել է կատարված նախաքննության միակողմանիության վերաբերյալ, քանի որ կատարված հանցագործության հետևանքով իր պաշտպանյալը ստացել է ոտքի վնասվածք, իսկ դրա կապակցությամբ քննություն չի իրականացվել:

(Գործ քիվ 224)

Միաժամանակ, դատական քննության ընթացքում դատական նիստի ձայնագրառման ընդհատման 3 դեպքերում պաշտպանի կողմից որևէ արձագանք չի հետևել:

Տեղեկատվության հասանելիություն

Պաշտպանների կողմից գործի նյութերին ծանոթանալու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու համար միջնորդություն է ներկայացվել 23 գործերում, որոնցից 18-ի պարագայում դատարանը տրամադրել է անհրաժեշտ ժամանակը:

Օրինակ 28.

Պաշտպանի կողմից գործի նյութերին ծանոթանալու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելուց հետո դատարանը վրդովվել է, որ պաշտպանին բավարար ժամանակ տրամադրված եղել է, որպեսզի վերջինս դատարանում ծանոթանալու գործի նյութերին: (Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շեշտել է, որ դատարանները պարտավոր չեն քրեական գործի նյութերն ամբողջությամբ տրամադրել պաշտպանին. առանձին փաստաթղթերի պատճեններ կարող են տրամադրվել, սակայն ոչ ամբողջ քրեական գործը): Դատարանը նշել է, որ պաշտպանն արդեն մեկ ամիս ներգրավված է քրեական գործին, և դա բավարար էր գործի նյութերին ծանոթանալու համար:

(Գործ քիվ 36)

Պաշտպաններից 9-ը նշել են, որ չեն ունեցել գործի նյութերը պատճենահանելու հնարավորություն, իսկ 6-ը նշել են, որ առկա են եղել խոչընդոտներ գործի նյութերին ծանոթանալու գործընթացում:

Մասնավորապես, Արագածոտնի մարզի Ապարան քաղաքում առկա է փաստաթղթերի պատճենահանման խնդիր, քանի որ քաղաքում պատճենահանող սարքավորումները բացակայում են: Հանրային պաշտպանները փաստում են, որ ստիպված են լինում մեկնել Աշտարակ՝ նյութերը պատճենահանելու:

Միաժամանակ, արձանագրվել են դեպքեր, որ պաշտպանը քրեական գործի դատական քննությանը ներգրավվել է առանց գործի նյութերին պատշաճ ծանոթանալու: Անհրաժեշտ է փաստել, որ նման մոտեցում հանրային պաշտպանները դրսևորում են հատկապես զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործությունների քննության պարագայում:

Օրինակ 29.

Զինվորական գործերից մեկով դատական քննությանը ներգրավված հանրային պաշտպանը միջնորդեց հետաձգել դատական քննությունը՝ գործի նյութերին ծանոթանալու համար: Որպես ողջամիտ ժամկետ պաշտպանի կողմից պահանջվեց մի քանի ժամ, այնուհետև հայտարարեց, որ 30 րոպե ընդմիջում հայտարարելու դեպքում նա արագ կպատրաստվի՝ «ո՞ր է էստեղ նյութ» արտահայտությամբ: Դատարանի կողմից դատական նիստն ընդմիջվեց 20 րոպեով, որի ավարտից հետո պաշտպանն արագացված կարգով դատական քննություն իրականացնելու միջնորդություն ներկայացրեց:

(Գործ քիվ 220)

Օրինակ 30.

Զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործության մեկ այլ գործով հանրային պաշտպանը նախքան դատական նիստը սկսելն ամբաստանյալներին հայտնում էր, որ դատավորից ժամանակ է պահանջելու գործի նյութերին ծանոթանալու համար: Ներկա դատախազը պաշտպանին ասաց, որ այդ միջնորդությունն ավելի լավ է չներկայացնի, քանի որ նախորդ դատական նիստի ընթացքում ամբաստանյալներն ընդունել էին իրենց մեղքը և ավելի լավ կլինի արագացված դատական քննություն անց-

կացնելու մասին միջնորդություն ներկայացվի, որպեսզի կիրառվի համաձայնում: Պատշաճ կամաձայնել է և սկսել է քննարկել արագացված կարգի կիրառման միջնորդությունը իր պաշտպանյալների հետ: Արդյունքում դատական քննությունն անցկացվել է արագացված կարգով:

(Գործ թիվ 47)

Դիտարկման ենթարկված գործերում դատական քննության ընթացքում մեղադրող դատախազի կողմից առաջադրված մեղադրանքը փոփոխվել է 12 դեպքերում՝ ինչպես խստացվելով, այնպես էլ մեղմացվելով: Արձանագրված բոլոր դեպքերում պաշտպանության կողմին տրամադրվել է ժամանակ առաջադրված նոր մեղադրանքին ծանոթանալու համար (ինչպես մեղադրանքի խստացման, այնպես էլ մեղմացման դեպքերում):

Դիտարկումներն արձանագրում են դեպքեր, երբ պաշտպանները և պաշտպանյալները անհամաձայնեցված գործողություններ են իրականացրել դատական քննության ընթացքում: Դա հիմնավորում է այն տեսակետը, որ մի շարք դեպքերում պաշտպաններն իրենց պաշտպանյալների հետ մինչև գործի դատական քննությունը չեն խորհրդակցում պաշտպանության ռազմավարության և միջոցների վերաբերյալ: Հաճախ պաշտպաններն իրենց պաշտպանյալներին առաջին անգամ հանդիպում են արդեն դատական քննության ընթացքում:

Ըստ դիտորդների գնահատականների՝ 10 ամբաստանյալների պարագայում պաշտպանի և պաշտպանյալի գործողությունները համաձայնեցված չեն եղել: Արձանագրվել է նաև 6 դեպք, երբ դատական նիստերի ընթացքում ամբաստանյալը չի ունեցել պաշտպանի հետ խորհրդակցելու հնարավորություն:

Օրինակ 31.

Դիտարկված գործերից մեկով ամբաստանյալի հարցաքննությունից հետո պաշտպանի և ամբաստանյալի միջև փոքրիկ վիճաբանություն տեղի ունեցավ ցուցմունքի բովանդակության առնչությամբ, սակայն ամբաստանյալն ասաց, որ պաշտպանն իրեն չխանգարի, ինչ ասել է, ճիշտ է:

(Գործ թիվ 52)

Օրինակ 32.

Դատական քննության ընթացքում ամբաստանյալն իրեն մեղավոր չճանաչեց, ինչից պաշտպանը զայրացավ, քանի որ իր պաշտպանյալի հետ նախապես պայմանավորվել էին գործն արագացված կարգով քննելու միջնորդություն ներկայացնելու շուրջ: Պաշտպանը դատարանից ժամանակ խնդրեց ամբաստանյալի դիրքորոշումը պարզելու համար, որի ընթացքում սկսեց պարսավել և կշտամբել ամբաստանյալին: Դատարանը, տեսնելով այդ ամենը, հայտնեց, որ պաշտպանի նման քայլը դիտում է որպես ամբաստանյալի վրա ճնշման գործադրում և այդ հիմքով մերժեց արագացված կարգով քննություն անցկացնելու միջնորդությունը:

(Գործ թիվ 19)

Իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքի իրացումը

Կատարված դիտարկումները փաստում են, որ դատական քննության ընթացքում ամբաստանյալի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքը չի պահպանվում՝ հաշվի առնելով վկաների՝ դատարան չներկայանալն ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով: Վկաների կողմից դատարան չներկայանալու առավել տարածված պատճառը վերջինների՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվելն է կամ բնակության վայրի փոփոխությունը: Միաժամանակ, անհրաժեշտ է ուշադրություն արժանացնել այն փաստին, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից վկաների հայտնաբերման ու նրանց՝ դատարանում ներկայության ապահովման գործառույթը թերանում է, ինչը պատճառ է հանդիսանում ոչ միայն ամբաստանյալի իրավունքների սահմանափակման, այլև դատարանի կողմից արդարադատության իրականացման համար:

Դիտարկման ենթարկված ընդհանուր կարգով քննված գործերում դատակոչի ենթակա 434 վկաներից դատական քննության ընթացքում հարցաքննվել են 181-ը: Դատական քննության ընթացքում հետազոտվում են վկաների նախաքննական ցուցմունքները, որոնց դեմ առարկելու կամ հակափաստարկելու հնարավորությունից պաշտպանության կողմը, ըստ էության, զրկված է լինում:

Օրինակ 33.

Գործերից մեկով մեղադրանքի հիմքում դրված ապացույցներից էին երկու վկաների ցուցմունքները, ովքեր դատական քննության ընթացքում չէին հարցաքննվել: Դատարանի կողմից վկաներին բերման

ենթարկելու վերաբերյալ որոշումներից հետո վկաները նույնպես չէին ներկայացել դատարան: Սակայն հաշվի առնելով վկաների անձը և առկա հանգամանքները՝ դատարանի կողմից չէին ձեռնարկվել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ վերջիններիս ներկայությունը դատական քննությանն ապահովելու համար: Մասնավորապես, նրանցից առաջինը հանդիսանում էր ամբաստանյալի բնակության վայրի համատիրության նախագահը, իսկ երկրորդը՝ քրեական գործով ականատես վկան, ում ցուցմունքները կարևոր առանցքն էին մեղադրանքի հիմնավորման համար: Դատական քննության ընթացքում տվյալ վկային հարցաքննելու հնարավորություն պաշտպանության կողմը չունեցավ, քանի որ վկային բերման ենթարկելու վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա իրականացված գործողությունների համաձայն՝ վկայի գտնվելու վայրն անհայտ էր, և ենթադրվում էր, որ վերջինս հատել է ՀՀ սահմանը: Այդուամենայնիվ, վկայի՝ ՀՀ սահմանը հատելու վերաբերյալ որևէ ապացույց դատարանում չներկայացվեց և չվկայակոչվեց: Արդյունքում վկաների ներկայությունը դատարանում չապահովվեց և նրանց՝ նախնական քննության ընթացքում տրված ցուցմունքները հրապարակվեցին՝ դրվելով մեղադրական դատավճռի հիմքում:

(Գործ թիվ 93)

Դիտարկման ենթարկված գործերի արդյունքներն արձանագրում են նաև դատական քննությանը տուժողների ներկայության խնդիրներ:

Օրինակ 34.

Դիտարկման ենթարկված ծանր հանցագործություններից մեկով տուժողը, ըստ նախնական տվյալների, գտնվել է ՀՀ սահմաններից դուրս: Տուժողին բերման ենթարկելու վերաբերյալ պաշտպանի միջնորդություններին դատավորը պատասխան հարցով է դիմել. «Դ՞նչ կարող եմ անել, որ չեմ անում»: Արդյունքում տուժողը դատարանում չհարցաքննվեց և մեղադրական դատավճռի հիմքում դրվեց տուժողի նախաքննական ցուցմունքը:

(Գործ թիվ 88)

Օրինակ 35.

Մեկ այլ դեպքում բռնաբարության մեջ մեղադրվող ամբաստանյալը բազմիցս պահանջել է բացակայող տուժողի ներկայությունն ապահովել դատարանում, ով գտնվել է Ռուսաստանի Դաշնությունում և դատարանին ուղղված գրությունում խնդրել է գործը քննել իր բացակայությամբ և հիմք ընդունել նախաքննության ընթացքում իր տված ցուցմունքները: Սակայն ամբաստանյալը բազմիցս պնդել է, որ տուժողը ներկայանա, քանի որ իրեն վերագրվող հանցագործությունն անհիմն է ու դա պարզել հնարավոր էր միայն տուժողի հետ առերես հարցաքննության միջոցով:

Սակայն, ինչպես և նախորդ օրինակում, դատարանը սահմանափակվել է տուժողի նախաքննական ցուցմունքների հետազոտմամբ:

(Գործ թիվ 9)

Անմեղության կանխավարկածի պաշտպանությունը դատական քննության ընթացքում

Կատարված դիտարկումները փաստում են, որ դատարանների կողմից հաճախ խախտվում է ամբաստանյալների անմեղության կանխավարկածը. դատարանները կանխակալ մեղադրական վերաբերմունք են դրսևորում ամբաստանյալների նկատմամբ: Դատավորների կողմից արդեն իսկ դատական քննության ընթացքում կասկածի տակ է դրվում ամբաստանյալի կողմից հայտնած տեղեկությունների հավաստիությունը, դատավորներն իրենց արտահայտություններով ու վերաբերմունքով արտահայտում են ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ իրենց համոզումը: Հատկանշականն այն է, որ նման վերաբերմունքի առնչությամբ պաշտպանների կողմից որևէ արձագանք չի հետևում:

Օրինակ 36.

Գործերից մեկով ամբաստանյալին հարցաքննելիս դատավորը ծաղրական տոնով է հնչեցրել հարցերը, նույնիսկ վիրավորական արտահայտություններ է թույլ տվել: Իսկ ամբաստանյալի պատասխաններին քննադատել է: Այդուամենայնիվ, դատարանի նման վերաբերմունքին ի պատասխան՝ պաշտպանի կողմից որևէ գործողություն չի ձեռնարկվել:

(Գործ թիվ 92)

Օրինակ 37.

Դիտարկված գործերից մեկով դատավորն ակնհայտորեն սպառնացել է ամբաստանյալին՝ ասելով,

որ իր ցուցմունքները սկսում են ոչ բարենպաստ ազդեցություն ունենալ իր վիճակի վրա: Դատավորը հիշեցրել է, որ ամբաստանյալի կողմից հավաստի տեղեկությունների տրամադրումը դրական ազդեցություն կունենա և հաշվի կառնվի **մեղադրական դատավճռում**: Դատավորը նաև նշել է, որ վերջին շրջանում բազմաթիվ են մաման ձեռագրերով հանցագործությունները:

(Գործ թիվ 10)

Բռնությունների կիրառումը քրեական գործի քննության ընթացքում

Դատական դիտարկումների արդյունքները, ինչպես նաև պաշտպանների հետ հարցազրույցներն արձանագրում են քրեական գործով ինչպես նախնական քննության, այնպես էլ դատական քննության ընթացքում ճնշումների և հոգեբանական բռնությունների գոյությունը: Ծնշումների ենթարկվում են ոչ միայն ամբաստանյալները, այլև վկաները, տուժողները:

Օրինակ 38.

Դեպքերից մեկում ամբաստանյալի հարցաքննության ժամանակ տուժողի հայրն ու ներկայացուցիչը լուտանքներ ու անեծքներ էին թափում ամբաստանյալի վրա. դատական նիստերի դահլիճում էմոցիոնալ իրավիճակ էր, որը մույնիսկ սպառնում էր դուրս գալ դատարանի վերահսկողությունից: Հարցաքննությունը որոշ ժամանակով ընդհատվեց. դատարանի կողմից մույնիսկ դատական սանկցիաներ կիրառվեցին:

(Գործ թիվ 93)

Ընդհանուր առմամբ, դեպքերի 97 %-ում պաշտպաններին հաջողվել է գերծ պահել իրենց պաշտպանյալներին հնարավոր ճնշումներից (դատարանի, դատախազի, վկաների կամ այլ անձանց կողմից): Միայն երկու դեպքում պաշտպաններին չի հաջողվել գերծ պահել ամբաստանյալին ճնշումներից:

Դիտարկված գործերից 81 %-ում պաշտպաններին հաջողվել է գերծ պահել իրենց պաշտպանյալներին անհարգալից վերաբերմունքի դրսևորումներից: 14 դեպքում պաշտպաններին դա չի հաջողվել:

7 գործերի քննության ընթացքում գործի մասնակիցներից որևէ մեկը վկաների նկատմամբ հոգեբանական կամ այլ ճնշում է գործադրել, ինչը դրսևորվել է ինչպես դատախազի կողմից վկաների վրա ձայնը բարձրացնելով, սպառնալից տոնայնությամբ հարցերը հնչեցնելով, այնպես էլ դատարանի կողմից պարբերաբար սուտ ցուցմունքներ տալու համար քրեական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ դրույթը հիշեցնելով: Արձանագրվել է դեպք նաև, երբ ամբաստանյալի պաշտպանի կողմից վկային ուղղված հարցերի ազդեցության տակ վկան հուզվել է:

Օրինակ 39.

Վկայի հարցաքննության ժամանակ մեղադրող դատախազը հարցը հնչեցրել է վկայի վրա բղավելով, սպառնալից տոնով:

(Գործ թիվ 12)

Օրինակ 40.

Դեպքերից մեկում դատավորն է ճնշում գործադրել վկայի նկատմամբ, ով դատական քննության ընթացքում ցուցմունք տալիս հայտնել է, որ չի հիշում դեպքի մանրամասները: Դատավորը, վկային դիմելով, ասել է, թե միգուցե հոգեբուժական հիվանդանոցում նրա հիշողությունը վերականգնվի:

(Գործ թիվ 20)

Օրինակ 41.

Մեկ այլ դեպքում վկան զորակոչային զինծառայող էր, ում ցուցմունքների առնչությամբ դատախազը կարծիք հայտնեց, թե «լավ էլ պատրաստվել եք ցուցմունքներին... Վկան պատասխանեց, թե ցուցմունքին պատրաստվելու առանձնապես կարիք չի եղել: Դատավորը, սակայն, հանդուգն կերպով հաստատեց, որ «պատրաստվել եք ե՛ն էլ ոնց»:

(Գործ թիվ 98)

Միաժամանակ, նախնական քննության ընթացքում իրենց նկատմամբ կիրառված բռնությունների և անմարդկային վերաբերմունքի մասին մոնիթորինգի դիտարկումների ընթացքում հայտարարել են 5 ամբաստանյալներ: Տվյալ դեպքերում պաշտպանները հիմնականում միջնորդել են խախտումներով ձեռք բերված ապացույցները ճանաչել անթույլատրելի:

Օրինակ 42.

Ամբաստանյալն իր ցուցմունքում շեշտեց, որ նախաքննության ընթացքում իր կողմից տրված ցուցմունքները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ դրանք տրվել են իր նկատմամբ կիրառված բռնության և հոգեբանական ազդեցության արդյունքում: Մասնավորապես, իր նկատմամբ կիրառվել է էլեկտրաշոկ, ծեծ, ինչպես նաև սպառնացել են, որ որդուն նույնպես կներգրավեն գործին: Տվյալ դեպքում պաշտպանը միջնորդեց, որ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներն անթույլատրելի ճանաչվեն և հանվեն ապացույցների ընդհանուր զամբյուղից:

(Գործ թիվ 8)

Օրինակ 43.

Միայն մեկ գործով է, որ ամբաստանյալի նկատմամբ վատ վերաբերմունքի առնչությամբ պաշտպանը դիմել է քրեական գործ հարուցելու պահանջով, որի առնչությամբ, սակայն, խնդրո առարկա գործի դատական քննության ողջ ընթացքում նյութեր էին նախապատրաստվում և քրեական գործի հարուցումը հետաձգվում էր:

(Գործ թիվ 57)

Օրինակ 44.

Դիտարկման ենթարկված գործերից մեկով որպես մեղադրյալ հարցաքննվել է խնդրո առարկա գործին առնչվող անձ, ով նշել է, որ իր կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները սուտ են, իրականությանը չեն համապատասխանում և տրվել են քրեական հետախուզության աշխատակիցների կողմից ծեծի և բռնության արդյունքում: Մեղադրյալը դատարանին հայտնել է, որ իրեն սպառնացել են էլեկտրաշոկի ենթարկել, եթե չտա այն ցուցմունքները, որոնք իրենց անհրաժեշտ են: Նրա մոտ առկա կապտուկների վերաբերյալ դատավարական փաստաթղթերում արձանագրվել է, որ վերջինս վայր է ընկել ծառից, սակայն դատարանում նա հայտնեց, որ դրանք ծառից ընկնելու հետևանքով չէին առաջացել, այլ ծեծի արդյունք էին հանդիսանում: Ցուցմունքներում էական հակասության հիմքով նախնական քննության ընթացքում տրված ցուցմունքները հրապարակվեցին, ինչին պաշտպանն արձագանքեց, որ դրանք չեն կարող ճանաչվել որպես ապացույց և դրվել դատավճռի հիմքում:

(Գործ թիվ 107)

Դատաքննության արագացված կարգ

Դիտարկման ենթարկված գործերից մոտ կեսը՝ 49.4 %-ը, տեղի են ունեցել դատական քննության արագացված կարգով: Արագացված կարգով դատական քննություն իրականացնելու պաշտպանության կողմի միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է միայն 1 դեպքում: Դեպքերից մեկում մեղադրող դատախազն առարկել է արագացված կարգի կիրառման դեմ:

Կատարված դիտարկումներն արձանագրում են, որ արագացված կարգով դատական քննություն իրականացնելու միջնորդության քննարկման ընթացքում դատարանների կողմից ոչ բոլոր դեպքերում է պարզվում արագացված կարգի կիրառման համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայությունը: Աղյուսակ 1-ում ներկայացված են տվյալներ այն մասին, թե ամբաստանյալների որ տոկոսի պարագայում օրենսգրքով սահմանված հարցերը դատարանի կողմից չեն հնչեցվել:


Աղյուսակ 1. Տվյալներ այն ամբաստանյալների վերաբերյալ, որոնց համար դատարանի կողմից չեն հնչեցվել նշված հարցերը

Հարցերի բովանդակությունը	Այն ամբաստանյալների տոկոսը, որոնց համար տվյալ հարցը չի հնչեցվել
Առաջադրված մեղադրանքի պարզ լինելը	5 %
Մեղադրանքի հետ համաձայն լինելը	5 %
Արագացված կարգով գործի քննություն անցկացնելու միջնորդությունը պնդելը	15 %
Միջնորդությունը կամավոր ներկայացնելը	18 %
Մինչ այդ պաշտպանի հետ խորհրդակցելը	13 %
Արագացված կարգով դատական քննություն անցկացնելու հետևանքները գիտակցելը	11 %

Ընդ որում, 4 ամբաստանյալների պարագայում չի հնչեցվել նշված հարցերից և ոչ մեկը:

Դիտարկումները ցույց են տալիս, որ դատարանի կողմից մեղադրյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների ուսումնասիրությունը երբեմն ձևական, մակերեսային բնույթ է կրում: Ստորև բերված գծապատկերից պարզ է դառնում, որ 16 % դեպքերում դատարանը ոչ թե ուսումնասիրում է մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, այլ պարզապես թվարկում է գործում առկա փաստաթղթերի անվանումները: Յուրաքանչյուր երկրորդ դեպքում (50.4 %) դատարանը կարդում է համապատասխան փաստաթղթի բովանդակությունը: Սակայն, որպես կանոն, այս դեպքերում էլ ուսումնասիրությունը խորքային բնույթ չի կրում, վերածվում է պարզ ընթերցման: Եվ միայն 18.4 % դեպքերում է, որ դատարանը լրացուցիչ պարզաբանող հարցեր է ուղղում՝ ելնելով իր կողմից ուսումնասիրված փաստաթղթերի բովանդակությունից:

Գծապատկեր 16. Դատարանի կողմից մեղադրյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների ուսումնասիրության եղանակը



Դատական դիտարկումները փաստում են նաև, որ դատական քննության արագացված կարգի կիրառման դեպքերում լիարժեքորեն չի իրացվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը:

Մասնավորապես, մեծամասամբ հենց պաշտպաններն են շահագրգռված, որ դատական քննությունն ընթանա արագացված կարգով:

Իրենց պաշտպանյալներին արագացված կարգի առանձնահատկությունները ներկայացնելիս պաշտպանները շեշտը դնում են հիմնականում արագացված կարգով դատական քննության ընթացակարգի դրական հատկանիշների վրա՝ «զայթակղելով» թեթև պատիժ նշանակելու կամ նույնիսկ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությամբ: Եթե դատարանը շեշտում է, որ դատավճռի բողոքարկումը հնարավոր է միայն նշանակված պատժի մասով, ապա բողոքարկմանը պաշտպանները հիմնականում չեն անդրադառնում:

Արագացված կարգով քննված գործերի շրջանակներում ամբաստանյալների 7.1 %-ի պաշտպանները չեն հետևել, որ ամբաստանյալներն ըմբռնեն արագացված կարգի կիրառման պայմանները (այն է՝ դատավորի հարցերին ամբաստանյալը ոչ թե մեխանիկորեն դրական պատասխան տա, այլ իրապես հասկանա, պատկերացնի բոլոր պայմանները):

Ըստ էության, արագացված կարգով դատական քննություն անցկացնելը «ձեռնտու է» ոչ միայն մեղադրանքի կողմին²⁶⁴, դատարանին, այլև պաշտպաններին, ովքեր ստիպված չեն լինում ամբողջությամբ ու խորն ուսումնասիրության ենթարկել քրեական գործը՝ պատրաստվելու ամբաստանյալի պատ-

²⁶⁴ Հանցագործության հանգամանքների, ամբաստանյալի մեղավորության չբացահայտման պայմաններում մեղադրանքի կողմին ձեռնտու է համոզել մեղադրյալներին՝ ներկայացնելու դատական քննության արագացված կարգի կիրառելու միջնորդություն՝ դրական վերաբերմունք ցուցաբերելու, մեղմ պատիժ պահանջելու խոստովանելով: Նման դեպքերում է, որ հիմնականում արագացված կարգով դատական քննություն անցկացնելու միջնորդությունը ներկայացվում է նախքան դատական նիստ անցկացվելը՝ առանց պաշտպանների հետ խորհրդակցելու:

շաճ պաշտպանությանը՝ վեր հանելու քրեական գործում առկա հակասությունները, թերությունները, վիճարկելու ապացույցների թույլատրելիությունը և այլն: Արագացված կարգով դատական քննության պայմաններում պաշտպանի հիմնական խնդիրն է պաշտպանյալին դրական բնութագրող տվյալների և պատասխանատվությունը հնարավորինս մեղմացնող հանգամանքների ներկայացումը: Սույն պայմաններում պաշտպաններն առավել հակված են համաձայնելու և նույնիսկ համոզելու պաշտպանյալներին՝ դատական քննությունն անցկացնելու արագացված կարգով:

Դատական դիտարկումների արդյունքները փաստում են, որ պաշտպանների կողմից արագացված կարգով դատական քննություն անցկացնելու պատրաստականությունն առավել բարձր է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում, հատկապես երբ հանցագործությունն իրենից բարձր հանրային վտանգավորություն չի ներկայացնում: Նման գործերով դատական քննության փուլից վարույթին ներգրավված պաշտպանների կողմից գործի նյութերին ծանոթանալը տեղի է ունենում ամբաստանյալի կողմից դեպքի հանգամանքների ու քննության մասին պաշտպանին պատմելով:

Օրինակ 45.

Դիտարկված դատական գործերից մեկով արագացված դատական քննություն անցկացնելու մասին միջնորդությունը ներկայացվել էր պաշտպանի կողմից, ընդ որում, առանց ամբաստանյալի հետ խորհրդակցելու: Պաշտպանը դատարանից 5 թույն ժամանակ խնդրեց ամբաստանյալի հետ խորհրդակցելու համար, սակայն դատարանին հայտնեց, որ ամբաստանյալի հետ խորհրդակցել և ներկայացրել է արագացված դատական քննություն իրականացնելու հետևանքները: Դատավորի կողմից ամբաստանյալին որևէ հարց չտրվեց՝ պարզելու, թե արդյո՞ք վերջինս իսկապես ըմբռնել է արագացված դատական քննություն անցկացնելու հետևանքները և համաձայն է արդյո՞ք դատական քննությունն անցկացնել արագացված կարգով:

(Գործ թիվ 16)

Օրինակ 46.

Մեկ այլ գործով ամբաստանյալների կողմից դատարան են ներկայացվել դատական քննությունն արագացված կարգով քննելու վերաբերյալ միջնորդություններ առ այն, որ իրենց մեղավոր են ճանաչում և ցանկանում են գործը քննել արագացված կարգով: Դատարանում ամբաստանյալների պաշտպանների կողմից ներկայացված միջնորդությունների և մեղադրական եզրակացության հրապարակումից հետո ամբաստանյալները հայտնեցին, որ իրենց մեղավոր են ճանաչում, ընդունում են առաջադրված մեղադրանքը և պնդում են արագացված կարգով դատական քննություն իրականացնելու միջնորդությունը: Այլ ճշգրտող հարցեր դատարանի կողմից չհնչեցվեցին:

(Գործ թիվ 65)

Դատավճիռների բողոքարկման իրավունքի իրացումը

Դիտարկումների արդյունքներն արձանագրում են մեղադրական դատավճիռների կայացման բարձր ցուցանիշներ: Դատարանը դադարեցրել է քրեական հետապնդումը և կարճել քրեական գործը 4 ամբաստանյալների նկատմամբ: Դրանցից միայն մեկն է պայմանավորված եղել արարքում հանցակազմի բացակայությամբ, մյուսների հիմքում դրվել է հանցագործության կատարման վաղեմության ժամկետն անցնելը և մասնավոր մեղադրանքի շրջանակներում տուժողի հետ հաշտվելը (երկու ամբաստանյալների նկատմամբ): Մյուս բոլոր դեպքերում դատարանի կողմից կայացվել է մեղադրական դատավճիռ:

Դատարանի կողմից պատիժը պայմանականորեն չի կիրառվել 18 ամբաստանյալի նկատմամբ, որոնցից միայն մեկի պաշտպանն է մասնավոր եղել: Իսկ օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ նշանակվել է ամբաստանյալներից 4-ի նկատմամբ, ընդ որում, բոլորի պաշտպանները հանրային են եղել:

Դիտարկման ենթարկված գործերով պաշտպանների կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել ամբաստանյալների 29 % դեպքերում: Ընդ որում, վերաքննիչ բողոքների 91.5 %-ը ներկայացվել է հանրային պաշտպանների և միայն 8.5 %-ը՝ մասնավոր պաշտպանների կողմից:

Եթե վերը նշված տվյալները համադրենք հանրային և մասնավոր պաշտպանների ներկայացվածության ընդհանուր տվյալների հետ (ամբաստանյալների 87.5 %-ն ունեցել է հանրային, իսկ 12.5 %-ը՝ մասնավոր պաշտպաններ), պարզ կդառնա, որ վերաքննիչ բողոքարկման հարցում հանրային պաշտպաններն առավել հետևողական են եղել:

Հատկանշական է, որ 13 ամբաստանյալների վերաբերյալ ներկայացված վճռաբեկ բողոքներից միայն մեկն է մասնավոր պաշտպանի կողմից ներկայացվել: Մյուս 12 դեպքերում բողոքները ներկայացվել են հանրային պաշտպանների կողմից:

Դիտարկված գործերի արդյունքներով կարելի է դուրս բերել հետևյալ օրինաչափությունները:

Առաջին ատյանի դատարանի դատավճիռները բողոքարկվում են հիմնականում պաշտպանության կողմից: Դիտարկված գործերից միայն **երկու** դեպքում է կայացված դատավճիռի դեմ բողոք ներկայացվել մեղադրող դատախազի կողմից, իսկ դատավճիռի դեմ բողոք տուժողի կողմից ներկայացվել է դիտարկման ենթարկված գործերից միայն մեկում: Մնացած դեպքերում առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացվել է պաշտպանության կողմից: Դիտարկված գործերից երկուսում վերաքննիչ բողոքը ներկայացվել է ամբաստանյալի կողմից: Մնացած բոլոր դեպքերում առաջին ատյանի դատավճիռի դեմ բողոքը ներկայացվել է պաշտպանի անունից:

Օրինակ 47.

Դիտարկման ենթարկված գործերից մեկով վերաքննիչ բողոքը հեղինակել էր անձամբ ամբաստանյալը: Պաշտպանը, ով ամբաստանյալին ներկայացնում էր մաս առաջին ատյանի դատարանում, բողոքին ծանոթ չէր: Պաշտպանը դատարանում ելույթով հանդես չեկավ, այլ միայն միացավ ամբաստանյալի ներկայացրած բողոքին:

(Գործ թիվ 127)

Վերաքննիչ քրեական դատարանում գործերի քննությունը մեծամասամբ իրականացվում է վճռաբեկության կարգով: Ապացույցների հետազոտություն, ըստ էության, որևէ գործով տեղի չի ունենում:

Ամբաստանյալների իրավունքների պարզաբանումը վերաքննիչ դատարանում նույնպես կրում է ձևական բնույթ: Դատարանը ճշտում է, թե արդյոք կա անհրաժեշտություն ամբաստանյալի իրավունքները պարզաբանելու, թե ոչ: Ամբաստանյալները, որպես կանոն, պատասխանում են, որ անհրաժեշտություն չկա, քանի որ ծանոթ են իրենց դատավարական իրավունքներին:

Դիտարկված գործերից միայն 6-ում է դատարանի կողմից ներկայացվել ամբաստանյալի բոլոր իրավունքները: Իրավունքների ներկայացումը, սակայն, կրում է ձևական բնույթ, քանի որ դատարանի կողմից պարզապես արագորեն ընթերցվում են ՔԴՕ 64-րդ հոդվածի դրույթները՝ առանց մանրամասնելու կամ պարզաբանելու (օրինակ՝ գործ թիվ 72):

Արձանագրվել են դեպքեր, երբ ամբաստանյալին պարզաբանվել է միայն պաշտպանության իրավունքը՝ պարզելու պաշտպան ունենալու նրա ցանկությունը և լուծելու վարույթին պաշտպանի մասնակցության հարցը:

Վերաքննիչ քրեական դատարանում գործերի քննության օրինաչափություններից է մաս կողմերին ռեպլիկի իրավունքից զրկելը: Դիտարկման ենթարկված գործերից 4-ում դատարանը զրկել է պաշտպանության կողմին ռեպլիկով հանդես գալու հնարավորությունից: Մյուս դեպքերում ռեպլիկով հանդես գալու անհրաժեշտություն կողմերը չեն ունեցել:

Օրինակ 48.

Դատարանի կողմից պաշտպանին արգելվել է հանդես գալ ռեպլիկով՝ արձանագրելով, որ մնան իրավունք վերաքննիչ դատարանում դատական քննության ընթացքում կողմը չունի:

(Գործ թիվ 52)

Սակայն ՔԴՕ 392-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանում դատական վիճաբանությունները տեղի են ունենում առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում դատական վիճաբանությունները կարգավորող 354-րդ հոդվածով: Միակ տարբերությունը, որն օրենքը նախատեսում է երկու ատյանի դատարաններում վիճաբանությունների իրականացման համար, առաջինը ելույթ ունեցող կողմի կարգավորման հարցն է: Եթե առաջին ատյանի դատարանում առաջինը ճառով հանդես է գալիս մեղադրող դատախազը, ապա վերաքննիչ դատարանում՝ բողոք բերող անձը: Կարգավորման մնացած պայմաններում դատական վիճաբանությունները վերաքննիչ ատյանում իրականացվում են նույն կանոններով ու փուլերով, ինչ առաջին ատյանի դատարանում: Հետևաբար, վերաքննիչ ատյանում դատական քննության ընթացքում կողմերն ունեն մաս ռեպլիկով հանդես գալու իրավունք:

Վերաքննիչ դատարանում քննության իրականացման տևողությունը բավականին կարճ է. դատական նիստը տեղի է ունենում հիմնականում մեկ դատական նիստով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատական նիստը հետաձգվում է կողմերի բացակայության, դատարանի ծանրաբեռնվածության և այլ պատճառներով: Վերաքննիչ ատյանում դիտարկման ենթարկված և ավարտված 23 գործերից 14-ի քննությունը տեղի է ունեցել դատական մեկ նիստում:

Դատարանի կողմից դատական ակտ կայացնելու համար խորհրդակցական սենյակում անցկացրած ժամանակը նույնպես բականանին կարճ է: Դիտարկումների ենթարկված գործերով դատական ակտ կայացնելու համար դատարանի կազմը խորհրդակցական սենյակում առավելագույնն անց է կացրել 30 րոպե: Արձանագրվել է դեպք, երբ դատարանը խորհրդակցական սենյակում անց է կացրել ընդամենը 4 րոպե (գործ թիվ 24):

Վերաքննիչ դատարանում քննության ընթացքում արձանագրվել են նաև ամբաստանյալի անմեղության կանխավարկածի խախտման փաստեր: Ամբաստանյալների նկատմամբ դատավորների ակնհայտ մեղադրական դիրքորոշումը, արհամարհական վերաբերմունքը ակնհայտորեն զգացվել է բոլոր դատական նիստերում: Ի լրումն դրա՝ արձանագրվել են դեպքեր, երբ դատարանն անուղղակիորեն ցուցադրել է նաև իր դիրքորոշումը կայացվելիք դատական ակտի առնչությամբ:

Օրինակ 49.

Դիտարկված գործերից մեկում ամբաստանյալը պահանջել էր բեկանել առաջին ատյանի դատարանի դատական ակտը և կայացնել արդարացման դատավճիռ: Դատարանի՝ խորհրդակցական սենյակ հեռանալիս նախագահող դատավորը հայտնեց, որ ամբաստանյալի երեխային բերեն՝ տեսնի հորը: Նման արտահայտությունից ներկաների համար պարզ դարձավ, որ դատարանը մերժելու է ներկայացված բողոքը: Արդյունքում դատարանի կողմից պաշտպանի բողոքը մերժվեց:

(Գործ թիվ 74)

Դիտարկման ենթարկված գործերը թույլ են տալիս փաստել, որ ներկայացված բողոքները վերաքննիչ դատարանի կողմից հիմնականում մերժվում են: Այսպես, մեղադրող դատախազների կողմից ներկայացված 2 բողոքներից բավարարվել է 1-ը, պաշտպանության կողմից ներկայացված բողոքներից լրիվ կամ մասնակիորեն բավարարվել է 4-ը: Բավարարվել է նաև տուժող կողմի ներկայացրած միակ վերաքննիչ բողոքը:

Սիսիստանյալների առնչությամբ վերաքննիչ քրեական դատարանի որոշումները²⁶⁵: Վճռաբեկ բողոքները ներկայացվել են պաշտպանության կողմից: Բոլոր բողոքները Վճռաբեկ դատարանի կողմից վերադարձվել են այն հիմնավորումներով, որ ներկայացված վճռաբեկ բողոքը չի համապատասխանում օրենսդրությամբ ներկայացված պահանջներին, հիմնավորված կամ բավարար չափով չեն պատճառաբանված՝ եզրահանգելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար կամ փաստարկված չէ, թե Վճռաբեկ դատարանի որ դատական ակտին է հակասում բողոքարկվող որոշումը: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ փաստարկված չէ նաև, որ դատարանի կողմից թույլ տված դատական սխալը կարող էր առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

²⁶⁵ Տվյալները վերաբերում են միայն ծրագրի շրջանակներում ավարտված գործերի քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած որոշումներին:

Փորձագիտական հարցազրույցների միջոցով բացահայտված հիմնախնդիրները

Պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման խոչընդոտները

Փորձագետները մատնանշել են ՀՀ-ում պաշտպանության իրավունքի իրացման՝ իրենց կարծիքով առավել այժմեական հիմնախնդիրները: Դրանք են.

Քաղաքացիների՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը. «Ամենալուրջ խոչընդոտն այն է, որ ամօհնը չեն պատկերացնում, թե ինչ կարգավիճակում են գտնվում: Շատ դեպքերում մինչև կասկածյալ լինելը անձը հանդես է գալիս որպես վկա, ու ինֆորմացիան իրենից դուրս է կորզվում»:

Որպես վկա հանդես եկող, բայց իրականում փաստացի մեղադրյալի կարգավիճակում գտնվող անձից ցուցմունքներ վերցնելը, դրանք հետագայում օգտագործվում են նրա դեմ. «Քննիչները երբեմն մանիպուլյացիոն միջոցներ են օգտագործում՝ վկային ասելով, որ նա կարող է ցուցմունք չտալ իր դեմ, սակայն պետք է տեղեկություններ հայտնի դեպքի մասին: Այդպիսով՝ անձը հանդես է գալիս որպես վկա, ինֆորմացիան ստացվում է և հետագայում դրվում է մեղադրանքի հիմքում»:

Մինչդառանկան վարույթի ընթացքում տեղ գտած հնարավոր բռնության մասին ուշ հայտարարելը. «... անձը դատարանում ասում է, որ ենթարկվել է բռնության, բայց ժամկետն արդեն անցել է, բռնության հետքեր չկան: Այսինքն, ըստ էության հնարավորություն չկա ապացուցել, որ դա եղել է: Արդյունքում՝ կամ լռում է, կամ սուտ է դուրս գալիս»:

Պաշտպան ունենալու իրավունքի մասին գիտելիքի բացակայությունը. «Երբ կանչում են քննիչի մոտ, իրավունքների մասին նորմալ չեն բացատրում, արձանագրությունը դեմ են տալիս, ասում են՝ ստեղ ստորագրի: Ներքևում էլ փոքր տառաչափով գրված է՝ «Հրաժարվում եմ պաշտպանից»: Էդտեղ էլ են ստորագրում ու դե հետո հիմնավորի, որ չես իմացել: Լինում է նաև, որ քննիչներն են համոզում, թե ինչ ես անում պաշտպան, ես ամեն ինչ կանեմ, ստեղ լուրջ բան չկա և այլն: Հետո էլ կանգնում են փաստի առաջ: Այսինքն՝ մարդկանց շրջանում պետք է հիմնավորվի պաշտպանի դերը»: «Եթե մեղադրյալն իմանա, որ արգելանքի վերցնելու պահից կարող է լռել, նախաքննության մարմինը հաջողություն չի ունենա»:

Պաշտպանի՝ գործի վարույթին ուշ ներգրավումը. «Պաշտպանն ի սկզբանե պետք է վարույթին մասնակցի: Եթե վարույթ իրականացնող մարմին կանչվելուց հետո անձն ասի, որ ես ցուցմունք չեմ տալիս առանց փաստաբանի ու էդ ընթացքում ոչինչ չստորագրի, գործերի մեծ մասն այլ ընթացք կունենան: Խնդիրների մեծ մասը հենց առանց փաստաբանի տված ցուցմունքներն են, որոնք հետո հերքելը բարդ է: Պետք է օրենսդրորեն ամրագրել, որ առանց փաստաբանի մասնակցության ինքնախոստովանական ցուցմունքների օգտագործումն անթույլատրելի է»:

Փորձագետների մեծամասնության կողմից հաստատվեց կազմակերպության նախորդ հետազոտություններում բացահայտված այն օրինաչափությունը, համաձայն որի՝ օրինաչափություն է նկատվում նախաքննության փուլում փաստաբանի՝ ներգրավված չլինելու և ինքնախոստովանական ցուցմունքների առկայության միջև:

«Որպես կանոն, եթե նախաքննության ժամանակ պաշտպան չկա, տրվում են ինքնախոստովանական ցուցմունքներ: Երբ դատարանում մեղադրյալը հրաժարվում է այդ ցուցմունքից, սովորաբար որպես հիմք է ընդունվում նույն այդ ցուցմունքը: Այս հարցի լուծումն օրենսդրորեն ճիշտ ձևով Ռուսաստանն է գտել: Այնտեղ օրենսդրորեն ամրագրված է, որ եթե ամբաստանյալը դատարանում հրաժարվում է նախաքննության ընթացքում տված ցուցմունքից և այդ ցուցմունքը չի տվել պաշտպանի ներկայությամբ, ապա այդ ցուցմունքը համարվում է անթույլատրելի օգտագործման համար», «Հիմնականում, երբ ձերբակալվում են, անմիջապես այնպիսի հարցեր են տալիս, որ ակամա ինքնախոստովանական ցուցմունք է դառնում: Հաճախ չեն տեղեկացնում, թե ինչ իրավունքներ ունի կասկածյալը, ինքն էլ ցուցմունքներ է տալիս», «Ես կասեի, որ ուղիղ համեմատական է (նկատի ունի փաստաբանի բացակայությունը և դրա հետ կապված՝ ինքնախոստովանական ցուցմունքի առկայությունը): Իրավունքները պատշաճ չեն բացատրվում, պարզաբանվում, կան դեպքեր, որ պարտադրում են, բռնություն են կիրառում», «Քննիչները նախ որպես վկա են հարցաքննում՝ զրկելով հարցաքննվողին համապատասխան կարգավիճակից, ըստ այդմ էլ՝ զրկելով իր դեմ ցուցմունք չտալու, պաշտպան ունենալու և այլ սահմանադրական իրավունքներից: Դրանով մեղադրանքը հաստատող ցուցմունք են կորցում: Այսինքն՝ քողարկված քրեական հետապնդում են իրականացնում, և այդ ցուցմունքն էլ դնում են մեղադրանքի հիմքում»:

Փորձագետները մատնանշում են նաև միջոցների և ժամանակի անբավարարությունը պաշտպանությանը նախապատրաստվելու համար: Մասնավորապես, փորձագետներն ընդգծում են պաշտպան-

յալին տեսակցելու խոչընդոտների մասին. *«Չեն արգելում տեսակցել, բայց կալանավորին ուշ են բերում տեսակցության: Լինում է, որ պաշտպանները հերթի մեջ կանգնած սպասում են, քե երբ է սենյակ ազատվելու, որպեսզի կարողանան տեսակցել: Ընդհանուր առմամբ, տեսակցելու գործընթացը շատ վատ է կազմակերպված: Նաև ՔԿՀ գնացող տրանսպորտ չկա, տաքսիով ենք գնում»:*

Միաժամանակ, հաշվի առնելով հանրային պաշտպանների աշխատանքային ծանրաբեռնվածությունը, դատական նիստերի մեծաքանակությունը, կալանավորված պաշտպանյալներին տեսակցելու և հաղորդակցվելու համար հիմնականում մեկ օր է նախատեսվում: Իսկ հաշվի առնելով, որ կալանավորվածները պահվում են «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, որտեղ տեսակցության խցիկները քիչ են, կալանավորված անձանց տեղափոխության վրա ծախսվում է բավականին երկար ժամանակ, ոչ բոլոր դեպքերում է հաջողվում հանդիպել պաշտպանյալներին, իսկ հանդիպման դեպքում՝ քննարկել բոլոր անհրաժեշտ հարցերը:

Մյուս կարևոր խնդիրը ժամկետների հետ է կապված, երբ պաշտպանը չի հասցնում պատրաստվել կալանավորման միջնորդության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելուն. *«... վարույթն իրականացնող մարմինը օրենքով նախատեսված 72 ժամվա ավարտին՝ վերջին րոպեներին, կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացնում: Ժամանակի բացակայության պատճառով պաշտպանը հնարավորություն չունի իր պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու»:*

Փորձագետներն անդրադարձել են նաև պաշտպանի կողմից ապացույցների ձեռք բերման հնարավորությունների սահմանափակմանը. *«... պաշտպանական կողմին պետք է ապացույց հավաքելու հնարավորություն տրամադրվի, ինչը մենք օրենսդրորեն չունենք: Պաշտպանը պետք է օժտված լինի ապացույցներ հավաքելու լիազորությամբ. եթե անհրաժեշտություն կա, անձանց հարցաքննել, դիմել փորձագետի՝ եզրակացություններ ստանալու և այլն»:* Այս խնդիրն ակտուալ է, քանի որ *«... ապացույցներ ձեռք բերելը շատ ավելի հեշտ է քննիչների համար, քան պաշտպանների: Օրինակ՝ ուզում եմ իմանալ, քե մարդն արդյո՞ք հատել է ՀՀ սահմանը, քե՞ ոչ, կամ հեռախոսազանգ կատարե՞լ է, քե՞ ոչ: Քննիչները հեշտ են ստանում մեծ ինֆորմացիան, իսկ պաշտպաններին մեկ-մեկ արհամարհում են, պատասխան չեն տալիս հարցումներին»:*

Ըստ փորձագետների՝ ակտուալ խնդիր է *դադարանում մրցակցության սկզբունքի պարբերական խախտումները:* Դրա դրսևորումներից է, օրինակ, պաշտպանական կողմի՝ վկաներ հրավիրելու՝ իրավունքի սահմանափակումը: Տարածված պրակտիկա է նաև վկայի ցուցմունքների հրապարակումը՝ առանց ապացուցելու, որ վկան չի կարող նիստին ներկա գտնվել: Սա մույնպես սահմանափակում է պաշտպանական կողմի՝ վկային անմիջականորեն հարցեր ուղղելու իրավունքը:

Որպես կանոն, ըստ փորձագետների, հիմնականում հետազոտվում են մեղադրող կողմի ապացույցները, իսկ պաշտպանության կողմի ներկայացրած փաստերը չեն ստուգվում և ուշադրության չեն արժանանում՝ չստանալով ապացույցի ուժ: Եվրոպական դատարանի կամ Վճռաբեկ դատարանի՝ պաշտպանական կողմի վկայակոչած որոշումները մույնպես, որպես կանոն, անտեսվում են դատարանի կողմից. *«Որպես իրավական փաստարկ բերվում են մեկնաբանություններ Եվրոպական դատարանից կամ Վճռաբեկ դատարանից, բայց դատարանը դրանց ոչ մի գնահատական չի տալիս, չի ասում, քե ինչու կիրառելի չի, ինչն ուղղակի իր պարտականությունների մեջ է մտնում: Փոխարենը՝ այլ բան է վկայակոչում»:*

Հաճախակի խախտվում է նաև ամբաստանյալի՝ ցանկացած պահի ցուցմունք տալու իրավունքը. *«... ասում են, որ երբ քո ժամանակը գա, այդ ժամանակ էլ ցուցմունք կտաս: Բայց նա իրավունք ունի ցուցմունք տալու ցանկացած պահի: Օրինակ՝ մի վկան ցուցմունք է տալիս, դրանից հետո, մինչև մյուս վկային անցնելը, ամբաստանյալը ցանկանում է կանգնել և ասել՝ այսինչն այսպես չի եղել, այլ կերպ է եղել: Դա նրա իրավունքն է, որը շատ հաճախ սահմանափակվում է»:*

Բավականին տարածված է նաև դատավորի կողմից էթիկական կոդեքսի խախտումը՝ վիրավորական բառերով ու արտահայտություններով ամբաստանյալի արժանապատվությունը նսեմացնելը, ամբաստանյալի հետ կոպիտ կամ բարձր ձայնով (գոռոռալով) խոսելը:

Պաշտպանից հրաժարվելու հիմնական պատճառները

Ըստ փորձագետների՝ նախաքննության փուլում պաշտպանից հրաժարվելու հիմնական պատճառն է հանդիսանում քննիչի հորդորը. *«... շատ են հրաժարվում նախաքննության մարմնի՝ քննիչի հորդորով, որ քեզ պաշտպան պետք չի, դու քեզ կարող ես պաշտպանել, դու ամենալավ պաշտպանն ես, եթե բան պետք լինի, ես կանեմ», «Քննիչները երբ իմանում են, որ նորմալ աշխատող փաստաբան է, ամեն ինչ անում են, որ մեղադրյալը հրաժարվի նրանից: Խոսում են փող տալու մասին, ասում են, որ պաշտպանին պետք է փող տաս, բայց էդքան չես կարա տաս, էդքան չես կարող ունենալ»:*

Նախաքննության փուլում պաշտպանից հրաժարվելու պատճառ կարող է լինել վերջինիս որդեգ-

րած մարտավարությունը. «... դա պայմանավորված է նախաքննության առանձնահատկությամբ, որտեղ փաստաբանի հնարավորություններն ավելի սահմանափակված են, քան դատաքննության ժամանակ: Փաստաբանները նախաքննության փուլում ավելի պասիվ մարտավարություն են ընտրում, որն էլ միգուցե ազդում է պաշտպանյալի համոզմունքի վրա. վերջինս հրաժարվում է պաշտպանից»:

Ընդ որում, պաշտպանից հրաժարվելու դեպքերն առավելապես տեղ են գտնում զինծառայողների մասնակցությամբ գործերում. «Նախաքննության ընթացքում ամենաշատը հրաժարվում են զինվորական գործերում: Շատ տխուր փաստ է, որովհետև մտնում են սենյակ, նստած է մեղադրյալը՝ գլուխը կախ, քննիչը կողքից թարս է նայում, և զինվորն ասում է, որ հրաժարվում է պաշտպանությունից: Հարցնում են՝ ինչու՞ ես հրաժարվում, ա՛խր նորմալ կարողա՞լ չգիտես, չես կարող քեզ պաշտպանել, բայց բան չի ասում: Քննիչը կողքից հեզմանքով հարցնում է՝ ուզո՞ւմ ես պաշտպանին, ասում է՝ չէ», «Չինվորականներն են հիմնականում հանրային պաշտպաններից հրաժարվում: Այնպիսի տպավորություն է, որ ինչ-որ մի տեղ սովորեցրել են, որ պետք է հրաժարվի», «Չինվորականների նախաքննության ժամանակ դա (ի նկատի ունի պաշտպանից հրաժարվելը) համատարած բնույթ է կրում»:

Գատաքննության փուլում ամբաստանյալի վրա կարող են ազդեցություն ունենալ մեղադրող կողմը և դատաբանը. «... այ այդպիսի դատավոր է, օրինակ,-ը, ով ամբաստանյալների վրա ճնշում է գործադրում, դատաքննության ժամանակ ամբաստանյալներին սաստում է և ասում՝ դուք չե՞ք կարող ձեզ պաշտպանել, որ պաշտպան եք ուզում»:

Հանրային պաշտպաններից հրաժարման պատճառներից է նաև ամբաստանյալի/նրա ընտանիքի կողմից վճարովի իրավաբանական ծառայություն ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը. «Հրաժարում կարող է լինել նաև այն պատճառով, որ սկզբում ունեցել են հանրային պաշտպան, որովհետև գումարային խնդիրներ են ունեցել: Իսկ հետո գումար են հայթայթել և անվճար իրավաբանական օգնության կարիք այլևս չեն գտնում»:

Ըստ փորձագետների՝ նման որոշման կայացման մեջ դեր ունի նաև հանրային պաշտպանի գրասենյակի/անվճար իրավաբանական ծառայության նկատմամբ առկա հանրային անվստահությունը. «Մարդկանց մեջ այս մտածելակերպը կա՝ եթե անձին չես վարձատրում, նա կարող է լավ չաշխատել», «Հանրային պաշտպանները երբեմն ասոցացվում են պետության հետ, որ նրանք պետության ներկայացուցիչներ են: Այդ պատճառով էլ վստահություն չեն առաջացնում»:

Հետաքրքիր է, որ պաշտպանությունից հրաժարվելու պատճառ կարող է լինել նաև... որակյալ պաշտպանությունն ու պաշտպանի առավել ջանասիրտությունը: Նման մի դեպք է իր պրակտիկայից հիշատակել փորձագետ փաստաբաններից մեկը. «Այսպիսի բան էլ ասեմ՝ կարող է հրաժարվեն, եթե պաշտպանը շատ լավ է պաշտպանում մեղադրյալին: Մեղադրողը մոտենում է և մեղադրյալին ասում է, որ պաշտպանից հրաժարվի, դրա փոխարեն մեղմ պատիժ կնշանակի: Մի հնչել գործում բազմաթիվ ամբաստանյալներից մեկին ես էի պաշտպանում: Գատաքննության ընթացքում օրենքով սահմանված կարգով միջնորդություններ էի անում, առարկում էի և այլն: Օրերից մի օր, երբ վիճաբանության փուլն էինք մտնում, պաշտպանյալս ասաց, որ շատ գոհ է իմ աշխատանքից, բայց իրեն ասել են, որ ինքը հրաժարվի, թե չէ իր նկատմամբ ազատագրկման տեսքով պատիժ կպահանջեն: Այնպես որ լավ պաշտպանությունից էլ կարող են հրաժարվել»:

Պաշտպանից հրաժարվելու ոչ շատ տարածված պատճառ է նաև գողական վարքագծի դրսևորումը/կրկնօրինակումը. «... շատ ժամանակ գողական վարքագիծ են դրսևորում մեղադրյալները, որ իրենց ոչ մի պաշտպան պետք չէ: Իհարկե, այս պահին դա քիչ է լինում»:

Ակտուալ խնդիր է նաև դատաբանի կողմից տվյալ պաշտպանից հրաժարվելու հանգամանքը որպես ընդհանրապես պաշտպան ունենալուց հրաժարում դիտարկելը: Փորձագետները դժվարացան նշել այդ խնդրի տարածվածությունը, սակայն հաստատեցին պրակտիկայում դրա առկայությունը. «Չունեն վիճակագրական տվյալներ, բայց ես մի քանի դեպքերի եմ տեղյակ, երբ մեղադրյալը մի պաշտպանից հրաժարվել է, ցանկացել է մյուս պաշտպանին: Երբ մյուս պաշտպանը հաջորդ նիստին չի եկել կամ ինչ-ինչ այլ պատճառներով դատարանը դիտել է նախորդ պաշտպանից հրաժարվելը որպես որևէ այլ պաշտպան ունենալուց հրաժարում: Այս պայմաններում գործի քննությունը մինչև վերջ շարունակվել է առանց պաշտպանի ներգրավման»:

Անվճար իրավաբանական օգնության ապահովման օրենսդրական և պրակտիկ բնույթի հիմնախնդիրները

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման գործընթացում փորձագետների մեծ մասն առանձնացրել է կասկածյալի կամ մեղադրյալի գույքային դրության հիմնավորման հիմնախնդիրը, քանի որ այն օրենքով չի կարգավորվում, հստակ չէ «անվճարունակ» հասկացության պարզաբանումը.

«Չունենք աղքատության մասին օրենք, ինչ-որ մարմին: Անձի հայտարարությունն այդ մասին բավարար է, որ այն ընդունվի: Չունենք ինչ-որ աղքատության շեմ, հետևաբար զուտ անձի հայտարարությունը հիմք է ընդունվում», «.... պրակտիկայում հետևյալն է, որ եթե դիմում է տրվում ու ցանկանում է հանրային պաշտպան, չի մերժվում»: Սակայն փորձագետների մի մասն այն կարծիքին էր, որ *«.... այս իրավիճակը բխում է մեղադրյալների շահերից, որովհետև օրենքի հատկության դեպքում վճարունակ համարվող շատ մեղադրյալներ իրականում կարող են դժվարանալ մասնավոր փաստաբան վարձելու հարցում: Իսկ այժմյան պայմաններում բոլոր դիմողներին սովորաբար հատկացվում է հանրային պաշտպան»:* Սակայն այս հանգամանքը նաև չարաշահումների տեղիք է տալիս, քանի որ իրականում վճարունակ մեղադրյալների համար դժվար չէ ներկայացնել սեփական անվճարունակությունը հաստատող տեղեկանք. *«Անվճարունակության միակ ապացույցը տեղեկանքն է ԺԵԿ-ից: Իսկ իմանալով մեր իրականությունը՝ գիտենք, որ այդպիսի տեղեկանք դժվար չի բերել: Դատարաններն ու նախաքննության մարմիններն էլ իրենց հերթին բավարար չափով չեն էլ խորանում այդ հարցի մեջ: Իմ կարծիքով դա վատ չէ, բխում է անձանց շահերից (ի նկատի ունի անվճար իրավաբանական օգնություն ստանալու ոչ բարդ ընթացակարգը)»:* *«Օրենսդրորեն երևի թե պետք է որոշակի փաստաթղթեր ներկայացվի անձի վճարունակության հետ կապված, գույքային դրության, աշխատավարձի և այլն, և այլն: Ու երևի միասնական տեղեկատվական աղբյուր պետք է լինի»:*

Մյուս կարևոր խնդիրը ՀՀ-ում հանրային պաշտպանների ոչ արդյունավետ բաշխումն է և դրանից բխող անհամաչափ անհատական ծանրաբեռնվածությունը. *«Մի քանի հանրային պաշտպաններ երբեմն ամսվա ընթացքում մի քանի գործ են ունենում, իսկ մյուսները (հատկապես մարզերում մեկ փաստաբանի առկայության դեպքում) չեն կարողանում հասցնել լիարժեք կատարել իրենց աշխատանքը»:* *«Հանրային պաշտպանությունն անարդյունավետ է աշխատում, քանի որ ռեսուրսների պակաս կա, ռեսուրսների ոչ ճիշտ բաշխում: Չկա այնպիսի համակարգ, որը կորոշի, թե փաստաբաններն ինչ քանակով որտեղ պետք է բաշխվեն: Իրենք են դա որոշում, իսկ պետությունը մասնակցություն չունի: Բայց չէ՞ որ պետությունն է վճարում, հետևաբար, պետությունը պետք է ռեսուրսների բաշխման հարցում մասնակցություն ունենա: Շատ երկրներում գոյություն ունեն խորհուրդներ՝ փաստաբանների և պետության մասնակցությամբ: Եթե մեզ մոտ դա գործի, կարող է ավելի արդյունավետ լինել»:* Մարգարիտ Խոշոր քաղաքներում մեկ փաստաբանի մշտական ներկայությունը, ըստ փորձագետներից մեկի, կլուծի բազմաթիվ խնդիրներ:

Հատկանշական է, որ հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության պատճառներից մեկն էլ վերը նկարագրված նախորդ խնդիրն է՝ անվճարունակության հատակ չափանիշերի բացակայությունը: Անվճար իրավաբանական օգնությունը դեպքերի մեծամասնությունում անխտրական ձևով է տրամադրվում, ինչն էլ բարձրացնում է հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը:

Անհատական բարձր ծանրաբեռնվածությունն ուղղակիորեն ազդում է անվճար իրավաբանական օգնության որակի վրա. *«Մի հանրային պաշտպանն ունի քսան քրեական գործի վարույթ: Ինքն արդեն ավտոմատ աշխատանք է կատարում. զանգում են, վազում է գինվորական դատախազության քննիչի մոտ, ստորագրում է, վազում է ՔԿՀ, հանդիպում է պաշտպանյալի հետ, վազում է ռատիկանություն, որովհետև մարդ են բերման ենթարկել: Այդ ծանրաբեռնվածության պայմաններում հնարավոր չէ կատարել որակյալ աշխատանք: Եթե նայենք փաստաբանության էթիկայի կանոնակարգության օրենքը, փաստաբանը պարտավոր է վերցնել այնքան գործ, որքան որ ինքը կարող է վարել»:*

Նախկինում գրանցվել են դեպքեր, երբ ամբաստանյալի պաշտպանությունն իրականացվել է միաժամանակ երկու հանրային պաշտպանների կողմից: Ներկայումս նման հնարավորության հավանականությունը հանրային պաշտպանները ցածր են գնահատում, քանի որ հանրային պաշտպանի անհատական ծանրաբեռնվածությունն այսօր բավականին բարձր է և շարունակում է աճել:

Միաժամանակ, ելնելով ամբաստանյալների շահերի միջև հակասությունների խնդրից՝ մի քանի ամբաստանյալների ներգրավվածության պարագայում ցանկալի չէ, որ միևնույն պաշտպանը մի քանի ամբաստանյալների շահեր ներկայացնի: Ըստ փորձագետի՝ եթե նույնիսկ շահերի բախում չի նկատվում սկզբնական շրջանում, այն կարող է հանդես գալ դատական քննության հետագա փուլերում. *«Մեր օրենսդրությունն ասում է, որ մի քանի անձ կարող են նույն պաշտպանն ունենալ, եթե շահերի մեջ հակասություն չկա: Բայց շատ հաճախ այդ հակասությունը սկզբնական փուլում չի էլ լինում, հետո է առաջ գալիս: Իմ կարծիքով մի անձը միշտ պետք է ունենա մի պաշտպան, որովհետև միշտ էլ այդ պոտենցիալ շահերի բախումը կա»:*

Ըստ փորձագետներից մեկի՝ հանրային պաշտպանի գրասենյակի գերծանրաբեռնվածությունն աստիճանաբար ազդում է պաշտպանության որակի վրա, ինչը կարող է գրասենյակի նկատմամբ անվստահության խորացման պատճառ դառնալ:

Հանրային և մասնավոր պաշտպանների կողմից տրամադրվող պաշտպանության որակների տարբերությունը

Փորձագետներից մեկն այն կարծիքն է հայտնել, որ ամբաստանյալի անձի բնութագրիչներն առավել ազդեցություն ունեն հանրային պաշտպանների մատուցած ծառայության, քան մասնավոր պաշտպանության որակի վրա. *«Կարծում եմ՝ հանրային պաշտպանները հիմնվում են անձի անհատական հատկանիշների վրա. եթե անձը նախկինում դատապարտված է, արատավորված է, ապա հանրային պաշտպանի պատվիրությունն ակնհայտ է: Իսկ եթե նա վստահ է, որ կարելի է կատարած հանցանքը մեղմել, ապա ջանասիրություն է դրսևորում»:* Մինչդեռ մասնավոր պաշտպանության պարագայում փաստաբանը վճարովի ծառայություն է մատուցում՝ հավասարաչափ ջանասեր գտնվելով բոլոր հնարավոր դեպքերում:

Հանրային պաշտպանության որակի վրա ազդող հնարավոր բացասական գործոն է դիտարկվել թե՛ վարձատրության չափը (առավել ցածր, քան մասնավոր փաստաբանության պարագայում), թե՛ դրա կայուն, անփոփոխ բնույթը (վարձատրության չափը կախված չէ գործերի քանակից և պաշտպանության որակից): Այս պայմաններում հանրային պաշտպանի աշխատանքային մոտիվացիայի և շահագրգռվածության նվազեցման ռիսկ է առկա:

Հաշվի առնելով նշված սահմանափակումները՝ փորձագետները հանրային պաշտպանի աշխատանքն առավել նախընտրելի են համարել երիտասարդ և նորավարտ իրավաբանների համար, ովքեր դեռևս պատրաստակամ են աշխատելու անհատական խանդավառության (էնտուզիազմի) շնորհիվ (առանց էական ֆինանսական ակնկալիքների):

Պաշտպանի ջանասիրության վրա ազդող հնարավոր գործոններից է Հայաստանի դատական համակարգում մեղադրական դատավճիռների տարածվածությունը, ինչը համակարգային խնդիր է և նույնպիսի բացասական ազդեցություն ունի նաև մասնավոր փաստաբանության վրա:

Հնարավոր է, որ վերն առանձնացված խնդիրները նաև փորձագետների անձնական կարծրատիպերի արտացոլումն են հանդիսանում: Այնուամենայնիվ, ակնհայտ է այս պատկերացումների (անգամ կարծրատիպացված) ազդեցությունը հանրային պաշտպանության որակի նկատմամբ առկա հասարակական վստահության վրա:

Հանրային պաշտպանի ինստիտուտի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկները

Փորձագետներն առաջարկներ են ներկայացրել՝ ուղղված հանրային պաշտպանի ինստիտուտի արդյունավետության բարձրացմանն ու զարգացմանը:

Տարածված առաջարկների շարքում է հանրային պաշտպանների աշխատանքային ծանրաբեռնվածության հարցի կարգավորումը, պաշտպանների միջև գործերի առավել համաչափ, կանխատեսելի և արդյունավետ բաշխման ապահովումը:

Ըստ փորձագետների՝ հարկավոր է ապահովել հանրային պաշտպանների բնականոն սերնդափոխությունը, գրասենյակի համալրումն առավել երիտասարդ տարիքի մասնագետներով: Առաջարկվեց նաև իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար սահմանել պարտադիր կամ կամընտրական մասնակցություն հանրային պաշտպանի գրասենյակի կողմից մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների մատուցմանը:

Փորձագետներից մեկի առաջարկը վերաբերում էր մասնավոր փաստաբանների կողմից անվճար իրավաբանական ծառայությունների մատուցմանը: Ըստ նրա՝ պետք է խթանել փաստաբանների կողմից սեփական նախաձեռնությամբ անվճար իրավաբանական օգնության տրամադրումը: Հաճախ փաստաբանները սոցիալական որոշակի գործունեություն ծավալելու ցանկություն են ունենում, սակայն կաշկանդված են հարկային հաշվետվությունների ներկայացման պարտականությամբ (պետք է հիմնավորեն, ապացուցեն մատուցված ծառայության անվճար լինելը): Այս խնդրի լուծումը թույլ կտա փաստաբաններին առավել ազատ գտնվել իրենց հետաքրքրող գործերի վարման հարցում, անգամ այն դեպքում, երբ ամբաստանյալը վճարունակ չէ: Մի կողմից՝ սա կխթանի փաստաբանական հանրության սոցիալական պատասխանատվության զարգացմանն ու ամրապնդմանը, գործերի ընտրության մեջ բացի ֆինանսական բաղադրիչից նաև սեփական մասնագիտական հետաքրքրությունները հաշվի առնելը, իսկ մյուս կողմից՝ պաշտպանյալն անվճար, սակայն որակյալ փաստաբանական ծառայությունների ստացման հնարավորություն կունենա:

Փորձագետներից մեկի առաջարկը վերաբերում էր «հերթապահ փաստաբանի ինստիտուտի» ներդրմանը: Ըստ այդ առաջարկի՝ *«... կարող են լինել փաստաբաններ, որոնք որոշ ժամանակ կաշ-*

խատեն ոստիկանության կամ ինչ-որ բաժանմունքներին կից: Բայց, ըստ նրա, ոչ մշտական, որպեսզի սերտաճման խնդիր չլինի, ուստի պետք է անընդհատ փոխվեն: Սրանով հնարավորություն կստեղծվի տեղում արագ փաստաբանական օգնություն տրամադրել»:

Նույն փորձագետի մեկ այլ առաջարկ վերաբերում էր հանրային պաշտպանության «ճկունության» բարձրացմանը, ինչին կարող է նպաստել կես դրույքաչափով աշխատող պաշտպանների թվաքանակի ավելացումը:

Հանրային պաշտպանների և հանրային պաշտպանի գրասենյակի կարիքները

Հանրային պաշտպանների և հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքի արդյունավետության վրա ազդող խնդիրները կարելի է առանձնացնել հետևյալ խմբերում.

1. Ոչ բավարար ֆինանսական ռեսուրսներ, որոնցից բխում են.

Հանրային պաշտպանի գրասենյակի շենքային և տարածքային պայմանների խնդիրներ.

Հանրային պաշտպանի գրասենյակի ներկայիս տեղակայումը, տարածքը թույլ չեն տալիս գրասենյակում աշխատող փաստաբաններին պատշաճորեն կատարել իրենց աշխատանքային պարտականությունները: Դա պայմանավորված է այն հանգամանով, որ գրասենյակն իր տարածքով բավականին փոքր է, և փաստաբաններն առանձնացված աշխատասենյակների և նույնիսկ սեփական աշխատասեղանի կարիք ունեն: Մի շարք պաշտպանների կողմից արձանագրվել է, որ «... տանն ենք աշխատում՝ աշխատանքային ժամերից հետո, քանի որ գրասենյակում հնարավոր չէ աշխատել»:

Հանրային պաշտպանների տրանսպորտային խնդիրներ.

Հանրային պաշտպանների կողմից կատարված տրանսպորտային ծախսերի փոխհատուցում հանրային պաշտպանի գրասենյակի բյուջեով նախատեսված է, սակայն փոխհատուցման ենթակա է միայն հասարակական տրանսպորտի միջոցներով երթևեկության գումարը՝ այն էլ համապատասխան կտրոնների ներկայացման դեպքում: Պաշտպաններն արձանագրում են, որ դրանք ձեռք բերելը պրակտիկորեն անհնար է: Մյուս կողմից, հասարակական տրանսպորտն առավել ժամանակատար է, ինչից ելնելով՝ պաշտպաններն օգտվում են կամ սեփական փոխադրամիջոցներից, կամ տաքսիների ծառայություններից, որոնց վրա ծախսված գումարը չի փոխհատուցվում:

Տեխնիկական խնդիրներ.

Հանրային պաշտպանի՝ քրեական գործով վարույթին ներգրավման համար անհրաժեշտ է հանրային պաշտպանի ղեկավարի որոշումը, սակայն մարզերում գործող փաստաբանների դեպքում որոշման ստացումը պահանջում է ժամանակ, որի ընթացքում անձի նկատմամբ կատարվում են համապատասխան քննչական կամ դատավարական գործողություններ: Որպեսզի ապահովվի պաշտպանի ներգրավումը վարույթին, մարզերում գործող հանրային պաշտպաններն ունենում են հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից հաստատված որոշումներ, որոնցով վերջիններս ներգրավվում են կոնկրետ գործով վարույթին: Հանրային պաշտպանների գործունեության թափանցիկությունն ապահովելու համար անհրաժեշտ է հանրային պաշտպանի գրասենյակի կապը վարույթն իրականացնող մարմինների և մարզերում գործող հանրային պաշտպանների հետ ապահովել ժամանակակից տեխնիկական միջոցներով (օրինակ՝ ֆաքսով):

Հանրային պաշտպանների վարչապրոբլեմներ.

Ըստ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի՝ հանրային պաշտպանների վարձատրությունը կատարվում է Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազի դրույքաչափին համապատասխան՝ դրանով փորձելով ապահովել հանրային պաշտպանների և դատախազների վարձատրության հավասարությունը: Միաժամանակ, սակայն, ի լրումն օրենքով սահմանված դրույքաչափի՝ դատախազների վարձատրությունը ներառում է նաև ընթացիկ պարգևատրումները, այսպես կոչված 13-րդ աշխատավարձը, որպիսի պայմաններում խոսել վարձատրության հավասարության մասին անհնարին է:

Հանրային պաշտպանների վարձատրության չափը որոշելիս հաշվի չի առնվում կոնկրետ փաստաբանի մասնագիտական ծանրաբեռնվածությունը, վարած գործի բարդությունը, իրականացրած պաշտպանության որակը, գրանցված արդյունքը, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում պաշտպանության իրականացման արդյունավետության վրա:

2. Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությամբ պայմանավորված խնդիրներ

Հանրապետությունում առկա է հանրային պաշտպանների անհամաչափ բաշխվածություն Երևան քաղաքի և մարզերի միջև, որից բխում է նաև հանրային պաշտպանների անհամաչափ ծանրաբեռնվածությունը: Միաժամանակ, հաշվի առնելով փաստաբանների միջև գործերի բաշխման ներկայիս մեխանիզմը՝ որոշ փաստաբանների աշխատանքային ծանրաբեռնվածությունն էականորեն գերազանցում է մյուսներին: Պրակտիկայում հանրային պաշտպանները շատ դեպքերում չեն կարողանում նախապես ծանոթանալ գործի նյութերին նիստի ժամանակ՝ դատարանում, կամ էլ դատարանը նրանց ժամանակ է տրամադրում, սակայն պարզ չէ, թե հանրային պաշտպաններն ինչքանով են կարողանում ամբողջովին ծանոթանալ գործին, դրա բոլոր մանրամասնություններին, երբ ծանրաբեռնվածությունը բավական մեծ է:

Սույն խնդիրը միանշանակ իր բացասական ազդեցությունն է ունենում պաշտպանության որակի վրա, ինչը կարող է գրասենյակի նկատմամբ անվստահության խորացման պատճառ դառնալ:

Ավելին՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ բավականին մեծանալու է հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը, քանի որ, դրանց համաձայն, անվճար իրավաբանական օգնությունը ներառում է ոչ միայն քրեական, այլև քաղաքացիական և վարչական բոլոր տեսակի գործերը: Իսկ քրեական գործերով անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվելու է ոչ միայն կասկածյալին/մեղադրյալին, այլև վարույթին ներգրավված ցանկացած անձի, ով կհամապատասխանի օրենքով նախատեսված չափանիշերին: Սույն պայմաններում արդեն արդիական է դառնում հանրային պաշտպանի գրասենյակում փաստաբանների մասնագիտացման, նրանց միջև գործերի բաշխման, նույն գործով հակառակ շահեր ներկայացնող փաստաբանների միջև տեղեկությունների գաղտնիության ապահովման հստակ կանոնների մշակումը:

3. Հանրային պաշտպանների մասնագիտական վերապատրաստման խնդիրներ

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ փաստաբանները, այդ թվում և հանրային պաշտպանները պարտավոր են անցնել պալատի կողմից սահմանված ժամանակացույցով նախատեսված վերապատրաստումներ: Սակայն ուսումնասիրելով փաստաբաններին առաջարկվող նախապատրաստման դասընթացների բովանդակությունը՝ կարելի է պնդել, որ դրանք չեն ընդգրկում լայն ոլորտներ, երևարատև ժամանակահատվածում վերապատրաստման դասընթացների թեմաները չեն փոփոխվում և հաշվի չեն առնվում փաստաբանների կարիքները, հետաքրքրությունները և համապատասխան թեմաներով դասընթացների անցկացման անհրաժեշտությունը: Սույն պայմաններում փաստաբանների վերապատրաստումը կրում է գուտ ձևական բնույթ՝ ուղղված ժամաքանակի լրացմանն ու կարգապահական պատասխանատվությունից խուսափելուն:

Եզրահանգումներ

Ծրագրի շրջանակներում դատական քննության դիտարկման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել քրեական գործերի դատական քննության, ամբաստանյալների պաշտպանության իրավունքի իրացման օրինաչափությունները, անվճար իրավաբանական օգնության տրամադրման և իրականացման խոչընդոտները, առկա օրենսդրական և պրակտիկ խնդիրները, որոնց կարգավորումը և հաղթահարումը թույլ կտա ապահովել հանցագործության մեջ մեղադրվող անձանց պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը՝ նպաստելով ՀՀ քրեական արդարադատության համակարգի հետագա զարգացմանը:

Ծրագրի շրջանակներում դիտարկված 109 գործերում ընդգրկված են եղել 178 ամբաստանյալներ: Ամբաստանյալների 9 %-ը կանայք են եղել, 11-ը հանցանքը կատարելու պահին եղել են անչափահաս:

Կատարված դիտարկումներն ընդգրկել են բոլոր դատարանները: Միաժամանակ, առավել մեծ թվով գործեր դիտարկվել են Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում: Հավասար ցուցանիշներով (10.1 %) հաջորդում են Արարատ և Վայոց Ձորի ու Արաբկիր և Քանաքեռ-Զեյթունի դատարանները:

Դիտարկված գործերից մոտ 20 %-ի դեպքում դատական քննությունը տեղի է ունեցել մեկ դատական նիստի ընթացքում: Դրանք հիմնականում այն գործերն են, որոնք տեղի են ունենում արագացված կարգով դատական քննության պայմաններում, սակայն նույնիսկ այն դեպքերում, երբ որոշ պատճառներից ելնելով տեղի են ունենում դատական նիստերի հետաձգումներ և նշանակվում են 3-4 դատական նիստեր, բուն դատական քննությունն անցկացվում է մեկ նիստի շրջանակներում: Ընդհանուր կարգով քննված գործերով ամբաստանյալների 18 %-ի պարագայում դատական նիստերի քանակը չի գերազանցել 3-ը:

Կատարված դիտարկումները թույլ են տալիս վեր հանել հանցագործության մեջ մեղադրվող անձի պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սահմանափակումները և խախտումները:

Մասնավորապես, ցածր է հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Այս առումով խոցելի են կասկածյալի կարգավիճակում գտնվող անձինք: Պրակտիկայում կասկածյալների և մեղադրյալների իրավունքների պարզաբանում վարույթն իրականացնող մարմինների կողմից պատշաճորեն չի իրականացվում: Նման պայմաններում առաջնահերթ խնդիրն է լռելու և իր դեմ ցուցմունք չտալու և պաշտպան ունենալու իրավունքների վերաբերյալ իրազեկումը, ինչի պատճառով վարույթի սկզբնական փուլում պաշտպան չի ներգրավվում և հենց այդ փուլում առանց պաշտպանի մասնակցության ձեռք են բերվում ինքնախոստովանական ցուցմունքներ, որոնք հետագայում դրվում են մեղադրական դատավճռի հիմքում:

Առավել խնդրահարույց է վարույթի նախնական շրջանում որպես վկա հարցաքննվող անձանց իրավունքների պաշտպանությունը: Ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ենթարկվելու սպառնալիքով վկաներն իրականում փաստացիորեն հարցաքննվում են կասկածյալի կարգավիճակում: Վկայի կարգավիճակում ստացված և սեփական մեղքը հաստատող ցուցմունքները դրվում են մեղադրանքի հիմքում:

Դատական քննության ընթացքում նույնպես ամբաստանյալի իրավունքների պարզաբանումը կրում է ձևական բնույթ: Ըստ դիտարկումների արդյունքների՝ դատարանների կողմից 75.8 % դեպքերում ամբաստանյալներին բանավոր ներկայացվել են իրենց իրավունքներն ու պարտականությունները, սակայն դրանք ոչ թե բացատրվում, այլ պարզապես թվարկվում են, մինչդեռ իրավունքների ու պարտականությունների էությունը դժվար ըմբռնելի է համապատասխան իրավաբանական գիտելիքներ չունեցող անձանց համար: Նույնիսկ այն դեպքում, երբ ամբաստանյալը հավաստում է, որ հասկանում է իր իրավունքները և պարտականությունները, մնան հավաստիացման անկեղծությունը խիստ կասկածելի է:

Սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը պատճառ է հանդիսանում նաև նախնական քննության ընթացքում հնարավոր բռնությունների վերաբերյալ ուշ հայտնելու, երբ բռնության հնարավոր հետքերն արդեն պահպանված չէին կարող լինել: Կիրառված բռնությունների կամ ճնշումների վերաբերյալ հայտարարությունը հիմնականում հնչեցվում է դատական քննության ընթացքում, ինչը, սակայն, դատարանի կողմից դիտարկվում է որպես ամբաստանյալի կողմից պատասխանատվությունից խուսափելու միջոց:

Դիտարկման արդյունքները ևս մեկ անգամ փաստում են, որ քրեական վարույթի ընթացքում շարունակվում է բարձր մնալ կալանավորման կիրառման ցուցանիշը: Դիտարկված գործերում ամբաստանյալների 50 %-ից ավելիի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված է եղել կալանավորումը: Կալանավորման կիրառման առնչությամբ փաստաբանների կողմից բարձրացվում են մի շարք խնդիր-

ներ. նախ՝ նրանք արձանագրում են, որ մինչդատական վարույթի ընթացքում բավարար ժամանակ չեն ունենում նախապատրաստվելու միջնորդության քննությանը: Մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի նկատմամբ կալանավորումը կիրառվում է նաև որպես ճնշման միջոց՝ մեղքը չընդունելու և ցուցմունք տալուց հրաժարվելու դեպքերում:

Պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացմանը խոչընդոտում է նաև պաշտպանյալին տեսակցելու և խորհրդակցելու հնարավորության սահմանափակումը: Թեև տեսակցությունները չեն արգելվում, սակայն տեսակցությունների գործընթացը վատ է կազմակերպված: Տեսակցությունները խլում են բավականին երկար ժամանակ, քանի որ քրեակատարողական հիմնարկներում տեսակցության խցիկների քանակը փոքր է, պաշտպանները ստիպված են սպասել, մինչև խցիկները կազատվեն և իրենց պաշտպանյալը կներկայացվի տեսակցության:

Դատական դիտարկումների արդյունքները հիմնավորում են այն տեսակետը, որ ամբաստանյալները դատական քննության փուլում վարույթին ներգրավված պաշտպաններին առաջին անգամ հանդիպում են դատական քննության ժամանակ, ինչով բացատրվում է միասնական պաշտպանական մարտավարության բացակայությունը: Դիտարկված գործերից 10-ում արձանագրվել է պաշտպանի և պաշտպանյալի գործողությունների անհամաձայնություն:

Քրեական վարույթի ընթացքում խնդիր է նաև պաշտպանների կողմից քրեական գործի նյութերին ծանոթանալը, քանի որ պրակտիկայում դատարանների կողմից վարույթին դատական քննության փուլում ներգրավված պաշտպաններին տրամադրվում են ոչ թե քրեական գործի ամբողջական նյութերը, այլ միայն առանձին փաստաթղթեր: Քրեական գործի նյութերը պաշտպանության կողմին տրամադրվում է մեկ օրինակով:

Քրեական վարույթի նախնական քննության ընթացքում մեծ թիվ են կազմում առանց պաշտպանի հանդես եկող մեղադրյալները: Պաշտպանից հրաժարվելու պատճառները տարբեր են: Ինչպես դիտարկումների, այնպես էլ փորձագետների հարցազրույցների արդյունքները փաստում են, որ քրեական գործով նախնական քննության ընթացքում պաշտպանի, հատկապես հանրային պաշտպանի ծառայություններից հրաժարվում են վարույթն իրականացնող մարմնի հորդորով: Մեղադրյալները հանրային պաշտպանների ծառայություններից հրաժարվում են նաև նրանց մատուցած ծառայությունների որակի նկատմամբ անվստահության պատճառով, ի դեմս պաշտպանի խնդիրներից խուսափելու անհրաժեշտությունից ելնելով, մասնավոր փաստաբանի ծառայություններից օգտվելու հնարավորության առաջացման դեպքերում: Դիտարկումների ընթացքում ձեռք բերված տվյալների համաձայն՝ նախնական քննության փուլում ամբաստանյալների առնվազն 35 %-ը (սույն տվյալն ամբողջական չէ, քանի որ սույն հարցով ուղղակի տեղեկատվության ստացման հնարավորություն չի եղել) հրաժարվել են պաշտպանից: Մինչդատական վարույթում պաշտպանից հրաժարվելու պատճառների իրական պատկերը բացահայտելը խրթին է, քանի որ համապատասխան արձանագրություններում օգտագործվում է ստանդարտացված «ոչ նյութական պատճառներով» արտահայտությունը, ինչով վարույթն իրականացնող մարմնին ապահովվում է օրենսդրական այն պահանջը, որ պաշտպանից հրաժարումը չպետք է պայմանավորված լինի մեղադրյալի ֆինանսական դրությամբ:

Ըստ էության, նախնական քննության ընթացքում պաշտպանից հրաժարված մեղադրյալը չի զրկվում դատական քննության ընթացքում պաշտպան ունենալու հնարավորությունից: Սակայն դատական քննության ընթացքում նշանակված հանրային պաշտպանից հրաժարվելու դեպքում ամբաստանյալին նոր պաշտպան տրամադրելու հնարավորությունը բացառվում է դատարանի կողմից:

Դատական դիտարկումներն արձանագրում են, որ անկախ հանցագործության բնույթից և ծանրությունից՝ քրեական վարույթին ներգրավվում է մեկ հանրային պաշտպան: Արձանագրվել են դեպքեր, երբ մեկից ավելի ամբաստանյալների պաշտպանությանը ներգրավվում է մեկ պաշտպան: Բացառություն չեն նաև ամբաստանյալների շահերի միջև հակասությունների առկայության դեպքում նրանց՝ մեկ պաշտպանի կողմից ներկայացվելու դեպքերը:

Դատական դիտարկումները փաստում են, որ դատական քննությանը ներգրավված պաշտպանի իրավունքը՝ գործի նյութերին ծանոթանալու համար ժամանակ տրամադրելու առնչությամբ, պահպանվում է: Դիտարկված գործերից միայն մեկ դեպքում է դատարանը մերժել պաշտպանին գործի նյութերին ծանոթանալու համար ժամանակ տրամադրել: Միաժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ տրամադրված ժամանակն ըստ էության ողջամիտ համարվել չէր կարող պաշտպանության ռազմավարություն որդեգրելու և այն արդյունավետորեն կյանքի կոչելու տեսանկյունից, մինչդեռ նկատելի է եղել նաև պաշտպանների շահագրգռվածությունը՝ գործի նյութերի վրա լրացուցիչ ժամանակ չծախսելու առնչությամբ:

Դատական դիտարկումների արդյունքներն արձանագրում են, որ դատաքննության ընթացքում մեղադրանքի փոփոխության դեպքում պաշտպանության կողմին ժամանակ տրամադրվում է առաջադրը-

ված նոր մեղադրանքին ծանոթանալու համար: Դիտարկված գործերից որևէ մեկում պաշտպանության կողմը չի բարձրաձայնել տրամադրված ժամանակի անբավարարության մասին:

Ըստ փորձագետների՝ ներկայումս Հայաստանում նկատվում է փաստաբանների պատրաստվածության խնդիր: Ակտուալ է նաև փաստաբանների անկախության հարցը, քանի որ պրակտիկայում ակնհայտ է պաշտպանների համագործակցությունը վարույթն իրականացնող մարմինների հետ՝ հաճախ նաև ի վնաս պաշտպանյալների շահերի:

Դիտարկումների ընթացքում արձանագրվել են պաշտպանների կողմից վարքագծի կանոնների խախտման դեպքեր ինչպես դատարանի, այնպես էլ պաշտպանյալների նկատմամբ:

Դատական քննության ընթացքում խախտվում է ամբաստանյալների անմեղության կանխավարկածը: Դատարանների կողմից դրսևորված վարքագիծն ակնհայտ մեղադրական է, սակայն սույն հանգամանքը պաշտպանների կողմից ուշադրության չի արժանանում: Դիտարկումների ընթացքում անմեղության կանխավարկածի խախտման դեպքերից և ոչ մեկում ամբաստանյալների պաշտպանների կողմից արձագանք չի եղել:

Դատական դիտարկումների արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել դատական քննության ընթացքում վկաների հարցաքննության ապահովման խնդիրը, ինչով խախտվում է ամբաստանյալի իրավունքը՝ հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված անձանց: Դիտարկված ընդհանուր կարգով քննված գործերով դատակոչի ենթակա 434 վկաներից դատարանում հարցաքննվել են 181-ը: Դատարանում վկաների ներկայությունը հիմնականում չի ապահովվում համապատասխան օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատանքային թերացումների հետևանքով: Ի լրումն դատական քննությանը վկաների ներկայության ապահովման խնդրի՝ դատական դիտարկումներն արձանագրում են նաև դատական քննությանը տուժողների ներկայության ապահովման խնդիրը:

Դատական քննության ընթացքում վկաներին հարցաքննելու իրավունքի սահմանափակումներն էականորեն ազդում են նաև մրցակցության սկզբունքի պահպանման վրա: Դատարանում հիմնականում ուսումնասիրվում են մեղադրական ապացույցները: Պաշտպանության կողմի ներկայացրած ապացույցները պատշաճ հետազոտության չեն արժանանում, որի արդյունքում դրանք չեն դրվում դատավճռի հիմքում:

Միաժամանակ, դատական դիտարկումների ընթացքում պաշտպանների կողմից ներկայացված միջնորդությունների 66 %-ը դատարանի կողմից բավարարվել է, 6 %-ը թողնվել է առանց քննության և 27 %-ը մերժվել է: Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ միջնորդությունների ընդհանուր քանակում ընդգրկվել են նաև գործի նյութերին ծանոթանալու համար ժամանակ տրամադրելու վերաբերյալ միջնորդությունները, որոնց համաձայնությունն ընդհանրության մեջ մեծ է: Դրանց ընդհանուր քանակի դուրսբերման դեպքում պաշտպանության կողմի ներկայացրած այլ միջնորդությունների բավարարման ցուցանիշները կտրուկ նվազում են:

Դիտարկումների ընթացքում առանձին գնահատման է ենթարկվել դատական վիճաբանությունների ընթացքում կողմերի ակտիվությունը/ջանասիրությունը: 0-10 միավորանոց սանդղակով դիտորդները գնահատել են 155 պաշտպանների և 157 դատախազների ակտիվությունը/ջանասիրությունը դատական վիճաբանությունների ընթացքում: Գնահատման համար կիրառվել են միևնույն չափանիշները:

Ըստ դիտորդների գնահատականների՝ երկու դեպքում էլ ստացվել է նույն միջին գնահատականը՝ 7.1: Սա նշանակում է, որ, ըստ էության, դատական վիճաբանությունների փուլում մրցակցությունն ապահովված է:

Քրեական վարույթին ներգրավված անձանց նկատմամբ ճնշումներ տեղի են ունենում ինչպես նախնական քննության, այնպես էլ դատական քննության ընթացքում: Դիտարկումների ընթացքում դեպքերի 97 %-ում պաշտպաններին հաջողվել է գերծ պահել իրենց պաշտպանյալներին ճնշումներից, 81 % դեպքերում՝ անհարգալից վերաբերմունքից:

Դիտարկումների ընթացքում արձանագրվել են նաև վկաների նկատմամբ ճնշումներ: 7 գործերի քննության ընթացքում կողմերից գործին մասնակցող անձանց, այդ թվում՝ նաև դատարանի կողմից վկան ենթարկվել է հոգաբանական ճնշման:

Դատական քննության ընթացքում ամբաստանյալներից 5-ը հայտարարել են մինչդատական վարույթի ընթացքում իրենց նկատմամբ կիրառված բռնության վերաբերյալ: Հայտարարությունների հիման վրա պաշտպանության կողմը հիմնականում վիճարկում է ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը: Դիտարկման ենթարկված միայն մեկ դեպքում է պաշտպանը հաղորդում ներկայացրել տեղի ունեցած բռնությունների առնչությամբ քրեական գործ հարուցելու վերաբերյալ:

Դատաքննության ընթացքում ցուցմունք տալու իրավունքից օգտվել են ամբաստանյալների 76 %-ը: Պաշտպանական ճառով հանդես գալու հնարավորությունից օգտվել են ամբաստանյալների 24 %-ը: 3 ամբաստանյալի դատարանը հնարավորություն չի տվել հանդես գալու պաշտպանական ճառով: Վեր-

ջին խոսքի իրավունքից օգտվել են ամբաստանյալների 87 %-ը:

Դատական գործերի դիտարկման արդյունքներն արձանագրում են արագացված կարգով դատական քննության օրինաչափությունները: Դիտարկման ենթարկված գործերից մոտ կեսը տեղի է ունեցել դատական քննության արագացված կարգով: Արագացված կարգով դատական քննություն անցկացնելու պաշտպանության կողմի միջնորդությունը դատարանը մերժել է մեկ դեպքում: Դատարանի կողմից ոչ բոլոր դեպքերում են պարզվում արագացված կարգով դատական քննություն անցկացնելու համար օրենքով նախատեսված պահանջների պահպանման առկայությունը:

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս փաստել, որ դատարանների կողմից առավելապես չի պարզվում արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին միջնորդության ներկայացման կամավորությունը (18 %), 13 % դեպքերում դատարանը չի պարզել պաշտպանի հետ խորհրդակցելու պահանջի պահպանումը, 11 % դեպքերում՝ արագացված կարգով դատական քննության անցկացման հետևանքները գիտակցելը: Արձանագրվել է 4 դեպք, երբ դատավորի կողմից արագացված կարգով դատական քննության անցկացման պահանջների առկայությունը բոլորովին չի պարզվել:

Դիտարկումների ենթարկված գործերի մոտ կեսը տեղի է ունեցել դատական քննության արագացված կարգով: Դատարանի կողմից արագացված կարգով դատական քննություն անցկացնելու միջնորդություններից մերժվել է մեկը, մեկ դեպքում մեղադրող դատախազն է առարկել արագացված կարգի կիրառման դեմ:

Դատական դիտարկումների արդյունքները փաստում են, որ արագացված կարգով դատական քննության պայմաններում ամբաստանյալների պաշտպանության իրավունքն արդյունավետորեն չի իրացվում: Կարող ենք ասել, որ արագացված կարգով դատական քննություն իրականացնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու համար պաշտպանի հետ խորհրդակցելու պահանջի կիրառումը կրում է ձևական բնույթ:

Իրենց պաշտպանյալներին արագացված կարգի առանձնահատկությունները ներկայացնելիս շեշտը դրվում է հիմնականում արագացված կարգով դատական քննության ընթացակարգի դրական հատկանիշների վրա՝ գայթակղելով թեթև պատիժ նշանակելու կամ մույնիսկ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությամբ: Եթե դատարանը շեշտում է, որ դատավճռի բողոքարկումը հնարավոր է միայն նշանակված պատժի մասով, ապա բողոքարկմանը պաշտպանները հիմնականում չեն անդրադառնում:

Դատական դիտարկումների արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դատական քննության արագացված կարգի կիրառումը ձեռնտու է ոչ միայն քրեական հետապնդման մարմիններին, դատարանին, այլև պաշտպանին, ով այդպիսով ստիպված չի լինում ամբողջությամբ ու խորն ուսումնասիրել քրեական գործը՝ պատրաստվելու ամբաստանյալի պատշաճ պաշտպանությանը՝ վեր հանելու քրեական գործում առկա հակասությունները, թերությունները, վիճարկելու ապացույցների թույլատրելիությունը և այլն:

Միաժամանակ, հատկանշական է, որ արագացված կարգով դատական քննության անցկացման պաշտպանների պատրաստակամությունն առավել բարձր է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում:

Վերջնական դատական ակտերը բողոքարկելու իրավունքի իրացման դեպքերը նույնպես փոքր թիվ են կազմում: Դիտարկման ենթարկված գործերում ամբաստանյալների միայն 29 %-ի դեպքում է ներկայացվել վերաքննիչ բողոք: Վճռաբեկ դատարան ներկայացվել է 13 բողոք: Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ դատական ակտերի բողոքարկումը կատարվում է հիմնականում պաշտպանության կողմից: Միայն 3 դեպքում է վերաքննիչ բողոք ներկայացվել մեղադրող դատախազի կողմից: Դիտարկումների ընթացքում արձանագրվել է դատավճռի դեմ տուժողի կողմից բողոքարկման մեկ դեպք:

Վերաքննիչ դատարանում դատական դիտարկումների արդյունքները փաստում են, որ այդտեղ դատական քննությունն իրականացվում է հիմնականում վճռաբեկության կարգով: Ամբաստանյալի իրավունքների պարզաբանումը վերաքննիչ դատարանում նույնպես կրում է ձևական բնույթ. ամբաստանյալի իրավունքները դատարանի կողմից ընթերցվել են միայն 6 դեպքում:

Վերաքննիչ դատարանում դատական քննության օրինաչափություն է նաև դատական վիճաբանությունների ընթացքում դատարանի կողմից ռեպլիկի իրավունքից զրկելը՝ պատճառաբանելով, որ վերաքննիչ դատարանում կողմերը նման իրավունքով օժտված չեն:

Վերաքննիչ դատարանում դատական քննության տևողությունը կարճ է: Դիտարկման ենթարկված գործերի մեծ մասը տեղի է ունեցել մեկ դատական նիստով: Մյուս դեպքերում դատական նիստերի հետաձգման պատճառ է հանդիսացել հիմնականում կողմերից որևէ մեկի բացակայությունը:

Վերաքննիչ դատարանում դատական ակտը հիմնականում կայացվում է դատական քննության օրը: Դատական ակտ կայացնելու համար դատարանի կողմից խորհրդակցական սենյակում անցկաց-

րած ժամանակը նույնպես կարճ է: Դիտարկումների ենթարկված գործերով դատական ակտ կայացնելու համար դատարանի կազմը խորհրդակցական սենյակում առավելագույնն անց է կացրել 30 րոպե: Արձանագրվել է դեպք, երբ դատարանը խորհրդակցական սենյակում անց է կացրել ընդամենը 4 րոպե:

Վերաքննիչ դատարանում կատարված դիտարկումները փաստում են, որ վերաքննիչ բողոքները հիմնականում մերժվում են: Ըստ դիտարկման արդյունքների՝ ներկայացված բողոքներից բավարարվել են միայն 6-ը: Ընդ որում, դրանցից մեկը ներկայացվել է մեղադրանքը պաշտպանող դատախազի, իսկ մյուսները՝ տուժողի կողմից:

Դատական դիտարկումների ընթացքում տեղ է գտել վերաքննիչ դատարանի որոշումների բողոքարկման 13 դեպք: Բոլոր բողոքները ներկայացվել են պաշտպանության կողմից: Բոլոր վճռաբեկ բողոքները դատարանի կողմից վերադարձվել են:

Հայաստանի Հանրապետությունում անվճար իրավաբանական օգնություն կասկածյալին կամ մեղադրյալին ցուցաբերվում է՝ հաշվի առնելով վերջինիս գույքային դրությունը: ՀՀ օրենսդրությամբ գույքային դրությունը չի մեկնաբանվում, ինչից ելնելով՝ պրակտիկ կիրառություն են ստանում տարակարծիք մեկնաբանություններ: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ բացառությամբ կասկածյալի կամ մեղադրյալի՝ անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերվում է նաև անվճարունակ անձանց: Անվճար իրավաբանական օգնության մմանատիպ կարգավորման հետևանքով անհատակ է, թե ինչպիսի չափանիշերով է գնահատվում կասկածյալի կամ մեղադրյալի՝ անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորությունը:

Առաջարկություններ

Փորձագետների կողմից ներկայացված առաջարկություններն են.

1. Օրենսդրորեն ամրագրել հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության սահմանները, տալ պաշտպանների միջև գործերի առավել համաչափ, կանխատեսելի և արդյունավետ բաշխման չափանիշեր:
2. Հանրային պաշտպանի գրասենյակում ապահովել բնականոն սերնդափոխություն, գրասենյակը համարել առավել երիտասարդ տարիքի մասնագետներով: Իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար սահմանել պարտադիր կամ կամընտրական մասնակցություն հանրային պաշտպանի գրասենյակի կողմից մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների մատուցմանը:
3. Մասնավոր փաստաբանների շրջանում խթանել անվճար իրավաբանական ծառայությունների տրամադրումը: Թեև օրենքը սահմանում է փաստաբանների իրավունքը՝ ծառայություններ մատուցել անհատույց, սակայն պրակտիկայում հարկային հաշվետվությունների ներկայացման պարտականությունը կաշկանդում է փաստաբաններին անվճար իրավաբանական օգնություն մատուցելու ցանկություն ունենալիս: Սույն հարցի օրենսդրական կարգավորումը թույլ կտա փաստաբաններին առավել բաց լինել իրենց հետաքրքրող գործերի վարման հարցում, անգամ այն դեպքում, երբ պաշտպանյալն անվճարունակ է:
4. Ներմուծել այսպես կոչված «հերթապահ փաստաբանի» ինստիտուտը: Դրա էությունը կայանում է նրանում, որ որոշակի ժամանակաշրջանում փաստաբանները գործեն ոստիկանության կամ նախաքննություն իրականացնող այլ մարմիններին կից, որպեսզի, ըստ անհրաժեշտության, անձանց իրավաբանական օգնություն տրամադրվի: Հերթապահ փաստաբանի գործունեության ժամանակահատվածը պետք է լինի բավականին կարճ, որպեսզի պետական մարմիններին սերտաճելու խնդիր չառաջանա:
5. Հանրային պաշտպանի գրասենյակի ճկունությունը բարձրացնելու համար մեծացնել աշխատակազմը՝ ավելացնելով կես դրույքաչափով աշխատող պաշտպանների թվաքանակը:
6. Հանցագործության ծանրությունից ելնելով՝ սահմանել անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունքի համար վճարունակության տարբերակված չափանիշեր: Փորձագետն առաջարկում է անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու համար ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում սահմանել անվճարունակության ավելի բարձր շեմ, քան ավելի ծանր հանցագործությունների դեպքում:

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից ներկայացվող առաջարկություններն են²⁶⁶.

1. Անվճար իրավաբանական օգնության տրամադրման և կարգավորման հարցերն առանձնացնել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքից: Ընդունել «Անվճար իրավաբանական օգնության մասին» օրենք, որով կկարգավորվեն անվճար իրավաբանական օգնության տրամադրման, իրականացման, վերահսկողության, ֆինանսավորման և այլ հարցերը՝ հաշվի առնելով համապատասխան միջազգային իրավական ակտերը:
2. Ի լրումն հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության՝ օրենսդրորեն նախատեսել այլ՝ ոչ առևտրային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորություն՝ պետական իշխանության հետ համագործակցության հիման վրա: Մշակել համագործակցության և իրավաբանական օգնության տրամադրման չափանիշեր, ինչպես նաև տրամադրած իրավաբանական օգնության նկատմամբ վերահսկողության մեխանիզմներ:
3. Անվճար իրավաբանական օգնության տրամադրմանը ներգրավել բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավաբանական ֆակուլտետների ուսանողներին:
4. Օրենսդրորեն կարգավորել մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հստակ չափանիշերը:
5. Օրենքով նախատեսել անվճար իրավաբանական օգնության հնարավորություն անչափահասների համար՝ անկախ քրեական գործի վարույթում նրանց կարգավիճակից և գույքային դրությունից՝ ապահովելով երեխաների շահերի լավագույնս պաշտպանությունը:
6. Օրենքով նախատեսել անվճար իրավաբանական օգնության տրամադրման հնարավորություն հա-

²⁶⁶ Կազմակերպության կողմից ներկայացված առաջարկությունները ներառում են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Քրեական արդարադատության համակարգում իրավաբանական օգնության հասանելիության սկզբունքներն ու ղեկավար դրույթները» պահանջները (E/CN.15/2012/L.14/Rev.1. ընդունվել է 2012թ. ապրիլի 25-ին):

տուկ կարիքներ ունեցող անձանց համար, ներառյալ՝ հաշմանդամություն չունեցող, սակայն ծանր հիվանդությամբ տառապող անձանց, քնրամիջոցներ օգտագործող, ՄԻԱՎ վարակակիր անձանց, օտարերկրյա քաղաքացիների, միգրանտների համար:

7. Օրենքով հստակ ամրագրել պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի համար անվճար իրավաբանական օգնության տրամադրման երաշխավորումը:
8. Օրենքով նախատեսել անվճար իրավաբանական օգնության հնարավորություն հանցագործությունից տուժողի համար, հատկապես խոցելի խմբերի ներկայացուցիչներին՝ անչափահասներ, տարեց անձինք, զինծառայողներ և այլն: Անվճար իրավաբանական օգնություն նախատեսել նաև որոշակի խումբ հանցագործություններից տուժած անձանց իրավունքների պաշտպանության համար, օրինակ՝ սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններից տուժողների, խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի զոհ դարձած անձանց համար և այլն:
9. Օրենքով նախատեսել անվճար իրավաբանական օգնության հնարավորություն վկայի համար, հատկապես խոցելի խմբերի ներկայացուցիչ վկաների՝ անչափահասների, տարեց անձանց, զինծառայողների համար և այլն: Անվճար իրավաբանական օգնություն նախատեսել նաև որոշակի խումբ հանցագործություններում վկաների համար, օրինակ՝ կազմակերպված հանցավորության, բռնության կատարված հանցագործությունների և այլ գործերով վկաների համար:
10. Մեծացնել պետության հաշվին անվճար իրավաբանական օգնությանը տրամադրվող ֆինանսական միջոցների ծավալը:
11. Օրենսդրորեն սահմանել լրացուցիչ արտոնություններ հեռավոր, սահմանամերձ բնակավայրերում անվճար իրավաբանական օգնություն տրամադրող անձանց համար (օրինակ՝ հարկերից ազատում, բնակության վայրի և տրանսպորտային միջոցի տրամադրում):
12. Օրենսդրորեն՝ սահմանել հանրային պաշտպանների աշխատանքային ծանրաբեռնվածության սահմանները՝ ապահովելով պաշտպանների միջև գործերի բաշխման առավել համաչափ, արդյունավետ և կանխատեսելի բաշխումը:
13. Օրենսդրորեն սահմանել անվճար իրավաբանական օգնություն մատուցող փաստաբանների պարտադիր վերապատրաստմանն ուղղված մեխանիզմներ՝ ի պաշտպանություն հանցագործության պաշտպանվող և ներկայացվող անձանց շահերի:
14. Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա ներդնել իրավաբանական օգնության ապահովագրության համակարգ:
15. Ապահովել հանրային պաշտպանների կողմից կատարված ծախսերի (հիմնականում տրանսպորտային միջոցներից օգտվելու համար կատարվող) լիարժեք փոխհատուցումը: Մշակել կատարած ծախսերի փոխհատուցման առավել ճկուն մեխանիզմներ:
16. Օրենսդրորեն նախատեսել անվճար իրավաբանական օգնության տրամադրման մերժումը բողոքարկելու մեխանիզմներ:
17. Օրենսդրորեն նախատեսել պետության կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության որակի վերահսկողության մեխանիզմներ:

Հանրային պաշտպանի գրասենյակ: Հանրային պաշտպաններ

1. Միջոցներ ձեռնարկել հանրային պաշտպանի գրասենյակի նկատմամբ հասարակական վստահության բարձրացման ուղղությամբ (օրինակ՝ հրապարակել գրասենյակի գործունեության վերաբերյալ զեկույցներ՝ ներկայացնելով վարած գործերի արդյունքները, ձեռքբերումները և այլն):
2. Դատական քննությանը ներգրավվելիս պատշաճորեն ծանոթանալ քրեական գործի նյութերին, հատկապես արագացված կարգով դատական քննություն անցկացնելու միջնորդությամբ:
3. Մինչև դատական քննությունը կոնֆիդենցիալ կերպով խորհրդակցել պաշտպանյալի հետ պաշտպանության ռազմավարություն մշակելու հարցում:
4. Ներկայացվող կամ պաշտպանվող անձի համար ապահովել իր կարգավիճակից բխող իրավունքների վերաբերյալ իրազեկում՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները:
5. Հնարավորություն ստեղծել, որ ամբաստանյալն ըմբռնի իր դեմ ներկայացված մեղադրանքն ու դրա հետևանքները:
6. Մինչդատական քննության ընթացքում ապահովել ներկայացուցչություն բոլոր հարցաքննությունների և այլ քննչական գործողությունների ընթացքում:
7. Բացառել սովորաբար համագործակցությունը վարույթն իրականացնող մարմնի հետ, հատկապես ի վնաս պաշտպանյալի շահերի:

8. Ապահովել պաշտպանյալի անմեղության կանխավարկածի պաշտպանությունը քրեական գործի դատական քննության ընթացքում:
9. Արագացված կարգով դատական քննություն անցկացնելու միջնորդություն ներկայացնելիս հավաստիանալ, որ պաշտպանյալը գիտակցում է նման կարգով դատական քննության հետևանքները և համաձայնությունը պայմանավորված չէ արտաքին գործոններով:
10. Արագացված կարգով դատական քննություն անցկացնելու միջնորդություն ներկայացնելիս ապահովել պաշտպանյալի պատշաճ պաշտպանություն, այլ ոչ ձևական ներկայություն:
11. Ապահովել հանրային պաշտպանների պարտադիր պարբերական վերապատրաստումը:
12. Ապահովել հանրային պաշտպանների համագործակցությունը առողջապահական, հոգեբանական, սոցիալական ոլորտի աշխատակիցների հետ:

Դատական իշխանություն

1. Դատական քննության ընթացքում ապահովել ամբաստանյալի և վարույթին ներգրավված այլ անձանց անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:
2. Իրականացնել դատական քննության ընթացքում ամբաստանյալի իրավունքների պարզաբանումը, այլ ոչ ձևական թվարկումը՝ ապահովելով դրանց իրականացման հնարավորությունները:
3. Դատական քննության ընթացքում ամբաստանյալի կողմից պաշտպանից հրաժարվելու ցանկացած դեպքում պարզել հրաժարման պատճառներն ու շարժառիթները: Բացառել ամբաստանյալի կողմից պաշտպանից հարկադրական հրաժարման դեպքերը, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմնի հարկադրանքի կամ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:
4. Ձեռք առնել դատական քննությանը վկաների պարտադիր ներկայության ապահովմանն ուղղված բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ի ապահովումն ամբաստանյալի իր դեմ ցուցմունք տված վկաներին անմիջականորեն հարցաքննելու իրավունքի:
5. Բացառել դատարանում չհարցաքննված վկաների՝ նախաքննական ցուցմունքների հիման վրա դատավճռի կայացումը:
6. Բացառել ամբաստանյալների կողմից առանց պաշտպանի մասնակցության տրված ցուցմունքների օգտագործումը, եթե պաշտպանության իրավունքի սահմանափակումը պայմանավորված չի եղել բացառիկ հանգամանքներով, նույնիսկ եթե դրանք ձեռք են բերվել առանց ճնշումների գործադրման²⁶⁷:
7. Դատական քննության ընթացքում ապահովել կողմերի լիարժեք հավասարությունը և մրցակցությունը:
8. Բացառել ամբաստանյալի անմեղության կանխավարկածի խախտման դեպքերը:
9. Բացառել կողմերի կամ վարույթին մասնակցող այլ անձանց կողմից ինչպես ամբաստանյալի, այնպես էլ վարույթին ներգրավված այլ անձանց նկատմամբ ճնշումների կիրառումը:
10. Ապահովել ներկայացված միջնորդությունների առնչությամբ որոշումների պատշաճ պատճառաբանվածությունը:
11. Բացառել անթույլատրելի ապացույցների օգտագործումը քրեական գործով դատական ակտ կայացնելիս:
12. Արագացված կարգով դատական քննության միջնորդության քննարկման ընթացքում պարզել օրենքով նախատեսված բոլոր պայմանների առկայությունը՝ բացառելու ամբաստանյալի կողմից արագացված կարգի կիրառման հետևանքների չգիտակցման և ստվերային համագործակցության դեպքում արագացված կարգի կիրառումը:
13. Արագացված կարգով դատական քննության անցկացման վերաբերյալ որոշման ընդունումից հետո ամբաստանյալի կողմից հանցագործության փաստական հանգամանքների, հանցագործության կատարման մեջ իր մեղավորությունը լրիվ կամ մասնակիորեն չընդունելու դեպքում անցնել ընդհանուր կարգով դատական քննությանը:

Նախնական քննություն իրականացնող և դրա օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններ

1. Քրեական վարույթի նախնական քննության ընթացքում ապահովել վարույթին ներգրավված անձանց, մասնավորապես կասկածյալի ու մեղադրյալի իրավունքների ու պարտականությունների պարզաբանումը և դրանք իրացնելուն ուղղված հնարավորությունները:
2. Քրեական վարույթի նախնական քննության ընթացքում ապահովել վարույթին ներգրավված անձանց

²⁶⁷ Pishchalnikov v. Russia, App. 7025/04, 24 September 2009.

անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:

3. Պրակտիկայում ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի լռելու իրավունքի իրացումը:
4. Նախնական քննության ընթացքում կասկածյալի ու մեղադրյալի համար ապահովել պաշտպանի մասնակցություն վարույթի ամենավաղ փուլերից՝ բացառելով պաշտպանից հարկադրական հրաժարման դեպքերը, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ:
5. Պաշտպանից հրաժարվելու դեպքերում բացահայտել հրաժարման իրական պատճառներն ու հիմքերը՝ բացառելու կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտումը:
6. Ապահովել որպես վկա հարցաքննվող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկումը:
7. Բացառել կասկածյալի կարգավիճակում գտնվող անձանց որպես վկա հարցաքննելու պրակտիկան:
8. Վերացնել քրեական վարույթի ընթացքում վարույթին ներգրավված անձանց նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական հարկադրական միջոցների կիրառման պրակտիկան:
9. Բացառել ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցների կիրառումը որպես ճնշման միջոց՝ մեղադրյալի՝ հանցագործության կատարման համար իր մեղքը չընդունելու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու դեպքերում:
10. Պրակտիկայում ապահովել կալանավորման միջնորդության դատական քննությանը մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը:
11. Օտարերկրյա կասկածյալների կամ մեղադրյալների դեպքում ապահովել համապատասխան լեզվի որակավորված մասնագետի ներգրավումը վարույթին:
12. Պրակտիկայում ապահովել քրեական գործի նյութերին պաշտպանության կողմի ծանոթանալու իրավունքի արդյունավետ իրացումը: Զրեական գործի վարույթի ընթացքում ապահովել քրեական գործի նյութերին (առանձին փաստաթղթերին) պաշտպանության կողմի ծանոթանալու ողջամիտ հնարավորությունը:
13. Զրեական գործով ներգրավված ամբաստանյալների շահերի միջև հակասությունների դեպքում բացառել նրանց պաշտպանությունը մեկ պաշտպանի կողմից:



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am